Հաստատում եմ՝
Ռեկտոր
_____
«____»_____2023թ.

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Տիգրան Մեծի 17

Երևան 2023

Ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի կազմն ըստ ռեկտորի հրամանի[1]

ԱԱՀ	Պաշտոնը հաստատությունում	Պատասխանատվությունը խմբում
Սաֆարյան Նաիրա Ավետիսի	**Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր**	Չափանիշ 1, 3, 4,10
Հարությունյան Մարիաննա Ռուբենի	**Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր**	Չափանիշ 2, 5, 7, 8, 9
Իսպիրյան Մարիամ Մկրտիչի	**Ուսումնագիտական գծով պրոռեկտոր**	Չափանիշ 6

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐ[2]

	Աշխատանքային խումբ	Պաշտոն
ՉԱՓԱՆԻՇ 1. Առաքելությունը և նպատակները		
1.	Սաֆարյան Նաիրա Ավետիսի	ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր
2.	Ասատրյան Սամվել Միսակի	կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության պետ
3.	Բարսեղյան Մելանյա Սաշայի	կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի պետ
4.	Արամյան Լիդա Ռազմիկի	կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկանի տեղակալ
5.	Հարությունյան Արմինե Էմանուելի	
ՉԱՓԱՆԻՇ 2. Կառավարում և վարչարարություն		
1.	Մանուկյան Սեդա Միքայելի	անձնակազմի հաշվառման բաժնի պետի տեղակալ
2.	Կարապետյան Անահիտ Լյուդվիկի	գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատար
3.	Տողանյան Նաիրա Սուրենի	Երևանի թիվ 57 հիմնական դպրոցի տնօրեն
ՉԱՓԱՆԻՇ 3. Մասնագիտության կրթական ծրագրերը		
1.	Թաղևոսյան Հակոբ Վանիկի	ռեկտորի ուսումնական հարցերով խորհրդական
2.	Պողոսյան Լուսինե Մարտունիկի	
3.	Սարգսյան Վահան Ժորայի	տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դոցենտ
4.	Մակիչյան Սոնա Արտակի	կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկանի տեղակալ
ՉԱՓԱՆԻՇ 4. Ուսանողները		

[1] Տե՛ս համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներն ըստ աշխատանքային խմբերի կազմակերպելու մասին ռեկտորի հրամանը:

2 https://drive.google.com/file/d/1TOe3A8c9rG4y4STjY1vLa-DDYta4JiDu/view?usp=drive_link

1,	Սաֆարյան Նաիրա Ավետիսի	ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր
2.	Ջանիկյան Սուսաննա Ռոբերտի	ուսանողական ակադեմիական հետազծի (շարժի) կազմակերպման բաժնի պետ
3.	Օրդյան Նունե Ալբերտի	մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի դեկանի տեղակալ
4.	Ավալյան Կարինե Կարենի	սկզբնական կրթության ֆակուլտետ, 2-րդ կուրսի ուսանող
ՉԱՓԱՆԻՇ 5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը		
1.	Հարությունյան Մարիաննա Ռուբենի	աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր
2.	Թորոսյան Անժելա Վահանի	անձնակազմի հաշվառման բաժնի պետ
3.	Արամյան Լիդա Ռազմիկի	ԿՀՍ ֆակուլտետի դեկանի տեղակալ
4.	Արշակյան Շուշանիկ Նվերի	պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական գործընթացների կառավարման բաժնի պետ
ՉԱՓԱՆԻՇ 6. Հետազոտությունը և զարգացումը		
1.	Թադևոսյան Հակոբ Վանիկի	ռեկտորի խորհրդական
2.	Վարդանյան Կամո Երեմի	գիտահետազոտական կենտրոնի ղեկավար
3.	Միքայելյան Տիգրան Բորիսի	օտար լեզուների ֆակուլտետի դեկան
4.	Սարգսյան Վահան Ժորայի	տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դոցենտ
ՉԱՓԱՆԻՇ 7. Ենթակառուցվածքը և ռեսուրսները		
1.	Հարությունյան Մարիաննա Ռուբենի	աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր
2.	Մարկոսյան Դիանա Հովիկի	լրատվության և հանրության հետ կապերի կենտրոնի ղեկավար
ՉԱՓԱՆԻՇ 8. Հասարակական պատասխանատվություն		
1.	Հարությունյան Մարիաննա Ռուբենի	աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր
2.	Մարկոսյան Դիանա Հովիկի	լրատվության և հանրության հետ կապերի կենտրոնի ղեկավար
3.	Սահակյան Անի Մարտունի	օտար լեզուների ֆակուլտետ, դեկանի գիտական գծով տեղակալ
ՉԱՓԱՆԻՇ 9. Արտաքին կապերը և միջազգայնացումը		
1.	Ավետյան Ռաիսա Գագիկի	միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոնի գլխավոր մասնագետ
2.	Միքայելյան Տիգրան Բորիսի	օտար լեզուների ֆակուլտետի դեկան
ՉԱՓԱՆԻՇ 10. Որակի ներքին ապահովման համակարգը		
1.	Սաֆարյան Նաիրա Ավետիսի	ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր
2.	Ասատրյան Սամվել Միսակի	կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության պետ
3.	Բարսեղյան Մելանյա Սաշայի	կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի պետ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 5
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ 5
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 7
ՉԱՓԱՆԻՇ 1. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 8
ՉԱՓԱՆԻՇ 2. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 16
ՉԱՓԱՆԻՇ 3. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 40
ՉԱՓԱՆԻՇ 4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 52
ՉԱՓԱՆԻՇ 5. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 69
ՉԱՓԱՆԻՇ 6: ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 80
ՉԱՓԱՆԻՇ 7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 96
ՉԱՓԱՆԻՇ 8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 116
ՉԱՓԱՆԻՇ 9: ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 130
ՉԱՓԱՆԻՇ 10. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 142
ՀԱՎԵԼՎԱԾ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ուսումնական հաստատության կառավարումը, կրթական և հետազոտական գործունեությունը և հասարակությանը մատուցվող ծառայությունները պարբերաբար բարելավվում են և միտված են.

- ✓ որակի մշակույթի ձևավորմանը,
- ✓ կրթական այնպիսի միջավայրի ստեղծմանը, որը կնպաստի աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին համապատասխան ուսումնառողների գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը,
- ✓ մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացմանը և հասարակության առջև հաշվետվողականության ապահովմանը,
- ✓ ազգային և միջազգային մակարդակներում ուսումնական հաստատության կողմից մատուցվող ծառայությունների համադրելիության և մրցունակության, ինչպես նաև թափանցիկության ապահովմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Չափանիշներ՝ հատուկ առանձնացված ձևակերպումներ են, որոնք վերստուգելի տերմիններով սահմանում են հաստատության գործունեության կամ իրականացվող կրթական ծրագրերի բնութագրերը:

Չափորոշիչներ՝ ձևակերպումներ են, որոնք սահմանում են յուրաքանչյուր չափանիշին համապատասխանելու չափը և անաչառ գնահատելու համար անհրաժեշտ պայմանները:

Օգտագործված հապավումներ

ՄՈՒՀ - Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

ԳԱՑ -գնահատման առանցքային ցուցանիշ

ԳԽ – գիտական խորհուրդ

ՊԴԱ - պրոֆեսորադասախոսական անձնակազմ

ՌԾ - ռազմավարական ծրագիր

ՄԿԾ - մասնագիտության կրթական ծրագիր

ՊԻԳԲ - պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում

ՈԱԱԿ – «Որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ

ՈԱԾ- որակավորումների ազգային շրջանակ

ՈԿՀ- որակի կառավարման համակարգ

ՈԻԳԱԿՀ-ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգ

ՈԻԽ - ուսանողական խորհուրդ

ՈԻԳԸ - ուսանողական գիտական ընկերություն

ՈԿՀ - որակի կառավարման համակարգ

ՈՆԱ - որակի ներքին ապահովում

ՈԱ - որակի ապահովում

ՄՈՒՀ - մասնագիտական ուսումնական հաստատություն

ՄԳԾ – միջազգային գործունեության ծրագիր

ՄՈԳ- միջին որակական գնահատական

ՄՀԲ – միջազգային համագործակցության բաժին

ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՊԼԱՆ - ինստիտուցիոնալ կարողությունների բարելավման պլան

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ-ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայկական պետական մանկավարժական համալսարանը հիմնադրվել է 1922 թվականին և 1948 թվականից կրում է մեծ լուսավորիչ ու մանկավարժ Խաչատուր Աբովյանի անունը:

2004-2005 ուսումնական տարվանից իրականացնում է եռաստիճան (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա) կրթություն՝ շուրջ յոթ տասնյակ կրթական ծրագրերով, ուսուցման առկա, հեռակա և հիբրիդային ձևերով: Համալսարանում սովորում է շուրջ 6000 ուսանող:

ՀՊՄՀ-ն, լինելով տարածաշրջանում կրթության ոլորտում առաջնայիններից մեկը, ապագայում պլանավորում է ուսուցման գործընթացները դարձնել հնարավորինս ինտերակտիվ՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները, վիրտուալ և ընդլայնված իրականությունը՝ ուսուցումն ավելի գրավիչ և արդյունավետ դարձնելու համար: Ձգտելով շարունակաբար ընդլայնել համագործակցային հարաբերությունները գործընկեր հաստատությունների հետ՝ ՀՊՄՀ լայն հնարավորությունների դաշտ է բացում՝ իր շահակիցներին առաջարկելով շփվելու և փորձի փոխանակման, կրթական տարբեր ծրագրեր, որոնց արդյունքում կունենանք ճկուն կրթական միջավայր, ինչն ուսանողներին հնարավորություն կընձեռի ընտրել ճկուն ուսուցման ուղիներ՝ համատեղելով տարբեր առարկաներ և ուսուցման ձևաչափեր՝ զարգացնելու մանկավարժահոգեբանական և սոցիալական հմտություններն ու հետաքրքրությունները:

Համալսարանը, կրթական գործունեությանն զուգահեռ, մշտապես խրախուսում և աջակցում է գիտահետազոտական գործունեությանը՝ ստեղծելով կենտրոններ և լաբորատորիաներ դասավանդման ժամանակակից մեթոդների ուսումնասիրման և գործնականում դրանց իրականացման համար:

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը հավակնում է դառնալու մանկավարժական գործունեության գաղափարների, մոդելների ստեղծող, նախաձեռնող և տարածաշրջանային կրթական տարածքում նորարարական գործընթացներ ներդնող ուսումնահետազոտական միջավայր: Մանկավարժական կրթության նոր ռազմավարությունների մշակման հիմքում ՀՊՄՀ-ն դնում է իր ուսումնառողներին շարունակաբար զարգացող մասնագետ տեսնելու փաստը, որը ամրագրված է *գիտելիքի մատչելի հասանելիություն-ուսանողակենտրոնություն-կրթական առաջընթաց-շարունակական կրթություն* արժեքային շղթայով:

Արժեհամակարգային է նաև ՄՈՒՀ-ի այն դիտարկումը, որ հավակնում է գիտելիքահեն, ստեղծագործ միտք զարգացնող, անձի շարունակական զարգացում ապահովող, ազգային, բարոյական, հոգևոր և համամարդկային արժեքներ սերմանող առաջատար հաստատություն լինել հանրային ամենատարբեր շերտերի ներկայացուցիչների համար:

ՄՈՒՀ-ի № 57 հիմնական դպրոցն ու ավագ դպրոց-վարժարանը համալսարանի օրգանական մասն են կազմում՝ որպես ուսանողական պրակտիկայի կազմակերպման լավագույն հարթակ և նոր գաղափարների փորձարկման միջավայր: Համալսարանն ունի «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթ, եռալեզու www.aspu.am պաշտոնական կայք, համալսարանական առաջին ռադիո radiofama.am և այլ սոցիալական հարթակներ:

Այսպիսով, մանկավարժական Համալսարանը ձգտում է ստեղծել ներառական միջավայր, որտեղ յուրաքանչյուր ուսանող, անկախ իր ծագումից, կարողություններից, հնարավորություն ունի ստանալ բարձրագույն մանկավարժական և սոցիալ-հումանիտար բարձրակարգ կրթություն:

Հասցե՝ Հայաստան, 0010, Երևան, Տիգրան Մեծի պող., 17 շենք, էլեկտրոնային հասցե՝ info@aspu.am:

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ 1. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՄՈՒՀ) ՎԱՐԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԾԱՎԱԼԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՐԴԵԳՐԱԾ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ, ՈՐԸ ՀԱՄԱՀՈՒՆՉ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը ձգտում է դառնալ այնպիսի հաստատություն, որը՝

- ✓ ուսանողներին առաջարկում է մանկավարժահոգեբանական, սոցիալ-հումանիտար և արվեստների բնագավառներում կարողունակահեն կրթական ծրագրեր, ուսանողակենտրոն կրթական միջավայր՝ խարսխված ստեղծագործ աշխատանքի ու նորարարության վրա՝ համահունչ ՀՀ և Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի հիմնարար սկզբունքներին ու արժեքներին,
- ✓ կարևորում է ուսանողի և աշխատողի թիմային, ազնիվ, թափանցիկ և հաշվետվողական աշխատանքը, խրախուսում Մանկավարժական համալսարանի հեղինակության նկատմամբ յուրաքանչյուր աշխատակցի և ուսանողի բարձր պատասխանատվությունը, ակադեմիական ազնվությունը և բարեվարքությունը՝ առաջնային դիտարկելով նաև հասարակության առջև իր պատասխանատվությունն ու հաշվետվողականությունը,
- ✓ իր գործունեության հիմքում ապահովում է որակի ապահովման մշակույթի տարածում՝ բուհի գործուն և արդյունավետ վարչարարության և կառավարման միջոցով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 1.1. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

Հիմքեր՝

- ՄՈՒՀ-ի կանոնադրություն
- ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրները
- ՀՀ բարձրագույն կրթության վրա ազդող մակրո և միկրո գործոնների վերլուծություն (Հավելված 1.1.1)
- Բենչմարքի (հենանշման) մեթոդական ուղեցույց (Հավելված 1.1.2)
- Որոշում ՌԾ-ի հաստատման, արձանագրություն

Ներկայումս աշխարհում օրեցօր աճում են մանկավարժական կրթության դերն ու նշանակությունը՝ մանկավարժի մասնագիտությանը տալով նոր որակ և բովանդակություն: Կրթությունը դիտվում է հասարակության կայունության ապահովման հիմնական միջոց՝ դիմակայելու աղքատության արմատավորման, սոցիալական բևեռացման խորացման, ժողովրդավարական զարգացումների վտանգման, աղետներին և ռիսկերին, այդ թվում՝ համաշխարհայնացման հետևանքով ի հայտ եկող նոր մարտահրավերներին: Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիր-ում (տե՛ս https://view.officeapps.live.com/op/view.aspx?src=https%3A%2F%2Fwww.e-draft.am%2Ffiles%2Fproject_file%2F1%2F16448467377551.docx&wdOrigin=BROWSELINK հասցեով) հիմնավորված են մանկավարժական կրթության դերն ու նշանակությունը մեր պետության համար, ինչպես նաև նախանշված են այն գործողությունները, որոնք միտված են միջազգային ճանաչելիության բարձրացմանը: Պատահական չէ, որ «Ակադեմիական քաղաք» հիմնադրամում կրթությանը հատկացված է առանձին կլաստեր, իսկ Խաչատուր Աբովյանի անվան ՄՈՒՀ-ն ՀՀ-ում միակ մանկավարժական բուհն է, որը հավակնում է պատրաստել ազգային, բարոյական, հոգևոր, սոցիալ-մշակութային, ազգային և համամարդկային արժեքներով առաջնորդվող մանկավարժ-մասնագետներ, ովքեր ունակ կլինեն իրենց մասնագիտական հետազոտական, ներուժը ծառայեցնել

մեր պետությանը, գալիք սերունդների կրթադաստիարակչական գործընթացին՝ արդյունավետ ինտեգրվելով համաշխարհային միտումներին։

ՄՈՒՀ-ի առաքելությամբ են պայմանավորված նրա գործունեության նպատակները, որոնք սահմանված են բուհի կանոնադրության մեջ (տե՛ս https://aspu.am/website/images/files/8ebe46f2.pdf) և համապատասխան ստորաբաժանումների կանոնադրություններում։

Համալսարանի առաքելությունը և նրա տեսլականի արդյունավետ իրագործումը սահմանված են 2020-2025 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով (տե՛ս https://aspu.am/website/images/files/Razmavarakan%20cragir_2020-2025.pdf): Մանկավարժական մայր բուհի տեսլականի հիմքում մասնագիտական ոլորտներում մատուցվող կրթական ծառայություններում նորարարական, գործնական հետազոտական կարողություններ և հմտություններ տրամադրող, կարողունակահեն,ստեղծագործ միտք զարգացնող, անձի շարունակական զարգացում ապահովող, ազգային, բարոյական, հոգևոր և համամարդկային արժեքներ սերմանող, հանրային ամենատարբեր շերտերի ներկայացուցիչների համար ստեղծագործ պայմաններ ապահովող հաստատություն է, որը հանդես է գալիս որպես մանկավարժահոգեբանական գործունեության գաղափարների, մոդելների ստեղծող, նախաձեռնող և տարածաշրջանային կրթական տարածքում նորարարական գործընթացների ներդնող ուսումնահետազոտական միջավայր և ապահովում է երկրում առկա կրթական և մշակութային գործընթացների զարգացման հեռանկարների ոլորտում առաջադեմ հիմնարար հետազոտություններով, սոցիալական և մշակութային ոլորտներում գիտության և կրթության ազդեցության մեխանիզմների ուսումնասիրությամբ և արդիականացմամբ, համընդհանուր ներառականության սկզբունքների ներդրմամբ, հանրահռչակմամբ և մանկավարժական կրթության նոր ռազմավարությունների մշակմամբ ու արդյունավետորեն կիրառմամբ, ինչը կնպաստի ուսուցչի մասնագիտության նոր կերպափոխությանը՝ 21-րդ դարի հմտությունների լայն տիրապետմամբ։

Դեռևս 2020 թվականին ՄՈՒՀ-ը ձեռնամուխ եղավ մշակելու Ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցի խորհրդատվություններին համապատասխան՝ բուհի կողմից հաստատված բարելավման գործողությունների պլան, որը պետք է հաստատվեր հոգաբարձուների կողմից։ Սակայն մի կողմից՝ համավարակը և ՀՀ-ում պատերազմական գործողությունները ֆորսմաժորային իրավիճակ էին ստեղծել, և ՄՈՒՀ-ը որոշումները կայացնում էր ըստ իրավիճակի, մյուս կողմից՝ ՄՈՒՀ-ը չուներ հաստատված հոգաբարձուների կազմ։ Ուստի գործողությունների պլանի նախնական նախագիծը քննարկվել էր միայն գիտական խորհրդի կողմից (տե՛ս https://aspu.am/website/images/files/2021-2025%20%20%20%20%20%20%20.pdf), որն այդ ժամանակում կառավարման ամենաբարձր կոլեգիալ մարմինն էր. Այս պատճառով է, որ Համալսարանի՝ ՌԾ-ի գործողությունների վերջնական հաստատված պլանը, հոգաբարձուների կողմից, սկսվում է 2022 թվականից։ ՀՀ վարչապետի 2021 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 1226-Ա որոշմամբ հաստատվեց «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հիմնական կազմը՝ 5 տարի ժամկետով, որի անդրանիկ նիստով որոշվեց (տե՛ս https://aspu.am/website/images/files/N16.pdf) վերանայել ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրի գործողությունների պլանը՝ այն համապատասխանեցնելով ՀՀ Կառավարության սահմանած առաջնահերթություններին՝ գործընթացին ակտիվ ներգրավելով նաև արտաքին և ներքին շահակիցներին՝ հոգաբարձուների խորհրդից անդամներ, գործատուներ, պրոֆեսորադասախոսական կազմ, ուսանողներ և այլք։ Արդյունքում որոշակի վերանայվեցին առաքելությունն ու տեսլականը՝ առավել շեշտադրելով մանկավարժական մատչելի և ներառված միջավայր ունենալու ՄՈՒՀ-ի տեսլականը, հստակեցվեցին ոլորտներն ու դաշտը։ Հարկ է նշել, որ ՄՈՒՀ -ի զարգացման նախորդ ռազմավարական ծրագրի յոթ ռազմավարական ուղղությունները 2020-2025թթ. ռազմավարական ծրագրում առավել ընդգրկուն և հանգամանալից են դիտարկվել՝ ելնելով ՀՀ կրթության ոլորտում առկա մարտահրավերներից և համալսարանի մրցունակության բարձրացման կարևորության հրատապությունից։ Մասնավորապես, նախորդ ռազմավարական ծրագրի 5-րդ ուղղությունը, որը միաժամանակ ներառում էր համալսարանի գործունեության երեք հիմնական ոլորտները՝ արդյունավետ կառավարում, ֆինանսական կայունություն, ժամանակակից ենթակառուցվածք, և ձևակերպված էր որպես առանձին խնդիրներ, արդեն իսկ նոր ծրագրում

դիտարկվել են որպես առանձին զարգացման ուղենիշներ՝ հստակ սահմանված նպատակով, առաջադրված խնդիրներով և միջոցառումների իրականացման քայլերով, կատարողականի գնահատման առանցքային ցուցանիշներով: Ավելին, կարևորվել է կրթության էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառմամբ ուսումնական գործընթացի, կրթական ծառայությունների շարունակականությունն առցանց տիրույթում և դիտարկվել որպես առանձին ռազմավարական ուղղություն:

ՄՈՒՀ-ի ռազմավարական 2020-2025 թթ. պլանով նախանշված է 11 հիմնական ուղղություն, որոնց իրագործելիությունը ապահովելու են 25 խնդրի լուծում, թվով 116 գործողությունների կատարմամբ: Կազմվել և հաստատվել են ՄՈՒՀ-ի 2020-2025թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակցույց-պլան և համապատասխան բյուջե՝ բաշխված ըստ տարիների (տե՛ս https://docs.google.com/spreadsheets/d/1re0bMMJLUFGikp-pgWhL2ExI6ZApqKF_/edit#gid=1526011360): Հարկ է ընդգծել, որ ռազմավարական ծրագրի իրականացման պլան-ժամանակցույցի նոր ձևաչափը՝ ռիսկերի ներառմամբ մշակվել է արտաքին շահակիցների հետադարձ կապի համաձայն:

ՄՈՒՀ-ն իրականացնում է ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) 3 մակարդակներին (բակալավր, մագիստրոս, գիտությունների թեկնածու) և գոյություն ունեցող ՈՈՇ-ին համապատասխան կրթություն: Իր առաքելությամբ պայմանավորված՝ բոլոր ֆակուլտետները և մյուս ստորաբաժանումները նույնպես ունեն Համալսարանի ՌԾ-ներից բխող և ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված իրենց ստորաբաժանումների գործողությունների պլան ժամանակացույցերը, որոնց կատարողականի վերաբերյալ արդյունքները ներկայացվում են տարեկան հաշվետվություններում:

Պարբերաբար իրականացվում են համալսարանի կողմից առաջարկվող բոլոր կրթական ծրագրերի հենանշում /բենչմարքինգ/ (տե՛ս օրինակը https://docs.google.com/document/d/1xtrvSqnU6VIja-8SOJneQ7ZpjOwBt7-R/edit) տեղական և միջազգային համալսարանների նմանատիպ մասնագիտությունների համար մշակված կրթական ծրագրերի և դպրոցական առարկայական ծրագրերի չափորոշիչների հետ: Վերլուծության և ուսանողների կրթական ծրագրից բավարարվածության բացահայտմանն ուղղված ուսումնասիրության արդյունքների հիման վրա կատարվել է ՄԿԾ-ների վերանայում, որի ընթացքում կրթական ելքային արդյունքները վերաձևակերպվել և հստակեցվել են ապահովելով դրանց համադրելիությունը ՀՀ որակավորումների ազգային և ոլորտային (առկայության դեպքում) շրջանակներին (ՈԱՇ, ՈՈՇ):

Արդյունքում, ՄԿԾ-ների մասնագրերում ներառված դասընթացները և իրականացվող պրակտիկաներն ապահովում են որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների պահանջներին համադրելի վերջնարդյունքներ՝ գիտելիք, հմտություններ և կարողությունները: Ավելին, իրենց կառուցվածքային և բովանդակային բնույթով դրանք համահունչ են որակավորումների Եվրոպական շրջանակին և Բոլոնիայի պահանջներին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 1.2. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Հիմքեր՝

ՄՈՒՀ-ի սահմանած նպատակների և խնդիրների իրականացման համար սահմանված են ներքոնշյալ փաստաթղթերը.

- Խաչատուր Աբովյանի անվան ՄՈՒՀ-ի հիմնադրամի կանոնադրություն
- Խաչատուր Աբովյանի անվան ՄՈՒՀ-ի 2020-2025 թթ. զարգացման ռազմավարական ծրագիր:
- ՀՀ բարձրագույն կրթության վրա ազդող մակրո և միկրո գործոնների վերլուծություն (Հավելված 1.2.1)
- Արտաքին և ներքին շահակիցների կարիքների գնահատում (Հավելված 1.2.2)

Համաձայն «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» (տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docid=25820) օրենքի հոդված 15-ի 10-րդ կետի՝ մշակված է

ռազմավարական հնգամյա ծրագիր և դրա իրականացման պլան-ժամանակացույց:

ՄՈՒՀ-ի կանոնադրության 4-րդ բաժնի 20-րդ կետով սահմանված է, որ շահառուները կրթական, գիտական, մշակութային, գիտաարտադրական բնագավառներին առնչվող ֆիզիկական ու իրավաբանական անձինք են: Համալսարանի առաքելությունն իրականացվում է մասնակցականության և կոլեգիալության սկզբունքներով: Համալսարանի և նրա ստորաբաժանումների կառավարման բոլոր մարմիններում ընդգրկված են և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցների ներկայացուցիչներ (տե՛ս համապատասխան չափանիշը):

ՄՈՒՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրում (2020-2025թթ.) մշակվել է բուհի զարգացման ռազմավարական ծրագրի յուրաքանչյուր ուղենիշի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները (ԳԱՑ-եր): ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցի (Տե՛ս https://anqaaccreg.blob.core.windows.net/accreg-production/hyuh-փորձագիտական-զեկույց-2019-compressed%20(1)_cc07e350-acd5-4869-941a-92e0922066e3.pdf) խորհրդատվություններին համապատասխան սահմանվել են ՌԾ-ում նպատակներն ու խնդիրները՝ ըստ ուղղությունների: ՀՀ բարձրագույն կրթության վրա ազդող մակրո և միկրո գործոնների վերլուծություն (տե՛ս https://drive.google.com/file/d/1_ZDFHAF7Gfv_W55temvowBcpOg9iMXW6/view) ուսումնասիրության եզրահանգումները ևս հաշվի են առնվել զարգացման ռազմավարական ծրագիրը մշակելիս:

Ուսանողները մեր Համալսարանի առանցքային շահակիցներն ու դերակատարներն են ՄՈՒՀ-ի ՌԾ-ի 4-րդ ուղղությամբ առանձնակի ուշադրություն է դարձված դիմորդներին, ուսումնառողներին և վերջիններիս կարիերայի կառավարմանը (տե՛ս ՄՈՒՀ ՌԾ ուղղություն 4 aspu.am/website/images/files/Razmavarakan%20cragir_2020-2025.pdf), իսկ նրանց կրթական կարիքների բավարարման համար ռազմավարական նպատակ է սահմանվել՝ ապահովելու ազգային և միջազգային չափանիշներին համապատասխան կրթական ծառայություններ (տե՛ս ՄՈՒՀ-ի ՌԾ ուղղություն 1 aspu.am/website/images/files/Razmavarakan%20cragir_2020-2025.pdf): Համալսարանը առավելապես կարևորում է ուսանողների շահերի պաշտպանությունը և կրթական կարիքների բացահայտումը՝ խթանելով ուսանողական ինքնավարությունը, Համալսարանի կառավարման գործընթացներում նրանց ակտիվ մասնակցությունը, համագործակցությունը ՀՀ-ում և արտերկրում գործող ուսանողական, երիտասարդական և այլ կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական այլ անձանց հետ:

Համալսարանը կարևորում է իր առաքելությամբ սահմանված ուղենիշների բարեհաջող իրականացումը, որի շրջանակներում ՌԾ-ով բուհը սահմանել է՝ «շարունակաբար բարելավել և ընդլայնել դիմորդների մասնագիտական կողմնորոշման մեխանիզմները՝ խթանելով ապագա դիմորդների ակտիվ ներգրավվածությունը Համալսարանի գործունեության տարբեր գործընթացներում» (տե՛ս ՄՈՒՀ ՌԾ ուղղություն 4 aspu.am/website/images/files/Razmavarakan%20cragir_2020-2025.pdf): Ներկայումս մշակվում է նաև դիմորդների մասնագիտական կողմնորոշման իրականացման քաղաքականությունը և պլան-ժամանակացույցը գործողություններով՝ ցուցաբերելով հստակ մարքեթինգային մոտեցում, ինչպես նաև նախատեսվում է իրականացնել վերջին 4 տարիների ընթացքում դիմորդների հավաքագրման, ընտրության և Համալսարան ընդունելության մեխանիզմների արդյունավետության վերլուծություն: Այստեղ կանոր է փաստել, որ ՀՀ-ում պետական բուհերի բակալավրիատի ընդունելությունը իրականացվում է ոչ թե բուհերում, այլ ԳԹԿ-ի կողմից, բացի արվեստի մասնագիտություններից, որտեղ ընդունելությունն իրականացվում է ներբուհական քննություններով:

ՄՈՒՀ-ն առավել կարևորում է նաև մանկավարժահոգեբանական, հայագիտական և սոցիալ-հումանիտար այլ բնագավառներում արդյունահեն գիտահետազոտական աշխատանքների իրականացումը և դրանց հանրահռչակումը միջազգային գիտական հանրույթում: ՌԾ-ի ուղղություն 2-ի 2-րդ խնդրով նպատակադրվել է ստեղծել գիտական նոր ինստիտուտներ և լաբորատորիաներ, միաժամանակ վերազինել եղածները, հիմնադրել նոր գիտական պարբերականներ՝ ներգրավելով դրանք միջազգային գիտաչափական շտեմարաններում (տե՛ս ՄՈՒՀ-ի ՌԾ-ի ուղղություն 2 aspu.am/website/images/files/Razmavarakan%20cragir_2020-2025.pdf): Այստեղ բուհը կարևորում է երտիասարդ գիտնականների, հետազոտողների մուտքը Համալսարան, որի իրագործման համար

նախանշել է մշակել ու ներդնել ՄՈՒՀ-ի ՊԴԱ-ի, երիտասարդ գիտնականների, հետազոտողների գիտական գործունեության գնահատման և վարկանիշավորման արդյունավետ համակարգ:

Առանձնակի կարևորվում է նաև ՄՈՒՀ-ի գործունեության կառավարման արդյունավետությունը: ՌԾ-ի 3-րդ ուղղությամբ Համալսարանում ստեղծվել են աշխատանքային խմբեր, որոնք պետք է պարբերաբար վերանայեն Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների պաշտոնի նկարագրերը՝ բացառելով փոխհատվող և կրկնվող գործառույթները (տե՛ս ՄՈՒՀ-ի ՌԾ-ի ուղղություն 3 aspu.am/website/images/files/Razmavarakan%20cragir_2020-2025.pdf)՝ համապատասխանեցնելով աշխատանքային պայմանների փոփոխություններին, քանի որ ՄՈՒՀ-ը դինամիկ փոփոխվող օրգանիզմ է:

Հարկ է նշել, որ բարելավման գործընթացներն իրականացնելիս հաշվի են առնվում կրթական միջավայրում Համալսարանի համար ստեղծված նոր հնարավորությունները և առկա մարտահրավերները: Ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլան-ժամանակացույցի փոփոխությունները կատարվում են՝ համաձայն ՄՈՒՀ-ում գործող զարգացման ռազմավարական ծրագրի մշակման և ընդունման կարգի (տե՛ս https://aspu.am/website/images/files/3b8a0db6.pdf):

Համալսարանում իրականացվում են նաև արտաքին և ներքին շահակիցների կարիքների պարբերաբար գնահատում, որոնք հիմք են հանդիսանում հետագայում գործողությունների պլանավորման և իրականացման համար:

Առաջարկությունները քննարկվում են ամբիոնների և ֆակուլտետների խորհրդի նիստերում, որից հետո ներկայացվում և հաստատվում են համալսարանի գիտական խորհրդում (տե՛ս https://aspu.am/hy/page/gitakan_khorhurd/) և հոգաբարձուների խորհրդում (տե՛ս https://aspu.am/hy/page/khorhrdi_kazmy/):

Առանձնակի աշխատանքներ են իրականացվել արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի բարելավման ուղղությամբ՝ ամրապնդելով և ընդլայնելով համագործակցության գործառույթները կառավարման թե՛ ինստիտուցիոնալ, թե՛ կրթական ծրագրերի վերանայման մակարդակներում:

ՄՈՒՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի նախագծի քննարկումից հետո ներքին ու արտաքին շահակիցների կողմից արված առաջարկությունների, լրացումների և ճշգրտումների արդյունքում զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի նախագծային տարբերակը ներկայացվել է ռեկտորատի քննարկմանը: Մանրամասն քննարկումից և հավանության արժանանալուց հետո քննարկման նպատակով այն տեղադրվել է համալսարանի կայքէջում:

Ներքին և արտաքին շահակիցներն ընդգրկված (տե՛ս https://aspu.am/website/images/files/N16.pdf) են ոչ միայն ՄՈՒՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման գործընթացներում, այլև ակտիվորեն մասնակցում են ֆակուլտետի խորհրդում ամբիոնների կողմից ներկայացված ռազմավարական ծրագրի գործողությունների պլանների կատարողականների քննարկմանը: Ավելին՝ ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի կատարողականը տարեկան կտրվածքով դիտարկվում է գիտական խորհրդում և հոգաբարձուների խորհրդում, որտեղ ևս ներառված են ներքին ու արտաքին շահակիցներ: Հարկ է նշել, որ գիտական խորհրդի 25 տոկոսը ներկայացնում են ուսանողության ներկայացուցիչներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 1.3. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Հիմքեր՝

- Ռեկտորի ամենամյա հաշվետվություններ[3]
- Զարգացման ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանի հաշվետվությունները

Ռազմավարական ծրագրի /2020-2025թթ./ գործողությունների կատարման պլան-

[3] https://aspu.am/hy/page/hashvetvutyunner

ժամանակացույցի նպատակների իրականացման արդյունքները պարբերաբար քննարկվում են ամբիոնների և ֆակուլտետների խորհրդի նիստերում: Պլանավորված է 2023 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կողմից իրականացնել ՌԾ-ի կատարողականի քննարկում երկու տարվա կտրվածքով՝ ըստ ուղղությունների և ստորաբաժանումների: Այնուհետև ռազմավարական ծրագրի նպատակների իրականացմանն ուղղված արդյունքները, ամփոփվելով որակական և քանակական գնահատման առանցքային ցուցիչներով, կներկայացվեն ռեկտորի ամենամյա հաշվետվության մեջ, գիտական խորհրդին և հոգաբարձուների խորհրդին: Հատկանշական է, որ 2020-2022 թթ. հիշյալ գործողությունը համակարգված չի իրականացվել, քանի որ Համալսարանում գործունեությունը իրականացվել է իրավիճակային՝ պայմանավորված ՔՈՎԻԴ- 19 համավարակով և ՀՀ-ում պատերազմական դրությամբ: Մյուս կողմից՝ հիշյալ շրջանում ՄՈՒՀ-ում տեղի են ունեցել կառավարման բոլոր մարմինների ամբողջական փոփոխություններ, որոնք իրենց ազդեցությունը չէին կարող չունենալ հիշյալ գործողություններում:

Նպատակների ձեռքբերմանն ուղղված գործառույթների կատարման ընթացքը և վերջնարդյունքները գնահատվում են նաև արտաքին շահակիցների կողմից տարբեր քննարկումների ժամանակ, հարցումների արդյունքների վերլուծության միջոցով:

ՄՈՒՀ-ն իր գործընթացներն իրականացնում է ՊԻԳԲ շրջափուլի հիման վրա: Պլանավորման գործընթացն իրականացվում է վերևից ներքև. նախ կազմվում է զարգացման ռազմավարական ծրագիրը, ապա ռազմավարական ծրագրի իրականացման պլան- ժամանակացույցը: Զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման արդյունավետությունը բարձրացնելու համար նպատակների ձեռքբերմանն ուղղված խնդիրների լուծման քայլերը տարանջատվել և գնահատվել են ըստ տարիների: Յուրաքանչյուր քայլի համար մշակվել է համապատասխան ԳԱՑ-ը, պատասխանատուները, ինչպես նաև հաշվարկված են ռիսկերն ու ռեսուրսները: Նշված մեխանիզմն առավել չափելի է դարձնում ռազմավարական ծրագրի գործողությունների իրականացման կատարողականը և բարձրացնում գնահատման արդյունավետությունը:

ՄՈՒՀ-ի ստորաբաժանումների գործողությունների տարեկան պլանավորումը միտված է ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրի իրականացմանը, բխում է ռազմավարական ծրագրի նպատակներից ու խնդիրներից: Ստորաբաժանումների տարեկան պլանները կազմվում են ռազմավարական ծրագրի ժամանակացույցին համապատասխան՝ ըստ գործող ձևաչափի: Գործընթացների բարելավման նպատակով հիմնական ուղենիշների առանձին գործողությունների իրականացման վերաբերյալ արդյունքները վերլուծվում են, բացահայտվում են ռազմավարական ծրագրի առանձին գործողությունների չիրականացման կամ ոչ պատշաճ իրականացման պատճառները:

Համալսարանի բոլոր ստորաբաժանումներն իրականացնում են տարեկան գործողությունների պլանավորում՝ համաձայն ՌԾ-ի, պլանավորված գործողությունների փաստացի իրականացում, տարեվերջին ֆակուլտետային խորհրդի կամ ամբիոնի նիստերում ներկայացնում հաշվետվություն (տե՛ս, օրինակ՝ https://aspu.am/hy/page/mankavarzhutyan_ambioni_hashvetvutyun/)՝ պլանով նախատեսված և իրականացված գործողությունները գնահատելու համար, արդյունքում բարելավում դրանք հետագա ավելի հստակ պլանավորման և արդյունավետ իրականացման համար:

Յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար կազմվում է ՄՈՒՀ-ի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվ (բյուջե), իսկ նախորդ տարվա բյուջեի կատարման ցուցանիշների վերաբերյալ՝ եկամուտների և ծախսերի նախահաշվի կատարողական ու հաշվետվություններ (տե՛ս https://aspu.am/hy/page/hashvetvutyunner/):

ՄՈՒՀ-ի ֆինանսական պլանավորումը ոչ միշտ է համարժեք Համալսարանի ռազմավարական նպատակներին ու խնդիրներին, որովհետև տարեկան ֆինանսական մուտքերի ծավալները, որոնք հիմնականում ձևավորվում են ուսման վարձերից, ամբողջությամբ կանխատեսելի չեն: Այդ պատճառով Համալսարանը չունի հստակ երկարաժամկետ ռազմավարական բյուջե՝ ՌԾ-ում սահմանված հիմնական նպատակների ու խնդիրների իրագործման ռեսուրսային բազա ապահովելու համար:

ՄՈՒՀ-ում կրթության որակի շարունակական բարելավմանը նպաստող մեխանիզմներից են նաև դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական կիսամյակային հարցումները (տե՛ս https://drive.google.com/drive/folders/1hAFFUzxTLGuYQHqrbjkeS1k8EzI74FTg), ինչպես նաև Համալսարանում ստացած կրթությունից շրջանավարտների (տե՛ս https://drive.google.com/file/d/15Gs2xenyy03QNQ4L3KE1EhuUaxB0zteS/view?pli=1) բավարարվածության վերաբերյալ հարցումները, որոնք իրականացվում են համապատասխան ստորաբաժանումների կողմից: Դրանք քննության առարկա են դառնում ստորաբաժանումներում և ներկայացվում համապատասխան առաջարկներով:

Յուրաքանչյուր տարվա ավարտին բոլոր ստորաբաժանումները Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությանը ներկայացնում են հաշվետվություններ՝ կատարված քայլերի արդյունքների վերաբերյալ: Հաշվի առնելով ստորաբաժանումների նկատառումները՝ ռազմավարական ծրագրի գործողության պլանի վերաբերյալ կատարվում են համապատասխան փոփոխություններ:

ՄՈՒՀ-ի առաքելության և հիմնական նպատակների իրականացումը գնահատող մեխանիզմներից է ՄՈՒՀ-ում գործող վարից վեր հաշվետվողականությունը (ամբիոնների, ֆակուլտետների, ռեկտորի տարեկան հաշվետվությունները): ՄՈՒՀ-ի գործունեության համակողմանի ներկայացումը և գնահատումը կատարվում են նաև ամեն տարի հրատարակվող ընդհանուր հաշվետվության միջոցով՝ ՄՈՒՀ-ի բոլոր ստորաբաժանումների նախորդ ուստարվա գործունեության արդյունքների ներկայացմամբ: 2017 թվականից շրջանառության մեջ է դրվել ֆակուլտետների, ամբիոնների և ստորաբաժանումների հաշվետվողական նոր ձևաչափ, որն իր բովանդակությամբ համապատասխանում է ՈԱԱԿ-ի ինքնավերլուծության ձևաչափին, ուստի և ապահովում է ՄՈՒՀ-ի ստորաբաժանումների ոչ թե պարզ հաշվետվողականությունը, այլ ինքնավերլուծությունը և ինքնագնահատումը: Ստորաբաժանումների վերլուծական հաշվետվությունները մի մասով (ոչ ամբողջական) ընդգրկվում են ռեկտորի տարեկան հաշվետվությունում: Սակայն ձևաչափը նույնպես վերափոխման կարիք ունի, քանի որ առկա են որոշակի գործառույթների կրկնություններ:

Նոր մոտեցումը նպաստեց Համալսարանի ստորաբաժանումներին լինել առավել վերլուծական, թափանցիկ և հաշվետվողական, առաջնորդվել հստակ և անշեղորեն սահմանված ռազմավարական ծրագրի նպատակներին, խնդիրներին և քայլերին համապատասխան, որը մի կողմից՝ էապես նվազեցրել է ռազմավարական պլանից ստորաբաժանումների շեղումներն ու սահմանված գործողությունների չիրականացման ռիսկերը, մյուս կողմից՝ էականորեն նպաստել իրականացվող գործընթացների որակի բարձրացմանը:

ՄՈՒՀ-ի գործունեության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները՝ ըստ 1-ին չափանիշի

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
ՄՈՒՀ-ն ունի որակավորումների շրջանակներին համահունչ առաքելություն և տեսլական, որոնք իրագործելի են ՌԾ-ով սահմանված նպատակներով և խնդիրներով:	ՄՈՒՀ-ի շահակիցների կրթական կարիքների բացահայտման առկա մեխանիզմ-ները (իրավանորմատիվային հենք) ոչ միշտ են արդյունավետ արձագանքում՝ առաքելությամբ սահմանված նպատակներն առավել թիրախավորելու համար:
ՄՈՒՀ-ն ապահովված է առավել չափելի գործողությունների կատարման առանցքային ցուցիչներով, իրականացման սահմանված ժամանակացույցով, բյուջեով, ռեսուրսներով,	ՄՈՒՀ-ը երբեմն ոչ բավարար ֆինանսա-կան ռեսուրսների պատճառով չունի ՌԾ-ով սահմանված բյուջեի երկարաժամկետ ծրագրերի և առանձին գործողությունների իրա-

հաշվետու-պատասխանատուներով ՌԾ գործողությունների պլանով:	կանացման արդյունավետ ապահովման հնարավորություն:
ՄՈՒՀ-ն ունի ներքին և արտաքին շահակիցների կարիքների բացահայտման իրավանորմատիվային հենք:	ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքի օպտիմալացման և վարչարարության արդյունավետության բարձրացմանն ուղղված գործընթացների պլանավորումը և համապատասխան ռիսկերի կառավարումը դեռևս ոչ վերջնական փուլում են:
Հնարավորությունները	**Վտանգները**
ՄՈՒՀ-ի կառավարման բարձրագույն կառույցներում ազդեցիկ արտաքին շահակիցները կարող են զգալի հնարավորություն ընձեռել ռազմավարական նպատակներն արդյունավետ թիրախավորելու և իրականացնելու համար:	Պետական աջակցության ոչ բավարար կանխատեսելիությունը կարող է առաջացնել էական ռիսկեր ռազմավարական ծրագրով սահմանված գիտակրթական գործունեությունը առավել արդյունավետ ապահովելու համար:
Կրթության և հոգեբանության ոլորտում միջազգային կառույցների հետ սերտ համագործակցությունը հնարավորություն կտա բարձրացնելու ՄՈՒՀ-ի վարկանիշը՝ իրականացնելով առաքելությամբ սահմանված երկարաժամկետ ծրագրեր և առանձին գոր-ծողություններ:	ՀՀ-ում գործող բուհերի տարբեր կար-գավիճակների և նրանց գործունեության կարգավորման տարբեր իրավանորմատիվային հենքի առկայությունը կարող է անհավասար պայմաններ ստեղծել մրցակցային դաշտում:
Կրթության քաղաքականության շարունակական բարեփոխումները նոր հնարավորություններ կընձեռեն ՄՈՒՀ-ին՝ բարձրացնելու մանկավարժահոգեբանական կրթության նկատմամբ հետաքրքրությունը՝ իրականացնելով թիրախային գործողություններ:	Կրթական բնագավառում շարունակական փոփոխվող չափորոշիչները, տեխնոլոգիաները կարող են էական ռիսկեր առաջացնել երկարաժամկետ ռազմավարական պլանավորման համար՝ պահանջելով լրացուցիչ ներդրումներ:

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները

- ՄՈՒՀ-ի շահակիցների կրթական կարիքների բացահայտման մեխանիզմների վերանայում և ամբողջացում՝ առաքելությամբ սահմանված նպատակներն առավել թիրախավորելու համար
- ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքի օպտիմալացման և վարչարարության արդյունավետության բարձրացմանն ուղղված գործընթացների պլանավորման ուղիների մշակում և կիրառում
- ՌԾ-ով սահմանված բյուջեի երկարաժամկետ ծրագրերի և առանձին գործողությունների իրականացման արդյունավետ մեխանիզմների մշակում
- Պետական աջակցությամբ ռազմավարական ծրագրով սահմանված գիտակրթական գործունեության առավել արդյունավետ մեխանիզմների մշակում և համակարգում
- ՀՀ-ում գործող բուհերի տարբեր կարգավիճակների և նրանց գործունեության կարգավորման տարբեր իրավանորմատիվային հենքի վերանայում՝ կրթության և հոգեբանության ոլորտում միջազգային կառույցների հետ սերտ համագործակցություն ապահովելու համար

ՉԱՓԱՆԻՇ 2. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾԱՌՆՈՒՄՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՆ ԵՎ ՄԻՏՎԱԾ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ՝ ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՆՈՐՄԵՐԸ

ՄՈՒՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրում (2020-2025 թթ.) որպես երրորդ ռազմավարական ուղղություն ամրագրված է կառավարման համակարգի կատարելագործման անհրաժեշտությունը՝ գործընթացների թափանցիկության և հաշվետվողականության ապահովմամբ, բացահայտված խնդիրների լուծման համար մշակված գործողությունների ու քայլերի հաջորդականությամբ՝ միտված համալսարանի կազմակերպական կառուցվածքի շարունակական կատարելագործմանը և լավարկմանը, կառավարման համակարգի ստորաբաժանումների գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ գործառույթների որակի կառավարման ամբողջական համակարգի կիրառմամբ, ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակների ու խնդիրների իրագործմանը նպատակաուղղված ֆինանսների արդյունավետ կառավարմանը, որոշումների կայացման գործընթացում շահակիցների ակտիվ ներգրավմանը, կառավարման տեղեկատվական-վերլուծական արդիական համակարգի համալիր կիրառմանը, կառավարման և վարչարարական գործընթացներում փորձառու կադրերի ներգրավվածության ապահովմանը: Վերոնշյալ գործընթացների կատարումը ըստ հաստատված առաջընթացի գնահատման ցուցանիշների հնարավոր կդարձնի համալսարանի հեռապատկերի և առաքելությանը համահունչ նպատակների իրականացումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.1. Հաստատության կառավարման համակարգն ապահովում է սահմանված էթիկայի կանոններին համապատասխան որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Հիմքեր՝

- «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրություն
- ՄՈՒՀ-ի գիտական խորհրդի կանոնակարգ
- ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքի սխեմատիկ պատկեր (Հավելված 2.1.1)
- ՄՈՒՀ-ի ուսումնական, գիտական, վարչական ստորաբաժանումների կանոնադրություններ[4]
- ՄՈՒՀ –ի ուսանողական խորհրդի կանոնադրություն
- ՄՈՒՀ-ի ֆակուլտետի դեկանի ընտրության կարգ (Հավելված 2.1.2)
- ՄՈՒՀ-ի ամբիոնի վարիչի ընտրության կարգ (Հավելված 2.1.3)
- ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգ (Հավելված 2.1.4)
- Տարեկան ֆինանսական հաշվետվություններ [5]

ՄՈՒՀ-ի կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքների նորմերին ու պահանջներին, ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված և 2021 թ. սեպտեմբերի 17-ին իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից փոփոխությունները գրանցված ՄՈՒՀ-ի կանոնադրության դրույթներին համապատասխան՝ նշված նորմատիվ իրավական ակտերով ամրագրված ՄՈՒՀ-ի հոգաբարձուների խորհրդի, ՄՈՒՀ-ի գիտական խորհրդի և ռեկտորի իրավասությունների ու գործառույթների շրջանակներում: ՄՈՒՀ-ի կառավարմանն առնչվող առանձին գործընթացների կարգավորումն իրականացվում է ՄՈՒՀ-ի կառավարման մարմինների գործառույթների և լիազորությունների սահմաններում՝ հաստատված

[4] https://aspu.am/hy/page/kanonadrutyunner/
[5] https://aspu.am/hy/page/hashvetvutyunner/

ստորաբաժանումների ներքին իրավական ակտերով (կանոնադրություններ, կանոնակարգեր, ընթացակարգեր, կարգեր և այլն)։

ՄՈՒՀ-ի կառավարումը հիմնված է ինքնավարության վրա՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ։ Կենտրոնացված կառավարմանը զուգընթաց կիրառվում են նաև ստորաբաժանումների կառավարման ապակենտրոնացման սկզբունքները՝ ղեկավարների լիազորությունների և պատասխանատվությունների շրջանակի հստակ սահմանմամբ։

Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրում, որը ներառում է 2020-2025 թթ. ժամանակահատվածում համալսարանի զարգացման հիմնական ուղենիշները, հստակ ամրագրված է Համալսարանի կառավարման համակարգի կատարելագործման նպատակը՝ ապահովելով գործընթացների թափանցիկությունը և հաշվետվողականությունը (նպատակ 3)։

Հարկ է նշել, որ որպես առաջնային խնդիր կարևորվում է համալսարանի կազմակերպական կառուցվածքի շարունակական բարելավումը և լավարկումը՝ նպատակաուղղելով ստորաբաժանումների գործունեությունը ռազմավարական հիմնական ուղղությունների իրականացմանը, ստորաբաժանումների աշխատակիցների պաշտոնի նկարագրերի վերանայմանը՝ փոխհատվող և կրկնվող գործառույթների բացառմամբ, ուղղահայաց և հորիզոնական կառավարման սկզբունքների կիրառմամբ և որակի կառավարման ամբողջական համակարգի ներդրմամբ (**ՊԻԳԲ** շրջափուլ)։

Շրջափուլի ապահովման տեսանկյունից կառավարման ուղղությամբ մասնավորապես իրականացվել են՝

- Առաքելության և տեսլականի վերաձևակերպում, արտաքին և ներքին միջավայրի գործոնների վերլուծության հիման վրա ռազմավարության մշակումաo իջեցնելով այն գործառնական մակարդակաo ռազմավարության իրագործման պլան-ժամանակացույցի մշակմամբ և իրականացմամբ։
- Կառավարման բոլոր մակարդակներում ուսումնական, վարչական և գիտական ստորաբաժանումների գործունեության համապատասխանեցում ռազմավարության հիմնական ուղենիշներին, շահակիցների ներգրավում և նրանց ակտիվ մասնակցությունաo ռազմավարության մշակման ու իրականացման նպատակով (մասնավորապես, քննարկվել և առաջարկվել է իրականացնել ռիսկերի գնահատում)։
- Հաջորդ փուլում արդյունքները մշտադիտարկվում են՝ ստուգելու ռազմավարական պլանի իրականացումը առաջընթացի և հաջողության տեսանկյունից՝ համաձայն գնահատման առանցքային ցուցանիշների կամ հիմնախնդիրների բացահայտման ու դրանց լուծման համար։
- Ինտեգրելով ամբողջ գործընթացի արդյունքը՝ առանցքային ցուցանիշների փաստացի տվյալների և ակնկալվող արդյունքների համաձայն բացահայտվում են շեղումները, որոնց վերացման ու բարելավման համար վերանայվում են իրականացման ընթացակարգերը, մեխանիզմները։

ՄՈՒՀ-ի կառավարման բարձրագույն մարմինը **հոգաբարձուների խորհուրդն** է, որի լիազորությունների ժամկետը 5 տարի է։ ՄՈՒՀ-ի հոգաբարձուների խորհուրդը հաստատում է ռազմավարական և տարեկան ծրագրերը, կառուցվածքը, եկամուտների ու ծախսերի տարեկան նախահաշիվը, տարեկան ֆինանսական հաշվետվությունները, լսում և գնահատում է ռեկտորի տարեկան հաշվետվությունը, ինչպես նաև իրականացնում է ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ ամրագրված այլ լիազորություններ։ ՄՈՒՀ-ի կանոնադրության մեջ ամրագրված է հոգեբարձուների խորհրդի իրավասությունները (ՄՈՒՀ-ի կանոնադրություն կետ 41) և հոգաբարձուների խորհրդի նախագահի պարտականությունները։

ՄՈՒՀ-ի **գիտական** խորհուրդը պլանավորում և համակարգում է ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կառավարման ու կազմակերպման հիմնահարցերը, ռեկտորատի, մշտական հանձնաժողովների, ֆակուլտետների ներկայացմամբ ընդունում է որոշումներ, կազմակերպում ընտրություններ, ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ և ՄՈՒՀ-ի գիտական խորհրդի կանոնակարգով սահմանված իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է այլ գործառույթներ (կանոնադրություն, կետ 48)։ Գիտական խորհրդի նիստերի օրակարգը և որոշումների նախագծերը նախապես տեղադրվում են ՄՈՒՀ-ի կայքէջում՝ հնարավորություն

ընձեռելով համալսարանի բոլոր ստորաբաժանումների, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության կողմից դրանց քննարկման ու առաջարկությունների ներկայացման համար:

Գիտխորհրդին կից գործում են մշտական և ժամանակավոր **հանձնաժողովներ**, որոնց գործունեությունը կարգավորվում է մասնաճյուղի կանոնադրությամբ, գիտխորհրդի և համապատասխան կանոնակարգերով: Գիտխորհրդի օրակարգում ներառված յուրաքանչյուր հարց մինչ գիտխորհուրդ ներկայացնելը նախապես քննարկվում է համապատասխան հանձնաժողովում, մեկնաբանվում է ներքին շահակիցների շրջանում և միայն դրանից հետո ներկայացվում գիտխորհրդի նիստի քննարկմանը: Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են ռեկտորը, պրոռեկտորները, գիտական քարտուղարը, ֆակուլտետների դեկանները, կառուցվածքային ստորաբաժանումների և արհեստակցական կազմակերպության ղեկավարները, ինչպես նաև ընտրովի անդամներ՝ գիտական խորհրդի կանոնակարգին համապատասխան: Գիտական խորհրդի անդամների թվի 25 տոկոսը սովորողներն են, որոնք առաջադրվում են ՄՈՒՀ-ի ուսանողական խորհրդի կողմից:

ՄՈՒՀ-ի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է ռեկտորը համակարգում է ՄՈՒՀ-ի կրթական, գիտական, արտադրական, տնտեսական, ֆինանսական, միջազգային և այլ գործունեությունը, տնօրինում է ֆինանսները, ՄՈՒՀ-ի անունից կնքում է գործարքներ, կազմակերպում է Հոգաբարձուների խորհրդի որոշումների կատարումը, գործում է ՀՀ-ի օրենսդրությանը և ՄՈՒՀ-ի կանոնադրությանը, և իր հետ կնքված աշխատանքային պայմանագրի համապատասխան սահմանված իրավունքներով և պարտականություններով/ ՄՈՒՀ-ի կանոնադրություն կետ 52/:

ՄՈՒՀ-ի ռեկտորատը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որը ՄՈՒՀ-ի հոգաբարձուների խորհրդի և գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում, ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ և ռեկտորատի կանոնակարգով սահմանված լիազորությունների սահմաններում քննարկում է ՄՈՒՀ-ի գործունեությանն առնչվող հարցեր, լսում տեղեկություններ, ձևավորում գիտական խորհրդի օրակարգը և նախապես քննարկում գիտական խորհրդի նիստերին ներկայացվող որոշումների նախագծերը, իրականացնում է այլ գործառույթներ:

ՄՈՒՀ-ի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործընթացների կազմակերպումն ու իրականացումն ապահովող հիմնական կառուցվածքային միավորը **ֆակուլտետն** է: Ֆակուլտետի ղեկավարումը ևս իրականացվում է միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ՝ դեկանի ու ֆակուլտետի խորհրդի՝ ՄՈՒՀ-ի և ֆակուլտետի կանոնադրություններով ամրագրված լիազորությունների ու գործառույթների իրականացմամբ:

Ֆակուլտետների ստորաբաժանումները՝ **ամբիոններ,** լաբորատորիաներ և այլն, գործում և կառավարվում են ՄՈՒՀ-ի, ֆակուլտետների և իրենց կանոնադրություններին համապատասխան: Ամբիոնը ՄՈՒՀ-ի կամ ֆակուլտետի ուսումնական և գիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որը, միավորելով մասնագիտական ընդհանրություն ունեցող գիտամանկավարժական կազմը, կազմակերպում է որոշակի մասնագիտության (մասնագիտացման) կամ ուսումնական պլանի որոշակի մասի ուսուցումը և համապատասխան ուսումնամեթոդական ու գիտահետազոտական գործընթացը: Ամբիոնը ղեկավարում է ամբիոնի վարիչը:

ՄՈՒՀ-ի ուսանողական խորհուրդը հանդիսանում է ուսանողության ինքնակառավարման մարմին, որն ապահովում է ուսանողների շահերի պաշտպանությունը, առաջադրում և ընտրում է ՄՈՒՀ-ի կոլեգիալ կառավարման մարմիններում՝ հոգաբարձուների խորհրդում, գիտական խորհրդում, ինչպես նաև ֆակուլտետների խորհրդում ուսանողության ներկայացուցիչներին՝ դրանով իսկ ապահովելով ուսանողների անմիջական մասնակցությունը համալսարանի կառավարման գործընթացներին:

ՄՈՒՀ-ի բոլոր ստորաբաժանումները՝ ուսումնական, գիտական և վարչական, ունեն հաստատված կանոնադրություններ, որոնցում ամրագրված են ինչպես ստորաբաժանման, այնպես էլ դրա ղեկավարի լիազորություններն ու գործառույթները, ինչը թույլ է տալիս խուսափել գործառույթների կրկնորդումից, ապահովում է հորիզոնական մակարդակում կառավարման գործընթացների արդյունավետ կազմակերպումը, ստորաբաժանումների համագործակցումը և կառավարչական որոշումների արագ կայացումն ու իրագործումը:

Համալսարանի կազմակերպական կառուցվածքի կատարելագործման և կառավարման արդյունավետության բարձրացման տեսանկյունից ուսումնասիրվող ժամանակահատվածում իրականացվել են կառուցվածքային որոշ բարեփոխումներ՝ մասնավորապես.

- Շինվերանորոգման բաժինը, ճարտարագիտական և տնտեսական սպասարկման խմբերով ներառվել է տնտեսական վարչության կազմում՝ Վարչության գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու համար (**տե՛ս կանոնակարգը՝ համաձայն սույն թվականի մարտի 22-ի թիվ 906-Լ հրամանի**):
- Աշխատանքների նպատակահարմարությունից և արդյունավետությունից ելնելով՝ ֆինանսատնտեսական վարչության կազմում միավորվել են ֆինանսական գնումների համակարգման և մատակարարման բաժինները՝ գործելով մեկ կենտրոնի շրջանակում (տե՞ս կանոնակարգը՝ համաձայն սույն թվականի մարտի 22-ի թիվ 906-Լ հրամանի- https://aspu.am/website/images/website3/Կանոնադրություններ/Finansatntesakan_kanonadrutyun.pdf/:

Մեկ կենտրոնում միավորված բաժինների գործառույթների համակարգումը նպաստում է նրանց գործունեության արդյունավետությանը, աշխատանքների իրականացման օպերատիվությանը, փաստացի և պլանային ցուցանիշների վերլուծության արդյունքում շեղումների բացահայտմանը և վերացմանը, առավել ճշգրտված բյուջեի նախահաշվի կազմմանը, ծախսերի վերլուծությանը և դրանց նպատակահարմար նվազեցման համար համակարգված աշխատանքների իրականացմանը, երկարաժամկետ, միջնաժամկետ, կարճաժամկետ պլանավորմանը:

Վերանայված կառուցվածքը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ լուծելու կրթության կազմակերպման և որակի ապահովման խնդիրները՝ ելնելով ՌԾ-ի նպատակներից (տե՞ս կազմակերպական կառուցվածքի նոր սխեման- https://drive.google.com/file/d/1g_IaFvbubl_3kzwdXQ9y8z7NdFxLa7aB/view/:

Կազմակերպական կառուցվածքի հաջորդ առավելությունն է, որ երկարաժամկետ բնույթ ունեցող խնդիրների լուծման նպատակով ստեղծված աշխատանքային թիմերն իրենց ջանքերը ուղղորդում են ստորաբաժանումների փոխհամաձայնեցված գործունեության ապահովմանը, իսկ կարճաժամկետ խնդիրների օպերատիվ լուծման համար ձևավորվում են ժամանակավոր աշխատանքային խմբեր: Նման մոտեցումը բացառում է կազմակերպական կառուցվածքի ուղղահայաց ծանրաբեռնումը և նպաստում է հորիզոնական կոորդինացիային. արդյունքում ճկունության շնորհիվ արտաքին միջավայրում տեղի ունեցող փոփոխություններին համալսարանը ավելի արագ է կարողանում արձագանքել: Մասնավորապես, միջազգայնացման և հետազոտական գործունեությամբ պայմանավորված հիմնահարցերը՝ ուսանողների շարժունության հարցերը, ամառային դպրոցների համար մրցույթների կազմակերպումը, գիտահետազոտական տարբեր բնույթի ծրագրերը սահմանված ժամկետներում ստանում են համապատասխան լուծումներ: Այսինքն, համալսարանի գործունեությամբ պայմանավորված արտաքին միջավայրի արագ փոփոխվող պայմաններում ուղղահայաց կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը գնալով նվազում է, և համալսարանի շահակիցների նախապատվություններին ավելի ճկուն, արագ արձագանքման ու նրանց կողմնորոշված համակարգային մոտեցման համատեքստում աստիճանաբար անցում է կատարվում դեպի հորիզոնական փոխհամագործակցություն:

Նման մոտեցումը թույլ է տալիս հասնել զգալի արդյունքների, քանի որ որոշումների կայացումը կրում է ապակենտրոնացված բնույթ, կառուցվածքը հիմնվում է բազմաֆունկցիոնալ թիմերի վրա, ուստի իրենց պատասխանատվությունների ու լիազորությունների շրջանակում աշխատողներն ավելի արագ են բացահայտում աշխատանքային խնդիրների լուծման ուղիները: Արդյունքում ստորաբաժանումների «անարդյունավետ օղակները» միավորվում կամ լուծարվում են:

Մյուս կողմից, ապակենտրոնացման շնորհիվ ամբիոնների մակարդակում տրվում են առանցքային հարցերի լուծումներ. հենց այս մակարդակի առաջատար մասնագետներն են տեսնում աշխատաշուկային բնորոշ փոփոխությունները, բացահայտում շահակիցների պահանջմունքները: Ռազմավարական նպատակներից բխող օպերատիվ մակարդակում ամբիոնների մասնակցության

հիմքում ընկած է առաջատար փորձի փոխանակման սկզբունքը՝ շահակիցների ակտիվ ներգրավմամբ:

Հարկ է նշել, որ ռազմավարական նպատակների իրականացման համար համալսարանը շարունակաբար ապահովում է անհրաժեշտ մարդկային, տեղեկատվական, տեխնոլոգիական, նյութական և ֆինանսական ռեսուրսները, ինչպես նաև դրանց արդյունավետ և նպատակային կիրառումը: Բնականաբար, մարդկային ռեսուրսների (ՄՌ) դերը առաջնային է կառավարման և վարչարարական գործընթացները իրականացնելիս (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Ռազմավարական նպատակների իրականացման համար ռեսուրսների համակարգի կառավարման գործընթացը ՄՌԻՀ-ում

Համալսարանի կառավարման գործընթացների կատարողական ցուցանիշների լավարկումը ևս գտնվում է ղեկավարության ուշադրության ներքո, մասնավորապես՝ որոշումների կայացման գործընթացում շահակիցների ներգրավման և դրանց վերաբերյալ իրազեկման գործընթացների ապահովումը, բարեվարքության կանոնների և հակակոռուպցիոն մեխանիզմների ներդրումը, կառավարման ենթակառուցվածքների գործունեության արդյունավետության գնահատման քանակական ու որակական ցուցիչների կիրառումը, ինչպես նաև փաստաթղթաշրջանառության համակարգի, էլեկտրոնային դեկանատ, ամբիոն մոդուլների շարունակական բարելավումը: Վերոնշյալ գործընթացների վերաբերյալ արդյունքները բերված են ստորաբաժանումների ծրագրերի իրականացման վերաբերյալ քննարկումների արձանագրությունների, ռեկտորատի նիստերում զեկույցների ձևով, տարեկան հաշվետվություններում:

Ռազմավարական նպատակների իրականացման տեսանկյունից, ելնելով ստորաբաժանումների փոխհամաձայնեցվածությունից, կիրառվում է գործընթացների կատարողականի գնահատման ցուցանիշների հավասարակշռված մոդելը: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս համալսարանի ղեկավարներին հասնել հաջողության: Միաժամանակ հաշվի առնելով նյութական և ոչ նյութական ակտիվները, ինչպես նաև ֆինանսական

և ոչ ֆինանսական չափորոշիչների կարևորությունը՝ մշակվեց գործընթացների գնահատման ցուցանիշների միասնական համակարգ:

Համակարգը միավորում է կազմակերպության շահակիցների ներուժը, ներքին գործընթացների արդյունավետությունը, աշխատողների ջանքերի սինգերգիզմը, տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործումը գնահատող ցուցանիշները, կարևորում է ֆինանսական, տեղեկատվական և մարդկային ռեսուրսների դերը ռազմավարության իրականացման գործընթացում: Վերջին հաշվով, մոդելն ինտեգրում է կազմակերպության գործընթացներն առաջ մղող և դրանց իրականացման համար նախադրյալներ ստեղծող գործոնները:

Կառավարման յուրաքանչյուր մակարդակի ստորաբաժանումների գործունեության շրջանակին համապատասխան իրականացվել է գործառույթների բաշխում, հստակեցվել է լիազորությունների և իրավասությունների շրջանակը՝ նպատակադրվելով բարձրացնել վարչական ծառայությունների արդյունավետությունը, բարելավելով կառավարման համակարգի և տվյալների բազաների փոխկապակցվածությունը:

Իրականացվել են նաև ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգի (այսուհետ՝ ՈՒԳԱԿՀ) կատարելագործման աշխատանքներ: ՄՈՒՀ-ի ՈՒԳԱԿՀ էլեկտրոնային տեղեկատվական համակարգը ներառում է 7 մոդուլ, որոնք ապահովում են ուսումնական և որոշ վարչական ստորաբաժանումների գործունեությունը:

Վերոնշյալ մոդուլները, ժամանակի զարգացումներին և շահակիցների կարծիքների ուսումնասիրության ու գործունեության նպատակաուղղվածությունից ելնելով, շարունակաբար բարելավվում են. մասնավորապես, ուսանողների համար տեսանելի է դարձել *դեկանատ* համակարգում ուսանողների գիտելիքների բազմագործոն բաղադրիչներով գնահատման էլեկտրոնային հարթակը (կատարված աշխատանքներն ըստ տարեթվերի տե՛ս չափորոշիչ 2.6-ում):

Կառավարման տեսանկյունից համալսարանի համար ինքնավերլուծության ժամանակահատվածը առանձնահատուկ էր նրանով, որ COVID- 19 համավարակով պայմանավորված արտակարգ իրավիճակում անհրաժեշտ եղավ ուսումնական և կառավարման գործընթացներն իրականացնել հիբրիդային ձևերով, որը Google Classroom էլեկտրոնային հարթակի կիրառման և Google Meet ու այլ գործիքամիջոցների համալրման շնորհիվ ապահովվեց ոչ միայն ուսուցման, այլև վարչական գործունեության անխափան ընթացքը: Դեռևս 2016 թվականից ՄՈՒՀ-ում ներդրված էլեկտրոնային հարթակի գործիքամիջոցներն արհեստավարժորեն կիրառվել են ուսանողների և ՊԴԱ -ի կողմից ուսուցման գործընթացում, իսկ համավարակի պայմաններում, ներառելով համապատասխան գործիքամիջոցներ, հնարավոր եղավ սահուն ձևով ապահովել գիտական խորհրդի, ռեկտորատի, ֆակուլտետների և ամբիոնների գործունեության բնականոն ընթացքը, որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունը, ուսումնական և վարչական ստորաբաժանումների փոխհամաձայնեցված գործունեությունը:

ՄՈՒՀ-ի գործունեության առաջնային սկզբունքներից են որոշումների կայացման գործընթացում ներքին ու արտաքին շահակիցների ներգրավվածությունը և ակտիվ մասնակցությունը: ՄՈՒՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումներն առաջադրում են պրոֆեսորադասախոսական կազմից հոգաբարձուների խորհրդի անդամության թեկնածուներ, որոնք կազմում են խորհրդի անդամների 25 տոկոսը (ՄՈՒՀ-ի կանոնադրություն, կետ 27): Ֆակուլտետների ուսանողական խորհուրդների կողմից ուսանողական համակազմից առաջադրված թեկնածուները ևս կազմում են խորհրդի անդամների 25 տոկոսը (ՄՈՒՀ-ի կանոնադրություն, կետ 28): Հիմնադրի անունից հոգաբարձուների խորհրդի անդամներ է առաջադրում ՀՀ-ի վարչապետը՝ պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանցից (խորհրդի կազմի 25 տոկոսը), լիազոր մարմնի կողմից հոգաբարձուների խորհրդի անդամներ են առաջադրվում կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և տնտեսության տարբեր ոլորտների ներկայացուցիչներ (խորհրդի կազմի 25 տոկոսը):

Համալսարանի գործունեության կազմակերպման տարբեր ոլորտներում կառավարչական որոշումները կայացվում են ՄՈՒՀ-ի ռեկտորի հրամաններով (ուսանողների ընդունման և ազատման, աշխատանքային պայմանագրերի կնքման, լուծման և այլն)՝ նորմատիվ իրավական ակտերի (օրենքներ, կառավարության որոշումներ, գերատեսչական և ներքին ակտեր) դրույթներին

ու պահանջներին խստիվ համապատասխան: Մինչև ռեկտորի կողմից հրամանների արձակումը, դրանց գերակշիռ մասի դրույթները, նորմերը քննարկվում և (կամ) նախագծերը ներկայացվում են ռեկտորատի նիստերում՝ հնարավորություն ընձեռելով ռեկտորատի անդամներին ներկայացնելու իրենց դիտողություններն ու առաջարկությունները:

ՄՈՒՀ-ի կառավարման բոլոր մակարդակներում ընդունված որոշումների ժամանակին և պատշաճ, արդյունավետ իրագործման նկատմամբ հսկողությունն իրականացվում է ինչպես համապատասխան որոշումներով նշանակված պատասխանատուների (պրոռեկտորներ, ստորաբաժանումների ղեկավարներ, դեկաններ և այլք) կողմից, այնպես էլ արտաքին (անկախ) աուդիտի գործընթացների կազմակերպմամբ: «Հաշվապահական հաշվառման մասին» և «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքների համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ մասնագիտական որակավորում ունեցող աշխատակիցների միջոցով իրականացվում է միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն կազմված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ: Աուդիտի գործառույթներն են՝ բացահայտել և գնահատել ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծել և իրականացնել այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, ձեռք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ կարծիք արտահայտելու համար: Գնահատում են կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը: Եզրահանգումներ են կատարվում և գնահատվում ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը: Աուդիտի արդյունքում ներկայացվում է նաև աուդիտի կողմից ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ հավաստի կարծիք (եզրակացություն), որի հիմա վրա կազմվում է Համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն և հրապարակվում է ՊԵԿ taxservice.am կայքում: Հարկ է նշել, որ Համալսարանի ֆինանսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունները հասանելի են նաև արտաքին ու ներքին շահակիցներին և հրապարակված են Հաշվետվություններ (տե՛ս https://aspu.am/hy/page/hashvetvutyunner/) կայքէջում՝ ապահովելով Համալսարանի հիմնական մոտեցումը՝ կառավարման գործընթացների հաշվետվողականությունը և թափանցիկությունը:

ՄՈՒՀ-ի կառավարման բոլոր մակարդակներում որոշումների կայացման գործընթացն ամբողջությամբ համապատասխանում և հիմնվում է կառավարման բարեվարքության հետևյալ սկզբունքների վրա.

ա) որոշումների լեգիտիմություն. ընդունվող բոլոր որոշումների դրույթներն ամբողջությամբ բխում են իրավական ակտերով ամրագրված ՄՈՒՀ-ի կառավարման բոլոր մարմինների գործառույթներից ու լիազորություններից և լիովին համապատասխանում են գործող նորմատիվ իրավական ու գերատեսչական ակտերի պահանջներին,

բ) որոշումների արդարություն. ապահովվում է որոշումների ընդունման բոլոր մակարդակներում դրանց կայացման գործընթացներին թե՛ ներքին և թե՛ արտաքին բոլոր շահակիցների ներգրավմամբ և (կամ) անմիջական մասնակցությամբ,

գ) որոշումների արդյունավետություն. ապահովվում է դրանց ընդունման ամբողջ գործընթացի առավելագույն թափանցիկությամբ և դրանց իրականացման նկատմամբ հսկողության գործում:

Բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում են Համալսարանի ռեկտորը, վարչական անձնակազմի, ակադեմիական անձնակազմի ներկայացուցիչները՝ Համալսարանի իրավական ակտերով սահմանված իրենց իրավասության շրջանակում, ինչպես նաև ուսանողական խորհուրդն ու արհկոմը՝ իրենց կանոնադրությամբ որոշված իրավասության շրջանակում (տե՞ս ՄՈՒՀ-ի բարեվարքության կանոնակարգը):

Համալսարանի բարեվարքությունն ապահովող քաղաքականությունը բացառում է սովորողների և աշխատողների նկատմամբ որևէ խտրականության ու հետապնդման դրսևորում, երաշխավորում սովորողների և աշխատողների կարծիքի արտահայտման ազատություն, կառավարման բոլոր մակարդակներում և յուրաքանչյուր օղակում, ներառյալ՝ ինքնակառավարվող

մարմիններում հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման աջակցություն, կառավարման համակարգի կատարելագործում և այդ համակարգի արդյունավետության բարձրացում (տե՞ս գիտական խորհրդում հաստատված ՄՈՒՀ-ի բարեվարքությունն ապահովող քաղաքականություն-ը):

Համալսարանում հստակեցված են նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգը, էթիկայի հանձնաժողովի իրավասությունները, կոռուպցիայի դեմ պայքարի և անօրինական գործողությունների կանխարգելման քաղաքականությունը (տե՞ս ՄՈՒՀ-ի բարեվարքությունն ապահովող քաղաքականությունները, կետ 4.2):

Այսպիսով, կարող ենք փաստել, որ Համալսարանի կառավարման համակարգն ապահովում է սահմանված բարեվարքության կանոններին համապատասխան որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.2. ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Հիմքեր՝

- «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրություն
- «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենք

Այս չափորոշչի պահանջներն առանցքային են Համալսարանի գործունեության մեջ, որը սահմանված է նաև Համալսարանի առաքելությամբ, հիմնարար արժեքներում ու տեսլականում: ՄՈՒՀ-ը որակի ապահովման համակարգի բարեփոխումների շրջանակում շարունակում է գործնականում ընդլայնել պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների ներհամալսարանական գործընթացների հիմնական շահառուների ներգրավումը ՄՈՒՀ-ի կառավարման կոլեգիալ մարմիններում՝ հոգաբարձուների խորհրդում, գիտական խորհրդում, ֆակուլտետների խորհուրդներում և ռեկտորատում՝ ապահովելով նրանց անմիջական մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում:

Որոշումների կայացման գործընթացում ներքին շահակիցների ներգրավվածությունը վերլուծելու համար անհրաժեշտ է դիտարկել դրա ազդեցությունը համալսարանական կյանքի տարբեր գործոնների վրա ներգրավման մեխանիզմները և այս գործընթացի արդյունավետությունը բարելավելու ուղիները:

Որոշումների կայացման գործընթացում դասավանդողների և ուսումնառողների ներգրվվածությունը հարստացնում է երկխոսությունը տարբեր տեսակետներով և փորձով: Դասավանդողները, անմիջականորեն ընդգրկված լինելով կրթական գործընթացի հետ, կարողանում են առանցքային մոտեցումներ ներկայացնել դասավանդման մեթոդիկայի և ծրագրերի վերաբերյալ: Ուսանողներն իրենց հերթին, կարող են կարծիք հայտնել, թե ո՞ր մոտեցումներն են ավելի արդյունավետ իրենց տեսանկյունից:

ՄՈՒՀ-ի հոգաբարձուների խորհրդի (տե՛ս https://aspu.am/website/images/files/0cd7fff6.pdf), գիտական խորհրդի (տե՛ս https://aspu.am/hy/page/gitakan_khorhrdi_kazmy/) և ֆակուլտետների խորհուրդների կազմերում անդամների 25-ական տոկոսը հանդիսանում են ուսանողության և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները, որոնք հանդիսանում են ներքին շահակիցների կարիքների բարձրաձայնողն ու երաշխավորն ընդունվող որոշումներում:

Շահակիցների ներգրավվածությունը կառավարման գործընթացներում ունեն բավականին ամուր իրավական երաշխիքներ՝ սահմանված «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքով (17-19-րդ հոդվածները սահմանում են բուհի աշխատողների իրավունքները, սովորող-ների՝ կառավարմանը մասնակցության հիմունքները): Մասնակցայնության սկզբունքները և բնույթը հստակեցվում են ներբուհական տարբեր իրավական ակտերով:

Որոշումների կայացման գործընթացում դասվանդողներին և ուսումնառողներին ներգրավելը թույլ է տալիս համալսարանին հարմարվել և արձագանքել փոփոխվող կարիքներին ու

պահանջներին: Ուսանողները կարող են արտահայտել իրենց ակնկալիքներն ու կարիքները, իսկ դասավանդողները կարող են առաջարկել մեթոդական ու բովանդակային նորամուծություններ:

ՄՈՒՀ-ի ռեկտորատում ներկայացված է արհմիության նախագահը, ուսանողական խորհրդի նախագահը, ինչն ապահովում է դասախոսների և ուսանողների շահերի պաշտպանությունը համալսարանի ամենօրյա ղեկավարման ընթացքում կայացվող որոշումների սահմաններում:

ՄՈՒՀ-ի ներքին շահակիցների ներգրավվածությունն ու մասնակցությունը կառավարչական որոշումների կայացմանը իրականացվում է նաև ուսանողների ներգրավմամբ, որոնք ա) մասնակցում են որակի ապահովման գործընթացներում, բ) ներգրավված են դասավանդման և պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման գործընթացում, գ)ներգրավված են համալսարանի կրթական ծառայությունների, ռեսուրսային բազայի որակի գնահատման գործընթացում՝ հարցումների միջոցով, դ) ներգրավված են ինքնագնահատման և ինքնավերլուծության գործընթացում որպես հարցումների անմիջապես մասնակից, հարցումներն անցկացնող, ինքնագնահատման համար անհրաժեշտ տվյալները հավաքագրող:

Պրոֆեսորադասախոսական կազմը ներգրավված է. ա) համալսարանի գիտակրթական գործունեության գնահատման և իրենց կարիքների վերհանման գործընթացում, բ)մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացներում, առարկայական նկարագրերի մշակման և վերանայման գործընթացներում, գ) ամբիոնի այլ դասախոսի դասավանդման որակի գնահատման գործընթացում, դ)համալսարանի կրթական համակարգի գնահատման գործընթացում, ե) համալսարանի ռեսուրսային բազայի գնահատման գործընթացում, զ) աշխատանքային միջավայրի գնահատման գործընթացում, է) համալսարանի գիտահետազոտական ոլորտի գնահատման գործընթացում:

Դասավանդողների և ուսումնառողների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին օգնում է բացահայտել խնդրահարույց և բարելավման ենթակա ոլորտները: Սա թույլ է տալիս համալսարանին արագ կատարել փոփոխություններ՝ ուղղված ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը: Այդ առումով էլ Համալսարանի բոլոր կառույցներում գործում է որակի ապահովման պատասխանատուների ինստիտուտը (տե՛ս 12.07.2022թ. զեկուցագիրը- https://drive.google.com/file/d/12ZUgDWkLlBPwm7U9lVJb366rO5MAG6ZC/view/) :

Ուսանողների ներգրավումը որոշումների կայացման գործընթացում զարգացնում է նրանց ինքնակազմակերպումը և կրթության համար պատասխանատվություն ստանձնելու կարողությունը, թույլ է տալիս զգալ իրենց կարևորությունը բուհի կյանքում:

Համալսարանի կառավարման մարմինների աշխատանքներին ուսանողների մասնակցության հիմնական ձևերն են՝

ա) ՄՈՒՀ-ի հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի անդամների 25%-ը ուսանողներ են՝ ընտրված ուսանողական խորհրդում:

բ) ՄՈՒՀ-ի կանոնադրության 126-րդ կետի համաձայն՝ գործում է ուսանողների ինքնակառավարման կազմակերպությունը՝ ՈՒԽ-ն:

գ) ֆակուլտետների գիտական խորհուրդների 25 %-ը ուսանողներ են՝ ընտրված ՈՒԽ-ներում:

դ) ամբիոնների գիտամանկավարժական կազմի նիստերին խորհրդակցական ձայնով մասնակցում են ասպիրանտները:

Ուսանողական կառույցների կայուն և երաշխավորված գործունեության հիմք է Համալսարանի բյուջեում նրանց հատկացվող մասնաբաժինը:

ՄՈՒՀ-ի կառավարչական և գիտակրթական գործունեության համար խիստ կարևորություն ներկայացնող հարցերում որոշումներ կայացնելու գործընթացում դասավանդողների և ուսումնառողների ներգրավվածության արդյունավետության ապացույցն է նաև այն, որ նրանց անմիջական մասնակցությամբ իրականացվել են կարևորագույն գործընթացների մշակման աշխատանքներ, ինչպիսիք են՝ ռազմավարական ծրագրի մշակումը, մասնագիտության կրթական ծրագրերի ժամանակացույցի, առարկայացանկերի, քննաշրջանների ստուգման նոր մոտեցումների մշակումը, որակի ապահովման գործընթացների մշակումը, էլեկտրոնային հարթակում կրթական գործընթացի կազմակերպման վերափոխումը և այլն:

Կառուցվածքային ստորաբաժանումներում դասախոսների մասնակցությունը սահմանափակվում է որոշակի ժամկետներով. սովորաբար 5 տարին մեկ նրանք ընտրվում են, ինչն ապահովում է սահուն ռոտացիան՝ նոր մարդկային ռեսուրսներով համալրման հնարավորությունը: Համալսարանի հիմնական գործադիր մարմինների (ռեկտոր, դեկան, ամբիոնի վարիչ) թեկնածուներին ներկայացվող հիմնական պահանջը պրոֆեսիոնալիզմն է ու հաշվետվողականությունը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.3. ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Հիմքեր՝

Գործողությունների կարճաժամկետ ծրագիրը և իրականացման հիմքերը[6]

ՄՈՒՀ-ում, առաքելությամբ, նպատակներով և տեսլականով պայմանավորված, որպես կառավարման գործընթացի կարևորագույն բաղադրիչ կատարվում է Համալսարանի բոլոր ոլորտների գործունեության պլանավորում, որն իրականացվում է երեք մակարդակներով՝ երկարաժամկետ (ռազմավարական), միջնաժամկետ և կարճաժամկետ (ընթացիկ կամ մեկամյա- տե՛ս https://aspu.am/hy/page/hashvetvutyunner/): Մակարդակներից յուրաքանչյուրն ունի կենսագործման և մշտադիտարկման իր մեխանիզմները: Որպես պլանավորման առաջին մակարդակ կամ երկարաժամկետ պլանավորում՝ մշակվել են Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագիրը (2020-2025թթ.), որը Համալսարանի հիմնական նպատակների և դրանց հասնելու ուղիների ամբողջությունն է, որոնք հաստատվել են ՄՈՒՀ-ի կառավարման և գիտական խորհուրդների կողմից: Ռազմավարական ծրագրի և նրա գործողությունների կատարման պլանի իրականացման ու մշտադիտարկման համար հիմք են հանդիսանում ՌԾ-ում ամրագրված գնահատման արդյունավետության ցուցանիշները՝ հինգ տարվա կտրվածքով, որոնք սահմանվում են յուրաքանչյուր նպատակի և խնդիրների իրականացման համար: Համալսարանի զարգացման 2020-2025թթ. ռազմավարական ծրագիրը ներառում է ռազմավարական 11 ուղղություն: Ըստ էության, միջնաժամկետ պլանավորումն իրականացվում է որպես ՄՈՒՀ-ի զարգացման 2020-2025թթ. ռազմավարական ծրագրի առանձին ռազմավարական ուղղություններով նախատեսված այնպիսի գործողությունների ու միջոցառումների իրականացման մասով, որոնց իրագործումը ենթադրում է առնվազն 2-3 տարիների ժամանակահատված: Երկարաժամկետ պլանավորումը ենթադրում է բուհ–ի նպատակների և դրանց հասնելու եղանակների որոշում, ինչի արդյունքները իրական կատարողական ցուցանիշներն են:

Կրթական ծառայությունների մատուցումը ուղեկցվում է ֆինանսական հոսքերով, որոնք խստագույն վերահսկողություն են պահանջում: Բուհական գործունեության տարբեր օղակներ ընդգրկված են նախահաշվային աշխատանքներում: ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր ստորաբաժանում, հիմք ընդունելով զարգացման ռազմավարական ծրագիրը, ուսումնական տարվա համար կազմում է աշխատանքային պլան, որի կատարողականը գնահատվում է հաշվետվությամբ՝ ելնելով ՌԾ-ի յուրաքանչյուր նպատակի և խնդիրների իրականացման համար աշխատանքային պլանում ամրագրված ակնկալվող արդյունքներից:

Կարճաժամկետ (տե՛ս https://aspu.am/hy/page/hashvetvutyunner/) գործառնական պլանավորումը մանրամասնորեն մշակվում է յուրաքանչյուր ստորաբաժանման, ֆունկցիոնալ միավորի համար, որում որոշակի ռեսուրսներ են հատկացվում ծրագրված խնդիրների իրականացման համար: Այն նախատեսված է մեկ օրացուցային և (կամ) ուսումնական տարվա համար և իրականացվում է ՄՈՒՀ-ի գործունեության բոլոր ուղղություններով՝ ուսումնագիտական գործընթացի ֆինանսական, մարդկային ռեսուրսների, գույքի, կրթական ծրագրերի և այլն, ինչը հստակ կերպով արտահայտվում է ռեկտորի տարեկան հաշվետվություններում: Կարճաժամկետ գործառնական պլանավորում են իրականացնում նաև համալսարանի գիտական խորհուրդը և

[6] https://aspu.am/hy/page/hashvetvutyunner/

ռեկտորատը: Ինչ վերաբերում է Համալսարանի առաքելությանն ու նպատակներին համապատասխան ֆինանսական պլանավորմանը, ապա ՄՈՒՀ-ի կողմից բյուջեի պլանավորումն իրականացվում է կարճաժամկետ ժամանակահատվածի համար՝ մեկ տարվա նախահաշվի կազմմամբ, որտեղ արտացոլվում են ֆինանսական մուտքերը և ծախսերն ըստ առանձին հոդվածների՝ ամբողջ հաստատության համար:

Վերահսկողությանը ապահովելու համար Համալսարանում գործում է պլանավորված գործողությունների իրականացման և մշտադիտարկման արյունքների գնահատման հաշվետվությունների մեխանիզմը:

Համալսարանի կառուցվածքային բոլոր ստորաբաժանումները ներկայացնում են ընթացիկ և տարեկան հաշվետվություններ՝ ըստ համապատասխան աստիճանակարգի: Տարեկան գործունեության ամբողջական կատարողականի վերաբերյալ ռեկտորը յուրաքանչյուր տարի հաշվետվություն է ներկայացնում հոգաբարձուների խորհրդին, որով կատարվում է աշխատանքային տարեկան գործունեության գնահատում, արձանագրվում են պլանավորված գործողությունների ցուցանիշները, որոշվում են հետագա գործունեության առաջնահերթությունները, հաստատվում է հաջորդ ֆինանսական տարվա եկամուտների ու ծախսերի նախահաշիվը (տե՛ս https://aspu.am/hy/page/hashvetvutyunner/):

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.4. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Հիմքեր՝

- ՄՈՒՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի 2022-2025 թթ. գործողությունների կատարման պլան
- Կազմակերպական կառուցվածքի վերանայված սխեմա[7]

Նախորդ տարիների ընթացքում ՄՈՒՀ-ի կողմից մշակվել էր համալսարանի գործունեության վրա ազդող մակրո և միկրո գործոնների, ինչպես նաև շահակիցների կարծիքի վերլուծություն, որը հնարավորություն էր տվել Համալսարանին իր գործունեության և զարգացման մոտակա հեռապատկերում և գործընթացներում իրականացնել կանխատեսումներ, բացահայտել համալսարանի կրթական գործունեության կայունացման և զարգացման հնարավորությունները, որոշումների կայացումը կատարել համալսարանի գործունեության ոլորտների վրա ազդող գործոնների հավաստի տվյալների հաշվառմամբ՝ ռազմավարական պլանավորման, իրականացման, գնահատման, վերահսկողության և բարելավման (ՊԻԳԲ շրջափուլ) գործընթացներն իրականացնել հաշվետվողականության և թափանցիկության սկզբունքներով:

Հարկ է նշել, որ ՄՈՒՀ-ի կողմից իրականացվել է ոչ միայն համալսարանի գործունեության վրա ազդող արտաքին և ներքին միջավայրի գործոնների ուսումնասիրություն, որի արդյունքները հիմք են հանդիսացել ռազմավարական ծրագրի մշակման համար, այլև դիտարկելով «ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագիրը», ինչպես նաև «Վերաիմաստավորելով համատեղ ապագայի հեռանկարները. հանրային նոր համաձայնագիր ի նպաստ կրթության» ՅՈՒՆԵՍԿՕ զեկույցի հիմնական ուղղությունների շրջանակում կատարվել է համալսարանի գործունեության խնդիրների ու քայլերի կանխատեսում, որն արտացոլվել է համալսարանի կողմից մշակված Նոր մանկավարժության տեսլականում:

Համավարակի և պատերազմական, դրան հաջորդող ժամանակահատվածում կրթական համակարգի մրցակցային իրավիճակում ռազմավարական կառավարումն իրականացվում է արտաքին և ներքին միջավայրի գործոնների արագ փոփոխմամբ, սահմանափակ ռեսուրսների առկայությամբ, որոնք ունեն էական ազդեցություն կրթական համակարգի գործունեության վրա:

Սահմանափակ ռեսուրսների համար բուհերի միջև ընթացող խիստ մրցակցային պայքարում առավել կարևորվում է այնպիսի ռազմավարության մշակման ու իրականացման հիմնահարցը, որը հնարավորություն կտա ռեսուրսների ձեռքբերման և արդյունավետ

[7] https://aspu.am/hy/page/hpmh_karucvatsq/

օգտագործման մրցակցային առավելություններ: Նշված խնդրի լուծման նպատակով ՄՈՒՀ-ն ուղղորդվում է այն սկզբունքով, որ անհրաժեշտ է բացահայտել այն մարտահրավերները, որոնք առկա են ոլորտում, ուսումնասիրել դրանց լուծման հնարավոր ուղիները, այնուհետև մակրո և միկրո գործոնների վերլուծության արդյունքների հաշվառմամբ կազմակերպել ռազմավարական նպատակներին միտված գործընթացների արդյունավետ կառավարում:

Արտաքին գործոնների տեսանկյունից նախորդ տարիների ընթացքում իրականացված բարեփոխումները հնարավորություն տվեցին լուծել կրթական համակարգում առկա շատ խնդիրներ, այդուհանդերձ, բարձրագույն կրթության ոլորտի կառավարման համակարգում բուհերում դեռևս առկա են հրատապ լուծում պահանջող մարտահրավերներ.

- ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի իրականացման կարողությունների պակաս,
- գործունեության գնահատման արդյունքային ցուցանիշների ոչ լիարժեք փոխկապակցված համակարգ,
- վերլուծական տվյալների հավաքման և մշակման ոչ կատարյալ մեխանիզմներ,
- մանկավարժների մասնագիտական առաջխաղացման արդյունավետ համակարգի բացակայություն,
- բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության և ակադեմիական ազատությունների ընդլայնման, արդյունավետ կառավարման, հավասարակշռված հաշվետվողականության և թափանցիկության մեխանիզմների ինստիտուցիոնալ հենքի բացակայություն,
- բարձրագույն կրթության որակի շարունակական բարելավման մեխանիզմների բարելավման անհրաժեշտություն,
- բարձրագույն կրթության մեջ հետազոտական բաղադրիչի ոչ բավարար ծավալ,
- ուսանողի անհատական կրթական հետագծի բացակայություն (կրթական ծրագրերի ճկուն կառուցվածքի ներմուծմամբ),
- բարձրագույն կրթության ոչ բավարար միջազգայնացման գործընթացներ, ակադեմիական և ուսանողական շարժունության հնարավորությունների ընդլայնման հրատապություն,
- բարձրագույն կրթության ոչ բավարար ֆինանսավորում (ֆինանսավորման հասցեականության և նպատակայնության համակարգի ներդրման բացակայություն),
- *կրթություն-գիտություն* տարանջատվածություն,
- գիտության ոլորտում ոչ արդյունավետ ֆինանսավորման մեխանիզմներ:

Մակրո և միկրո վերլուծության համար բավականին մեծ աջակցություն էր Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) կողմից առաջարկված ուղեցույցը՝ ուղղված բուհերին՝ առցանց ուսուցումը որակի ապահովման չափանիշներին համապատասխան համավարակի պայմաններում ուսումնառության գործընթացը կազմակերպելու համար: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակի մարտահրավերները և ՈԱԱԿ կողմից առաջարկված լուծումները՝ ՄՈՒՀ-ը, համալրելով Google Classroom հարթակը առցանց ուսուցման տարատեսակ գործիքներով, ապահովեց ոչ միայն դասախոսությունների փաթեթների առկայությունը և գործնական աշխատանքների առցանց կատարումը, այլև կարևորեց ուսանողների առաջընթացի գնահատման և ավարտական աշխատանքների հարցերում ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերման խնդիրը: Մասնավորապես, առցանց հարթակում տեղ հատկացվեց ավարտական աշխատանքների և թեզերի պաշտպանության կազմակերպմանը՝ ապահովելով թափանցիկությունը և կանոնակարգի համապատասխան գործընթացների անաչառությունը, բողոքարկման հնարավորությունը:

Շեշտադրվեցին ուսանողակենտրոն ուսուցման մոտեցումները՝ ուսանողների կարիքների վերհանման և դրանց լուծման համապատասխան ուղիների առաջարկմամբ ցուցաբերելով ճկուն մոտեցում, ավելի շատ ժամանակ տրամադրելով ուսանողի ինքնուրույն աշխատանքին, ընթացիկ գնահատմանը և խորհրդատվություններին:

Առցանց հարթակի նոր գործիքակազմի կիրառման նպատակով դասախոսական կազմի և ուսանողների համար պատրաստվեցին համապատասխան ուղեցույցներ, կազմակերպվեցին առցանց վերապատրաստումներ ըստ թիրախային խմբերի:

Վերանայվեց նաև գնահատման ռազմավարությունը՝ վերաբաշխելով ուսանողների հանձնարարությունները, կենտրոնանալով տեսական բնույթի կուրսայինների, անհատական ծրագրերի, ինքնուրույն աշխատանքների վրա: Ավելին, առցանց ապահովվեց ամբիոնների և ֆակուլտետների, ռեկտորատի նիստերի և վարչական բնույթի այլ հանդիպումների բնականոն ընթացքը՝ արտաքին և ներքին շահակիցների ներգրավմամբ:

Ամփոփելով կարող ենք նշել, որ կրթական համակարգի կառավարման արդյունավետության բարձրացման գործառույթների իրականացումը ՄՈՒՀ-ը սկսել է ոչ միայն ինստիտուցիոնալ, այլև ակադեմիական ստորաբաժանումների՝ ֆակուլտետների, ամբիոնների մակարդակներում: Միաժամանակ, որպես գործունեության գնահատման գործիքամիջոց համալսարանը կիրառել է ցուցանիշների այնպիսի համակարգ, որը հնարավորություն է տվել մշակել փաստերի վրա հիմնված մրցունակ ռազմավարություն:

Գնահատման ցուցանիշների ճիշտ ընտրությունը իրականում բարդ խնդիր է. այն ռազմավարության հաջող իրագործման հիմքն է: Սխալ համակարգի ընտրության դեպքում աշխատողների ջանքերն ուղղված կլինեն արդյունքի, որը չի հանգեցնի ռազմավարական նպատակի իրականացմանը: Այդ տեսանկյունից, ՌԾ-ի մշակման նպատակով իրականացվել է համալսարանի գործունեության վրա ուղղակիորեն և անուղղակիորեն ազդող արտաքին և ներքին գործոնների ուսումնասիրություն ու վերլուծություն: Վերլուծության հիման վրա ՌԾ-ին կից գործողությունների ծրագրում յուրաքանչյուր նպատակի, խնդրի համար տրվել են ռիսկային գործոնները (գործողությունների պլան-ժամանակացույց https://aspu.am/website/images/files/51a25c09.pdf): Արտաքին և ներքին միջավայրի վերլուծության նպատակով կատարվել են հարցումներ ֆոկուս խմբերի հետ, շահակիցների հետ քննարկումներ, վիճակագրական տվյալներ, SWOT վերլուծություններ և այլ մեխանիզմներ:

Վերոնշյալ վերլուծության իրականացման նպատակով՝

- ներքին միջավայրի վերլուծության հիմքում դրված են որակական և քանակական մեթոդներ, մասնավորապես՝ որակական վերլուծությունների համար հիմքը ներքին գործընթացները կանոնակարգող գործող կարգերի, կանոնակարգերի, ընթացակարգերի և այլնի վերլուծությունն է, ինչպես նաև դասախոսների և ուսանողների հետ հարցազրույցների, ֆոկուս խմբերի արդյունքները, իսկ քանակական վերլուծությունների հիմքը՝ ուսանողների շրջանում իրականացված հարցումների արդյունքները,
- արտաքին գործոնների ուսումնասիրության նպատակով իրականացվել է վերլուծություն, մասնավորապես, ուսումնասիրվել է քաղաքական, տնտեսական, սոցիալ- մշակութային, ժողովրդագրական, տեխնոլոգիական անուղղակի գործոնների ազդեցությունը:

Մասնավորապես, արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի շրջանակում իրականացվել են հարցումներ՝ կրթական ծրագրի պատասխանատու կազմին հնարավորություն ընձեռելով կրթական ծրագիրը վերանայելիս հաշվի առնել արտաքին շահակցի կարծիքը: Հարցումն անանուն էր, հարցման ամփոփ տվյալները սահմանված կարգով քննարկվել են ֆակուլտետային և համահամալսարանական ամբիոններում:

Օրինակ դիտարկենք կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի կողմից գործատուների հետ իրականացված հարցումների տվյալները. գործատուների 20-%-ի պատասխանի համաձայն՝ կազմակերպությունում աշխատանքի ընդունվելուց հետո ՄՈՒՀ-ի շրջանավարտները կարողանում են անմիջապես կատարել իրենց աշխատանքային պարտականությունները, 68-%-ը տվել են *լավ* գնահատական իսկ 10-%-ը՝ *գերազանց կամ կատարյալ*:



Շրջանավարտներն ունեն մասնագիտական բնագավառի տեսական և գործնական բնույթի գիտելիքներ հարցադրմանը գործատուների 1-%-ը պատասխանել է՝ *ոչ*, 15-%-ը պատասխանել է *մասնակի կամ բավարար*, 72-%-ը՝ *այո կամ լավ*, 16-%-ը՝ *գերազանց կամ կատարյալ*:



Այն հարցին, թե որքանով են շրջանավարտներն ունակ տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հարցադրմանը գործատուների 1-%-ը պատասխանել է՝ *Ոչ, ունակ չեն*, 9-%-ը պատասխանել է՝ *մասնակի կամ բավարար*, 77-% -ը՝ *այո կամ լավ*, 13-%-ը՝ *գերազանց կամ կատարյալ*:



Վերոնշյալ մեկնաբանումները փաստում են, որ ՄԿԾ-ների վերանայման գործընթացները հիմնովին նպաստել են վերջնարդյունքների բարելավմանը, իսկ վերլուծության վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը և իրականացման մեթոդաբանությունը ներկայացված է հավելվածի միջոցով (տե՛ս https://drive.google.com/file/d/1_ZDFHAF7Gfv_W55temvowBcpOg9iMXW6/view):

Համալսարանի գործունեության վրա ազդող այնպիսի արտաքին գործոններ, ինչպիսիք են ընդունելությունը, ֆինանսավորման համակարգը, աշխատաշուկայի և հասարակական պահանջները, օրենսդրական փոփոխությունները, և ներքին գործոններ, ինչպիսիք են պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնահետազոտական գործունեությունը, հոսունությունը, լաբորատոր գործիքակազմի ապահովվածությունը, ենթակառուցվածքների աշխատանքի կազմակերպման արդյունավետությունը և այլն, ուսումնասիրվում և վերլուծվում են համալսարանի համապատասխան ստորաբաժանումների կողմից և ներառված են ամբիոնների, ֆակուլտետների ու ռեկտորի տարեկան հաշվետվություններում, ռեկտորատի և գիտական խորհրդի որոշումներում:

Փաստացի հասկանալով համալսարանի վրա ազդող գործոնների ուսումնասիրության կարևորությունը և հավաստի տեղեկատվության անհրաժեշտությունը՝ ՄՈՒՀ-ը նախանշել և իրականացրել է հարցումներ ուսանողների, ՊԴԱ-ի, շրջանավարտների, գործատուների շրջանում, ուսումնասիրել օրենսդրական դաշտում կատարվող փոփոխությունները, հաշվի առել ընդունելության պատկերը, ֆինանսական հնարավորությունները և ստացված տվյալներն օգտագործել համալսարանի գործունեությունը կարգավորող որոշումների կայացման ժամանակ:

ՄՈՒՀ-ի 2020-2025 թթ. ռազմավարական ծրագիրն ու ռազմավարական գործողությունների կատարման պլանը ներառում են համալսարանի գործունեության 11 կարևորագույն նպատակներ և դրանց իրականացմանն ուղղված գործընթացների կատարողականի գնահատման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ): ԳԱՑ-երի առկայությունն ապահովում է ռազմավարական ծրագրի նպատակների, խնդիրների և քայլերի կապը համալսարանի վրա ազդող արտաքին և ներքին գործոնների հետ, օգնում հիմնվելու հավաստի փաստերի վրա, կայացնելու ճիշտ որոշումներ՝ գործունեության կարևորագույն ոլորտներում իր ռազմավարությունը մշակելիս և իրականացնելիս:

Ցուցանիշների հավասարակշռված համակարգի տեսանկյունից Համալսարանը վերանայել է ռազմավարական պլանի իրականացման ԳԱՑ-երը և դրանք համադրել է ըստ չորս ոլորտների՝

- ֆինանսական ոլորտ, որը բովանդակում է Համալսարանի գործունեության ֆինանսական նպատակները և դրանց հասնելու ուղիները,
- շահակիցների կարիքների բավարարման ոլորտ, որը բովանդակում է արտաքին և ներքին շահակիցների որոշակի խմբի պահանջները՝ նրանց սպասումներին համապատասխան,
- ներքին գործընթացներ, որոնք ուղղված են աշխատաշուկայի պահանջներին համահունչ մասնագետների պատրաստմանը,
- ուսուցման և զարգացման ոլորտ, որը գործընթացների արդյունավետ իրականացման համար Համալսարանի ենթակառուցվածքի անհրաժեշտ մակարդակի ապահովումն է՝ անձնակազմի որակավորում, կիրառվող տեխնոլոգիա, բարեվարքության նորմեր և այլն:

Ցուցանիշների հավասարակշռված համակարգի ոլորտները մշակելիս ՄՈՒՀ-ն առաջնորդվել է պատճառահետևանքային փոխադարձ կապի շղթայի համաձայն, որոնք չափվում են արդյունքների ցուցանիշների համակարգի օգնությամբ և կարևորում են ռազմավարական քարտեզի մշակումը (գծանկար):

Ռազմավարական քարտեզը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

- Ռազմավարությունը պետք է հավասարակշռի իրար հակադիր ուժերը: Հաճախ ոչ նյութական ակտիվներում կատարվող ներդրումը եկամտի երկարաժամկետ աճման նպատակով հակադրվում է ֆինանսական արագ արդյունք ստանալու համար ծախսերի կրճատման նպատակին: Այս դեպքում Համալսարանի կառավարման օղակների փոխհամաձայնեցված և ներդաշնակ աշխատանքի ապահովման նպատակով որոշ

բաժիններ միավորվել են՝ դուրս մղելով «անարդյունավետ օղակները» (Կազմակերպական կառուցվածքի վերանայված սխեման https://aspu.am/hy/page/hpmh_karucvatsq)։

- Նորամուծությունների հետևանքով ակնկալվող ֆինանսական միջոցների ավելացում կարելի է ակնկալել բավականին երկար ժամանակ հետո, իսկ Համալսարանում ընթացիկ գործունեության համար իրականացված բազմազանեցված ֆինանսական աղբյուրների որոնումը ոչ միշտ է հաջողվում։ Այս դեպքում Համալսարանի կողմից իրականացված երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումը ապահովում է հավասարակշռություն։
- Ռազմավարությունը մշակելիս Համալսարանը հաշվի է առել ոչ նյութական ակտիվների կարևորությունը։ Ռազմավարական քարտեզում *ուսուցում և զարգացում* չորրորդ բաղադրիչը բնութագրում է ոչ նյութական ակտիվների դերը ռազմավարության իրականացման գործընթացում։ Ոչ նյութական ակտիվները կարելի է դասակարգել երեք կատեգորիաների՝

  Ա.մարդկային կապիտալ՝ աշխատողների գիտելիքները, մասնագիտական հմտությունները, ստեղծագործական ունակությունները, տաղանդը,

  Բ.տեղեկատվական կապիտալ՝ տվյալների բազան, ինֆորմացիոն համակարգը, ցանցեր և տեխնոլոգիաներ,

  Գ.կազմակերպական ռեսուրսներ՝ գիտելիքների կառավարում, բարեվարքության նորմեր, աշխատանք թիմում, առաջնորդում, որակյալ աշխատակազմ։

Նշված ոչ նյութական ակտիվների արժեքը դրսևորվում է միասնական կիրառման դեպքում, ռազմավարության իրագործման ընթացքում՝ ցուցաբերել նպատակային մոտեցումներ ոչ նյութական ակտիվները կազմակերպության ռազմավարությանը համապատասխանեցնելով։

Այսպիսով, Համալսարանի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվել է.

- Ինտեգրված ուսումնական մոդելի ներմուծում, որը ներառում է կրթական ծրագրերի վերանայում, ուսումնագիտական համալիրի առկայություն, միջազգային հեղինակության ամրապնդում։
- Կրթական ծրագրերի և աշխատաշուկայի պահանջների փոխհամաձայնեցվածության ապահովում։
- Համալսարանի կառավարման արդյունավետության բարձրացում, որն ապահովում է Համալսարանի ինքնավարությունը, ռազմավարական պլաններում ամրագրված ուղենիշների իրականացումը, ֆինանսական համակարգի կայունությունը։
- Եվրոպական համընդհանուր չափանիշներին կրթական ծրագրերի համադրելիության ապահովում՝ գործունեության վերջնարդյունքների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, կառավարման թափանցիկության մեխանիզմների ներդրման միջոցով։

Ներքին միջավայրի գործոնների վերլուծության արդյունքները հիմնված են նաև ՄՈՒՀ-ի *Նոր մանկավարժությունը* տեսլականի, արտաքին և ներքին շահակիցների կարծիքի վերլուծության, ինչպես նաև «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրի» և դրանից բխող գործողությունների իրականացման պլանի, Հանրակրթության պետական առարկայական չափորոշիչների, «Մանկավարժություն» որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրերի ուսումնասիրության վրա։

Ներկայիս մարտահրավերները վերացնելու տեսանկյունից կարևորվում է ՄՈՒՀ-ի դերակատարությունը նպատակաուղղված կրթության որակի ու արդյունավետության բարձրացմանը՝ արդի կրթության զարգացման և արդիականացման միտումների հաշվառմամբ, ինչպես նաև ժամանակի պահանջներին համապատասխանող մանկավարժների սերունդների՝ պրոֆեսիոնալ, ռեֆլեքսիվ, մասնակցային շրջանավարտների պատրաստման գործընթացում։

Նոր մանկավարժության առանձնահատկություններն ու զարգացման միտումներն են. ներառականությունը, միջառարկայականությունը, ինտեգրվածությունը, ՏՀՏ-ի և թվայնացման մանկավարժականացումը, համագործակցականությունն ու փոխներգործունականությունը, կոլեկտիվ ինտելեկտի մոբիլիզացումը,

երկխոսությունը, իրավահենքությունն ու խնդրահենքությունը՝ մշակութաբանական, հումանիստական արձագանքման, կոմպետենտային, մասնակցային մոտեցումների հենքով:

Հարկ է նշել, որ զարգացման պետական ծրագրի իրականացման գործընթացներում համալսարանն իր ուրույն դերակատարությունն ունի և իր կարողություններով արդեն իսկ նպաստում է.

- սովորողների ճանաչողական, անձնային և միջանձնային հմտությունների զարգացմանը,
- դասավանդողների կարողությունների զարգացմանը և մասնագիտության հեղինակության մակարդակի բարձրացմանը,
- *կրթություն-գիտություն-աշխատաշուկա* կապի ամրապնդմանը,
- համընդհանուր ներառական կրթության ուղղությամբ տարվող աշխատանքների ընդլայնմանը,
- կրթական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի վերանայմանը՝ ապահովելով ուսումնառության վերջնարդյունքները՝ որակավորումների ազգային շրջանակի և որակավորումների ոլորտային շրջանակի պահանջներին համապատասխան:

Ձեռքբերումների տեսանկյունից հնարավորությունների լիարժեք կիրառմամբ կարող ենք առանձնացնել, որ.

- այս համատեքստում Համալսարանի կողմից իրականացվող կրթական ծրագրերը ներկայումս ամբողջությամբ համապատասխանեցված են ոչ միայն որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) գիտելիք, կարողություն, հմտություն վերջնարդյունքներին, այլև մանկավարժության ոլորտային շրջանակի (ՈՈՇ) վերջնարդյունքներին միտված աշխատաշուկայի պահանջներին համապատասխան՝ մրցունակ կադրերի պատրաստմանը:
- Հատկապես հեռավար/առցանց կրթության ընդլայնման ու զարգացման գործում ՄՈՒՀ-ը առաջատար դիրք է զբաղեցրել. 2020 թվականին կորոնավիրուսի (Քովիդ-19-ի) տարածման հետևանքով ստեղծված իրավիճակում չխափանելով կրթական գործընթացների և կառավարման բնականոն ընթացքը կիրառվեցին տեղեկատվական և հաղորդակցության ժամանակակից տեխնոլոգիաներն ու էլեկտրոնային հարթակները:

Առաջնային հիմնախնդիրների լուծման տեսանկյունից ՄՈՒՀ-ն իր ջանքերն ուղղորդում է.

- ակադեմիական կազմի պաշտոնների համալրմանը, ինչպես նաև ատեստավորմանն ու վերապատրաստմանը, վարձատրության նոր արդյունավետ մեխանիզմների մշակմանը, որոնք կնպաստեն մասնագիտական առաջխաղացմանը, միջազգային վարկանիշային պարբերականներում հրատարակմանը և ակադեմիական գործունեությամբ զբաղվելու գրավչության բարձրացմանը,
- դասախոսի ուսումնագիտական բեռնվածության (պարտադիր հետազոտական բաղադրիչի ներառմամբ) և վարձատրության հաշվարկման համընդհանուր մեթոդաբանություն, պաշտոնների համալրման, մասնագիտական առաջխաղացման, ինչպես նաև ատեստավորման և վերապատրաստման արդյունավետ մեխանիզմների ներդրմանը,
- բազմազանեցված ֆինանսավորման աղբյուրների որոնմանը,
- մատուցվող ծառայությունների բարձրացման համատեքստում կրթական գործընթացի արդյունավետության բարձրացմանը՝ ժամանակակից ՏՏ գործիքների կիրառմամբ,
- ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների ու ձևերի ընդլայնմանը՝ խթանելով գիտահետազոտական արդյունքի առևտրայնացումը:

Այսպիսով, արտաքին և ներքին գործոնային վերլուծության համաձայն՝ ստորև բերված են մարտահրավերների դիմակայման՝ ՄՈՒՀ-ի Նոր մանկավարժական կրթության զարգացման հիմնական ուղղությունները (տե՛ս https://aspu.am/website/images/files/Voroshum_Topuzyan.pdf):

Առաջին ուղղություն. մանկավարժական կրթական ծրագրերի բովանդակության արդիականացում: Այս դեպքում ուսուցումը հիմնվում է առարկայական և միջառարկայական ուսումնական ծրագրերի վրա, այն իրականացվում է համագործակցային և փոխներգործուն մեթոդների միջոցով՝ խնդրահենք արդյունքների ստացման ճանապարհով՝ կյանքի յուրաքանչյուր փուլում և ցանկացած տարիքում:

- Միջառարկայական ուսուցման օրինակ կարող են դառնալ «մանկավարժական մարդաբանություն», «մանկավարժական վալեոլոգիա» և այլ առարկաների ծրագրերը: Այս առումով պետք է վերանայվեն մասնագիտական կրթական ծրագրերը՝ ի նպաստ միջառարկայական, խնդրահենք ուսումնառության, մասնագիտական կրթական չափորոշիչները, մասնագիտության վերջնարդյունքները, դասավանդվող յուրաքանչյուր առարկայի մեջ մանկավարժական բաղադրիչի դերն ու կշիռը, դասախոսի, ուսանողի կոմպետենցիաները: Հաշվի է առնվում այն հանգամանքը, որ նորարարությունն ու տեխնոլոգիան չեն կարող օգուտ տալ, եթե բացակայում է հմուտ մանկավարժությունը: Ուստի, ամբողջապես վերանայվում են «Ընդհանուր մանկավարժության», «Մանկավարժության պատմության» ծրագրերը, դրվում է դրանց միջառարկայնության և ինտեգրման պահանջը՝ էդուկացիայի և ռոբուրսացիայի հենքի վրա:
- Մշակվում են նոր առարկաների ծրագրերը, կամ եղածները լրացվում են նոր թեմաներով (կանաչ կրթություն, երեխայի և մարդու իրավունքների կրթություն, արտակարգ իրավիճակներին դիմակայելու կրթություն, մասնագիտական օտար լեզու, ներառական կրթություն, թվային գրագիտություն, ՏՀՏ-ների և մեդիատեխնոլոգիաների մանկավարժականացում): Ժամանակը պահանջում է ՍԿ ֆակուլտետում «Մանկավարժական վալեոլոգիա», «Ես և շրջակա աշխարհը» դասընթացների շրջանակներում հատուկ թեմաներ մտցնել սեռական դաստիարակության և հիգիենայի պահպանման մասին, իսկ ԿՀՍ ֆակուլտետում հատուկ կուրս և առանձին թեմաներ «Ընտանիքին աջակցություն» և «Սոցիալմանկավարժական աշխատանքը ընտանիքի հետ» դասընթացներում:
- Որպես այլընտրանքային դասընթացներ կներդրվեն «Գնահատում, չափում, ռեֆլեքսիա» , «Թվային գրագիտություն» և «Ուսումնառության տեսություններ» հատուկ դասընթացները:
- Ընտրովի դասընթացի շրջանակում ներդրվելու է «Անձնական ֆինանսների կառավարման» դասընթացը, որի նպատակն է՝ ուսանողներին տրամադրել անձնական ֆինանսների կառավարման վերաբերյալ գիտելիքներ, ձևավորել դրամական միջոցները գրագետ կառավարելու հմտություններ: Այն կնպաստի անձնական ֆինանսները արդյունավետ տնօրինելու ունակությունների և կարողությունների զարգացմանը: Միևնույն ժամանակ՝ ավարտելով համալսարանը և մտնելով դպրոց որպես ուսուցիչ՝ շրջանավարտը ֆինանսական կրթման գիտելիքները կինտեգրի համապատասխան առարկայական ծրագրերում՝ այն կհաղորդելով դպրոցական տարիքի երեխաներին:

Երկրորդ ուղղություն. որակյալ կրթության իրականացում: Որակյալ կրթությունը ձևավորում է պրոֆեսիոնալ մանկավարժի անձ: Կարևոր է դառնում ապագա մանկավարժի նախ մանկավարժական ընդհանուր կրթության աշխարհայացքային ու արժեքային ձևավորումը և դրանից հետո միայն կոնկրետ առարկայի դասավանդման մեթոդական բաղադրիչին տիրապետելը:

Ժամանակը **մանկավարժական Նոր մասնագիտությունների** պատրաստման պահանջ է դնում: Պետք է հաշվի առնել մեր հանրապետության և մասնավորապես գյուղական, սահմանամերձ դպրոցների առանձնահատկություններն ու կարիքները, ներմուծել լրացուցիչ կրթական ծրագրեր (բազմալեզու ուսուցիչ, բազմապրոֆիլ ուսուցիչ, ռազմավարական և մարտավարական պլանավորման, փորձագիտության, գնահատման, թվայնացման, բազմահամակազմ դասարանների դասավանդման, առողջ ապրելակերպի դպրոցում դասավանդվող առարկաների մեթոդիստների և այլ մասնագետների):

Համընդհանուր ներառականությունը հաղթահարելու համար վերանայվում են մանկավարժական բոլոր մասնագիտությունների՝ հատուկ կրթությանը վերաբերող ծրագրերի բովանդակությունն ու պրակտիկ ուղղորդվածությունը: Հատկապես խոսքը վերաբերում է նախադպրոցական, սկզբնական կրթության և սոցիալական մանկավարժների ոլորտներին:

Առաջին հերթին շարունակվում է վերանայվել **մանկավարժական պրակտիկայի** անցկացման բովանդակությունը, ձևերն ու վերջնարդյունքները՝ հաշվի առնելով տվյալ մասնագիտության առանձնահատկությունները, հատկապես մասնագիտական թղթապանակի բովանդակությունն ու վերջնարդյունքները: Նպատակն է պրակտիկայի

հնարավորություններն օգտագործել ուսանողի քննադատական մտածողության, հետազոտական, նախագծային կարողությունների, կիրառական հմտությունների զարգացման և ամրապնդման համար:

Առաջնային է դառնում ՊԴԱ-ի մասնագիտական կատարելագործման մշտական գործող կենտրոնի ձևավորման հարցը՝ շեշտադրելով ՊԴԱ-ի թվային գրագիտության կազմակերպումը, որը կլինի առաջին քայլը **թվային համալսարան** դառնալու ճանապարհին: Կենտրոնի գործունեության բաղադրիչ կարող է լինել մշտական գործող սեմինարը, որտեղ հաշվետվությամբ և ելույթներով հանդես կգան գործուղման մեկնած դասախոսներն ու աշխատակիցները , կքննարկվեն կրթության ժամանակակից հիմնախնդիրներին նվիրված հարցերը ինստիտուցիոնալ մակարդակում:

Ավագ դպրոցականների շրջանում մանկավարժական կրթության գրավչությունը մեծացնելու, նրանց մասնագիտական կողմնորոշմանը նպաստելու նպատակով՝ ՄՈՒՀ-ը շարունակելու է կատարելագործել **մինչբուհական առանցքային կրթությանն** ուղղված միջոցառումները (մանկավարժական հոսքի փաթեթի վերանայում, դպրոցականների հանրապետական օլիմպիադայի անցկացում, մասնագիտական կողմնորոշման հեռակա դպրոցի հիմնում և այլն) :

Երրորդ ուղղություն. գիտահետազոտական գործունեության կազմակերպում: Մանկավարժական համալսարանի երրորդ գլխավոր առաքելությունը գիտահետազոտական գործունեության կազմակերպումն է: Առավել ևս, ծրագրահենք և խնդրահենք ուսուցման պահանջը առաջնահերթություն է տալիս ուսումնասիրությանը և հետազոտությանը:

Չորրորդ ուղղություն. թվային, տեղեկատվական-հաղորդակցական և մեդիա տեխնոլոգիաների մանկավարժականացում և նյութատեխնիկական բազայի ամրապնդում:

Հինգերորդ ուղղություն. համագործակցություն բոլոր ֆակուլտետների և ամբիոնների հետ:

ՄՈՒՀ-ի կողմից մշակված Նոր Մանկավարժության տեսլականի ուղղությունների (տե՛ս վերոնշյալ դրույթների վերաբերյալ մանրամասն վերլուծության արդյունքների հավելվածը- https://drive.google.com/file/d/1OQzUAbon6jq9glQ86bTespfbPkHTjSV6/view?usp=drive_link) համաձայն՝ գործընթացների իրականացումը էապես կնպաստի ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակների ձեռքբերմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.5. Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Հիմքեր՝

- ՄՈՒՀ-ի որակի կառավարման համակարգի (ՈԿՀ) ուղեցույց (Հավելված 2.5.1)
- Փաստաթղթաշրջանառության կարգ (Հավելված 2.5.2)

Համալսարանի առաքելության իրականացման կարևոր գործիքամիջոցներից են կառավարումը և վարչարարությունը: Դրանք ուղղված են երկու կարևոր խնդրի լուծմանը՝ ՄՈՒՀ-ի՝ որպես կառույցի կազմակերպական միասնության ապահովմանը և կառավարման ընթացքում որակի շարունակական բարելավմանը:

Համաձայն ՄՈՒՀ-ում մշակված և հաստատված ՄՈՒՀ-ի որակի կառավարման համակարգի (ՈԿՀ) ուղեցույցի (տե՛ս https://aspu.am/website/images/website3/որակի%20բաժին/QM_guidline.pdf)՝ ՈԿՀ-ի շրջանակներում իրականացվում են գործունեության հետևյալ ուղղությունները՝ ա) ռազմավարական պլանավորում (իրականացվում է ՄՈՒՀ-ի կառավարման մարմինների կողմից), բ) պլանավորում՝ ըստ ՄՈՒՀ-ի որակի կառավարման գործող համակարգի (ՈԿՀ) ուղեցույցի (իրականացվում է Համալսարանի ստորաբաժանումների կողմից), գ) փաստաթղթաշրջանառություն (իրականացվում է կառավարման բոլոր մակարդակներում), դ) կրթության որակի մշտադիտարկում (իրականացվում է որակի կառավարման պատասխանատուների կողմից և համակարգվում որակի կառույցի կողմից) (տե՛ս 16.012023, թիվ 91-Ա հրամանը) (իրականացվում է համակարգի արդյունավետության գնահատման նպատակով

անկախ աուդիտի պատասխանատուների կողմից (https://drive.google.com/file/d/1B_qVv6Iv0BgPG1zbKMU-B_07i3ORf4rv/view?usp=drive_link), ե) գիտական աշխատողների և դասախոսական, ինչպես նաև վարչական անձնակազմի վերապատրաստման չափորոշիչների մշակում (պլանավորվում է գիտահետազոտական կենտրոնի կողմից, իրականացվում համապատասխան ստորաբաժանումների և հսկվում որակի կառույցի կողմից):

Համալսարանի կառավարումը հիմնված է ինքնակառավարման, ինքնավարության վրա՝ կոլեգիալ կառավարման սկզբունքների համատեղմամբ: Կառավարման և վարչարարության որակի ապահովման գործընթացն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում): Մասնավորապես, Համալսարանի ռազմավարական պլանը մշակվել է շահակիցների ակտիվ ներգրավմամբ, այդ թվում նաև որակի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատման բարելավման գործողությունների հիման վրա՝ ամբողջովին կառուցված է ՊԻԳԲ շրջափուլով: Ռազմավարական պլանավորմանը հաջորդում է գործողությունների քարտեզագրումը, այնուհետև համապատասխան որոշումների ընդունումը՝ համապատասխան պատասխանատուներով և ռեսուրսների նախագծմամբ: Այնուհետև գործողության իրականացմանը հաջորդում է մշտադիտարկումը, որն իրականացվում է հաշվետվությունների տեսքով (տե՛ս https://aspu.am/hy/page/hashvetvutyunner/): Հետագայում, գնահատման և մշտադիտարկման արդյունքների հիման վրա կատարվում են բարելավումներ: Ներկայումս Համալսարանի բոլոր ստորաբաժանումները նույնպես հաշվետվությունները ներկայացնում են որակի ամբողջական կառավարման սկզբունքներով, ինչը հնարավորություն է տալիս հետևելու գործընթացի շարժին և կատարելու բարելավմանը կամ նոր մարտահրավերների դիմակայմանն ուղղված գործողությունների պլանավորում: Դա հնարավորություն է տալիս ապահովելու ՊԻԳԲ շրջափուլի գործարկումը կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերում:

Որակի կառավարման շրջափուլերով են անցնում ներհամալսարանական գործառույթները (օրինակ՝ կրթական ծրագրի իրականացման), ինչպես նաև որակի կառավարման մեխանիզմները: Օրինակ՝ կրթական ծրագրերի պարագայում իրականացվում են ընդունելության վիճակագրության, աշխատաշուկայի պահանջարկի, հասարակական պահանջի և այլ վերլուծություններ, որոնց արդյունքների հիման վրա որոշում է ընդունվում նոր կրթական ծրագիր բացելու վերաբերյալ (տե՛ս ՄԿԾ հայտը https://aspu.am/website/images/files/%20%20%20%20%20-.pdf): Կրթական ծրագրերի գնահատումների արդյունքում կազմվում է բարելավման միջոցառումների պլանը, ինչը հիմք է հանդիսանում ծրագրի հաջորդ վերանայման համար:

Համալսարանի վարչարարությունը կառուցված է նաև կառավարման ոլորտում կիրառվող այլ սկզբունքների վրա, մասնավորապես՝ կառավարման գործառույթների տարբերակման սկզբունքը: Համալսարանում ներքին ակտերը սահմանում են բոլոր մարմինների իրավասությունը, կազմը, աշխատակարգի ու կանոնակարգի հիմունքները: Կառավարման համակարգում ներկայումս առաջնային է կոլեգիալ կառավարման սկզբունքը, իսկ միանձնյա մարմինները ընտրովի, ժամկետային, հաշվետու և պատասխանատու են:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.6. ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Հիմք՝

- Ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգ[8]

SS կենտրոնի ծրագրավորողների կողմից ստեղծված ուսումնական գործընթացի կառավարման ավտոմատացմանն ուղղված էլեկտրոնային տեղեկատվական համակարգում (ՈՒԳԱԿՀ– ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգ) 2020թ. իրականացվել են արդեն կիրառվող՝ *ՈՒսումնական մաս, Ամբիոն, Դեկանատ, Դասախոս, Վարչական մաս և*

[8] https://ams.aspu.am/

Ադմին մոդուլների սպասարկում, ընթացիկ պահանջներին համաձայն փոփոխում, աշխատանքի բարելավում և նոր հնարավորությունների ավելացում: Տեխնիկական պահանջից ելնելով՝ հուլիս-հոկտեմբեր ամիսներին իրականացվել է համակարգի սերվերի փոխարինում նորով: Նոր սերվերը նախօրոք լրացուցիչ հզորացվել է, տեղադրվել են ժամանակակից սերվերային օպերացիոն համակարգ և անհրաժեշտ ծրագրային ապահովումներ, կատարվել են անհրաժեշտ կարգավորումներ, իրականացվել է համակարգի և տվյալների բազայի միգրացիա նոր սերվեր: Համակարգի ենթածրագրերն աստիճանաբար համապատասխանեցվել են նոր ծրագրային ապահովումների տարբերակներին և ժամանակակից պայմաններին: Համակարգի մոդուլների սպասարկման և համալրման առումով իրականացվել են.

- դասախոսների տվյալների (ըստ ուսումնական տարվա փոխանցված դասաժամերի) ամրագրման համար անհրաժեշտ գործիքների ստեղծում,
- հաստիքակազմի տեղեկագրի էլեկտրոնային տարբերակների ստեղծում՝ ուսումնական մասի և ամբիոնների համար,
- դասավանդվող առարկաների կանոնակարգման (ավելորդ տվյալների հեռացման) համար գործիքների ստեղծում և ամբիոնի մասնագետներին ներկայացում,
- համակարգի բոլոր մոդուլների համապատասխանեցում ծրագրային ապահովումների միջազգային նոր ստանդարտներին,
- իրականացվել է բաղադրիչների ավտոմատ կիրառումը նոր ուսումնական տարվա համար,
- դիպլոմի հավելվածում ավելացվել է ցանկացած կուրսում և կարգավիճակում գտնվող ուսանողի հավելվածը դիտելու և տպելու հնարավորություն,
- COVID-19-ի պայմաններում՝ ՀՀ Կառավարության կողմից ուսանողներին աջակցման ծրագրի շրջանակներում, կատարվել են համապատասխան ավտոմատացված հաշվարկներ, և բանկերին են տրամադրվել ուսանողների ցուցակներ, որոնց ընդհանրացված առաջադիմությունը համապատասխանում է առաջադրված պայմաններին:

2021թ.

- 2020թ. համակարգի սերվերի և ծրագրային ապահովումների փոփոխմամբ պայմանավորված՝ ծրագրային կոդի համապատասխանեցման աշխատանքների շարունակում,
- բաղադրիչների ավտոմատ կիրառման հնարավորության ստեղծում՝ տվյալ ուսումնական տարվա համար,
- ավարտական դիպլոմի հավելվածի ավտոմատ ստացման գործընթացի ուղեկցում, տվյալների լրացման փուլում հնարավոր վրիպակների հայտնաբերում և շտկում,
- կոնկրետ ամբիոնների համար բաշխման սահմանափակման հնարավորության ստեղծում,
- *դեկանատ* մոդուլում՝ ուսանողների դիտման բաժնում, նոր ֆիլտրի ավելացում (ավարտած ուսանողների դիտում ըստ ավարտման տարվա),
- *ուսումնական մաս* մոդուլում ուսումնական պլանների ծավալների և բաշխումների կազմման գործընթացի համապատասխանեցում լրացուցիչ պահանջներին,
- պահանջագրերի ենթածրագրի նախագծում և ստեղծում (ծրագրավորում) (աշխատանքները դադարեցվել են Mulberry համակարգի ներդրման կապակցությամբ),
- ուսումնաօժանդակ և պրոֆեսորադասախոսական կազմին համակարգի հետ աշխատանքի հարցերում աջակցում, վրիպակների վերաբերյալ զեկուցագրերում առկա պահանջների կատարում:

2022թ.

- Դեկանատների կողմից ամփոփագրերի ստեղծման ժամկետների վերահսկման ծրագրային ապահովման ստեղծում,
- դասախոսների կողմից լրացվող ամփոփագրերի ժամկետների վերահսկման ծրագրային ապահովման ստեղծում,
- մասնագիտական և ոչ մասնագիտական ՄՈԳ-երի դիտման գործիքակազմի բարելավում և աշխատանքի պարզեցում,
- դասախոսների և դեկանատների կողմից ամփոփագրերի հետ աշխատանքի արագացում,

- բաշխումների սահմանափակումների թույլատրություններ՝ բաշխում իրականացնել կարող են միայն այն ամբիոնները, որոնց համար առկա են համապատասխան թույլատրություններ,
- դեկանատների, ինչպես նաև դասախոսների կողմից ամփոփագրերի դիտման ժամանակ ավելացվել է ստեղծման ամսաթիվը տեսնելու հնարավորություն,
- դեկանատներում ուսանողների տեղափոխման մեջ ավելացվել է սեփական դիմումի համաձայն ուսանողի ազատման հնարավորություն,
- ավելացվել է նոր գործիքակազմ, որի միջոցով հնարավոր է դիտել կոնկրետ ուսանողի կոնկրետ առարկայից ստացված բոլոր գնահատականները՝ ըստ կուրսի, կիսամյակի և ուսումնական տարվա,
- ամփոփագրերի դիտման մեջ այսուհետ ավելացվել է կոնկրետ ուսանողի վերաբերյալ մեկնաբանություն տեսնելու հնարավորություն,
- դեկանատի աշխատակիցների առաջարկով ավելացել է համակարգով ակադեմիական տեղեկագիր ստեղծելու հնարավորություն,
- չլրացված ամփոփագրերի հեռացման գործիքակազմն ավելի լավարկվել և պարզեցվել է,
- սկսվել են նոր՝ «ուսանող» մոդուլի նախագծման աշխատանքները:

2023թ.

- Ստեղծվել է նոր «Ուսանող» մոդուլը, որը ուսանողին հնարավորություն է տալիս անհատապես տեսնել իր անձնական տվյալները և իր ուսումնառության ողջ ընթացքի առաջադիմությունը,
- «դասախոս» մոդուլում ավելացվել է անմիջապես բոլոր չլրացված ամփոփագրերի դիտման հնարավորություն՝ լրացման ուշացումներից խուսափելու նպատակով,,
- «դասախոս» մոդուլում ավելացվել է ամփոփագրերի սխալ լրացման և ուշացումների հետ կապված զեկուցագրեր ստեղծելու հնարավորություն՝ համապատասխան գործընթացն առավել պարզեցնելու նպատակով,
- «ամբիոն» մոդուլում ավելացվել է չլրացված ամփոփագրերի դիտման հնարավորություն՝ հնարավոր ուշացումները վերահսկելու նպատակով,
- «դեկանատ» մոդուլում բարելավվել է «14 ձև» բաժինը,
- «ուսումնական մաս» մոդուլում դասաժամերի ծավալի բաշխման համար ստեղծվել է սահմանափակումների գործիքակազմ, որը հնարավորություն է տալիս արգելել սխալ բաշխումները կոնկրետ ամբիոնների համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.7. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

Հիմքեր՝

- ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքէջ[9]
- Լրատվության և հանրության հետ կապերի վարչության կանոնադրություն
- Ռադիո «Ֆամա»[10]
- «Հաջողության բանաձև» հաղորդումը[11]
- Յութուբյան պաշտոնական էջ[12]
- Facebook սոցիալական ցանց[13]
- Dasaran.am[14]
- Կրթական գործընթացների կառավարման փաստաթղթեր[15]

[9] https://aspu.am/
[10] https://www.radiofama.am/
[11] https://www.youtube.com/watch?app=desktop&v=c5IApr-zeRA&list=PLbbEkgHyhRd621zl-bmCt9DTIXzpK_0va
[12] https://www.youtube.com/user/armenianspu?app=desktop
[13] https://www.facebook.com/ASPUhome/
[14] https://www.dasaran.am/
[15] https://aspu.am/hy/page/pastatghter2/

ՄՈՒՀ-ը, կարևորելով կրթական ծրագրերի, շնորհվող որակավորումների, ուսուցման որակի նկատմամբ իր ստանձնած պարտավորությունները, կիրառում է կրթության որակի լուսաբանման և տեղեկատվության տարածման արդիական մեթոդներ, ստեղծում է տեղեկատվության հրապարակման միջավայր և հնարավորություններ: ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին տեղեկատվությունը հրապարակվում է համալսարանի պաշտոնական կայքէջի (տե՛ս https://aspu.am/), «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի (տե՛ս https://aspu.am/hy/page/hpmh_pashtonatert/), ԶԼՄ-ներին տրամադրվող տեղեկատվության՝ մամլո հաղորդագրությունների, ՄՈՒՀ-ի հեղինակային՝ «Հաջողության բանաձև» հաղորդաշարի, առաջին համալսարանական ռադիո «Ֆամա»-ի, ուսանողի ուղեցույցի (տես՛ https://aspu.am/website/images/website3), բուհի մասին բուկլետների և բրոշյուրների միջոցով: Կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի վերաբերյալ քանակական ու որակական տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան հաշվետվությունների (ռեկտորի հաշվետվություն) և ինքնավերլուծական զեկույցների ձևով, պատրաստվում է տարին ամփոփող հաշվետու տեսաֆիլմ, որը տեղադրվում է բաց հարթակներում, ռազմավարական պլանի կատարողական ցուցանիշները զետեղվում են համացանցային կայքում (ՌԾ 2020-25թթ. և 2022 թվականի կատարողական), համալսարանական «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթում տպագրվում է տեղեկատվությունը և այլն: ՄՈՒՀ-ում գործող կրթական ծրագրերի մասին քանակական և որակական տեղեկատվությունը շահակիցներին տրամադրվում է համացանցում առկա ՄԿԾ մասնագրերի, առարկայական նկարագրերի, ուսումնական պլանների, բակալավրի, մագիստրոսի կրթական ծրագրի ուղենիշ ձեռնարկների միջոցով: Շնորհվող որակավորումների
որակի մասին տեղեկատվության հիմնական աղբյուրը հանդիսանում են բոլոր մասնագիտությունների ավարտական որակավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները: ՄՈՒՀ-ի կողմից տրամադրվող Կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակական և քանակական տեղեկատվության հրապարակումների և դրանց գնահատման մեխանիզմների արդյունավետության վերլուծության մասնավոր, բայց կարևոր օրինակներից է Համալսարանի կողմից իրականացվող կրթական ծրագրերի մասին «Հաջողության բանաձև» 25-30 րոպե տևողությամբ հաղորդաշարը, որը հեռարձակվում է *ԱՏՎ* և *Ֆրի նյուզ* համապետական մուլտիպլեքսում ներառված հեռուստաալիքներով, ինչպես նաև 8 մարզային հեռուստաընկերությամբ: Սա յուրատեսակ հաշվետվություն է ինչպես մանկավարժական համալսարանում ուսումնասիրվող մասնագիտությունների, ՄԿԾ-ների, այնպես էլ դրանք ուսանողին մատուցող պրոֆեսորադասախոսական կազմի պատրաստվածության, որակի մասին: Հաղորդումը տեղադրվում է ոչ միայն համալսարանի յութուբյան պաշտոնական էջում (տե՛ս https://www.youtube.com/user/armenianspu?app=desktop), որին այս պահին միացած է մոտ 6400 բաժանորդ, այլև dasaran.am (տե՛ս https://www.dasaran.am/) կրթական հարթակում:

ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերի և որակավորումների մասին հաղորդումներն առանձին երիզներով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մասնագիտական կողմնորոշման վարչության կողմից տարածվել են հանրապետության դպրոցներում: aspu.am@aspu.am, press@aspu.am էլեկտրոնային հասցեների միջոցով իրականացվում է դրանց գնահատումը օտարազգի դիմորդների և այլոց կողմից: ՄՈՒՀ-ում կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ կարող են դիտարկվել նաև ՄՈՒՀ-ի Facebook սոցիալական ցանցի պաշտոնական էջը՝ շուրջ 25 600 հետևորդներով, ՄՈՒՀ-ի կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի տեղեկատվական հարթակը, ՄՈՒՀ-ի բուկլետները՝ բուհի մասնագիտությունների, ընդունելության քննությունների, քննությունների, տեղերի և վարձաչափերի մասին, ՄՈՒՀ-ի ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները, «Սփյուռ» տեղեկատվական կենտրոնի կողմից ՄՈՒՀ-ի մասին տեղեկատվության հրապարակումը «Հայաստանի դեղին էջեր» ժողովածուում, Հայաստանի ԲՈՒՀ-երը դիմորդների համար հրատարակվող տեղեկատուում և նրանց ինտերնետ-կայքերում ուսանողների, դասախոսների, գործընկերների և պարզապես հասարակության համար:

ՄՈՒՀ-ի գործունեության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները՝ ըստ 2-րդ չափանիշի

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը գործում է հաստատված կանոնակարգերի համաձայն, հստակ ընթացակարգերով և աշխատակարգերով՝ ապահովելով որոշումների կայացման գործընթացում շահակիցների ակտիվ ներգրավվածությունը:	Երբեմն կառավարման կոշտ համակարգը և չափազանցված բյուրոկրատական գործընթացները դանդաղեցնում են որոշումների կայացումը և կարող են խոչընդոտել կրթական միջավայրի փոփոխությունների հարմարվողականությունը:
ՄՈՒՀ-ի կառավարման բոլոր ենթակառույցներում աշխատում են փորձառու մենեջերներ և կառավարիչներ:	Կառավարման տեսանկյունից առկա են ոչ բավարար ֆինանսական և մարդկային ռեսուրսներ՝ հետազոտահեն մշտադիտարկումների իրականացման և հետագա որոշումների կայացման գործում դրանց ակտիվ կիրառման համար:
Էլիամակարգերի ծառայությունների ակտիվ կիրառումը կառավարման գործընթացներում ապահովում է դրանց թափանցիկությունը, օպերատիվությունը և օբյեկտիվությունը:	ՄՈՒՀ-ում գործող կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ, անկողմնակալ քանակական ու որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմները կանոնակարգման ընթացքի փուլում են:
	ՄՈՒՀ-ի ներբուհական կառավարման ենթակառույցներում ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական կիրառումը երբեմն ոչ բավարար է
Հնարավորությունները	**Վտանգները**
Կառավարման առաջավոր փորձի ուսումնասիրությունը և ներդրումը կնպաստեն բուհի կառավարման համակարգի օպտիմալացմանը և արդյունավետ զարգացմանը:	Անհրաժեշտ ռեսուրսների սահմանափակությունը կարող է վտանգել կառավարման և վարչարարության գործընթացների շարունակականությունը:
Կառավարչական որոշումների կայացման արդյունավետության բարձրացման նպատակով կառավարման և վարչական թեմաներով պարբերաբար կազմակերպվող սեմինարները՝ հրավիրյալ մասնագետների միջոցով, կարող են հնարավորություն ընձեռել այդ որոշումներում շահակիցների նախաձեռնողականության բարձրացմանը, նրանց շահերի առավել հետևողական և արդյունավետ իրացմանը :	Դիմորդների թվաքանակի նվազմամբ պայմանավորված ոչ բավարար ֆինանսական միջոցները կարող են խոչընդոտել կառավարման առաջադեմ տեխնոլոգիաների ներդրումը:
Կառավարման ներքին	

գործընթացներում թվային տեխնոլոգիաների և համակարգերի օգտագործումը կարող է հնարավորություն ընձեռել՝ բարձրացնելու ենթակառույցների փոխգործակցությունը:	

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները

- Կառավարման բոլոր մակարդակներում կառավարչական որոշումների կայացման գործընթացներում շահակիցների ներգրավվածության նախաձեռնողականության խրախուսման մեխանիզմների կիրառում
- Բյուրոկրատական գործընթացների վերանայման, համակարգման մեխանիզմների մշակում կրթական միջավայրի հարմարվողականությունը ճկուն ապահովելու համար
- Կառավարման արդյունավետության բարձրացման համար նոր ռեսուրսների՝ ֆինանսական, մարդկային, ներգրավում և դիվերսիֆիկացում
- Կառավարման համակարգի արդյունավետության շարունակական մշտադիտարկման գործուն մեխանիզմների ներդրում՝ կառավարչական և կրթական գործընթացների գնահատման և բարելավման մեխանիզմների միջոցով
- Ֆինանսական միջոցների բազմազանեցված աղբյուրների որոնում՝ կառավարման գործընթացների ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման համատեքստում

ՉԱՓԱՆԻՇ 3. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ՆԵՐԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ, ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ ԵՎ ՆՊԱՍՏՈՒՄ ԵՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆԸ:

ՄՈՒՀ-ը հավակնում է շարունակել աշխատանքները՝ ձևավորելու հստակ և չափելի ուսումնառության վերջնարդյունքներով ՄԿԾ-ներ, որոնք արձագանքում են դասավանդման և ուսումնառության արդի մոտեցումներին, նպաստում են ուսանողների և ՊԴԱ շարժունությանը՝ բարձրացնելով Համալսարանի մրցունակությունն ու հեղինակությունն ազգային և միջազգային մակարդակներում: ՄՈՒՀ-ը ձգտում է տրամադրելու որակյալ կրթություն, իրականացնելու ուսանողակենտրոն ուսուցում և առաջարկում է համակողմանի գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ապահովող կրթական ծրագրեր՝ հիմնված հետազոտության, ստեղծագործ աշխատանքի ու նորարարության վրա, որոնք սահմանված են ՄՈՒՀ-ի 2020-2025 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի (ՌԾ) «Որակյալ կրթություն» նպատակի խնդիրներում և համապատասխան գործողություններում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.1. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Հիմքեր՝

- Մասնագիտության կրթական ծրագրի մասնագրերի նմուշ օրինակ (Հավելված 3.1.1)
- Նոր ՄԿԾ-ների մշակման և արտոնման կարգ (Հավելված 3.1.2)
- Մասնագիտության կրթական ծրագրի համար առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման բաղաբականությունը, ընթացակարգերը (Հավելված 3.1.3)

ՄՈՒՀ-ը կրթական ծրագրեր է իրականացնում կրթություն (բնական, հումանիտար գիտություններ), սոցիալական գիտություններ և արվեստ՝ երեք հիմնական մասնագիտությունների ոլորտներում, ՈԱՇ-ի 3՝ բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի մակարդակներում՝ պատրաստելով աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կարողություններով և անհրաժեշտ գիտելիքներով օժտված մասնագետներ: ՄՈՒՀ-ի 10 ֆակուլտետներում առկա է 60 մասնագիտության 108 կրթական ծրագիր, որոնցից 44-ը՝ բակալավրի, 64-ը՝ մագիստրոսի կրթական աստիճաններում, հետազոտողի 4 գիտական ուղղություններով՝ 5 հետազոտական ԿԾ-ներ (կրթական ծրագրերի ցանկ):

ՄՈՒՀ-ը 2020 թ-ից սկսած անցել է ՄԿԾ-ների արդիականացմանը, ուսումնառության վերջնարդյունքներով սահմանմանը, որակավորումների ազգային ու ոլորտային շրջանակների, աշխատաշուկայի պահանջների հետ համադրելիության ապահովմանը: Կատարվել է հենանշում՝ ա)այլ հաստատությունների նույն որակավորման ԿԾ-ների հետ, բ)ՀՀ-ի դպրոցական առարկայական չափորոշիչների հետ (մանկավարժական մասնագիտությունների համար), համադրելիության ուսումնասիրում՝ ՄԿԾ-ների կրթական ելքային արդյունքների որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին համապատասխան և այլն:

Արտաքին գնահատման արդյունքում (ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույց, 2019), ինչպես նաև վերջինիս երաշխավորությունների հիման վրա կազմված բարելավման ծրագրին և ՄՈՒՀ-ի 2020-2025 թթ. զարգացման ՌԾ-ին համահունչ՝ ՄՈՒՀ-ում իրականացվեց կրթական ծրագրային բարեփոխումների հերթական շրջափուլը: 2021-2022 ուստարվանից մեկնարկեցին բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի կառուցվածքի, բովանդակության և ուսումնական գործընթացի կազմակերպման նորմատիվ փաստաթղթերի վերանայման գործընթացները: Օրինակ՝ բովանդակային առումով Համալսարանի բակալավրի կրթական ծրագրի առկա և հեռակա ուսուցման համակարգի բոլոր ուսպլաններում «Մասնագիտական դասընթաց օտար լեզու» առարկան (2 կրեդիտ) փոխարինվել է «Հակակոռուպցիոն քաղաքականություն» առարկայով (տե՛ս որոշում 2021թ. հունիսի 1-ի N7-L): Իսկ 2023 թվականի հունիսի 30-ի N-7Լ որոշմամբ՝ ՄՈՒՀ-ի Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի, Սկզբնական կրթության, Պատմության և հասարակագիտության բակալավրի կրթական ծրագրի բոլոր մասնագիտությունների գործող ուսպլաններում «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկան (2 կրեդիտ) հանրակրթության բարեփոխումներին համընթաց փոխարինվել է «Անձնական ֆինանսների կառավարում» առարկայով: Դասընթացի ներդրումը մանկավարժական համալսարանում ունի երկակի կարևորագույն նշանակություն. նախ գիտելիք է ստանում ուսանողը և կարողանում է ճիշտ կողմնորոշվել անձնական ֆինանսների կառավարման գործընթացներում և միևնույն ժամանակ՝ ավարտելով համալսարանը և մտնելով դպրոց որպես ուսուցիչ՝ կարողանում է այս գիտելիքները հաղորդել դպրոցական տարիքի երեխաներին:

2022 թվականի հունիսի 16-ից մինչև օգոստոսի 30-ը կազմակերպվել են պրոֆեսորադասախոսական կազմի համար մասնագիտական կրթական ծրագրերի, առարկայական նկարագրերի որակի բարձրացմանն ուղղված մանկավարժամեթոդական վերապատրաստման դասընթացներ (տե՛ս հրաման թիվ 1736Ա, 15.06.2022թ.): Արդյունքում, մշակվեցին և ՄՈՒՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատվեցին «ՄՈՒՀ-ի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ», «ՄՈՒՀ-ի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» (2022թ. տե՛ս https://aspu.am/website/images/files/10f3b684.pdf), «ՄՈՒՀ-ի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» (2022), «ՄՈՒՀ-ի բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգ» (2019թ. տե՛ս https://aspu.am/website/images/files/Bakalavr.pdf), «ՄՈՒՀ-ի մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգ» (2019 տե՛ս https://aspu.am/website/images/files/Magistrosakan%20tez.pdf), «ՄՈՒՀ-ի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգ» (2014 տե՛ս https://aspu.am/website/images/files/kanonakarg_praktika.pdf) նորմատիվ փաստաթղթերը:

Վերոնշյալ փաստաթղթերի և սահմանված քաղաքականության, միջազգային առարկայական հենանիշերի (բենչմարք) հիման վրա, ինչպես նաև ի կատարումն ՄՈՒՀ-ի 2020-2025 թթ. զարգացման ՌԾ-ի «Որակյալ կրթական գործունեության» նպատակի խնդիրներ 1.4-ի և 1.6-ի (տե՛ս https://aspu.am/website/images/files/Razmavarakan%20cragir_2020-2025.pdf)՝ «Մշակել ՄԿԾ-ի ղեկավարման ամբողջական ընթացակարգ» և «Լավարկել ՄԿԾ-ում հետազոտական և նախնական մասնագիտական փորձառության ձևավորման քաղաքականություն», վերամշակվեցին և նորովի մշակվեցին կրթական վերջնարդյունքների վրա հիմնված շուրջ 64 մագիստրոսի (2020/21ուստարվանից) և 44 բակալավրի (2020/21ուստարվանից) կրթական ծրագրեր՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան: Որպես որակի ապահովման և կառավարման մեխանիզմ՝ ֆակուլտետներում, ամբիոններում ներդրվեցին որակի ապահովման պատասխանատուների ինստիտուտներ, միևնույն ժամանակ այդ ծանրաբեռնվածությունը սահմանվեց ժամաքանակով և ներառվեց պատասխանատուի ուսումնական տարվա բեռնվածքի մեջ՝ 60 ժամ ժամաքանակով՝ հաշվի առնելով աշխատանքային ծանրաբեռնվածության հարաբերակցությունը (տե՛ս 12.07.2022 թ. Զեկուցագիրը-տե՛ս https://drive.google.com/file/d/12ZUgDWkLlBPwm7U9lVJb366rO5MAG6ZC/view):

Ներկայումս ՄՈՒՀ-ի բակալավրի և մագիստրոսի բոլոր կրթական ծրագրերն ունեն սահմանված ձևաչափի մասնագրեր (օրինակելի ձևը տե՛ս https://docs.google.com/document/d/1XhV29xJH2plCsABfJWETHxo1qPkPlfO5/edit), որտեղ ներկայացված են ծրագրի ընդունելության չափանիշները, կառուցվածքը և նկարագիրը, նպատակները, կրթական ելքային վերջնարդյունքները (գիտելիք և իմացություն, գործնական մասնագիտական կարողություն, ընդհանրական փոխանցելի կարողություն), գնահատման մեթոդները, ուսումնական պլանի քարտեղը, որի օգնությամբ ծրագրի յուրաքանչյուր կրթական վերջնարդյունք կապակցվում է այն ձևավորող դասընթացների հետ, ինչպես նաև ծրագրի բոլոր դասընթացների և այլ կրթական մոդուլների նկարագրիչները: Հավելվածային կցված է ծրագրի ուսումնական պլանը, որին էլ կցված են յուրաքանչյուր դասընթացի առարկայական նկարագիրն ու թեմատիկ տրոհումը: Մասնագրերը, ուսումնական պլանները, առարկայական նկարագրերն ու թեմատիկ տրոհումները թափանցիկ հասանելի են ASPU կայքէջի առցանց տարածքում, իսկ կրթական ծրագրերի դասընթացների համար մշակված ուսումնամեթոդական փաթեթները հասանելի են ներքին օգտատերերի համար (@aspu.am-ի շրջանակներում) Google Classroom-ում: Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությունն իր հերթին նախաձեռնեց մասնագրերի, ուսումնական պլանների և առարկայական նկարագրերի բարելավում՝ օգտագործելով Google Drive հավելվածի Google Doc և Google Sheets գործիքները: ՄՈՒՀ-ը հետամուտ եղավ, որ բոլոր ՄԿԾ-ները հասանելի լինեն իր թե՛ արտաքին, թե՛ ներքին շահակիցներին՝ ապահովելով ուսումնական գործընթացի թափանցիկությունը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.2. ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Հիմքեր՝

- Ուսումնառության արդյունքները և նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումները և մեթոդները, ՄԿԾ-ով նախատեսված դասընթացների և ուսումնառության ակնկալվող արդյունքների (ՈՒԱ) համապատասխանությունը (հավատարմագրման համար ընտրված 3 ՄԿԾ-ների համար) (Հավելված 3.2.1)
- Դասավանդման և ուսումնառության մոտեցումների և մեթոդների պարբերաբար արդիականացման քաղաքականությունը և ընթացակարգերը (Հավելված 3.2.2)
- Կրթական ելքային արդյունքների սահմանում (Հավելված 3.2.3)

- Կրթական ելքային արդյունքների, դասավանդման և ուսումնառության մեթոդների և գնահատման միջև կապը. գնահատման մեթոդների օրինակներ, գնահատման չափանիշներ, դասավանդման ինտերակտիվ մեթոդների օրինակներ (Հավելված 3.2.4)
- ՄՈՒՀ-ում մասնագիտական կողմնորոշման աշխատանքի համակարգման ուղեցույց (Հավելված 3.2.5)

ՄՈՒՀ-ում դասավանդման և ուսումնառության մոտեցումները ուսանողակենտրոն են՝ միտված ուսանողների կրթական կարիքներին համապատասխան ծառայությունների մատուցմանը, խրախուսում են ուսանողի անհատական զարգացումը, մասնագիտական կարողությունների համաչափ աճը, մասնագիտական տեղեկատվության ձեռքբերման հարցում վերջինիս ինքնուրույնությունը, ինչպես նաև անհատական վերլուծական ունակությունները և քննադատական մտածողությունը՝ էապես նպաստելով ուսանողակենտրոն մոտեցման լիարժեք իրականացմանը:

Կրթական ծրագրերի մասնագրերում՝ յուրաքանչյուր դասընթացի նկարագրության մեջ, պարտադիր պահանջ է սահմանված նկարագրել դասավանդման և ուսումնառության մեթոդները՝ համահունչ ծրագրի կրթական վերջնարդյունքներին:

ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերում դասավանդման և ուսումնառության մեթոդներն ընտրվում են դրանց կազմման ժամանակ և պարբերաբար վերանայվում ուսումնական տարվա ավարտին ինքնավերլուծությունների արդյունքում (տե՛ս -https://aspu.am/hy/page/ardzanagrutyunner2): Բոլոր ՄԿԾ-ների մասնագրերում ներառված են կրթական ելքային արդյունքների և՛ դասավանդման, և՛ ուսումնառության մեթոդների համապատասխանության հատուկ մշակված մատրիցաներ (տե՛ս 2022-2023 ուսումնական տարվա կրթական ծրագիր https://docs.google.com/document/d/12khXvY6bm5tYntoFOQMnOrbp9a4yPZNWvCllXaGlEok/edit): Դասավանդման և ուսումնառության մեթոդների ավելի նպատակային և մանրամասն ցանկը՝ ըստ թեմաների, ներկայացվում է մասնագիտության համապատասխան առարկայական նկարագրերի թեմատիկ տրոհումներում և ուսումնամեթոդական փաթեթներում (տե՛ս թեմատիկ տրոհում):

Կրթական ծրագրերի և դասընթացների բազմազանությունը համապատասխանաբար պահանջում է դասավանդման և ուսումնառության տարբեր ձևեր: Դրանք պարտադիր սահմանվում են դասընթացների թեմատիկ տրոհումներում, որտեղ առանձին բաժին է հատկացված դասընթացի վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության համար (տե՛ս թեմատիկ տրոհումները): Օրինակ՝ տեսական գիտելիքների ձեռքբերման համար հիմնականում ընտրվում են դասախոսությունները, սեմինարները, հանձնարարված գրականության մշակումների քննարկումները, իսկ մասնագիտական գործնական գիտելիքների ձեռքբերման համար՝ գործնական և լաբորատոր պարապմունքները, նախագծերի կատարումը, քննարկում-բանավեճերը, հետազոտական աշխատանքները և այլն: Հմտությունների և փոխանցելի կարողությունների ձևավորման համար ընտրվում են էսսեները, ռեֆերատները, ներկայացումները, նախագծերի իրականացումը:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետության գնահատման հիմնական մեխանիզմներ են՝ դասալսումները (ամբիոնի վարիչ, փոխադարձ դասալսումներ), հարցումները: Նշված գործիքները հնարավորություն են տալիս ամփոփելու դասավանդման գործընթացի մասին տեղեկատվությունը՝ հետագայում ՄԿԾ-ն այդ տեսանկյունից անհրաժեշտաբար դիտարկելու համար:

Պարբերական բարեփոխումների արդյունքում մասնագիտությունների թե՛ բակալավրիական, թե՛ մագիստրոսական կրթական ծրագրերի ելքային արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականությունը ուսանողակենտրոն է: Մասնագիտական առարկաների դասավանդումը առաջնորդվում է հետևյալ քայլաշարով.

- Հանձնարարությունների կատարման համար ուսանողների բաժանումը համապատասխան քանակով խմբերի,
- Հանձնարարականների մշակում, որը դասավանդողին ավելի քիչ միջամտելու և ուղղորդողի դեր ստանձնելու հնարավորություն է տալիս,
- Անկաշկանդ միջավայրի ստեղծում՝ ուսանողի տեսակետների արտահայտման համար,

- Հետադարձ կապի ապահովում, ձեռքբերումների, բացթողումների և կարիքների դուրսբերում,
- Հաղորդակցական հմտությունների, ստեղծագործարար և քննադատական մտածողության զարգացում:

2021-2022, 2022-2023 ուստարիներին (ուսումնառության 2 կիսամյակներում) բակալավրի և մագիստրոսի, ինչպես նաև՝ «մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրում» կրթական ծրագրերում իրականացված «Դասախոսն ուսանողի աչքերով» (տե՛ս https://drive.google.com/file/d/1TpXlZzafh_45DROh7ClzuJSSAWJM7hgm/view?pli=1) հարցումները իրականացվել են հետևյալ բաժիններով.

- Իրականացվող դասընթացի վերաբերյալ:
- Դասավանդման մեթոդների վերաբերյալ:
- Հոգեբանամանկավարժական որակների վերաբերյալ:

Բաժինների մշակված հարցերի չափելիության սկզբունքով դուրս են բերվել յուրաքանչյուր կրթական ծրագրի իրականացման նպատակների, առաջադրանքների փաթեթների տրամադրման, առցանց հարթակում նյութերի բովանդակության ապահովման, ուսանողակենտրոն ուսուցման, հետադարձ կապի ապահովման, դասանանդման մեթոդների կիրառման արդյունավետության, դասավանդողի ուղղորդող կարգավիճակի գնահատման, մասնագիտական ձեռքբերումների նկատմամբ վստահության մասին բավարարվածությունը (տե՛ս վերոնշյալ հարցումները) :

Ի պատասխան ժամանակի պահանջներին՝ ուսումնառողների և դասավանդողների միջև ուսումնական փոխներգործությունը խրախուսելու և այն պարբերաբար ապահովելու նպատակով համալսարանը կիրառում է էլեկտրոնային կրթական հարթակ, GOOGLE CLASSROOM, որն ընդգրկված է ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողի ծանրաբեռնվածության մեջ (տե՛ս ծավալ և դասախոսի ծանրաբեռնվածություն):

Այսպիսով՝ մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականության՝ վերը դիտարկված մեխանիզմները խոսում են դասավանդման ուսանողակենտրոն ուսուցման արդյունավետության մասին, սակայն դուրսբերված կարիքները վկայում են նաև, որ դեռ անելիքներ կան՝ ի նպաստ ուսումնառության էլ ավելի բարելավմանը:

Չափորոշիչ 3.3. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյուքների և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Հիմքեր՝

- Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների սահմանումը և որոշումը (Հավելված 3.3.1)
- Կրթական ելքային արդյունքների սահմանումը. ուղեցույց (Հավելված 3.3.2)
- Ակադեմիական ազնվության քաղաքականությունը, ընթացակարգերը, ինչպես նաև հիմքեր ապահովող փաստաթղթերը (Հավելված 3.3.3)
- ՄՈՒՀ-ի բակալավրի ավարտական աշխատանքների կազմակերպման, իրականացման և գնահատման կանոնակարգ (Հավելված 3.3.4)
- Ուսումնառողների գնահատման քաղաքականության վերանայման հիմքերը և արդյունավետությունն ապահովող մեխանիզմները (Հավելված 3.3.5)
- ՄՈՒՀ-ի բակալավրի կրթական ծրագրով կուրսային աշխատանքի կազմակերպման, կատարման և գնահատման կանոնակարգ (Հավելված 3.3.6)
- Հավատարմագրման համար ընտրված 3 ՄԿԾ-ների մասնագրերի նկարագրերի հավելվածներ (տե՛ս մասնագրերի և առարկայական նկարագրերի հավելվածները (Հավելված 3.3.7)

ՄՈՒՀ-ում ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման քաղաքականությունը կանոնակարգվում է «ՄՈՒՀ-ում ուսանողների գիտելիքների գնահատման» (տե՛ս https://aspu.am/website/images/files/us_%20giteliqneri%20stugman%20ev%20gnahatman%20hamakarg.p

df), ինչպես նաև ռեֆերատի, կուրսային, ավարտական աշխատանքի պատրաստման, ներկայացման և գնահատման կարգերով (տե՛ս չափորոշչի հիմքերը) :

Գործող գնահատման համակարգի առկա խնդիրների վերհանման նպատակով համալսարանի ստորաբաժանումներում իրականացվել են հարցումներ, ստացվել են համապատասխան առաջարկություններ և դիտողություններ: Ստացված տվյալների հիման վրա վերոնշյալ կարգերում սահմանվել են գնահատման և բողոքարկման նոր ընթացակարգեր: Սահմանվել են ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը, դրա կիրարկման հիմնական նպատակները, գնահատման բաղադրամասերը և ձևերը: Համաձայն նշված կարգի և ելնելով կրթական ծրագրի ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (ուսումնական մոդուլների) աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման և ուսումնառության մեթոդներից՝ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվել են 4 խմբի՝

- 2 միջանկյալ և ամփոփիչ ստուգմամբ,
- 2 միջանկյալ՝ առանց ամփոփիչ ստուգման,
- 1 միջանկյալ և ամփոփիչ ստուգմամբ,
- ստուգարքային ամփոփմամբ՝ առանց միջանկյալների:

Կրթական ծրագրի մասնագրի նկարագրիչի 15-րդ կետում սահմանված են գնահատման մեթոդները և չափանիշները, որտեղ պահանջ է դրված նկարագրել տվյալ դասընթացի վերջնարդյունքների ձեռքբերման, գիտելիքների և կարողությունների գնահատման մեթոդները, ձևերը և չափանիշները: Մասնագրերի վերլուծությունները ցույց են տալիս, որ, ընդհանուր առմամբ, կրթական ծրագրի առարկայական նկարագրերում մանրամասն և հստակ ներկայացված են և՛ գնահատման մեթոդները, և՛ չափանիշները՝ համահունչ ակնկալվող կրթական վերջնարդյունքներին: Ուսանողների գիտելիքների ու կարողությունների ստուգման ձևերը, գնահատման համակարգը և ակադեմիական ազնվության խնդիրները պարբերաբար քննարկվում են կրթական ստորաբաժանումների և ՄՈՒՀ-ի գիտական խորհուրդներում: 2017/18 ուստարվանից ներդրված գնահատման նոր համակարգի արդյունավետությունը գնահատելու և խնդիրները վերհանելու նպատակով հարցումներ են իրականացվում երկու հիմնական շահակիցների՝ ուսանողների և դասախոսների շրջանում: Հարցման արդյունքում պարզվել է, որ դասախոսները և ուսանողները հիմնականում ընդունելի են համարում ուսանողների գիտելիքների և կարողությունների գնահատման գործող համակարգը և 100 միավորանոց սանդղակը:

Հավելենք, որ գնահատումը ՄՈՒՀ-ում իրականացվում է ՈՒսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգում (տե՛ս https://ams.aspu.am/) և ամրագրվում էլեկտրոնային ամփոփաթերթերում: Գիտելիքի գնահատում, էլեկտրոնային հանձնարարականի տրամադրում, հետադարձ կապի ապահովում իրականացվում է նաև ASPU Classroom հավելվածով: Առանձնահատուկ ուշադրության է արժանի ASPU Forms հավելվածի միջոցով ինքնագնահատվող էլ. թեստերի իրականացումը և այլն:

Ակադեմիական ազնվության մեխանիզմների ապահովմանն է ուղղված ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի պատրաստման և պաշտպանության կանոնակարգված գործընթացը: ՄՈՒՀ-ում ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման վերոնշյալ կարգերում ներկայացված են աշխատանքի օրինակելի կառուցվածքը, ձևավորման պահանջները, օգտագործված գրականության հղումների տրման մեթոդաբանությունը, աշխատանքի պատրաստման ընթացքը և պահանջները, ինչպես նաև պատրաստման և պաշտպանության ժամանակացույցը, գնահատման չափանիշները և չափորոշիչները. նկարագրված է բողոքարկման ձևը: Մասնավորապես, այս գործընթացում կարևորվում է ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի ինքնուրույն պատրաստումը և նախապաշտպանությունը, ինչպես նաև յուրաքանչյուր փուլում ատեստավորվում է ուսանողի կատարած աշխատանքը: Էական դիտողությունների առկայության դեպքում աշխատանքն ուղարկվում է լրամշակման, որից հետո տրվում է արտաքին գրախոսության: Նախապաշտպանության կամ պաշտպանության ընթացքում գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը չի թույլատրվում պաշտպանության: Մագիստրոսական

թեզերի պատրաստման ընթացքը վերահսկվում է նաև գիտական սեմինարների ժամանակ: Ուսանողները ներկայացնում են մագիստրոսական թեզի շրջանակներում կատարված ընթացիկ աշխատանքները՝ ուսումնասիրվող հիմնախնդրի շուրջ կատարած իրենց տեսական վերլուծությունը և եզրահանգումները, հետազոտության ծրագիրը, կատարման ընթացքն ու նախնական արդյունքները և այլն: Չնայած ներդրված բազմագործոն գնահատման համակարգին և ակադեմիական ազնվությանն ուղղված միջոցառումներին՝ գրագողության դեմ պայքարի մեխանիզմները դեռևս կատարյալ չեն և պահանջում են համակարգային լուծում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.4. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը:

Հիմքեր՝

- Ուսանողների և դասավանդող անձնակազմի շարժունության հնարավորությունները պարզաբանող հիմքեր (Հավելված 3.4.1)
- Ուսումնական հաստատությունների ցանկը (նշելով երկիրը և ուսանողների թվաքանակն ըստ տարիների), որոնց հետ հաստատությունն ունի ուսանողների փոխանակումն ու շարժունությունն ապահովող գործող համաձայնագրեր (Հավելված 3.4.2)
- Ուսումնական հաստատությունների ցանկը (նշելով երկիրը և դասավանդողների թվաքանակն ըստ տարիների), որոնց հետ հաստատությունն ունի դասավանդող անձնակազմի փոխանակումն ու շարժունությունը ապահովող գործող համաձայնագրեր[16]

ՄՈՒՀ-ի 2020-2025 թթ. ՌԾ-ի «Որակյալ կրթություն» նպատակի խնդիր 2-ի 1-ին և 2-րդ գործողություններով նախատեսված է «Իրականացնել առաջատար ՄՈՒՀ-երի համապատասխան ՄԿԾ-ի բենչմարք» և «Ընդլայնել ուսումնական ստորաբաժանումների աշխատակիցների մասնակցությունը միջազգային համագործակցության և շարժունության իրականացման գործընթացներին»: Նշված գործողությունների իրականացման համար, ինչպես նաև հաշվի առնելով նախորդ ինքնավերլուծության արդյունքները՝ 2020-21 ուստարվանից սկսած մասնագիտական կրթական ծրագրերը վերամշակվել են որակավորումների ազգային և ոլորտային (առկայության դեպքում) շրջանակներին համապատասխան, ինչպես նաև այլ կրթական ծրագրերի բենչմարքինգի հիման վրա: Հարկ է նշել, որ բուհում ներդրված ուսումնառության կրեդիտային ECTS համակարգը և համաեվրոպական ձևաչափի դիպլոմի հավելվածը ամբողջությամբ համատեղելի են կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի հետ, որը և ապահովում է նաև բուհի ուսանողների շարժունությունը: Օրինակ, սկզբնական կրթության ֆակուլտետում «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆինլանդիայի առաջատար համալսարանների փորձի հիման վրա մշակվել են մագիստրոսական թեզի մուլտիմեդիոն լաբորատորիայում քննարկումների իրականացման ձևաչափ և աշխատանքային խմբեր, որտեղ ակտիվ քննարկումների միջոցով բացահայտվում են հիմնախնդիրները, նպատակները, իրականացվում է համագործակցային աշխատանք: Սա նպաստում է ուսանողների՝ ստեղծարար, գործնական և հետազոտական հմտությունների զարգացմանը:

Ինչպես նշել ենք, ՄԿԾ–ների վերանայման ընթացքում ուսումնասիրվել է ՀՀ-ի և արտասահմանյան բուհերի առաջավոր փորձը: Կատարված բենչմարքինգի (տե՛ս https://drive.google.com/drive/folders/1jy0MYPRuyHDnlJXriHYoS9HYiVfuwOAd) արդյունքում որոշ կրթական ծրագրեր ենթարկվել են որակական փոփոխությունների: Վերոշարադրյալ գործընթացը հիմնավորենք առավել մանրամասն օրինակների միջոցով. Խ.Աբովյանի անվան ՄՈՒՀ-ի, ԵՊՀ-ի և ՌԴ-ի Մոսկվայի հոգեբանամանկավարժական համալսարանի «Հոգեբանություն» կրթական ծրագրերի ուսումնական պլանի համեմատական վերլուծությունից պարզ է դարձել, որ 3 կրթական

[16] https://aspu.am/en/page/mijazgayin_hamagortsakcutyan_tsragrer_en/

ծրագրերի ուսումնական պլաններում ներառված պարտադիր մասնագիտական առարկաների մեծամասնությունը համընկնում է բովանդակային առումով, սակայն տարբերվում է առարկաների կրեդիտների բաշխվածությամբ: Մասնավորապես, «Ընդհանուր հոգեբանություն» դասընթացը ՄՈՒՀ-ում և ՌԴ-ի ՄՊՀՄՀ-ում նույնն է, տարբերվում է միայն ժամաքանակով (420 և 504), իսկ ԵՊՀ-ում այն ըստ կիսամյակների տրոհված է տարբեր անվանումներով մոդուլների (Պերցեպտիվ պրոցեսների հոգեբանություն և պրակտիկում, Կոգնիտիվ գործընթացների հոգեբանություն և պրակտիկում, Հուզակամային ոլորտի հոգեբանություն և պրակտիկում), ինչպես նաև դրանք ներառում են գործնական բաղադրիչ (պրակտիկում), որը ՄՈՒՀ-ում արտահայտվում է առանձին դասընթացով: «Մասնագիտության ներածություն» դասընթացը առկա է բոլոր կրթական ծրագրերում, տարբերությունը ժամաքանակի մեջ է, ընդ որում՝ ՄՈՒՀ-ում և ՌԴ-ի ՄՊՀՄՀ-ում ժամաքանակը, ի տարբերություն ԵՊՀ-ի, շատ ավելին է (150 և 108): «Մասնագիտական կողմնորոշում և հոգեդիագնոստիկա» դասընթացը առկա է միայն ՄՈՒՀ-ի ուսումնական պլանում, ԵՊՀ-ում բացակայում է, իսկ ՌԴ-ի ՄՊՀՄՀ-ում այն արտահայտվում է առանձին դասընթացներով և ժամաքանակով («Հոգեդիագնոստիկա»՝ 216, «Մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական ընտրության հիմնախնդիրներ»՝ 108): «Զարգացման հոգեբանություն» դասընթացը, որը ենթադրում է անձի հոգեբանական առանձնահատկությունների և օրինաչափությունների ուսումնասիրում զարգացման տարբեր շրջափուլերում, ընդգրկում է 270 ժամ՝ ի տարբերություն մյուս երկու բուհերի: «Մանկավարժություն» դասընթացն արտահայտված չէ հենանշվող ոչ մի բուհի ուսումնական պլաններում: Կարծում ենք, որ կրթության ոլորտի հոգեբաններ պատրաստող մանկավարժական բուհի համար վերջինս կարևոր հանգամանք է: Միևնույն ժամանակ, «Հոգեբանության դասավանդման մեթոդիկա» դասընթացը, որը նույնպես ձևավորում է մանկավարժական կոմպետենցիաներ, առկա է ՄՈՒՀ-ի «Հոգեբանություն» ՄԿԾ-ում, ԵՊՀ-ում չկա, իսկ ՌԴ-ի ՄՊՀՄՀ-ում ներառված է «Հոգեբանության դասավանդման մանկավարժություն և մեթոդիկա» ընդհանուր դասընթացով: «Անձի հոգեբանություն» և «Էթնոհոգեբանություն» դասընթացները գրեթե նույն ժամաքանակով արտահայտված են ՄՈՒՀ-ում և ԵՊՀ-ում, սակայն բացակայում են ՌԴ-ի ՄՊՀՄՀ-ում: «Հատուկ հոգեբանություն» դասընթացը առկա է միայն ՄՈՒՀ-ի և ՌԴ-ի ՄՊՀՄՀ-ի «Հոգեբանություն» ՄԿԾ-ներում:

«Հոգեբանություն» ՄԿԾ-ում ներառված ընտրովի դասընթացները կարող են փոփոխության ենթարկվել յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին, հետևապես լայն հնարավորություններ են ընձեռվում կրթական ծրագրի մասնագիտական վերջնարդյունքների ձեռքբերման սահմաններում:

Առաջարկություններ

1. «Հոգեբանության պատմություն» դասընթացի ժամաքանակը տրոհել մոդուլների՝ «Հոգեբանության պատմություն» և «Նորագույն տեսություններ»
2. «Մասնագիտական կողմնորոշում և հոգեդիագնոստիկա» դասընթացը տեղափոխել այլ կիսամյակ:
3. «Հոգեբանական պրակտիկում և դիֆերենցիալ հոգեբանություն» դասընթացը տրոհել մոդուլների՝ «Դիֆերենցիալ հոգեբանություն» և «Հոգեբանական պրակտիկում»:

Այս վերլուծությունների արդյունքները վկայում են բուհի կրթական ծրագրերի բովանդակային հուսալիության մասին, և քանի որ կա համադրելիություն այլ առաջատար բուհերի համապատասխան կրթական ծրագրերի հետ, հետևաբար վստահ կարելի է ասել, որ նրանք ապահովում են մեր ուսանողների և դասավանդողների շարժունությունը և կայուն հիմք են հանդիսանում բուհի միջազգայնացման գործընթացում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.5. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

Հիմքեր՝

- Շահակիցների կարիքները հաշվի առնող ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման հաստատված քաղաքականությունը (Հավելված 3.5.1)
- ՄՈՒՀ-ի ուսանողների կրթական կարիքների վերհանման և գնահատման աշխատակարգ (Հավելված 3.5.2)

- Մասնագիտությունների կրթական ծրագրերի պարբերաբար գնահատման քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները (Հավելված 3.5.3)

ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման գործող մեխանիզմներից են ՄՈՒՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ տարեկան պարբերականությամբ իրականացվող հարցումները, որոնք 2018 թ-ից անցկացվում են առցանց եղանակով (ՌԾ-ի 1-ին նպատակ, 3-րդ խնդրի 6-րդ գործողություն): Ամեն տարի հարցումներին մասնակցում է 250-300 շրջանավարտ, որը կազմում է շրջանավարտների ընդհանուր թվի կեսից ավելին: Հարցաթերթը պարունակում է համապատասխան բաժին, որտեղ շրջանավարտները գնահատում են իրենց բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից և ուսուցման մեթոդաբանությունից: Անհրաժեշտ է նշել, որ շրջանավարտները հիմնականում գոհ են ՄՈՒՀ-ում ստացած կրթությունից, քանի որ գերակշռող են «լավ» և «գերազանց» ցուցանիշները: Հատկանշական է նաև, որ ավելացել է մասնագիտությամբ աշխատողների թիվը, ինչը փաստում է ՄՈՒՀ-ի կողմից տրամադրվող կրթական շատ ծրագրերի արդիականության մասին: Նշված հարցումների արդյունքներն ամփոփվում, վերլուծվում և հրապարակվում են համապատասխան տարեկան զեկույցում, որը քննարկվում է ՄՈՒՀ-ի գիտխորհրդի նիստում: «Արտաքին շահակիցների (գործատուների) կարծիքի ուսումնասիրության» համեմատական վերլուծության արդյունքում պարզվեց, որ ՄՈՒՀ-ի ուսանողների 73%-ը (21% աճ 2017թ.-ի համեմատ) գտնում է, որ առարկայական ծրագրում ներառված տեսական և գործնական պարապմունքների բաշխվածությունը բավարարում է առարկայի արդյունավետ յուրացմանը:

Նշենք, որ գործատուների 70%-ից ավելիի համոզմամբ՝ շրջանավարտներն ունեն տեսական գիտելիքները գործնականում կիրառելու ունակություն, որը վկայում է կրթական ծրագրերի կիրառելիության և հուսալիության մասին: Սա խոսում է նաև շարունակական մանկավարժական պրակտիկաների արդյունավետության մասին: Հավելենք, որ ՄՈՒՀ-ի բակալավրի կրթական ծրագրով՝ մանկավարժական պրակտիկան կազմակերպվում է 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում *շարունակական, ուսումնաճանաչողական, կիրառական և ամփոփիչ* մասնագիտական շրջափուլերով (նշենք, որ հեռակա ուսուցման ՄԿԾ-ում ևս իրականացվում են համապատասխան շրջափուլերով մանկավարժական պրակտիկաները): Փաստացի, Համալսարանը ձգտում է էապես կատարելագործել ուսանողների գործնական հմտությունները: Դրան է նպաստում նաև լսարանային դասագործընթացում գործնական պարապմունքների նկատմամբ ուշադրությունը (տե՛ս ամբիոնի նիստերի արձանագրություններ, քաղվածքներ ուսումնամեթոդական փաթեթների հաստատման վերաբերյալ քննարկումներից- https://aspu.am/hy/page/patmutyan_ev_hasarakagitutyan_fakulteti_ardzanagrutyunner/): Ինչպես գործնական պարապմունքների, այնպես էլ պրակտիկաների ընթացքում վերլուծվում են ընտրված դասավանդման մեթոդների արդյունավետությունը, համապատասխանությունը առարկայի և մասնագրի կրթական ելքային արդյունքներին: Պրակտիկաների ընթացքում այդ խնդրին մշտապես ուշադրության են դարձնում գործընթացում ռեկտորի հրամանով ՄՈՒՀ-ից ընդգրկված մանկավարժը, մեթոդիստը և հոգեբանը: Ուսանողների մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորմանն ուղղված գործուն մեխանիզմ է նաև պրակտիկաների արդյունքների ստուգման ու գնահատման նկատմամբ ուշադրությունը և այդ գործընթացը պաշտպանությունով կազմակերպելը: ՄՈՒՀ-ի 2020-2025թթ. զարգացման ՌԾ-ի գործողությունների կատարան պլանի համաձայն՝ 2022թ-ին վերանայվել է նաև ՄՈՒՀ-ում գործող իրավանորմատիվային հենքը, լավարկվել ՄԿԾ-ում հետազոտական և նախնական մասնագիտական փորձառության ձևավորման (պրակտիկայի) քաղաքականությունը (Ռազմավարական ուղղություն 1, Խնդիր 1, գործողություն 2, 3):

ՄՈՒՀ-ում ՄԿԾ-ների գնահատման, մշտադիտարկման և վերանայման գործընթացներն իրականացվում են հաստատված ընթացակարգով: Ծրագրերի որակի ապահովման և շարունակական բարելավման, ինչպես նաև հասարակական պահանջարկվածության ու աշխատաշուկայի կարիքներին համապատասխանության գնահատման նպատակով՝ ՄՈՒՀ-ը

դեռևս 2012 թվականից ընդունել է ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգ (տե՛ս https://aspu.am/website/images/files/mshtaditarkum_veranayum.pdf): Ծրագրերի շրջափուլային մշտադիտարկման նպատակն է գնահատել ծրագրերի մատուցման (իրականացման) որակը և համապատասխանությունը սահմանված նպատակներին: Մոնիթորինգի արդյունքում կազմվում է ծրագրի բարելավման պլանը: Ծրագրի վերանայում է պահանջվում նաև այն դեպքերում, երբ ծրագրի բովանդակության ընթացիկ փոփոխությունները գերազանցում են նրա ընդհանուր ծավալի 10 %-ից ավելին:

Ծրագրերի մշտադիտարկումն իրականացվում է՝ ա) ուսանողների հարցումների միջոցով (ներքին շահակից) դասընթացի արդյունավետ իրականացման, կրթական ռեսուրսներից և այլնի վերաբերյալ ուսանողների կարծիքների հավաքագրման նպատակով,

բ) Դասախոսների կողմից դասավանդման շրջանակում, ինչպես նաև հարցումների միջոցով (ներքին շահակից): Մասնավորապես՝ անց են կացվել փոխադարձ դասալսումներ, կատարվել են դասընթացի կատարողականի վերլուծություններ, գնահատվել են դասընթացի ուժեղ և թույլ կողմերը, մշակվել են բարելավման նոր առաջարկներ՝ հաջորդ ուստարվա համար, մշտադիտարկման և գնահատման արդյունքները քննարկվել են ամբիոններում, անցկացվել է Ռեսուրսներով բավարարվածության դասավանդողների կարծիքների վերլուծություն, (տե՛ս https://drive.google.com/file/d/15jJ6pNXcHo1dnXVx1WRKR02tABWJrLUZ/view?pli=1)

գ) արտաքին շահակիցների կողմից՝ ըստ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում շրջանավարտների ուսումնառության ընդհանրական արդյունքների մակարդակի վերաբերյալ ստացած կարծիքների, ըստ պրակտիկանտ-ուսանողների պատրաստվածությունից ստացած կարծիքների, ըստ կրթական ծրագրի պահանջվածության և աշխատաշուկայի պահանջարկին բավարարելուն, ըստ անցկացված հարցումների՝ արտաքին շահակիցների (գործատուների) կարծիքի ուսումնասիրություն և ՄՈՒՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն (տե՛ս https://drive.google.com/file/d/15Gs2xenyy03QNQ4L3KE1EhuUaxB0zteS/view?pli=1):

Այս ուսումնասիրությունների արդյուքներից, ինչպես նաև ՄԿԾ-ի մշակման և վերամշակման, արդիականացման ու բարելավման միտումներից ելնելով, առաջնորդվելով ՄՈՒՀ-ի կանոնադրության 54-րդ կետով և հիմք ընդունելով ուսումնագիտական գծով պրոռեկտորի և գիտահետազոտական կենտրոնի ղեկավարի 2022 թվականի հունիսի 14-ի զեկուցագիրը՝ կազմակերպվել են պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար մասնագիտական կրթական ծրագրերի, առարկայական նկարագրերի որակի բարձրացմանն ուղղված վերապատրաստման դասընթացներ (տե՛ս հրաման թիվ 1736-Ա, 15.06.2022թ.): Արդյունքում վերանայվել են. ա) ՄԿԾ-ների **մասնագրերում** կրթական չափորոշիչները, բ) ՄԿԾ-ի շրջանակներում դասախոսական կազմի որակավորմանը և մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները, գ) մասնագիտական կրթական ծրագրի ուսումնական պլանը: **Առարկայական նկարագրերում**՝ ա) կրթական ելքային արդյունքների ներկայացման նախկին «իմանա, կարողանա և տիրապետի» ձևաչափը վերափոխվել է «մասնագիտական գիտելիք և իմացություն, գործնական մասնագիտական, կարողություններ, ընդհանրական /փոխանցելի կարողություններ» ձևաչափի, բ) ավելացվել է «Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը» գործիքը, գ) գնահատման բաղադրիչները փոփոխվել են (օրինակ, ուսանողների հաճախման բաղադրիչը իջեցվել է 5%-ի՝ նախկին 10%-ի փոխարեն՝ հաշվի առնելով ուսանողների կարիքների վերլուծությունը), գնահատման ձևերը որոշվում են ըստ դասընթացի ծանրաբեռնվածության: Կցվել են նաև գնահատման յուրաքանչյուր բաղադրիչի չափանիշների ռուբրիկները:

ՄՈՒՀ-ի գործունեության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու վտանգները՝ ըստ 3-րդ չափանիշի

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը բխում են շնորհվող որակավորումների ակնկալվող վերջնարդյունքներից և համապատասխանում են ՈԱՇ-ի և ՈՈՇ-ի բնութագրիչների պահանջներին ու ՄՈՒՀ-ի առաքելությանը՝ ապահովելով դրանց չափելիությունը:	Արտաքին շահակիցները դեռևս ֆորմալ մասնակցություն ունեն կրթական ծրագրի բովանդակության մշակման գործընթացում:
Կրթական ծրագրերն ապահովված են ուսումնառողների գործնական կարողությունները զարգացնող ուժեղ հենքով՝ շարունակական պրակտիկաներով:	Դեռևս սակավ են առաջատար ՄՈՒՀ-երի հետ կրթական համատեղ ծրագրերը և որակավորումները :
Google for Education համակարգի գործիքների ակտիվ կիրառումը կրթական գործընթացում ապահովում է կրթական բովանդակության հասանելիությունը (անկախ ժամանակից և տարածությունից), ինչպես նաև ուսանողակենտրոն ուսուցումը:	Որոշ կրթական ծրագրերում կամ դասընթացներում օգտագործվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ հաշվի չառնելով կրթության առաջավոր փորձը:
Կրթական ծրագրերի առարկայական նկարագրերում առկա են գնահատման բազմագործոն համակարգի համար մշակված գնահատման համապատասխան ռուբրիկներ:	ՄՈՒՀ-ում առկա է ՄԿԾ-ի համար առաջավոր փորձի համեմատական վերլուծության իրականացման ոչ լիարժեք փորձառություն:
Հնարավորությունները	**Վտանգները**
Կրթական գործընկեր հաստատությունների մեծ բազան կարող է հնարավորություն ընձեռել՝ ներգրավելու արտաքին շահակիցներին կրթական ծրագրերի մշակման և իրականացման գործընթացներում:	ՄԿԾ-ների մշակման գործընթացում արտաքին շահակիցների ներգրավվածության խրախուսման մեխանիզմների բացակայությունը կարող է էականորեն վտանգել ՄԿԾ որակը :
Միջազգային գործընկեր համալսարանների հետ կրթական համատեղ ծրագրերի իրականացումը լայն հնարավորություն կընձեռի ներգրավելու օտարերկրյա ուսանողներին և հարստացնելու կրթական փորձը:	Առաջատար ՄՈՒՀ-երի հետ կրթական համատեղ ծրագրերի իրականացման ժամանակ ուսանողներին շահագրգռելու մեխանիզմների բացակայությունը կարող է էական խոչընդոտներ առաջացնել նշյալ գործընթացում :
Առցանց դասընթացների մշակումը և հեռավար ուսուցման հարթակների լայն կիրառումը հնարավորություն կտա ներգրավելու առավել շատ ուսանողներ և ֆինանսական ներհոսքեր :	Միջազգային բուհերի լավագույն փորձի ուսումնասիրման շարունակականության ապահովման գործում ուսումնառողների և դասավանդողների լեզվական հաղորդակցման առկա կարողությունները լուրջ խնդիրներ կառաջացնեն:

	Որոշ կրթական ծրագրերի հանդեպ դիմելիության հետաքրքրության նվազումը կարող է օրինաչափական բնույթ կրել:

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները

- Մշակել և ներդնել կրթական ծրագրերում բովանդակության մշակման գործընթացներում արտաքին շահակիցների ակտիվ մասնակցության գործուն մեխանիզմներ:
- Մշակել և ներդնել առաջատար ՄՈՒՀ-երի հետ կրթական համատեղ ծրագրեր՝ գործնականում իրագործելով ցանցային համալսարանների մոդելը
- Միջազգային գործընկեր բուհերի հետ համատեղ իրականացնել առաջավոր փորձի համեմատական վերլուծության/բենչմարք/ իրականացման փորձի փոխանակում
- Առաջատար ՄՈՒՀ-երի հետ կրթական համատեղ ծրագրերի իրականացման ժամանակ ուսանողներին շահագրգռելու մեխանիզմների և գործարկման ուղիների մշակում:
- Միջազգային բուհերի լավագույն փորձի ուսումնասիրման շարունակականության ապահովման գործում ուսումնառողների և դասավանդողների լեզվական հաղորդակցման համար դասընթացների պարբերաբար իրականացում՝ իրավաներմատիվային հենքի վրա:

ՉԱՓԱՆԻՇ 4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-Ն ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ:

ՄՈՒՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրում (2020-2025թթ.) որպես չորրորդ ռազմավարական ուղղության նպատակներ ամրագրված են՝ ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության մեխանիզմների բարելավումը, ՄՈՒՀ-ի գործունեության տարբեր ոլորտների գործընթացներում սովորողների ակտիվ ներգրավվածության խթանումը, ուսանողների գիտահետազոտական հմտությունների և կարողությունների ձևավորման համար կրթական նպաստավոր միջավայրի ստեղծումը, ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների բարելավումը (տե՛ս ՄՈՒՀ-ի 2020-2025թթ. զարգացման ռազմավարական ծրագիր-https://aspu.am/website/images/files/Razmavarakan%20cragir_2020-2025.pdf):

ՄՈՒՀ-ն առաջնային է համարում ուսանողակենտրոն ուսումնառությունը և ուսանողի կրթական առաջընթացը, ուսանողի կրթական ձեռքբերումները և ուսումնառությունից նրա բավարարվածությունն ու հաջողությունները (տես՝ Համալսարանի առաքելությունը-https://aspu.am/hy/page/araqelutyun/):

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.1. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

Հիմքեր ՝

- ՄՈՒՀ-ի կանոնադրություն
- Ուսանողի ուղեցույց (Հավելված 4.1.1)
- Յուրաքանչյուր մասնագիտության կրթական ծրագրում ընդգրկված ուսանողների թիվը (Հավելված 4.1.2)
- Դիմորդի ուղեցույց (Հավելված 4.1.3)
- «Հաջողության բանաձև» հաղորդաշար[17]
- ՄՈՒՀ-ի ուսանողների տարեկան շարժը 2020-2022 թթ.(Հավելված 4.1.4)
- Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մագիստրատուրայի (առկա և հեռակա ուսուցման ձևերով) ընդունելության և ուսումնառության կազմակերպման կարգ (Հավելված 4.1.5)
- ՄՈՒՀ-ի նախապատրաստական դասընթացների կազմակերպում (Հավելված 4.1.6)

Ուսումնական հաստատությունում ուսանողների թիվը՝ ըստ տարեթվերի, կրթական մակարդակների և ուսուցման ձևերի				
Կրթական մակարդակ	Ուսուցման ձև	2020	2021	2022
Բակալավր	Առկա	898	864	495
	Հեռակա	431	363	220
Մագիստրոս	Առկա	513	295	322
	Հեռակա	103	92	124
Հետազոտող (ասպիրանտ)	Առկա	3	1	5
	Հեռակա	1	2	0
Հետազոտող (հայցորդ)		22	24	23

[17] https://www.youtube.com/watch?app=desktop&v=c5IApr-zeRA&list=PLbbEkgHyhRd621zl-bmCt9DTIXzpK_0va

Ուսումնառողների շարժունությունը				
Ուսումնառողների շարժը վերջին 3 տարվա կտրվածքով				
Ուսանողների արտահոսք				
	Հաստատություն/երկիր	**2020**	**2021**	
	Ընդամենը՝ այլ ԲՈՒՀ	**1**	-	
Ուսանողների ներհոսք				
	Հաստատություն/երկիր	**2020**	**2021**	
	Ընդամենը՝ այլ ԲՈՒՀ-ից	**5**	**4**	
1.	Երևանի պետական համալսարան	-	**2**	
2.	Եվրասիա համալսարան	-	-	
3.	Հայբուսակ	-	-	
4.	Վանաձորի պետական համալսարան	-	-	
5.	Հայաստանի ազգային ագրարային համալսարան	-	**1**	
6.	Արցախի պետական համալսարան	**1**	**1**	
7.	Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա	-	-	
8.	Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ	-	-	
9.	«Մեսրոպ Մաշտոց» համալսարան	**1**	-	
10	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան	**3**	-	

Հեռացումներ և վերականգնումներ				
	Ուսանողների թիվ	**2020**	**2021**	**2022**
	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը	21,57% / 478	34.81% / 683	38,70% / 601
	Վերականգնված ուսանողների տոկոսը/թիվը	21,68% / 423	20.43% / 331	40,05% / 465

ՄՈՒՀ-ը սովորողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման ուղղությամբ ղեկավարվում է ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ և ՄՈՒՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրով (2020-2025թթ.):

Սովորողների ընդունելությունը և ընտրությունը կանոնակարգվում են ՀՀ-ի օրենսդրությամբ և ներքին իրավական ակտերով: ՄՈՒՀ-ի ինտերնետային կայքում առկա է դիմորդի անկյունը (տե՛ս https://aspu.am/hy/page/dimord/), որտեղ հասանելի են բոլոր կանոնակարգերն ու անհրաժեշտ կրթական փաստաթղթերը:

ՄՈՒՀ-ն իրականացնում է մասնագիտական կողմնորոշման համալիր, որի կազմակերպման և իրականացման մեխանիզմները հստակ սահմանված և մշակված են ՄՈՒՀ-ի դեկանատների, թողարկող ամբիոնների, նախապատրաստական բաժնի առաջատար մասնագետների կողմից՝ ռեկտորատի անմիջական հսկողությամբ: Այդ ուղղությամբ մասնագիտական կողմնորոշման և

ուղղորդման աշխատանքներ են իրականացվել ինչպես մայրաքաղաքի, այնպես էլ մարզային ավագ դպրոցներում, նախնական մասնագիտական, միջին մասնագիտական և արհեստագործական ուսումնարաններում, քոլեջներում: Պայմանավորված այն հանգամանքով, որ ՄՈՒՀ-ի ուսանողների զգալի մասը ՀՀ-ի մարզերի ներկայացուցիչներն են, ինչպես նաև ուսումնասիրելով մարզերի աշխատաշուկայի պահանջները՝ Համալսարանը մասնագիտական կողմնորոշման ակտիվ աշխատանքներ է իրականացնում հատկապես մարզերում:

ՄՈՒՀ-ի ֆակուլտետներում ուսանողների հավաքագրման նպատակով գործում են դիմորդների մասնագիտական կողմնորոշման աշխատանքային խմբեր, որոնք պարբերաբար հաշվետվություններ են ներկայացնում ֆակուլտետների խորհրդի նիստերին:

ՀՀ-ի մարզերի ավագ և հիմնական դպրոցների շրջանավարտներին իրազեկման աշխատանքների ժամանակացույցերին համապատասխան շրջայցեր են իրականացվում 6 մարզերում, յուրաքանչյուր տարվա նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Իրականացման մեխանիզմների և արձանագրված արդյունքների մասին դեկանները հաշվետվություն են ներկայացնում ռեկտորատի նիստերում:

ՀՀ-ն ԿԳ նախարարի 2017թ. 10. 05.2017թ. N 505-Ա/2 հրամանով (տե՛ս http://www.mkuzak.am/wp-content/uploads/3.pdf) հաստատվել է միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների ցանկը, որոնց բարձր առաջադիմությամբ շրջանավարտներին թույլատրվում է կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ համաձայն հավելված N 2-ի: Վերջին երեք տարիներին շարունակական կրթության դիմորդների թվի դինամիկան ներկայացված է ստորև: Ինչպես երևում է գծապատկերից, այդ թիվը տարեցտարի աճում է:



ՈՒսանողների հավաքագրման, մասնագիտական կողմնորոշման շրջանակներում իրենց մեծ ավանդն են ներդնում ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքը (տե՛ս https://aspu.am/), ՄՈՒՀ-ի յութուբյան ալիքը (տե՛ս https://www.youtube.com/@armenianspu)՝ իր «Հաջողության բանաձև» (տե՛ս https://www.youtube.com/playlist?app=desktop&list=PlbbEkgHyhRd621zl-bmCt9DTIXzpK_0va) հաղորդաշարով, Ռադիո Ֆաման (տե՛ս https://www.radiofama.am/), ՄՈՒՀ-ի ֆեյսբուքյան էջը (տե՛ս https://www.facebook.com/ASPUhome), «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթը (տե՛ս https://aspu.am/hy/page/hpmh_pashtonatert/):

ՄՈՒՀ-ում գործում են նաև նախապատրաստական դասընթացներ բոլոր մասնագիտությունների գծով, որոնք ևս իրենց մեծ ներդրումն ունեն դիմորդների ինչպես հավաքագրման, ուղղորդման և բուհ ընդունվելուն նախապատրաստելու, այնպես էլ ուսումը ՄՈՒՀ-ում շարունակելու համար ամուր հիմքերի ստեղծման գործընթացներում:

Նախապատրաստական դասընթացները կազմակերպվում են երկարաժամկետ և արագացված ծրագրերով:

Երկարաժամկետ (ութամսյա) նախապատրաստական դասընթացները կազմակերպվում են ընթացիկ ուսումնական տարվա հոկտեմբերից մայիս ընկած ժամանակահատվածում: Դասընթացներն անցկացվում են բուհի բոլոր մասնագիտությունների համար նախատեսված ընդունելության առարկայական ծրագրերով՝ առկա և հեռակա կրթական համակարգեր դիմողների համար:

Արագացված (եռամսյա) դասընթացներն անցկացվում են ուսումնական տարվա ապրիլ-մայիս ամիսների ընթացքում՝ հետևյալ մասնագիտությունների գծով՝ լրագրություն, ռեժիսուրա, պարարվեստ, կերպարվեստ, հագուստի մոդելավորում, դեկորատիվ կիրառական արվեստ, երաժշտական կրթություն, գործիքային կատարողականություն, օպերատորություն, գեղարվեստական լուսանկարչություն, արվեստի տեսություն, պատմություն և կառավարում:

Դասընթացներն անցկացնում են համալսարանի առաջատար և փորձառու դասախոսները:

Բացի ՀՀ-ի քաղաքացիներից, 2020-2022 թթ. նախապատրաստական բաժնի ութամսյա դասընթացներին որպես ունկնդիր մասնակցել են նաև արտասահմանից ՀՀ-ում ժամանակավոր կացության մեջ գտնվող քաղաքացիներ, մասնավորապես՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից: Արտասահմանցի ունկնդիրները մասնակցել են օտար լեզվի դասընթացներին՝ գերմաներեն և անգլերեն:

2020-2023թթ.(տե՛ս https://drive.google.com/file/d/1LQRZd_7nPHTxYwuGtzVfHHsHQrSZ69z9/view) ՄՈՒՀ-ի նախապատրաստական բաժինը կազմակերպել և իրականացրել է 378 ունկնդրի նախապատրաստական պարապմունքներ, որոնցից 172-ը եղել են Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ: Ստորև ներկայացված է նախապատրաստական բաժնի կազմակերպած դասընթացների ունկնդիրների թվաքանակն ըստ տարիների:



ՄՈՒՀ-ը կազմակերպում է ավագ դպրոցականների էքսկուրսիաներ և ճանաչողական այցեր ՄՈՒՀ-ի թանգարան, գիտական և ուսումնական լաբորատորիաներ ու արհեստանոցներ՝ «Բաց դռների օրերի» շրջանակներում: Կազմակերպում և իրականացնում է հանրակրթական տարբեր առարկաների գծով օլիմպիադաներ, իսկ որպես խրախուսման ձև առաջարկվում է՝ լավագույն ցուցանիշներ ունեցող մասնակիցներին հետագա ուսումը շարունակել ՄՈՒՀ-ում՝ ուսման վարձավճարի զեղչման ճկուն համակարգով:

Սովորողների ընդունելությունը և ընտրությունը կանոնակարգվում են ՀՀ օրենսդրությամբ և ներքին իրավական ակտերով:

Բակալավրական կրթության առկա ուսուցման համակարգում դիմորդների ընդունելությունն իրականացվում է ըստ Հայաստանի Հանրապետության Կառավարության 26 ապրիլի 2012թ. N 597-Ն որոշման, «Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական

բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգի»:

Ըստ վերոնշյալ կարգի՝ ընդունելությունը կատարվում է ՀՀ Կառավարության կողմից հաստատված մասնագիտությունների և տեղերի համաձայն:

ՄՈՒՀ-ում դիմորդների ընդունելության կազմակերպման և գրանցման գործընթացն իրականացվում է ՄՈՒՀ-ի ընդունող հանձնաժողովի կողմից՝ ըստ հստակ ժամանակացույցի: Դիմում-հայտ լրացնելիս՝ դիմորդին տրամադրվում է անհրաժեշտ տեղեկատվություն և օժանդակություն:

Բակալավրական կրթության հեռակա ուսուցման համակարգում ընդունելությունը կատարվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 29 հուլիսի 2022 թվականի N 29 հրամանի (տե՛ս https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166688), «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հեռակա ուսուցման ընդունելության կանոնների», որոնցով կարգավորվում են հեռակա ուսուցման ընդունելության գործընթացի հետ կապված հարաբերությունները:

Մագիստրատուրայում ընդունելությունը կատարվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի համապատասխան հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգի», ինչպես նաև ՄՈՒՀ-ում ընդունված կարգի համաձայն: Այդ նպատակով ՄՈՒՀ-ի ռեկտորի ղեկավարությամբ ձևավորվում է ընդունող հանձնաժողով: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ՄՈՒՀ-ի ուսումնական գծով պրոռեկտորը, կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության պետը, ՄՈՒՀ-ի ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը կամ համապատասխան կենտրոնի/բաժնի վարիչը: Առկա ուսուցման ձևով առաջին փուլով անվճար ու վճարովի ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել ՄՈՒՀ-ի բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման ձևերի նույն մասնագիտությամբ (կրթական ծրագրի) վերջին երեք ուսումնական տարվա (ուսումնական տարիների հաշվարկը սկսվում է գործող ուսումնական տարվանից) շրջանավարտները՝ ըստ իրենց ամփոփիչ ատեստավորման գնահատականի և դիպլոմի հավելվածում գրանցված միջին որակական գնահատականի (ՄՈԳ-ի): Դիմորդների ընդունելությունը կատարվում է առանց ընդունելության քննության, մրցութային կարգով՝ առաջնահերթությունը տալով ՄՈԳ-ին:

Երկրորդ փուլով ընդունելությունը կատարվում է միայն վճարովի ուսուցման համակարգում: Այս փուլի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել ՄՈՒՀ-ի և այլ պետական, ըստ մասնագիտությունների հավատարմագրված/ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (առկա ու հեռակա ուսուցման ձևերի) բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները (տե՛ս Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մագիստրատուրայի (առկա և հեռակա ուսուցման ձևերով) ընդունելության և ուսումնառության կազմակերպման կարգ):

Համալսարանի կայքի «Դիմորդ» (տե՛ս https://aspu.am/hy/page/dimord/) բաժնում յուրաքանչյուր տարի տեղադրվում են մագիստրատուրայի ընդունելության հարցաշարերը:

Ուսանողների հեռացումներն ու վերականգնումներն իրականացվում են՝ հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգը հաստատելու մասին» N 1242-Ն հրամանը: Ուսանողների հեռացման հիմնական պատճառներն են.

- ակադեմիական անբավարար առաջադիմություն,
- ֆինանսական պարտավորությունները չկատարելը:

Առաջադիմությունը բարձրացնելու, առողջ մրցակցություն ապահովելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է «Ուսանողական նպաստների ձևով ուսման վճարի փոխհատուցման (լրիվ կամ մասնակի (զեղչ)), պետական և ներբուհական կրթաթոշակների տրամադրման կարգը»: ՄՈՒՀ-ն իր

միջոցների հաշվին, ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում է տրամադրում առկա ուսուցման վճարովի համակարգում գերազանց առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ առնվազն 25 տոկոս, բայց ոչ ավելի, քան 40 տոկոսը:

Ուսանողների անվճարունակությունը կարգավորելու համար ՄՈՒՀ-ն ուսանողներին հնարավորություն է տրամադրում վարձավճարը վճարելու ըստ ամիսների (ոչ կիսամյակային):

ՄՈՒՀ-ում գործում է նաև սովորողների էլեկտրոնային գրավոր ծանուցումների միջոցով բացակայությունների և ուսման վճարների պարտքերի մասին տեղեկություն տրամադրելու համակարգ, որը գրավոր նախազգուշացումների և ծանուցումների հետ մեկտեղ կիրառվող լրացուցիչ միջոցառում է:

Սովորողների վերականգնման համար հիմք կարող են լինել նախկինում ցածր առաջադիմության պատճառով հեռացված լինելը, անձնական դիմումի համաձայն ազատվելը, այլ բուհերից տեղափոխվելը, ժամկետային զինծառայությունից զորացրվելը:

Վերջին երեք տարիների տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ արտահոսքի զգալի մասի պատճառը իրենց դիմումի համաձայն ազատվելն է, հաջորդը՝ անբավարար առաջադիմությունը: Փոքր թիվ են կազմում ուսման վարձը չվճարելու պատճառով հեռացվողները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.2. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Հիմքեր

- ՄՈՒՀ-ում արտաքին և ներքին շահակիցների ներգրավման և կարիքների գնահատման կարգ (Հավելված 4.2.1)
- Ուսանողի ուղեցույց (Հավելված 4.2.2)
- ՄՈՒՀ-ի զարգացման ռազմավարական ծրագիր (2020-2025թթ.)
- ՄՈՒՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի (2020-2025թթ.) գործողությունների կատարման պլան

ՄՈՒՀ-ն առանձնակի կարևորում է ուսանողների կրթական կարիքների վերհանման գործընթացը՝ գիտակցելով վերջինիս հսկայական դերը որակյալ և մրցունակ մասնագիտական կրթություն տրամադրելու գործում: Դրանով իսկ պայմանավորված՝ վերջին տարիներին հսկայական աշխատանքներ են տարվել ուսանողների կրթական կարիքների վերհանման և դրանց բավարարման ուղղությամբ: Սովորողների կրթական կարիքների վերհանման ուղղությամբ ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ամրագրված է ՄՈՒՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրում (տե՛ս https://aspu.am/website/images/files/Razmavarakan%20cragir_2020-2025.pdf .) որպես չորրորդ ռազմավարական ուղղության երկրորդ նպատակ, որի խնդիրներում մասնավորապես նշված է.

1. Մշակել և ներդնել ուսանողների կրթական և այլ կարիքների վերհանման հստակ ու գործուն մեխանիզմներ:

2. Իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին՝ նպաստելով ուսանողների իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ու ակտիվ քաղաքացիական կեցվածքի ձևավորմանը:

3. Միավորել Համալսարանի ուսանողական կազմակերպությունների, ակումբների և միությունների ջանքերը՝ խթանելով ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացումը:

4. Ապահովել ուսանողների ակտիվ մասնակցությունը Համալսարանի կառավարման գործընթացներին:

5. Ակտիվացնել համագործակցությունը ՀՀ-ում և արտերկրում գործող ուսանողական, երիտասարդական և այլ կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական այլ անձանց հետ:

ՄՈՒՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի (2020-2025թթ.) գործողությունների կատարման պլանում (տե՛ս https://aspu.am/website/images/files/51a25c09.pdf) հստակ ժամանակացույցով նախանշված են տվյալ խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներն ու դրանց պատասխանատու կառույցները:

Նպատակ ունենալով համակարգել, հստակեցնել, կանոնակարգել ուսանողների կարիքների վերհանման գործող մեխանիզմները՝ ՄՈՒՀ-ն 2016 թվականին մշակել և հաստատման է ներկայացրել ՄՈՒՀ-ում արտաքին և ներքին շահակիցների ներգրավման և կարիքների գնահատման կարգը (տե՛ս https://docs.google.com/document/d/1xoitOw5sEy1-drzx0XgD4zzP8wJl_BzK9GHSOlv7SeY/edit?pli=1), որտեղ մանրամասն անդրադարձ է կատարվում ՄՈՒՀ-ում ուսանողների, դիմորդների և շրջանավարտների կարիքների գնահատման նպատակներին, մեթոդներին, փուլերին, ցուցիչներին և դրանց պարբերականությանը:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման գործընացը ՄՈՒՀ-ում իրականացվում է կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության, ֆակուլտետների, ամբիոնների, պրակտիկայի, Համալսարան-գործատու համագործակցության կենտրոնների ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության անմիջական մասնակցությամբ:

Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կողմից 2015 թվականից ի վեր պարբերաբար իրականացվում են ՄՈՒՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության բացահայտմանն ուղղված հարցումներ (տե՛ս https://drive.google.com/file/d/15Gs2xenyy03QNQ4L3KE1EhuUaxB0zteS/view?pli=1): ՈՒսանողները կանոնավոր կերպով մասնակցում են դասախոսի և դասավանդման որակի գնահատմանը՝ «Դասախոսը ուսանողի աչքերով» հարցմանը, որն իրականացվում է յուրաքանչյուր տարի: Գնահատման արդյունքները վերլուծվում և օգտագործվում են պրոֆեսորադասախոսական կազմի վարկանիշավորման ժամանակ (տե՛ս ՄՈՒՀ-ում արտաքին և ներքին շահակիցների ներգրավում և կարիքների գնահատում): Այդ հարցումների արդյունքներն օգտագործվում են նաև ՄԿԾ-ները բարելավելու, կրթական որակյալ ծառայություններ տրամադրելու նպատակով: Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կողմից իրականացված հարցումների արդյունքները քննարկվում են վարչության կողմից և ուղղորդվում համապատասխան բաժիններ (տե՛ս «Դասախոսն ուսանողի աչքերով» (տե՛ս https://drive.google.com/drive/folders/1hAFFUzxTLGuYQHqrbjkeS1k8EzI74FTg) հարցումների արդյունքների վերլուծությունը):

ՄՈՒՀ-ի ՈՒԳԸ-ն ևս ակտիվ մասնակցություն է ցուցաբերում ուսանողների կարիքների վերհանման և դրա բավարարման աշխատանքներին, որի մասին են փաստում այն սեմինարները, քննարկումները, որոնք կազմակերպվել են ֆակուլտետային ՈՒԳԸ-ների կողմից: Ուսանողների վեր հանած կարիքների հիման վրա ՄՈՒՀ-ում կազմակերպվել են սեմինարներ:

Կրթական կարիքների վերհանման գործում հսկայական դեր ունեն ֆակուլտետները, որոնք իրենց ուշադրությունը կենտրոնացնում են ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման համակարգի ուսանողների կրթական կարիքներին՝ փորձելով հնարավորինս արդյունավետ կազմակերպել նրանց ուսումնառությունը ՄՈՒՀ-ում:

Ուսանողների կարիքների ուսումնասիրություն է իրականացվում նաև մանկավարժական պրակտիկաներից առաջ և հետո: Յուրաքանչյուր պրակտիկայի շրջափուլից առաջ և հետո կազմակերպվող գիտաժողովների ընթացքում ուսանողներին ներկայացվում են տվյալ փուլի կազմակերպման, բովանդակության հարցերը, քննարկվում են ուսանողների կողմից ներկայացված հարցերը, նախորդ փուլերի ընթացքում գրանցված խնդիրներն ու դրանց լուծման ճանապարհները:

Ամբիոններն ուսանողների շրջանում իրականացնում են ուսումնասիրություններ, որոնք հիմք են հանդիսանում առարկայական նկարագրերը բարելավելիս:

ՄՈՒՀ-ում կրթական կարիքների վերհանման գործիք է նաև ASPU Classroom էլեկտրոնային հարթակը, որը հատկապես COVID-19 համավարակի տարածման շրջանում դարձավ հեռավար ուսուցման լիարժեք կրթական էլեկտրոնային հարթակ: Յուրաքանչյուր առարկայի համար նախատեսված էջում տեղադրվում են առարկայական նկարագիրը, առարկայի թեմատիկ տրոհումը, դասախոսություններն ու մնացած ուսումնամեթոդական նյութերը: ՈՒսանողները նաև օգտագործում են այդ հարթակները՝ դասախոսին իրենց հարցերն ուղղելու, համապատասխան խորհրդատվություն ստանալու համար: Բոլոր ֆակուլտետներն ունեն էլեկտրոնային տեղեկատվական հարթակներ, որտեղից ուսանողները ստանում են իրենց անհրաժեշտ ողջ

տեղեկատվությունը՝ դասացուցակներ, գրաֆիկներ, հայտարարություններ տարբեր զեղչերի վերաբերյալ և այլն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.3. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Հիմքեր

- ՄՈՒՀ-ի մասնագիտական կրթական ծրագրերը (հենքային ուսումնական պլաններ) (Հավելված 4.3.1)
- Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի, առկա բակալավրիատի 2022-2023 ուստարվա դասացուցակ (3-րդ կուրս) (Հավելված 4.3.2)

Խորհրդատուների աշխատանքի ժամանակացույցը տե՛ս դասացուցակում:

Պատասխանել հետևյալ հարցին:	**%**
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված խորհրդատվական ծառայությունների մասին:	100
Ուսանողների ո՞ր տոկոսն է ընդգրկված լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում:	63
Ընդգրկվածների ո՞ր տոկոսն է բավարարված խորհրդատվական ծառայություններից:	84

Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված խորհրդատվական ծառայություններից:

Հետևյալ հարցերին պատասխանել այո կամ ոչ:	ԱՅՈ	ՈՉ
Արդյո՞ք ուսումնառողներին հատկացվում են խորհրդատուներ:	√	
Եթե ոչ, արդյոք դա նախատեսվո՞ւմ է:		

ՄՈՒՀ-ում առկա և հեռակա ուսուցման համակարգում ուսումնառողների համար իրականացվում են լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներ, այդ թվում նաև՝ նախապատրաստական դասընթացներ, ակադեմիական խորհրդակցություններ:

Մասնագիտությունների ուսումնական պլաններում հիմնական դասընթացներից բացի ներառված են կամընտրական դասընթացներ, որոնց ընտրության գործում ուսանողներին աջակցություն են ցուցաբերում ուսումնական գծով դեկանի տեղակալները և այդ դասընթացները դասավանդող դասախոսները: Նրանք մանրամասն ներկայացնում են կամընտրական դասընթացների էությունը, արդյունավետությունը տվյալ մասնագիտության շրջանակներում և ակնկալվող վերջնարդյունքները:

Յուրաքանչյուր առարկայի շրջանակներում, համաձայն հենքային ուսումնական պլանների, քննություններին նախորդող դասերի ընթացքում քննություններին նախապատրաստվելու համար դասախոսների կողմից տրամադրվում է խորհրդատվություն, ինչը նախապես ներկայացվում է առարկայական ծրագրում: Դասավանդվող բոլոր առարկայական ծրագրերում յուրաքանչյուր դասախոս հատկացնում է դասաժամեր՝ լրացուցիչ խորհրդատվության և մասնագիտական օժանդակության համար:

Ամբիոնների կողմից ևս մատուցվում են պարտադիր խորհրդատվական ծառայություններ ավարտական և հետազոտական աշխատանքների ընթացքում: Դասախոսներն ակտիվորեն կիրառում են նաև Google Classroom վիրտուալ լսարանի հնարավորությունները՝ ուսանողներին տրամադրելու պարտադիր և լրացուցիչ գրականություն, անհրաժեշտ այլ նյութեր, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, խորհրդատվություն են տրամադրում էլեկտրոնային փոստի միջոցով:

ՄՈՒՀ-ում ուսանողների համար կազմակերպվում են նաև լրացուցիչ դասընթացներ, որոնք ներառված չեն ուսումնական պլաններում: Մասնավորապես՝ 2022-2023 ուսումնական տարում

ՄՈՒՀ-ի մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի, կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի երրորդ կուրսերի ուսանողների համար կազմակերպվել է լրացուցիչ դասընթաց՝ «Սոցիալ-հուզական ուսումնառություն», որին մասնակցել է ուսանողների 93%-ը: 2021-2022 ուսումնական տարում Համալսարանի բոլոր ֆակուլտետներում կազմակերպվեց «Հակակոռուպցիոն քաղաքականություն» լրացուցիչ դասընթացը, որը հաջորդ ուսումնական տարում ներառվեց ուսումնական պլաններում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.4. ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

Հիմքեր

- Ուսանողի ուղեցույց (Հավելված 4.4.1)

Պատասխանել հետևյալ հարցին:	**%**
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին:	**100**
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:	**93**
Օգտվողների ո՞ր տոկոսն է բավարարված այդ ծառայություններից:	**95**

ՄՈՒՀ-ում ուսանողները հնարավորություն ունեն ցանկացած ժամանակ՝ ուսումնական գործընթացի ընթացքում և դասերից դուրս, հաղորդակցվել վարչական աշխատակազմի հետ, տարբեր հարցերի վերաբերյալ ստանալ համապատասխան օժանդակություն և ուղղորդում: Ուսանողի ուղեցույց-ում (տե՛ս https://aspu.am/website/images/website3/Հավատարմագրում/Ուսանողի%20ուղեցույց%202023.pdf) բերված է Համալսարանի ղեկավարությանը դիմելու ընթացակարգը՝ խնդիրների ծագման դեպքում: Ուղեցույցում կարելի է գտնել ՄՈՒՀ-ի բոլոր մասնաշենքերի և նրանցում գտնվող վարչական ստորաբաժանումների, դեկանատների, ամբիոնների հասցեները, էլեկտրոնային հասցեները, հեռախոսահամարները: Նշենք նաև, որ ընդունելության ժամերից դուրս՝ հրատապ հարցերի դեպքում, ուսանողները կարող են դիմել ամբիոնի վարիչին, ֆակուլտետի դեկանին և վարչական անձնակազմի այլ ներկայացուցիչներին:

Վարչական անձնակազմին ուղղված ուսանողների հարցերի շրջանակը լայն է՝ դասացուցակների կազմումից ու քննաշրջանի ժամանակացույցից, հեռացման, ազատման, վերականգնման, ակադեմիական պարտքերի կազմակերպման ու անցկացման ժամանակացույցներից, պրակտիկաների կազմակերպումից, ուսման վարձի խնդիրներից մինչև դասընթացներից ու դասախոսներից ունեցած դժգոհություններ, առաջարկություններ և այլն: Ուսումնական գործընթացին վերաբերող բոլոր փաստաթղթերը, դասացուցակները, քննական ժամանակացույցները, հայտարարությունները և այլն փակցվում են համապատասխան բաժինների, դեկանատների և ամբիոնների՝ հայտարարությունների ցուցանակներին, նաև տեղադրվում են ՄՈՒՀ-ի կայքէջում, ֆակուլտետների տեղեկատվական հարթակներում:

Ուսանողներն իրենց խնդիրներն ազատ բարձրաձայնում են համապատասխան ֆակուլտետներում և ամբիոններում, իսկ անհրաժեշտության դեպքում որոշ հարցեր քննարկվում են նաև ռեկտորատի նիստում: Համապատասխան ֆակուլտետների դեկանատներ ուսանողները կարող են դիմել աշխատանքային ժամերին և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն: Վարչական աշխատակազմին ուսանողները կարող են դիմել նաև միջնորդավորված ձևով՝ ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության միջոցով, որոնց ներկայացուցիչներն էլ համապատասխան հարցադրումներով հանդես են գալիս Համալսարանի կառավարման մարմինների կամ ռեկտորատի նիստերում:

ՄՈՒՀ-ի նախկին և ներկա ուսանողների շրջանում կազմակերպված հարցումները (տե՛ս https://drive.google.com/file/d/15Gs2xenyy03QNQ4L3KE1EhuUaxB0zteS/view?pli=1) վկայում են, որ նրանք մեծ մասամբ գոհ են վարչական ծառայություններից:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.5.ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Հիմքեր՝

- Խ. Աբովյանի անվան ՄՈՒՀ-ի պրակտիկայի վարչության կանոնադրությունը
- Պրակտիկայի փաստաթղթեր[18]
- Խ. Աբովյանի անվան ՄՈՒՀ-ի Համալսարան–գործատու համագործակցության կենտրոնի կանոնադրությունը
- ՄՈՒՀ-ի Համալսարան–գործատու համագործակցության կենտրոնի կայքը[19]
- Կարիերայի ուղեցույցներ[20]

Պատասխանել հետևյալ հարցին:	**%**
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված կարիերային նպաստող ծառայությունների մասին:	**88**
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:	**78**
Օգտվողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ ծառայություններից:	**92**

ՄՈՒՀ-ում ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ մատուցող կառույցներն են պրակտիկայի կենտրոնը (տե՛ս https://aspu.am/hy/page/praktikayi_kentron/)(նախկինում՝ պրակտիկայի վարչություն) և Համալսարան–գործատու համագործակցության կենտրոնը (տե՛ս https://aspu.am/hy/page/hamalsaran-gortsatu_hamagortsakcutyan_kentron/), ուսանողական խորհուրդը: ՄՈՒՀ-ի ամբիոնները նույնպես կարևոր դեր են կատարում ուսանողներին աշխատանքի ուղղորդելու առումով: Վերջին տարիներին նրանք նախաձեռնել են գործատուների (դպրոցներ, արհեստագործական ուսումնարաններ, քոլեջներ, վարժարաններ և այլն) հետ համագործակցության տարաբնույթ աշխատանքներ, որոնց արդյունքում կնքվել են հուշագրեր, պայմանագրեր: Այդ կազմակերպություններում ամբիոնի ուսանողների պրակտիկայի անցկացումը դարձել է առավել նպատակային, քանի որ հաշվի են առնվում սովորողների նախապատվությունները: Որպես արդյունք՝ տարեցտարի ՄՈՒՀ-ից ավելի շատ սովորողներ են մշտական աշխատանքի անցնում այդ համագործակից կազմակերպություններում, հաճախ՝ անմիջապես պրակտիկայի ավարտից հետո: Մանկավարժական պրակտիկայի դերը շատ մեծ է ՄՈՒՀ-ի ուսանողների կարիերայի կայացման գործում (տես՝ պրակտիկայից ուսանողների գոհունակության վերաբերյալ հարցումներ- https://drive.google.com/file/d/1VauRdwuvulXOPehhh5vSUY-m1BesL5dl/view):

ՄՈՒՀ-ի Համալսարան–գործատու համագործակցության կենտրոնն (տե՛ս https://aspu.am/hy/page/hamalsaran-gortsatu_hamagortsakcutyan_kentron/) աջակցում է սովորողներին և շրջանավարտներին՝ գործընկեր հաստատություններում աշխատանքի որոնման հարցերում, կազմակերպում կարիերայի աճին նպաստող սեմինարներ և հետաքրքիր հանդիպումներ: ՄՈՒՀ-ի կայքում՝ կենտրոնի էջում, առկա է «Ձեռնարկներ» բաժինը, որտեղ տեղադրված են ուսանողների կարիերային նպաստող օգտակար ձեռնարկներ, ինչպես նաև աշխատանքի համար գրանցման թերթիկ:

Համալսարան–գործատու համագործակցության կենտրոնի կողմից շրջանավարտների էլեկտրոնային հասցեներին են ուղարկվում թափուր աշխատատեղերի, վերապատրաստման ծրագրերի մասին համապատասխան առաջարկներ և հայտարարություններ:

Կենտրոնի գործունեության իրականացման և տեղեկատվության տարածման նպատակով ստեղծվել է ուսանողների և շրջանավարտների վերաբերյալ տվյալների շտեմարան. Արդեն իսկ առկա են ավելի քան 5000 ուսանողների և շրջանավարտների տվյալներ:

[18] https://aspu.am/hy/page/pastatghter-praktika/
[19] https://aspu.am/hy/page/hamalsaran-gortsatu_hamagortsakcutyan_kentron/
[20] https://aspu.am/hy/page/dzernarkner_ev_ughecuycner/

Շրջանավարտների հետ արդյունավետ հետադարձ կապի ապահովման և համագործակցության նպատակով ստեղծվել է «Գրանցման թերթիկ» (տե՛ս https://aspu.am/website/images/files/Registration%20form%20for%20UECC%20FINEL.pdf) ուսանողների տվյալների հավաքագրման տեղեկատվական շտեմարանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.6. ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Հիմքեր՝

- ՄՈՒՀ-ի գիտահետազոտական կենտրոնի կանոնադրությունը
- Ուսանողական գիտական ընկերություն[21]
- ՄՈՒՀ-ի ուսանողական գիտական ընկերության (ՈւԳԸ) կանոնադրությունը
- ՄՈՒՀ-ի գիտաժողովների ժամանակացույց[22]
- «Հոգեբանական հետազոտություններ N(1)» ուսանողական հետազոտական աշխատանքների ժողովածու[23]
- Մաթեմատիկական կրթություն: 10-րդ միջազգային գիտաժողով: 6-7 հոկտեմբերի, 2022 թիվ: Նյութերի ժողովածու[24]

Գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավմամբ զբաղվող հիմնական կառույցը ՄՈՒՀ-ի ուսանողական գիտական ընկերությունն է: Այն ուսանողներին, հետբուհական, շարունակական կրթություն ստացողներին և գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված երիտասարդներին միավորող համալսարանական ինքնակառավարվող հասարակական կառույց է (տես՝ ՄՈՒՀ-ի ուսանողական գիտական ընկերության (ՈւԳԸ) կանոնադրությունը, տե՛ս https://aspu.am/website/images/website3/ՀՊՄՀ-ի-ՈւԳԸ-կանոնադրություն-Հաստատված.pdf):

Հայկական պետական մանկավարժական համալսարանում գիտահետազոտական աշխատանքներից բացի, կազմակերպվում են նաև ներբուհական, հանրապետական և միջազգային գիտական միջոցառումներ՝ գիտաժողովներ, կոնֆերանսներ, սիմպոզիումներ և սեմինարներ, որոնց ակտիվ մասնակցություն են ունենում համալսարանի ուսանողները: ՄՈՒՀ-ի կայքում առանձնացված է «Գիտաժողովներ» (տե՛ս https://aspu.am/hy/page/gitazhoghovner/) բաժինը, որտեղ տեղադրվում է անցած և սպասվելիք գիտաժողովների մասին տեղեկատվությունը:

Առանձնապես հարկ է նշել 2022 թվականը՝ որպես ՄՈՒՀ-ի կազմավորման 100-ամյակի լրացման տարի՝ գիտաժողովների և այլ միջոցառումների իր աննախադեպ թվով, որոնցում ակտիվ մասնակցություն ունեցան բուհի ուսանողները (տե՛ս Գիտաժողովներ https://aspu.am/hy/page/gitazhoghovner/,):

Ակադեմիկոս Մկրտիչ Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվում են ամենամյա գիտաժողովներ (տե՛ս https://aspu.am/hy/page/gitazhoghovner/) ուսանողների մասնակցությամբ: Գիտաժողովին ներկայացված նյութերը տպագրվում են. 2023 թ -ին կայացած գիտաժողովի նյութերը տպագրվել են «Հոգեբանական հետազոտություններ» N 1(2) ուսանողական հետազոտական աշխատանքների նյութերի ժողովածուում (տե՛ս https://aspu.am/hy/content/luys_e_tesel_usanoghakan_nyuteri_zhoghovatsu_/#sthash.q4coTO2r.3thDhnEp.dpbs):

Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նախաձեռնությամբ յուրաքանչյուր տարի կազմակերպվում է «Մաթեմատիկական կրթություն» միջազգային գիտաժողով. 2023թ- ին տեղի ունեցավ տասներորդ՝ «Մաթեմատիկական կրթություն-10» միջազգային երկօրյա գիտաժողովը (տե՛ս https://aspu.am/hy/content/qnnarkvecin_matematikakan_krtutyan_himnakhndirnery/#sthash.RAUMzpFd.

[21] https://aspu.am/hy/page/usanoghakan_gitakan_ynkerutyun/
[22] https://aspu.am/hy/page/gitazhoghovner/
[23] https://aspu.am/hy/content/luys_e_tesel_usanoghakan_nyuteri_zhoghovatsu_/#sthash.q4coTO2r.HIZC8J9R.dpbs
[24] https://opac.flib.sci.am/cgi-bin/koha/opac-detail.pl?biblionumber=564810%20thumbnail-shelfbrowser

r5uvuSE1.dpbs)։ Այս գիտաժողովներին ակտիվ մասնակցություն են ունենում նաև ուսանողները՝ ինչպես բակալավրիատի, այնպես էլ մագիստրատուրայի։ Գիտաժողովի նյութերը տպագրվում են։

Համահամալսարանական՝ Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների, քաղպաշտպանության ամբիոնի, էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի նախաձեռնությամբ 2022թ. հունիսին կազմակերպվել է «Աղետներ, համաճարակներ, հանրային առողջություն և կրթություն» խորագրով ուսանողական գիտական ֆորում (տե՛ս https://aspu.am/hy/content/usanoghakan_gitakan_forum_mankavarzhakanum/#sthash.skeql89c.UewTPbn5.dpbs)՝ նվիրված բուհի հիմնադրման 100-ամյակին։ Ֆորումի նպատակն էր գիտական քննարկման հարթակ տրամադրել ուսանողներին և շրջանավարտներին, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են ուսումնակրթական և ուսումնագիտական ոլորտներում։

«Մանկավարժության արդի հիմնախնդիրներ, լուծումներ» (տե՛ս https://aspu.am/hy/content/mankavarzhutyan_ardi_himnakhndirnery_lutsumnery/#sthash.vzOSCTev.Um3HbUE7.dpbs) խորագրով գիտաժողովը, որն ամեն տարի կազմակերպվում է մանկավարժության համահամալսարանական ամբիոնի կողմից, ամփոփում էր բուհի կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի, սկզբնական կրթության ֆակուլտետի ավարտական աշխատանքների և մագիստրոսների թեզերի հետազոտական աշխատանքի բովանդակությունն ու արդյունքները, որոնք ստեղծվել էին ղեկավար-դասախոսների հետ համատեղ։

2022 թ. ապրիլին կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի նախաձեռնությամբ անցկացվեց «Բնությունը երիտասարդ բնագետի հետազոտություններում» (տե՛ս https://aspu.am/hy/content/usanoghakan_gitakan_nstashrjan_hpmh-um/#sthash.WixYWs15.LnBYo0LC.dpbs) խորագրով ուսանողական գիտական նստաշրջան՝ նվիրված բուհի հիմնադրման 100-ամյակին։

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.7. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին։

Հիմքեր՝

- Ուսանողական խորհրդի կանոնադրությունը
- «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրությունը
- ՄՈՒՀ-ի ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համակարգ (Հավելված 4.7.1)
- Համալսարանում բակալավրի պատրաստման կրթական ծրագրի կրեդիտային հենք ով ուսումնական գործընթացի կազմակերպման համակարգը[25]
- Ուսանողի ուղեցույց (Հավելված 4.7.2)
- Վերջին 3 տարիների ընթացքում ուսանողների բողոքների և այդ խնդիրների լուծման վիճակագրական տվյալները և համապատասխան հիմքերը (Հավելված 4.7.3)

Պատասխանել հետևյալ հարցին։	**%**
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված համապատասխան ծառայությունների վերաբերյալ։	**100**
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում համապատասխան ծառայությունից։	**38,2**
Օգտվողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացից։	**71,3**

ՄՈՒՀ-ում ուսանողների իրավունքների պաշտպանությունը հիմնված է ՀՀ օրենսդրությամբ («Կրթության մասին» ՀՀ օրենքի հոդված 49, ՀՀ Կառավարության N 138-Ն որոշման /4 փետրվարի 2016 թվական/ Հոդված 117, (տե՛ս https://www.anqa.am/hy/մեր-մասին/իրավական-հենք/օրենքներ/կրթության-մասին-հհ-օրենքը/) , ՄՈՒՀ-ի ներքին կանոններով)։

[25] https://aspu.am/hy/page/bakalavriat/

ՄՈՒՀ-ում ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմինը ՈՒԽ-ն է, որը ուսանողների ինքնակառավարվող, ընտրովի ներկայացուցչական մարմին է: ՄՈՒՀ-ի ՈՒԽ-ի գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ օրենսդրությամբ, 2016թ. սեպտեմբերի 30-ին ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված ՄՈՒՀ ՈՒԽ-ի կանոնադրությամբ (տե՛ս https://aspu.am/website/images/files/Ukh_Knpnadrutyun.pdf):

ՄՈՒՀ-ում թե՛ առկա, թե՛ հեռակա համակարգի ուսանողների մեծամասնությունն իրազեկված է ուսանողական խորհրդի գործունեությունից: ՈՒԽ-ն իր գործունեությունն իրականացնում է հիմնականում 9 հանձնաժողովների միջոցով, որոնց թվին է դասվում իրավական հանձնաժողովը: Իրավական հանձնաժողովի նպատակն է զբաղվել ուսանողների իրավունքների պաշտպանությամբ, իրազեկել նրանց իրենց իրավունքների և պարտականությունների մասին և վերհանել ՄՈՒՀ-ում ուսանողների իրավունքների խախտումների դեպքերը՝ անհրաժեշտ աշխատանքներ տանելով դրանց վերականգման համար: ՄՈՒՀ-ի ուսանողների շրջանում առկա է վստահության մթնոլորտ ուսանողական կազմակերպությունների կողմից տարվող աշխատանքների նկատմամբ, որը բարձրացնում է ուսանողների իրավունքների պաշտպանության գործում ՈՒԽ աշխատանքների արդյունավետությունը: ՄՈՒՀ-ի ուսանողների մոտ 350-400-ն ընդգրկված են ՈՒԽ աշխատանքներում: Առնվազն 2 շաբաթը մեկ անգամ կազմակերպվում են ՈՒԽ և ՈՒԳԸ նիստեր, որոնց ժամանակ կառույցների անդամները բարձրաձայնում են առկա խնդիրները և քննարկում իրականացվող ու պլանավորվող միջոցառումների ընթացքը: Յուրաքանչյուր տարվա ընթացքում 2 անգամ կազմակերպվում է ՈՒԽ և ՈՒԳԸ ընդհանուր ժողովը, որին մասնակցում է ավելի քան 100 ուսանող:

Ուսանողների իրավունքների խախտման դեպքում ուսանողը դիմում է ֆակուլտետի ՈՒԽ նախագահին, որից հետո ՈՒԽ նախագահը ֆակուլտետի վարչական անձնակազմի ուշադրությանն է հրավիրում առկա խնդիրը, խնդրի լուծում չտրամադրելու պարագայում հարցը բարձրացվում է ֆակուլտետի խորհրդում, իսկ եթե այն վեր է ֆակուլտետի խորհրդի լիազորությունների շրջանակից, ապա քննարկվում է ՄՈՒՀ-ի ռեկտորատի նիստերում, գիտական խորհրդում կամ էլ ՄՈՒՀ խորհրդում:

Համալսարանում սովորում են նաև էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներ և հատուկ կարիքներ ունեցող ուսանողներ, ովքեր ակտիվորեն ներգրավված են ՄՈՒՀ-ի ուսանողական կյանքում: Համահավասար մթնոլորտի ձևավորման, ուսանողների շրջանում իրենց իրավունքների և պարտականությունների ծանոթացման նպատակով ուսանողական կազմակերպությունները մեծ ուշադրություն են դարձնում առաջին կուրսի ուսանողներին հետ տարվող աշխատանքներին, որի նպատակով նրանց հետ կազմակերպվում են բազմաթիվ հանդիպումներ և քննարկումներ:

ՄՈՒՀ-ում ուսանողներն իրենց իրավունքներին և պարտականություններին տեղեկանում են Համալսարանի հետ կնքված պայմանագրից, ուսանողական կառույցներից, ամբիոններից, դեկանատներից, ուսանողի ուղեցույցից, ՄՈՒՀ-ի կայքից, Google Classroom էլեկտրոնային հարթակից, ինչպես նաև տպագիր հայտարարություններից:

ՄՈՒՀ-ում ուսանողների իրավունքների պաշտպանությունը գտնվում է նաև բուհի ղեկավար կազմի ուշադրության կենտրոնում: Առկա տարաբնույթ խնդիրների դեպքում ուսանողները հնարավորություն ունեն դիմել ֆակուլտետի դեկանին, վարչական անձնակազմի այլ ներկայացուցիչներին և անձամբ ռեկտորին: Դիմելու ընթացակարգը բերված է «Ուսանողի ուղեցույց»-ում (տե՛ս https://aspu.am/website/images/website3/ Հավատարմագրում/Ուսանողի% 20 ուղեցույց%202023.pdf):

ՄՈՒՀ-ում ուսանողներին ուսման վարձի մասնակի փոխհատուցման, անվանական կրթաթոշակների հատկացման և փոխատեղման կարգին ծանոթացումը տեղի է ունենում առաջին կուրսում ՈՒԽ-ի և ֆակուլտետի դեկանների հետ հանդիպումների ժամանակ: Այդ կարգերի մասին տեղեկատվությունն ուսանողը ստանում է ֆակուլտետների հայտարարությունների ցուցանակից, Google Classroom էլեկտրոնային հարթակից, բացի դրանից՝ ցանկացած ժամանակ դիմելով դեկանատ: Աշխատանքի թափանցիկությունն ապահովելու նպատակով կիսամյակի ավարտին կուրսերին տրամադրվում են նախորդ կիսամյակի գնահատականները՝ ՄՈՒՀ-ի ուսանողների

գիտելիքների ստուգման և գնահատման համակարգի, ՀՀ Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգի (տե՛ս https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=117578&fbclid=IwAR1HE5Jk3qpg-kgvQzNbiTYVt_b_n_A-64cAATD8YZpWONJMsXqkhi7M5W8)և այլ ներքին կանոնակարգերի միջոցով: Գնահատականը հրապարակելու պահից սկսած ուսանողն իրավունք ունի այն բողոքարկելու դասընթացը իրականացնող ամբիոնի վարիչին, վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը, ֆակուլտետի դեկանին: Բողոքարկումը և դրա քննարկումը իրականացվում է 24 ժամվա ընթացքում:

Միջանկյալ ստուգման և հանրագումարային ամփոփումների ժամանակահատվածում ամբիոններում ստեղծվում են բողոքարկման հանձնաժողովներ:

Ամփոփիչ ատեստավորման գնահատականի բողոքարկման արդյունքները ցույց են տալիս, որ 2020թ-ից առ այսօր նկատվում է գնահատականը բողոքարկող ուսանողների թվաքանակի անկում (տե՛ս Ամփոփիչ ատեստավորման գնահատականի բողոքարկման արդյունքների գծապատկերը): Համալսարան–գործատու համագործակցության կենտրոնի և կրթության որակի ապահովման բաժնի հետ գործատուի և շրջանավարտների կարծիքի ուսումնասիրության նպատակով համատեղ կատարվել է վերլուծություն:



ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.8. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Հիմքեր՝

- ՄՈՒՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատմանն ուղղված հարցման արդյունքները (Հավելված 4.8.1)
- Արտաքին շահակիցների (գործատուների) կարծիքի ուսումնասիրություն (Հավելված 4.8.2)
- 2019-2022 թթ. ՄՈՒՀ-ի շրջանավարտների աշխատանքային զբաղվածության վերլուծություն (Հավելված 4.8.3)

ՄՈՒՀ-ում պարբերաբար անցկացվում են հարցումներ սովորողների շրջանում: Սովորողները գնահատում են կրթական ծրագրերը, մատուցվող այլ կրթական կարիքները, համալսարանի նյութատեխնիկական բազայի հնարավորությունները, պրակտիկաների կազմակերպման

արդյունավետությունը: Հարցումների շարունակական բարելավումն ապահովելու նպատակով հարցաթերթերը պարբերաբար վերանայվում են:

Շրջանավարտների շրջանում անցկացված հարցումները թույլ են տալիս շրջանավարտի հայացքով գնահատել կրթական ծրագրերը, դասընթացների, դասավանդման և ուսումնառության որակը, ինչպես նաև ստանալ շրջանավարտների զբաղվածության պատկերը:

Շրջանավարտների զբաղվածության մակարդակը վերջին 3 տարվա համար (%-ով):

Զբաղվածություն/ուսման շարունակություն	2019-2020	2020-2021	2021-2022
Ավարտելուց անմիջապես հետո	53,2	57,6	59,5
Նախքան ավարտելը	27,1	31,4	38,2
Մասնագիտությամբ	38,8	30,0	43,9
Ոչ մասնագիտությամբ	24,4	27,6	22,6
Ավարտելուց հետո ուսումը շարունակող ուսանողների տոկոսը	32,6	33,1	45,3
Գործազուրկ ուսանողների տոկոսը	36,8	42,4	33,5







ՄՈՒՀ-ի գործունեության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները՝ ըստ 4-րդ չափանիշի

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
ՄՈՒՀ-ում առկա են դիմորդների մասնագիտական կողմնորոշման շուրջ կազմակերպվող աշխատանքների գործուն մեխանիզմներ :	Գիտահետազոտական աշխատանքներում դեռևս առկա է ուսանողների ցածր ներգրավվածություն:
ՄՈՒՀ-ն առաջարկում է լրացուցիչ անվճար առարկայական պարապմունքներ՝ շահակիցներին նախապատրաստելով ընդունելության գործընթացին :	Դեռևս առկա է ուսանողների կողմից այլ երկրներում ուսումը շարունակելու մոտիվացիայի պակաս:
ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների շահերը պաշտպանող, ինչպես նաև նրանց գիտահետազոտական աշխատանքներում ակտիվ ներգրավելուն ծառայող ինքնավար մարմիններ:	ՄՈՒՀ-ում օտարերկրյա ուսանողների քանակը փոքր է:
ՄՈՒՀ-ում առկա է կարիերիայի կենտրոն, որն ակտիվ աջակցում է ուսանողների աշխատանքի տեղավորման գործընթացներին:	ՄՈՒՀ-ում դեռևս առկա են շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրման ու մշակման ոչ լիարժեք ընթացակարգեր և գործիքներ :
ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիքների օպերատիվ արձագանքման մեխանիզմներ:	Ուսանողների ոչ բավարար են իրազեկված Համալսարանի կողմից տրվող ծառայությունների վերաբերյալ:
Հնարավորություններ	**Վտանգներ**
Ուսանողական հավաքները, ամառային դպրոցները կարող են ուսանողներին լայն հնարավորություններ ընձեռել համագործակցության, փորձի փոխանակման, ինչպես նաև գործընկերային հարաբերությունների ձևավորման գործում:	Ժողովրդագրական ցուցանիշների անկումը կարող է վտանգել ուսուցչի մասնագիտության նկատմամբ հետաքրքրվածությունը:
Միջազգային գործընկեր բուհերում ուսումնառության հնարավորությունը կարող է խթանել ուսանողների կողմից այլ երկրներում ուսումը շարունակելու մոտիվացիան:	Տնտեսական դժվարությունները կարող են հանգեցնել ուսանողներին ՄՈՒՀ-ի կողմից մատուցվող ծառայությունների կրճատմանը:
Համալսարան- գործատու կենտրոնի կողմից կազմակերպվող փափուկ հմտությունների ձևավորմանը նպաստող տարատեսակ դասընթացները հնարավորություն կտան ուսանողներին բարելավելու գիտական տարբեր ֆոնդերին դիմելու, մոտիվացիոն նամակներ գրելու և այլ հմտությունների շարունակական զարգացումը:	Մանկավարժահետազոտական ուղղվածության դրամաշնորհային ֆոնդերի սահմանափակ քանակը կարող է վտանգել նոր գաղափարների գեներացման և դրանց իրագործման հնարավորությունները:

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները

- Մշակել գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ցածր ներգրավվածության ակտիվացման և լայն քարոզչության գործուն մեխանիզմներ ուսանողական կառուցների ներուժի կիրառմամբ
- Մշակել այլ երկրներում ուսումը շարունակելու մոտիվացիայի բարձրացմանն ուղղված հստակ քաղաքականություն և գործողությունների պլան
- Ներգրավել ուսանողական կառույցներին օտարերկրյա դիմորդների հավաքագրման և կրթական ծառայությունների ներկայացման գործընթացում
- Մանկավարժահետազոտական ուղղվածության դրամաշնորհային ֆոնդերին դիմելու կարողությունների և հմտությունների զարգացման ուղիների մշակում

ՉԱՓԱՆԻՇ 5. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ ՀԱՄՆԵԼՈՒ ԵՎ ՄԿԾ-ՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՎԱԾ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄՈՎ:

ՄՈՒՀ-ը նպատակադրվել է զարգացնել և արդիականցնել Համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը, ՄՈՒՀ-ում իրականացվող ՄԿԾ-ների չափանիշներին համապատասխան պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի տարակարգերի, պաշտոնների տեղակալման ու դրանց աստիճանակարգում բարձրացման չափանիշները, կանխատեսելի մեխանիզմները, աշխատակազմի տարակարգերը, նկարագրերը, անձնակազմի վարկանիշավորման համակարգը և կիրառման ընթացակարգը: ՄՈՒՀ-ը նպատակադրվել է իրականացնել նաև վարչական, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ առկա ներուժի գնահատում, մշակել հաստիքացուցակ՝ հիմնված *ուսանող-պրոֆեսորադասախոսական անձնակազմ, ուսանող-վարչական կազմ, ուսանող-ուսումնաօժանդակ կազմ* համադրելիության և այլ ցուցանիշների արդյունավետության վրա՝ հաշվի առնելով կառավարման գործընթացների և ռեսուրսային ապահովվածության օպտիմալացումը, ինչպես նաև արդիականացնել Համալսարանում անձնակազմի աշխատանքի ընդունելության, պաշտոնների տեղակալման իրավական ընթացակարգերը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.1. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Հիմքեր՝

- ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգ (Հավելված 5.1.1)
- Հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմն ըստ ամբիոնների և որակավորումների. ներառված են գիտական աստիճանները և կոչումները, աշխատանքային ստաժը բուհում, վարվող հիմնական դասընթացները (Հավելված 5.1.2)
- ՊԴ և ուսումնաօժանդակ կազմ (Հավելված 5.1.3)
- ՄՈՒՀ-ի ստորաբաժանումների տեսակները, աշխատատեղերի տարակարգերը և դրանց գբաղեցման կանոնակարգ (Հավելված 5.1.4)
- Ուսումնաօժանդակ անձնակազմի պաշտոնի անձնագրեր (Հավելված 5.1.5)
- ՄՈՒՀ-ի ամբիոնի վարիչի ընտրության կարգ (Հավելված 5.1.6)

ՄՈՒՀ-ում 2023-2024թթ. ժամանակահատվածում իրականացվող 44 բակալավրի և 55 մագիստրոսի կրթական ծրագրերը նպատակաուղղված են Համալսարանի առաքելությամբ սահմանված կարգի՝ սոցիալական, հումանիտար, բնական գիտությունների, մշակույթի և արվեստի ոլորտների տարբեր ուղղություններով մասնագետների պատրաստմանը: Հիշյալ գործընթացն ապահովում է բուհի *ներքին շահակից* համարվող, մասնագիտական անհրաժեշտ կարողունակություններ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմը (տե՛ս հավելվածը դասախոսական կազմի-տե՛ս https://docs.google.com/spreadsheets/d/1rGJJZOw9aH-K1Z3L_pXN2322XjG6Qgs7/edit#gid=372551698) :

Դասախոսական կազմի ընտրության քաղաքականության սկզբունքներն արտացոլված են ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգում (տե՛ս https://aspu.am/website/images/files/profesoradasaxosakan%20tarakargeri%20zbaxecman%20kanonakargy%20hastatelu%20masin%20hraman.pdf), որտեղ հստակ սահմանված են պրոֆեսորադասախոսական տարակարգերը (պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս), գործունեության պահանջները և տեղակալման չափանիշները:

ՄՈՒՀ-ի գործունեության առհավատչյա երաշխիքներից է պրոֆեսորադասախոսական գիտամանկավարժական կազմը, որին և մեծ տեղ է հատկացված և ամրագրված բուհի զարգացման

ռազմավարական ծրագրում (տե՛ս https://aspu.am/website/images/files/Razmavarakan%20cragir_2020-2025.pdf) :

ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական անձնակազմի պաշտոնների տեղակալումն իրականացվում է բաց մրցութային ընտրությամբ՝ մինչև 5 տարի ժամկետով՝ դասախոսական կազմի ընտրության (վերընտրության) համար:

Մասնավորապես, վերջին տարիներին կատարած աշխատանքները հավաստում են, որ ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի մասնագիտական որակները համապատասխանում են ՄՈՒՀ-ի առաքելությանը և ապահովում են մասնագիտական կրթական ծրագրի նպատակների, կրթական ելքային արդյունքների ձեռքբերումը, իսկ ՊԴԱ-ի մասնագիտական որակներին ներկայացվող հիմնական պահանջները ձևակերպված են բակալավրի և մագիստրոսի տվյալ մասնագիտության կրթական ծրագրերին համապատասխանող՝ ՀՀ-ի ՈԱՇ-ի և ՈՈՇ-ի պահանջներից՝ վեցերորդ (բակալավրի) և յոթերորդ՝ (մագիստրոսի) մակարդակների շրջանավարտին բնորոշ գիտելիքների, հմտությունների և կարողությունների ծավալով: Օրինակ՝ ՄԿԾ-ի մասնագրերում արտացոլվում են այն որակական և մասնագիտական ընդհանրական ելքային պահանջները, որոնք առաջադրվում են տվյալ ՄԿԾ-ի շրջանակներում դասավանդվող կազմին: ՄԿԾ-ի պատասխանատու ամբիոնները, գործող հաստիքացուցակի համաձայն (ուսումնաօժանդակ կազմ), ներկայացնում են գործատուին (ռեկտոր), որի հիման վրա կազմակերպվում է մրցույթ՝ պաշտոնի տեղակալման համար: Ռեկտորի որոշմամբ կարող են ստեղծվել նաև աշխատանքների այլ տարակարգեր: Թափուր աշխատատեղ առաջանալու դեպքում ռեկտորի հայեցողությամբ այն զբաղեցվում է առանց մրցույթի կամ մրցութային կարգով՝ սույն կանոնակարգին համապատասխան (տե՛ս https://aspu.am/hy/page/kanonakarger/gBd977nB64Icz_n6ugtIp4RP): Կրթական ծրագրերն իրականացնելու, դասավանդման բարձր որակն ապահովելու նպատակով ՄՈՒՀ-ում հիմնական աշխատանքի ընտրվում են, իսկ համատեղությամբ և ժամավճարային հիմունքներով հրավիրվում կրթության, սոցիալական աշխատանքի և մշակույթի ոլորտների առաջատար մասնագետներ, գիտությունների դոկտորներ, գիտությունների թեկնածուներ, որոնք, որպես կանոն ունեն մասնագիտությանը և դասընթացների ելքային արդյունքներին, նրանց դասավանդման ուղղվածությանը համապատասխանող բազային կրթություն, հետևողականորեն զբաղվում են այդ մասնագիտության ոլորտում հետազոտական և գիտամեթոդական գործունեությամբ, գործունեության ոլորտին համապատասխան ունեն աշխատանքային փորձ: ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգը (տե՛ս https://aspu.am/website/images/files/profesoradasaxosakan%20tarakargeri%20zbaxecman%20kanonakargy%20hastatelu%20masin%20hraman.pdf) հիմնվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի,(տե՛ս https://www.irtek.am/views/act.aspx?aid=150003), «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների դրույթների և ՊԴԱ ձևավորման կանոնակարգի վրա, իսկ ուսումնաօժանդակ կազմն ընտրվում է Համալսարանի ստորաբաժանումների աշխատատեղերի տարակարգերով և դրանց զբաղեցման կանոնակարգով, հիմնականում ՄՈՒՀ-ի մագիստրոսների և ասպիրանտների թվակազմից (ՄՈՒՀ-ի ստորաբաժանումների տեսակները, աշխատատեղերի տարակարգերը և դրանց զբաղեցման կանոնակարգ):

Մեր կողմից փաստացի տվյալներով հաշվարկված արդյունքները ՊԴԱ և ուսանողների հետ հարաբերվում են հետյալ կերպ.



Վերոնշյալ հիմքերը կարող են փաստել, որ ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի մասնագիտական որակները համապատասխանում են Համալսարանի առաքելությանը և ապահովում են մասնագիտական կրթական ծրագրի նպատակների, կրթական ելքային արդյունքների ձեռքբերումը (տե՛ս ՊԴ և ուսումնաօժանդակ կազմ-https://docs.google.com/spreadsheets/d/1wUdOAE8w_g4nSRFv-ZNYfdXaXh24aQ4i/edit#gid=43188604):

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.2. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Հիմքեր՝

- ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգ (Հավելված 5.2.1)
- Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական աշխատողների ատեստավորման ներքին կանոնակարգ (Հավելված 5.2.2)

Կրթական ծրագրի համար սահմանված ՊԴԱ մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջները ծառայում են ՄՈՒՀ-ի ռազմավարությանը և ՄԿԾ-ի նպատակներին: Հաշվի է առնվում յուրաքանչյուր մասնագետի աշխատանքային փորձը, բազային կրթությունը, ՄԿԾ-ի կարիքների և նպատակների, մասնագիտական կարողությունների համապատասխանությունը կրթական ծրագրերի սահմաններում շնորհվող որակավորումներին: ՊԴԱ-ի հիմնական կազմն ունի գիտական աստիճան: Մասնավորապես, մշակվել են մի շարք մեթոդական ուղեցույցներ(տե՛ս https://aspu.am/hy/page/ughecuycner2/), որոնք հնարավորություն են տալիս գնահատել ՄԿԾ-ների ռեսուրսներով ապահովվածության կարիքները: ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված ՊԴԱ-ի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների բարելավման գործողությունները տեղի են 2022 թվականի հունիսի 16-ից օգոստոսի 30-ը (տե՛ս 15.06.2022թ. թիվ 1736-Ա հրաման-https://drive.google.com/file/d/1VsL689Rip0p3TlnVdSaxyakZgGkW89Ba/view): ՊԴԱ-ի համար իրականացվել են մասնագիտական կրթական ծրագրերի, առարկայական նկարագրերի որակի բարձրացմանն ուղղված մանկավարժամեթոդական վերապատրաստման դասընթացներ: Արդյունքում գործընթացն ապահովել է.

- դասախոսի մասնագիտական կարողունակությունների բարելավումը (դասավանդում, մեթոդներ),
- ՄԿԾ-ի վերջնարդյունքին հանգեցնող մասնագիտական և ընդհանրական կարողությունների զարգացումը,

- ՄԿԾ-ների մասնագրերի, առարկայական նկարագրերի, թեմատիկ շաբաթական տրոհումների բարելավում, դրանց ուղղահայաց համապատասխանեցում ՀՀ ՈԱԾ-ի և ՈՈԾ-ի պահանջներին,
- այդուհանդերձ, պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներն ընդհանրական են:

Կարող ենք փաստել, որ կարողունակությունների համապատասխանությունը սահմանվում է ՀՀ կառավարության ընդհանրական պահանջների, որակավորումների ազգային և ոլորտային շրջանակի, ՄԿԾ-ի նպատակներից բխող պահանջների հիման վրա:

Խ.Աբովյանի անվան ՄՈՒՀ-ը, առաջնորդվելով գիտական և գիտատեխնիկական գործունեության օբյեկտիվ գնահատման տվյալ պաշտոնը բնորոշող չափորոշիչներով, համապատասխանեցրել է գիտական աշխատողների մասնագիտական որակները նրանց զբաղեցրած պաշտոններին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.3. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Հիմքեր՝

- Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման քաղաքականությունը և ընթացակարգերը (Հավելված 5.3.1)
- Դասալսումների անցկացման ձևաչափ (Հավելված 5.3.2)

ՄՈՒՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի 1-ին՝ «Որակյալ կրթություն» նպատակի (Վերանայել և լրամշակել որակյալ կրթական ծառայությունների մատուցման նորմատիվաիրավական հենքը) խնդիր 1.3–ի լուծման համար նախատեսվել է հետևյալ գործողությունը՝ ՄԿԾ-ում հետազոտական և նախնական մասնագիտական փորձառության ձևավորման (պրակտիկայի) նորովի քաղաքականության, գործիքակազմերի վերաբերյալ հարցումների, ֆոկուս-խմբերի միջոցով մշտադիտարկման զեկույցներ, հաշվետվություններ, արձանագրություններ:

Դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար ՄՈՒՀ-ում կիրառվում են ՊԴ կազմի գնահատման մի շարք մեխանիզմներ, որոնցից առաջնային են դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների շրջանում կազմակերպվող անանուն հարցումները (տե՛ս https://aspu.am/website/images/website3/որակի%20բաժին/2/Harcumneri%20anckacman%20karg.pdf), դասալսումները, ինչպես ամբիոնի վարիչների, այնպես էլ մասնագիտական հանրության կողմից: Գնահատումը կազմակերպվում է ուսանողների կողմից. դասախոսական կազմի պարբերաբար գնահատման ավանդույթը ՄՈՒՀ-ում գործել է 2012թ-ից, և գնահատումը հիմնականում իրականացվել է «Դասախոսն ուսանողի աչքերով» (տե՛uhttps://drive.google.com/drive/folders/1hAFFUzxTLGuYQHqrbjkeS1k8EzI74FTg) հարցաթերթիկի միջոցով: Կրթական բարեփոխումների ներկա շրջանում այդ ավանդույթը շարունակվել է, մշակվել է նոր հարցաթերթիկ՝ «Ուսանողների կողմից ՊԴ կազմի մասնագիտական և մանկավարժական որակների և առարկայի դասավանդման գնահատման հարցաթերթիկ»: Ուսանողների կողմից դասախոսական կազմի գնահատման մեխանիզմի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ հարցման մեթոդաբանությունը, ընթացակարգը և չափանիշները (հարցաշարը) պարբերաբար լրամշակվել և կատարելագործվել են (2020 2021, 2022): Փոփոխությունները վերաբերում են հարցման արդյունքների քննարկումների կանոնակարգմանը և դրանց արդյունավետ կիրառմանը: Անաչառությունն ապահովելու նպատակով՝ հարցումները և տվյալների մշակումն իրականացվում է կենտրոնացված, հարցման անցկացման պայմանների և արդյունքների վերլուծության միասնական չափանիշների հիման վրա: Հարցման արդյունքները քննարկվում են ամբիոնների, ֆակուլտետների նիստերում, ներկայացվում ռեկտորին: Սպասարկող ֆակուլտետների և ամբիոնների կողմից իրականացվում են գնահատման արդյունքների հիման վրա բացահայտված թերացումների բարելավմանն ուղղված քայլեր: Ընդհանուր առմամբ, դրանք միտված են ուսումնական դասընթացների, դասավանդման,

ուսումնառության և գնահատման կիրառվող մեթոդների, ամբողջական կրթական ծրագրերի և ուսումնական միջավայրի անընդհատ բարելավմանը և կատարելագործմանը:

Ամբիոնի կողմից ուսումնական կիսամյակի սկզբում կիրառվում են արդյունավետ գործիքներ. կազմվում է դասալսումների ժամանակացույց, որին համապատասխան էլ դրանք իրականացվում են ամբիոնի վարիչի, առաջատար դասախոսների կողմից:

Դասալսումների արդյունքում կազմվում է համապատասխան ձևաչափով արձանագրություն, որը պարունակում է առանձին-առանձին տեղեկություններ և գնահատումներ՝ ուսումնառության, դասավանդման, գնահատման բաղադրիչների վերաբերյալ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.4. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Հիմքեր՝

- Պահանջվող որակավորումներին համապատասխան դասավանդողների կոմպետենցիաների շրջանակի ընդլայնումն ապահովող մեթոդները և հիմքերը (Հավելված 5.4.1)
- Դասավանդողների կատարելագործման միջոցառումների պլանները՝ ըստ մեթոդական, մասնագիտական բարեփոխումների ուղղվածությունների (Հավելված 5.4.2)
- Դասավանդողների կատարելագործման միջոցառումների ժամանակացույցը[26]

Պրոֆեսորադասախոսական կազմի կատարելագործումը ենթադրում է որակավորումների, գիտական աշխատանքի և շարունակական մասնագիտական զարգացում: Մերօրյա, արդի պահանջներին համապատասխան մրցունակ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներգրավումը ՄՈՒՀ-ի գիտակրթական գործընթացներին և նրանց շարունակական կատարելագործման հնարավորությունների տրամադրումը բուհի որակյալ կադրային ներուժի ձևավորման կարևորագույն հիմնաքարն է: Վեր հանելով կարիքները, ինչպես նաև հետևելով շարունակական բարելավման գործընթացներին և հիմք ընդունելով ներքին ու արտաքին գնահատումների արդյունքները՝ վերջին երեք տարիներին Համալսարանը հետևողականորեն նպաստել և ձեռնամուխ է եղել վերջինիս դասավանդող անձնակազմի կարողությունների զարգացմանը՝ դասախոսների որակավորման բարձրացման տարբեր կրթագիտական և մասնագիտական ծրագրերի միջոցով: Հիշյալ ծրագրերը մշակվել և ներդրվել են՝ հիմքում ունենալով նախորդ վերապատրաստումների արդյունքների վերլուծությունները, զարգացման ռազմավարական ծրագրի հիմնադրույթները:

Պրոֆեսորդասախոսական անձնակազմի՝ ընդլայնված և գիտակցված ներգրավումը ծրագրերին, կատարելագործումը և մասնագիտական աճը խթանելու նպատակով ՄՈՒՀ-ն իրականացրել է հետևյալ միջոցառումները.

- Պրոֆեսորադասախոսական անձնակազմի օտար լեզվի (անգլերեն) հմտությունների, գիտելիքների լավարկմանը և խորացմանը միտված վերապատրաստումներ,փուլային դասընթացներ՝ հաշվի առնելով դասավանդողների անգլերենի այդժամյան իմացության մակարդակները:
- Մանկավարժամեթոդական վերապատրաստման դասընթաց՝ նպատակաուղղված դասավանդման, ուսումնառության և գնահատման հիմունքների ու մեթոդների իմացության բարելավմանը:
- Նեղ մասնագիտական հիմնախնդիրներով և արդիականությամբ հմտությունների և կարողությունների զարգացմանը միտված բարձր որակավորում ունեցող տեղական և միջազգային մասնագետների մասնակցությամբ վերապատրաստումներ ինչպես առերես այնպես էլ առցանց, հեռավար:

[26] https://aspu.am/hy/page/verapatrastumner/

- Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչների վերապատրաստումներ մի շարք դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում:
- Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների նոր ծրագրերի իմացության շրջանակում:

Վերապատրաստումները միտված են ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերի մշակմանը և վերանայմանը (տե՛ս 15.06.2022թ. թիվ 17-36Ա հրաման), «Կերպարվեստ» մասնագիտական կրթական ծրագրի շրջանակներում բուհի կարողությունների զարգացմանն ու դրա գնահատմանը (տե՛ս պայմանագիր համար 1, 6 հունիսի 2022թ.): Վերապատրաստված կազմը իրականացրել է նաև ՄՈՒՀ-ի ներսում լավագույն փորձի տարածում:

Նպատակ հետապնդելով միավորել ՊԴԱ մանկավարժական, մասնագիտական և հետազոտական կարողությունները՝ անձնակազմի վերապատրաստման ներքին տեղական գործառույթները հանձնարարվել են ՄՈՒՀ-ի գիտահետազոտական կենտրոնին: Մասնագիտական վերապատրաստման գործընթացում ներգրավվել են մեծ մասամբ այլ բուհերի լավագույն մասնագետներ, ինչպես նաև ՄՈՒՀ-ի այն մասնագետները, որոնք առաջավոր փորձի կրողներ են: Վերապատրաստման գործընթացն ընդհանուր առմամբ դրական է գնահատվել շահակիցների կողմից:

Պրոֆեսորադասախոսական կազմի շարունակական մասնագիտական զարգացման և դասավանդման կատարելագործմանը միտված վերապատրաստումների ծրագրերը (տե՛ս https://drive.google.com/drive/folders/1gTkOgu5WNUhgJkaMmyLtt2tMV7889AhD) և դասընթացները հընթացս մշտադիտարկվում, գնահատվում ու բարելավվում են՝ վեր հանելով նաև հետագա վերանայման խնդիրները: ՊԴԱ կատարելագործման գործընթացների արդյունավետությունն արտացոլվում է նաև ժամանակակից նորարական տեղեկատվական տեխնոլոգիաների դասավանդման փոխներգործուն միջոցների կիրառման և մեթոդական պատրաստվածության մակարդակի աճի միտումով, որոնց մասին վկայում են ուսանողների շրջանում ՄԿԾ-ից բավարարվածության վերաբերյալ հարցումները (տե՛ս https://drive.google.com/drive/folders/1hAFFUzxTLGuYQHqrbjkeS1k8EzI74FTg):

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.5. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Հիմքեր՝

- Հիմնական և համատեղությամբ աշխատող պրոֆեսորադասախոսական կազմի ցանկը (նշելով որակավորումները, գիտական աստիճանները և/կամ կոչումները) (Հավելված 5.5.1)
- Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգ (Հավելված 5.5.2)
- Տեղեկություն դասախոսական կազմի մասին (Հավելված 5.5.3)
- ՀՀ ասպիրանտուրայի ընդունելության կարգ (Հավելված 5.5.4)
- Որոշում «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգում փոփոխություններ կատարելու մասին (2018 թվականի դեկտեմբերի 11-ի n 6 - լ)

ՄՈՒՀ–ի առաքելության և նպատակների իրականացման ամբողջական և մասնագիտական ներուժը բարձրակարգ գիտամանկավարժական կազմն է: ՄՈՒՀ-ի դասախոսական կազմը ներառում է 2020-2021 ուստարում՝ 684 դասախոս, 2021-2022 ուստարում՝ 624 դասախոս, 2022-2023 ուստարում՝ 630 դասախոս: Ստորև ներկայացվում են վերջին 3 ուստարիներին դասախոսական կազմի քանակական տվյալներն ըստ տարակարգերի:



Վերլուծությունը խոսում է, որ վերջին տարիներին հարաբերականորեն կայուն են եղել դասախոսական անձնակազմի քանակական և որակական ցուցանիշները, և կայունության միտումները դեռևս պահպանվում են (տե՛ս տեղեկատվություն դասախոսական կազմի վերաբերյալ) :

ՄԿԾ-ի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը հավաստող փաստ է նաև այն, որ տարեցտարի կրճատվում է համատեղող և ժամավճարային կարգավիճակ ունեցող մասնագետների թիվը, որոնք սակայն հրավիրվում են մասնագիտական կրթական ծրագրի նպատակներին ու խնդիրներին նրանց համապատասխանության և աշխատաշուկայում գրված կշռի հաշվարկով:

ՊԴԱ կայունության ապահովման հարցում կարևոր է սերնդափոխության իրականացումը, որին վերջին տարիներին անդրադաձել են նաև ՄՈՒՀ-ի ռեկտորատը և գիտական խորհուրդը նիստերում (տե՛ս ՊԴԱ կայունության ապահովման հարց): ՊԴ կազմի կայունության ապահովման համատեքստում ՄՈՒՀ-ում ՊԴ կազմի զարգացման և կայունության ապահովման գրավական է ամբիոնների շարքերի համալրումը լավագույն շրջանավարտներով՝ ուղղորդելով նրանց հետազոտողի/հայցորդի, ասպիրանտի ԿԾ-ում կրթությունը շարունակելու:

ՄՈՒՀ-ում ասպիրանտուրայի ընդունելությունը կազմակերպվում է առկա/հեռակա ուսուցման ձևերով և հայցորդական համակարգով՝ համաձայն ասպիրանտուրայի և հայցորդության ընդունելության և ուսուցման կանոնակարգի: Մասնագիտական ամբիոնները, ելնելով ՄԿԾ-ների պահանջներից, հայտեր են ներկայացնում ասպիրանտուրայի նպատակային տեղերի համար: ՄՈՒՀ-ում ատենախոսությունների թեմաների հաստատումը ևս իրականացվում է ՄԿԾ-ների և դրանց դասավանդման մեթոդաբանության պահանջների հաշվառմամբ:

Վերջին երեք տարիներին զգալիորեն բարելավվել են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական կարողությունները հատկապես միջազգային շարժունության, պարբերաբար իրականացվող վերապատրաստումների, տեղեկատվական տեխնոլոգիաների համատարած պրոֆեսիոնալ կիրառության շնորհիվ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.6. ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Հիմքեր՝

- Դասախոսական կազմի դինամիկա (Հավելված 5.6.1)
- Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը (Հավելված 5.6.2)
- «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի աշխատողների պարգևատրման, նյութական խրախուսման, հավելավճարների և լրավճարների տրամադրման կանոնակարգ (Հավելված 5.6.3)
- Սկսնակ դասավանդողների խրախուսման և մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը (Հավելված 5.6.4)
- Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական աշխատողների ատեստավորման ներքին կանոնակարգ (Հավելված 5.6.5)

ՄՈՒՀ-ը վարում է հստակ քաղաքականություն պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական առաջընթացի ապահովման գործընթացում: Այն կատարվում է տարբեր ուղղություններով.

- միջազգային շարժունություն ապահովող ծրագրեր (տե՛ս Չափանիշ 9, չափորոշիչ գ)
- որակավորման բարձրացում,
- ուսումնական, գիտական, ուսումնամեթոդական ձեռնարկների, դասագրքերի (կազմում և կառավարության հաստատման ներկայացում) հրատարակում,
- գիտահետազոտական ծրագրերի ֆինանսավորում (տե՛ս https://aspu.am/hy/page/gitakan_kentroni_pastatghter/):

Եվրոպական առաջատար տարբեր համալսարանների հետ շարունակական համագործակցությունը հնարավորություն է ստեղծում որակապես նոր մակարդակով իրականացնել դասավանդման փոխներգործուն մեթոդները՝ ժամանակակից կրթական տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ:

Շարունակական դասալսումները, փոխդասալսումները, ամբիոնային քննարկումները, հաշվետվությունները, ամսական մեկ-երկու անգամ կազմակերպվող ամբիոնային սեմինարները խթան են հանդիսանում դասախոսների մասնագիտական պատրաստվածության աստիճանի մշտական լավարկմանը և կատարելագործմանը:

Կրթական և գիտամանկավարժական գործունեությունը խթանելու նպատակով ՄՈՒՀ-ում դասախոսական կազմը պարբերաբար համալրվում է երիտասարդ ասպիրանտներով, ինչը նպաստում է նրանց դասավարդման փորձի ձևավորմանը, ինչպես նաև հնարավորություն ընձեռում զարգացնել մանկավարժական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունները: ՄՈՒՀ-ի վարած վերոնշյալ քաղաքականությունը երիտասարդ մտահաս կադրերի առաջխաղացման հստակ միտվածություն ունի:

Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կողմից կանոնավոր կերպով կազմակերպվում են էլեկտրոնային կառավարման գործընթացների բարեփոխումների սեմինար-խորհրդատվական աշխատանքներ

Բուհը շարունակում է բայլել ժամանակին համընթաց և օգտվել արդի տեղեկատվական տեխնոլոգիաներից.մասնավորապես՝ Google ընկերության առցանց կրթական ուսուցման հարթակների գործիքներից (Google Classroom, google meet և այլն): Վերջինս իրականացվում է դասախոսական կազմի անմիջական ներգրավվածությամբ , ինչն էլ իր հերթին նպաստում է ոչ միայն, դասավանդողի՝ SS-ով հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայրի իմացության լավարկմանը, այլև ապահովում է մասնագիտական առաջընթաց՝ էլեկտրոնային ուսուցման տեխնոլոգիաների լայնակի կիրառմամբ: Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակների գնահատումն իրականացնելու համար որպես հետադարձ կապի մեխանիզմ հանդես են գալիս դասախոսների վերաբերյալ անցկացրած հարցումները (տե՛ս https://drive.google.com/drive/folders/1vcnAn6lio8U-IG4eKQ0Ti56jjLiD14eB): Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության արդյունավետության մասին են փաստում նաև նախորդ երեք տարիների (2020-2023թթ.) ընթացքում ՄՈՒՀ- ի գիտական խորհրդի կողմից հաստատված գիտական կոչումները [k1] :

Կրթական ծրագրերը սպասարկող ամբիոններում երիտասարդ կադրերը ներգրավված են հետազոտական աշխատանքներում՝ իբրև հայցորդներ և ասպիրանտներ, իսկ ստեղծված բարենպաստ կրթական միջավայրը ավագ և փորձառու դասախոսների կողմից ապահովում է փորձի փոխանցումը սկսնակ աշխատակազմին:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ բուհում վերջին տարիներին աճել է դոցենտների, դոկտորների ու պրոֆեսորների քանակը, և այդ աճի տեսակարար կշռի մեջ ակնհայտ մեծամասնություն են կազմում երիտասարդ մասնագետները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.7. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Հիմքեր՝

- Վարչական աշխատակազմի ցանկը՝ ըստ հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների (Հավելված 5.7.1)
- Ուսումնաօժանդակ աշխատակազմի գործառույթները (Հավելված 5.7.2)

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի (2022-2025) գործողությունների պլանի ռազմավարական 5-րդ ուղղության նպատակն է զարգացնել և արդիականացնել մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը՝ բարելավելով այն, ունենալով առաջընթացի գնահատման ցուցիչներ.

- մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ մոդելի ներդրման փաթեթներ,
- աշխատակազմի տարակարգերի և նկարագրերի առկայություն,
- աշխատակազմի առաջքաշման հստակ կանխատեսելի մեխանիզմներ,
- անձնակազմի վարկանիշավորման կիրառում:

Վերոնշյալ ռազմավարական նպատակների իրականացման համար համալսարանն ունի համապատասխան վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ: ՄՈՒՀ-ը վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի ձևավորումն իրականացնում է համաձայն ՄՈՒՀ-ի կանոնադրության: Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ստորաբաժանումների տեսակները, աշխատատեղերի տարակարգերը և դրանց զբաղեցման վերաբերյալ կանոնակարգերը ծառայում են հիշյալ տարակարգերի աշխատողների կադրային ներուժի արդյունավետ կառավարմանը, կանոնակարգում բնականոն գործունեությունն ապահովման հետ առնչվող այլ գործընթացներ: Բուհի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է կայքէջում:



Վերջին երեք տարիներին Համալսարանում զգալի աշխատանքներ են տարվել վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության բարելավման և զարգացման ուղղությամբ: 2021թ. Համալսարանի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմն անցել է Մալբրի ծրագրի փաստաթղթաշրջանառության վերապատրաստում:

Բուհի վարչակազմում որպես ղեկավարներ՝ ընդգրկվել են միջազգային ծրագրերի, կրթության որակի փորձագետներ, ոլորտի երիտասարդ նորարարական մոտեցմամբ մասնագետներ, որոնք մասնակցել են բազմաթիվ միջազգային ծրագրերի, վերապատրաստումների:

Աշխատակիցների գործառույթները սահմանվում են աշխատատեղերի տարակարգերի զբաղեցման կանոնակարգով, ինչպես նաև համապատասխան ֆակուլտետների կանոնդրությամբ: Անձնակազմի հաշվառման բաժնում առկա են վարչական ստորաբաժանումների աշխատողների

պաշտոնի անձնագրերը, որտեղ ամրագրված են աշխատողի պարտականությունները, ներկայացվող գիտելիքների և կարողությունների պահանջները, որոնք հաստատված են ՄՈՒՀ-ի ռեկտորի կողմից:

Անձնակազմի վարկանիշավորման կիրառման գնահատման նպատակով Համալսարանի գիտական խորհուրդում ուսումնասիրվել են մի շարք մոդելներ: Գործընթացին տրվում է փուլային լուծում:

Վերջին երեք տարիների կտրվածքով բարելավվել է նաև վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության նյութատեխնիկական բազան: Աշխատակազմի որակի ապահովման մեխանիզմներից է ռեկտորին ներկայացվող հաշվետվությունների վերլուծությունը:

ՄՈՒՀ-ի գործունեության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները՝ ըստ 5-րդ չափանիշի

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
ՄՈՒՀ-ն ունի արհեստավարժ, բարձր որակավորում և գիտահետազոտական գործունեություն ծավալող ՊԴԱ ներուժ:	ՄՈՒՀ-ում դեռևս պլանավորման փուլում են ՊԴԱ ինքնագնահատման, գործընկերային գնահատման, վարկանիշավորման համակարգերը, ըստ այդմ էլ բացակայում են նաև տարբերակված վարձատրության մեխանիզմները :
ՄՈՒՀ-ում առկա են պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական որակավորման բարձրացման հստակ պահանջներ:	Ոչ բավարար ֆինանսական միջոցները կարող են սահմանափակել ՊԴԱ և ուսումնաօժանդակ կազմի շարունակական որակավորման հնարավորությունները:
ՄՈՒՀ-ում առկա է ՊԴԱ և ուսումնաօժանդակ կազմի գնահատման կանոնակարգված համակարգ:	ՄՈՒՀ-ում առկա չեն վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական և այլ աշխատողների որակավորման համակարգված ծրագրեր:
ՄՈՒՀ-ում գործում են ուսումնաօժանդակ և վարչական աշխատակիցների գործառույթների հստակ ամրագրման պաշտոնի անձնագրեր:	Ուսումնաօժանդակ այլ անձնակազմերի երբեմն ոչ արդյունավետ և անբավարար համաձայնեցված աշխատանքը կարող է դանդաղեցնել պլանավորված նպատակների իրագործումը:
Հնարավորությունները	**Վտանգները**
ՄՈՒՀ-ը հնարավորություն ունի գործընկեր հաստատությունների հետ մշակել ծրագրեր և մեխանիզմներ, որն առավել գրավիչ կդարձնի ՄՈՒՀ-ը միջազգային մասնագետների համար, ինչը կարող է հանգեցնել կադրերի և կրթական ծրագրերի բարելավմանը:	Ոչ բավարար ֆինանսական միջոցները կարող են սահմանափակել ՄՈՒՀ-ի կարողությունները՝ ներգրավելու և պահպանելու որակյալ կադրային ռեսուրսներ:
ՄՈՒՀ-ը, օգտագործելով գործընկեր հաստատությունների ռեսուրսները, կարող է հնարավորություն ունենալ ներգրավելու արտաքին դրամաշնորհային միջոցներ՝	ՊԴԱ մասնագիտական որակների նկատմամբ պահանջների շարունակական փոփոխությունները երբեմն կարող են նպաստել փորձառու կադրերի արտահոսքին:

կադրերի որակավորման բարձրացման աջակցման համար :	
ՄՈՒՀ-ը կարող է օպտիմալացնել վարչարարական գործընթացները և մեծացնել տարբեր ենթակառույցների փոխգործակցման կոորդինացումը՝ ռազմավարական նպատակներին առավել արդյունավետ հասնելու համար:	Սոցիալական երաշխիքների ոչ բավարար մակարդակը կարող է հանգեցնել ՊԴԱ երիտասարդ կադրերի ներգրավվածության ցածր մակարդակի:
	Երբեմն ՊԴԱ որոշ ներկայացուցիչներ դիմադրում են աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին, որը խոչընդոտում է վերջիններիս ակտիվ մասնակցությունը մասնագիտական զարգացման ծրագրերին:

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները

- ՊԴԱ ինքնագնահատման, գործընկերային գնահատման, վարկանիշավորման համակարգերի վերանայում և ամբողջացում
- Ֆինանսական միջոցների ներդրում ՊԴԱ և ուսումնաօժանդակ կազմի շարունակական որակավորման ապահովման համար
- Վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական և այլ աշխատողների որակավորման համակարգված ծրագրերի մշակում և կիրառում
- Ֆինանսական միջոցների ներդրմամբ՝ ՄՈՒՀ-ի կարողությունների լավարկում ներգրավելու և պահպանելու որակյալ կադրային ռեսուրսներին
- Առաջիկա տարիներին ՊԴԱ կազմի սոցիալական երաշխիքների բարելավում:
- Ըստ կատարողական ցուցիչների՝ ՊԴԱ վարձատրության տարբերակված համակարգի մշակում և ներդնում:

ՉԱՓԱՆԻՇ 6: ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-Ն ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԿԱՊՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԵՏ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.1. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Հիմքեր՝

- Հետազոտությունների ռազմավարությունը և [27]ուղղությունները
- Հաստատության ռազմավարության և հետազոտությունների ուղղությունների միջև կապն արտացոլող փաստաթուղթը (Հավելված 6.1.1)
- Հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման մեխանիզմները[28]

Հետազոտական ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրություններն ու հավակնությունները արտացոլված են Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրում (2020 - 2025 թթ.) (տե՛ս https://aspu.am/website/images/files/Razmavarakan%20cragir_2020-2025.pdf): Մասնավորապես, նշված ծրագրի արդյունավետության վերլուծության համար պարբերաբար իրականացվում են ուսումնասիրություններ (տե՛ս https://aspu.am/hy/page/hashvetvutyunner/): Ուսումնասիրության արդյունքները քննարկվել են ՄՈՒՀ-ի 2023 թվականի փետրվարի 17-ի գիտական խորհրդի N6 նիստում(տե՛ս https://drive.google.com/drive/folders/1czeddiHqzrCK2dDuFklVNVRN5PSpGPHc):

«Լավարկել համալսարանում գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության ցուցանիշները» նպատակի շրջանակներում առանձնացվել են հետևյալ առանցքային գնահատման ցուցիչները:

- Շահակիցների կարիքների վերաբերյալ իրականացված հարցումների հիման վրա վերլուծություններ և առաջարկությունների փաթեթներ, դրանց մասին քննարկման փաստական տվյալներ՝ արձանագրություններ, որոշումներ:
  Արդյունավետության գնահատման այս ցուցիչը հավաստող փաստերն արտացոլված են ՄՈՒՀ-ի գիտական խորհրդի 2023 թվականի փետրվարի 17-ի գիտական խորհրդի N6 նիստի ընթացքում ներկայացված զեկույցում, որտեղ հստակ ամրագրված է գիտահետազոտական ուղղության զարգացման վերաբերյալ առաջարկների փաթեթը
- Վերանայված ուսումնական պլանների առկայություն, ըստ ՊԻԳԲ (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում) շրջափուլի փաստական տվյալներ:
  Նշված վերջնարդյունքին հասնելու համար ներկայումս կատարված վերլուծությունների հիման վրա կատարվել են ՄԿԾ-ների համապատասխան փոփոխությունների առաջարկներ, որոնք առաջիկայում նախատեսվում է ներկայացնել գիտական խորհրդի հաստատմանը: Առաջարկվել է կրթական վերջնարդյունքներում զգալիորեն ավելացնել հետազոտական բաղադրիչը՝ դրան համապատասխան դասընթացների հստակ վերանայման տրամաբանությամբ: Մասնավորապես, բոլոր մանկավարժական և այլ մասնագիտությունների համար մագիստրոսի կրթական ծրագրերում ներդրված է Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն դասընթացը, իսկ *հոգեբանություն* մասնագիտության մագիստրոսական կրթական ծրագրում նաև «Հոգեբանական հետազոտությունների մեթոդաբանություն» դասընթացը:
  - Գերակա ուղղությամբ յուրաքանչյուր տարում առնվազն 300 գիտական հոդված միջազգային և հանրապետական գիտաչափական շտեմարաններում ընդգրկված գիտական ամսագրերում, հինգ մենագրություն կամ ձեռնարկ:

  Արդյունավետության գնահատման այս ցուցիչը հավաստող փաստերը նույնպես արտացոլված են ՄՈՒՀ-ի գիտական խորհրդի վերոնշյալ զեկույցում: Մասնավորապես,

[27] https://aspu.am/hy/page/tsragrer/
[28] https://aspu.am/hy/page/gitakan_khorhurd/

նշված զեկույցից բխում է, որ հատկապես վերջին տարիներին շեշտակիորեն աճել են ՄՈՒՀ-ի աշխատակիցների միջազգային հրապարակումներն ու գիտաչափական շտեմարաններում հղման ինդեքսը։

Թերևս անհրաժեշտություն կա մշակելու և ներդնելու ՄՈՒՀ--ում իրականացվող գիտական թեմաների ազդեցության գնահատման համար որակական ցուցանիշներ, որը նույնպես պլանավորված է ՌԾ-ում։ Միևնույն ժամանակ, ՀՀ ԿԳՄՍ ԳՊԿ-ն կատարել է փոփոխություններ, որոնք նախատեսում են գիտական ծրագրերի արդյունավետության ցուցիչներ, չնայած թեմաների ներքին գնահատումը ըստ որակական ցուցիչների նույնպես արդի հրամայականներից է։ Համալսարանի գիտական առաջնահերթություն ներկայացնող արդիական թեմաներով պաշտպանված և ներդրված ատենախոսությունների տարեկան առնվազն 2 տոկոս աճ կա։

Որակական տեսանկյունից զգալիորեն խստացվել են ատենախոսությունների գիտականության, հետազոտության չափելիության, դրանց ոլորտային համապատասխանության ընթացակարգային չափանիշները, որոնք սկսել են կիրառվել Համալսարանի մասնագիտական ամբիոններում, ատենախոսության նախնական քննարկումների ընթացքում։

- Հաշվետու ժամանակաշրջանում, ժամանակակից չափանիշներին համապատասխան, առնվազն մեկ գիտական նոր լաբորատորիայի ստեղծում և գործարկում։

Նշված վերջնարդյունքին հասնելուն միտված Նորարարությունների մրցակցային հիմնադրամի համակարգող խորհրդի 08,06,2023թ. նիստի արդյունքում որոշում է կայացվել կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում վարկային ծրագրի շրջանակներում ֆինանսավորել ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված բնագիտություն, ԲՏՃՄ ոլորտի գերազանցության կենտրոնի հիմնադրումը և ապագա ու ներկա ուսուցիչների կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագիրը. Վերջինս միտված է նշված ոլորտի գերժամանակակից լաբորատորիաների հիմնադրմանը՝ ուսուցման գործընթացում դրանց կիրառման հեռանկարային նպատակով.

- Միջազգային և հանրապետական գիտական ֆորումներ՝ յուրաքաչյուր երեք տարին մեկ միջազգային և տասը հանրապետական։

  ՄՈՒՀ-ի կազմակերպած գիտաժողովների և գիտական միջոցառումների քանակական և որակական վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա է զգալի դրական շարժընթաց նմանօրինակ միջոցառումների կազմակերպման առումով։ Այսպես, եթե 2020թ-ին կազմակերպվել է ընդամենը 4, ապա 2021թ-ին արդեն կազմակերպվել է 17, իսկ 2022թ-ին՝ 19 գիտաժողով։ Իհարկե, այդ թվաքանակի աճը մեծապես պայմանավորված է նաև օբյեկտիվ պայմաններով՝ պատերազմ, համավարակ և այլն։ Ընդ որում, 2020թ. կազմակերպվել է 4, 2021թ-ին՝ 7, իսկ 2022թ-ին՝ 5 միջազգային գիտաժողով։ Թերևս հատկանշական է, որ 2022թ-ից սկսել են ակտիվանալ ուսանողական գիտաժողովներն ու գիտական այլ միջոցառումները։

- Հինգ տարվա ընթացքում առնվազն հինգ մեթոդական ձեռնարկների, մեթոդական ուղեցույցերի ներդրում դպրոցի մանկավարժական գործընթացում

2019-2023թթ. ընթացքում գիտական խորհրդում հրապարակման երաշխավորված մեթոդական ձեռնարկներ, գիտաժողովի նյութերի ժողովածուներ և մենագրություններ

N	Տարեթիվ	մեթոդական ձեռնարկներ, գիտաժողովի նյութերի ժողովածուներ և մենագրություններ
1.	2019թ.	13
2.	2020թ	10
3.	2021թ.	13
4.	2022թ.	16

5.	2023թ.հունվար - հուլիս	5

Նշված հրապարակման նյութերը առավելապես միտված են եղել մանկավարժական գործընթացում կիրառության համար:

«Նպաստել համալսարանում գիտական հրատարակչական գործունեության արդյունավետության բարձրացմանը և գիտահետազոտական աշխատանքների միջազգայնացմանը» *նպատակի շրջանակներում առանձնացվել են հետևյալ առանցքային գնահատման ցուցիչները:*

- Նոր գիտական պարբերականների ներգրավում միջազգային Scopus, WoS և այլ գիտաչափական շտեմարաններում
- Միջազգային շտեմարաններում ընդգրկված պարբերականներում ՊԴԱ-ի, երիտասարդ գիտնականների, հետազոտողների (պրոֆեսորադասախոսական անձնակազմ) հետազոտությունների հրատարկման տարեկան առնվազն երեք տոկոս աճ
- ՊԴԱ-ի, երիտասարդ գիտնականների, հետազոտողների գիտական գործունեության գնահատման և վարկանիշավորման ընթացակարգի առկայություն և կիրառման վերաբերյալ փաստական տվյալներ
- Միջազգային և ներպետական գիտական կառույցների հետ համագործակցային առնվազն երեք գործող պայմանագրի առկայություն:

  ՄՈՒՀ-ի գիտահրատարակչական գործունեության ուսումնասիրության արդյունքները արտահայտված են ՄՈՒՀ-ի գիտական խորհրդի զեկույցում, ռեկտորի ամենամյա հաշվետվություններում, ռեկտորատի նիստերի պարբերական քննարկումների արձանագրություններում և այլ պաշտոնական փաստաթղթերում:

Զգալիորեն աճել է տեղական և արտասահմանյան գիտահետազոտական կազմակերպությունների հետ համագործակցությունը (տե՛ս https://docs.google.com/spreadsheets/d/1F5IhJT0YEjEgshTUWaPRGw-pi8_0In6A/edit#gid=717363140):

«Նպաստել համալսարանում գիտական կադրերի պատրաստմանը և շարունակական վերապատրաստմանը» *նպատակի շրջանակներում առանձնացվել են հետևյալ առանցքային գնահատման ցուցիչները.*

- Համալսարանի գիտամանկավարժական կադրերի որակավորման բարձրացման տարեկան առնվազն 20 տոկոս աճ
- Համալսարանում գիտամանկավարժական կադրերի որակավորման բարձրացման, կարիքների վերհանման և մշտադիտարկման էլեկտրոնային համակարգի աշխատանքի վերաբերյալ վերլուծություններ տարեկան կտրվածքով
- Արտաքին գործընկերների հետ համատեղ վերապատրաստման և որակավորման բարձրացման առնվազն երեք նոր ծրագրերի առկայություն
- Սփյուռքահայ և օտարազգի գիտնականների, հետազոտողների վերապատրաստման գործող ծրագրերի աճ և մասնակիցների թվաքանակի ավելացում

Գծապատկերում ներկայացված քանանական տվյալներից ակնհայտորեն երևում է, որ 2022թ. շեշտակիորեն աճել է ՄՈՒՀ-ում վերապատրաստված դասախոսների քանակը: Տվյալների խորքային վերլուծությունը ցույց տվեց, որ դա հիմնականում տեղի է ունեցել բոլոր ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական կրթական ծրագրերի, առարկայական նկարագրերի որակի բարձրացմանն ուղղված մանկավարժամեթոդական վերապատրաստումների հաշվին, որոնց ընդհանուր առմամբ մասնակցել է 382 դասախոս (տե՛ս https://drive.google.com/drive/folders/1jP2XbCqZ42GEfi4ZQWERmMzLZfoT7Kp7): Կազմակերպված վերապատրաստմանը հաջորդել են էլեկտրոնային հարթակում հարցումներ՝ պարզելու համար ՊԴԱ կարիքները, վերաբերմունքը գործընթացի նկատմամբ և նրանց բավարարվածության մակարդակը: Յուրաքանչյուր տարվա կտրվածքով կատարվել են վերլուծություններ: 2019-2021թթ. վերապատրաստումներում զգալի կշիռ են կազմել ՊԴԱ օտար լեզվի և միջազգային մասնագետների ներգրավմամբ դասընթացները:

«Աջակցել մտավոր գործունեության արդյունքների փոխանցմանը և առաջանցիկ փորձի տարածմանը» *նպատակի շրջանակներում առանձնացվել են հետևյալ առանցքային գնահատման ցուցիչները.*

- Համալսարանի ՊԴԱ-ի, երիտասարդ գիտնականների, հետազոտողների հեղինակային և հարակից այլ իրավունքներով պաշտպանված գիտական մտքի, թեմաների տարեկան աճ
- Համալսարանում ՊԴԱ-ի, երիտասարդ գիտնականների, հետազոտողների գիտական միջազգային ծրագրերի տարեկան երկու տոկոս աճ (տե՛ս https://docs.google.com/spreadsheets/d/19pVBJyHtdZm0duFEzhgRUf_qfEpUfKiI/edit#gid=1493716768)
- Համալսարանի աշխատողների գիտական գործունեության արդյունքների ապրանքայնացման որոշակի աճ (տե՛ս https://docs.google.com/document/d/1Slc-bxNhihlFt8Bk2OX_8jPossc4PTAV/edit#heading=h.gjdgxs):

ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.2. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Հիմքեր՝

- Միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերը (Հավելված 6.2.1)
- Հետազոտությունների մեթոդաբանությունն ու հրապարակումներին ներկայացվող պահանջները[29]

[29] https://aspu.am/hy/page/gitakan_handesner/

ՄՈՒՀ-ում գիտահետազոտական հետաքրքրություններն ու հավակնությունները ձևավորվել են ըստ բուհի ռազմավարական ծրագրի դրույթների: Բացի այդ, մշակվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման ռազմավարական գործողությունների կատարման պլանը (2020-2025թթ.): Միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերը նպատակ ունեն լուծել կոնկրետ գիտական խնդիրներ՝ մոտակա 3 և 1 տարիների համար: Միաժամանակ, նմանատիպ միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր են կազմվում տարբեր տեսակի և՛ հանրապետական, և՛ միջազգային մրցույթների ներկայացնելու համար:

Համալսարանի հետաքրքրությունները և հավակնությունները հետազոտության ոլորտում արտահայտող կարճաժամկետ (1-2 տարվա) ծրագրերը բխում են միջնաժամկետ ծրագրերից, կազմվում են ամբիոններում, ինստիտուտներում, կենտրոններում և լաբորատորիաներում գործող գիտական բազային կամ թեմատիկ խմբերում և ֆինանսավորվում են հիմնականում Գիտության կոմիտեի, ինչպես նաև միջազգային դրամաշնորհների կողմից:

ՄՈՒՀ-ն ունի հետազոտական աշխատանքի իրականացման տարբեր մակարդակի կարճաժամկետ, միջնաժամկետ ծրագրեր:

- ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող ծրագրեր, ինչպես նաև յուրաքանչյուր տարի լրացվում են մոտակա մի քանի տարիների համար ՄՈՒՀ-ի միջնաժամկետ ծրագրեր:
- Յուրաքանչյուր ամբիոն իր գործունեության համար ստեղծել է ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ ծրագրեր:
- Համալսարանի ֆակուլտետային և համահամալսարական ամբիոններում գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքներն իրականացվում են 5 ուղղություններով՝ երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ ձևաչափերով:

Ներկայացնենք ՄՈՒՀ-ում նմանատիպ ծրագրերի շարժընթացը վերջին մի շարք տարիների ընթացքում:



Ինչպես տեսնում ենք, տեղի է ունեցել բազային ֆինանսավորման ծրագրերի քանակի նվազում, սակայն դա պայմանավորված է առավելապես ծրագրերի միջդիսցիպլինար կողմի ուժեղացմամբ և լաբորատորիաների ու գիտական կենտրոնների խոշորացմամբ: Դա, ըստ էության, ժամանակի պահանջն է և սահմանված է ՄՈՒՀ-ի ՌԾ-ով: Այս դինամիկայի դրական կողմի մասին է վկայում նաև ֆինանսավորման չափի դինամիկան ըստ տարիների:



ՀՀ գիտության կոմիտեի կողմից թեմատիկ ֆինանսավորվող ծրագրերի քանակն ըստ տարիների



2022թ. ՀՀ ԿԳՄՍ գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող բազային ծրագրերն են.

1. Էկոլոգիական մոնիտորինգի և գնահատման գիտական լաբորատորիա
2. Քվանտային էլեկտրոնիկայի և ինտեգրալային օպտիկայի նոր նյութերի լաբորատորիա
3. Փոխակերպական հասարակության հիմնախդիրները. մեթոդաբանական և մեթոդական տեսանկյուններ
4. Կենսաբանական ակտիվ միացությունների ուսումնասիրման և կենսաանվտանգության գիտական լաբորատորիա
5. «Շախմատ» ԳՀԻ
6. Լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիա:

2023թ-ին, նկատի ունենալով միջդիսցիպլինար հետազոտությունների, փորձի փոխանակման, մասնագետներին ներկայացվող պահանջների, կրթության համակարգի հետ ինտեգրացիայի արդի հրամայականները, տեղի է ունեցել նշված ծրագրերի խոշորացում և թիրախավորում, ինչի արդյունքում ֆինանսավորման են արժանացել հետևյալ երեք ծրագրերը, մինչդեռ հատկացվող նյութական ռեսուրսների քանակը աճել է:

«Շախմատ» ԳՀԻ ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» (տե՛ս http://chesstudy.com/?lang=hy),

Բնագիտական հետազոտությունների ինստիտուտի պահպանում ու զարգացում (տե՛ս https://aspu.am/hy/page/gitakan_laboratorianer/)

«Փոխակերպական հասարակության հիմնախնդիրները. մեթոդաբանական, պատմագիտական և լեզվաբանական տեսանկյուններ» ԳՀԻ (տե՛ս https://aspu.am/hy/page/pokhakerpvogh_hasarakutyunum_sovoroghneri_hogebanakan_anvtangutyan_apahovman_hamakargi_mshakman/):

ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.3. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Հիմքեր՝

- Որակյալ հետազոտությունների իրականացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու մեխանիզմները (Հավելված 6.3.1)
- Հետազոտության և զարգացման համար հատկացված բյուջեն՝ արտահայտված տոկոսներով (վերջին 3 տարվա համար) (Հավելված 6.3.2)
- Բյուջեի բաշխման քաղաքականությունը և ընթացակարգերը (Հավելված 6.3.3)
- Երիտասարդ աշխատակազմի հետազոտական գործունեությունը խրախուսելու քաղաքականությունն ու ընթացակարգերը (Հավելված 6.3.4)
- Ակադեմիական ազնվությունը (օբյեկտիվություն) երաշխավորող և գրագողությունը կանխարգելող միջոցների քաղաքականությունն ու ընթացակարգերը (Հավելված 6.3.5)

Գիտահետազոտական կենտրոնի կողմից շարունակվում են հրատարակվել մի շարք կանոնակարգեր և նորմատիվային ակտեր, որոնք միտված են կանոնակարգելու գիտնականի գործունեությունը և ստեղծելու նպաստավոր պայմաններ մտավոր ներուժի պահպանման և զարգացման համար: Ստեղծվել են մշտադիտարկման մեխանիզմների մի շարք մոդելներ: Ավանդույթ է դարձել գիտահետազոտական կենտրոնի կողմից նորմատիվային տարբեր տեղեկատուների հրապարակումը:

ՄՈՒՀ-ում ապահովված է հետազոտությունների իրականացման և զարգացման գործընթացների իրավական հիմքը, մշակվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման ռազմավարական ծրագիրը (2020-2025թթ.) Գիտահետազոտական կենտրոնի կանոնադրությունը (տե՛ս https://aspu.am/website/images/files/Gitahetazotakan%20kentroni%20kanonakarg%202016.pdf), Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի սկսնակ աշխատակազմի հետազոտական գործունեությունը և միջազգային հետազոտությունների իրականացումը խրախուսելու քաղաքականությունը (տե՛ս https://aspu.am/website/images/files/c40f2864.pdf), Ցիտման նորմերի և գրագողության մասին կանոնակարգը, Գրագողության դեպքերի վերհանման և կանխարգելման ուղենիշները (տե՛ս https://aspu.am/website/images/files/8c9ef993.pdf):

Հետազոտությունների նպաստող քաղաքականության ու ընթացակարգերի շարքից են Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգը (տե՛ս https://drive.google.com/file/d/1UHQVtGDN21wmM6m81Dw-m-veVBU7iEFC/view?pli=1), Գիտական աստիճաններ շնորհող խորհրդի աշխատանքի կանոնակարգը, Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգը (տե՛ս https://drive.google.com/file/d/1PsBDIDK6lfmJ3YeFjvNjPbJgnyoXQOMw/view?pli=1) և Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգը(տե՛ս https://drive.google.com/file/d/1Yrqu1Sjl_ikUO91N0qw80XupTFm0YKtC/view?pli=1), Հայաստանի Հանրապետության գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին օրենքը (տե՛ս https://drive.google.com/file/d/1AR4mVf0XFMVcmT-fHha6eWWGzKmIwcvZ/view?pli=1):

ՄՈՒՀ-ի մանկավարժական և այլ մասնագիտությունների մագիստրոսական ՄԿԾ-ներում մանկավարժության համահամալսարանական ամբիոնի կողմից ներդրվել է «Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն» դասընթացը, որի բովանդակության մեջ ընդգրկված է «Հետազոտողի ակադեմիական ազնվությունը: Հակապլագիատային ծրագրեր» թեման:

Ակադեմիական բարեվարքության և հեղինակային իրավունքների պահպանման հիմնախնդիրներին վերաբերող թեմաներ, համապատասխան կարողություններ և արժեքներ ձևավորելուն ուղղված գործնական պարապմունքներ ընդգրկված են նաև «Մեդիագրագիտություն» դասընթացի բովանդակության մեջ (տես՝ մանկավարժության ամբիոնի «Մեդիագրագտություն» դասընթացի թեմատիկ տրոհում)։

2023թ. ՄՈՒՀ-ի բակալավրի և մագիստրատուրայի ուսանողների հետ կազմակերպված հարցման ընթացքում վերջիններս բավականին բարձր են գնահատել հետազոտության համար տարբեր ուղեցույցների և համապատասխանաբար կարգերի դերն ու ազդեցությունը հետազոտության իրականացման համար։ Միևնույն ժամանակ, նոր պահանջներին համապատասխան միջազգային ինդեքսավորման համակարգերում ընդգրկված պարբերականներում հրապարակումների աճին ուղղված ՄՈՒՀ-ի քաղաքականությունը առաջ է բերել նաև ակադեմիական ազնվության ապահովման և պահպանման մուլտիպլիկացիոն էֆեկտ, քանզի նման հրապարակումներն արդեն իսկ միտված են գրագողության կանխմանն ու հաղթահարման և զինված են դրա համար անհրաժեշտ գործիքակազմով։

Գիտական գործունեության շրջանակներում ՄՈՒՀ-ն հստակ քաղաքականություն է որդեգրել նաև թեմատիկ ֆինանսավորվող ծրագրերի որակական ու քանակական զարգացման ուղղությամբ։ 2022թ. Խ. Աբովյանի անվան ՄՈՒՀ-ում ՀՀ գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվել են 6 թեմատիկ ծրագրեր, որոնք գործելու են մինչև 2024-2025թթ..:

ՄՈՒՀ-ի ղեկավարության ուշադրության կենտրոնում է ոչ միայն գիտության կոմիտեի կողմից հայտարարվող տարաբնույթ մրցույթները, այլ նաև այլ գերատեսչությունների կողմից ներկայացվող դրամաշնորհային գիտական ծրագրերը։ 2022-2023թթ. ընթացքում գիտահետազոտական կենտրոնի կողմից ֆակուլտետներ և համահամալսարանական ամբիոններ են ուղարկվել նմանատիպ հայտեր։

Բացի բազային և թեմատիկ ծրագրերից, մեծ կարևորություն է տրվում նաև նպատակային գիտական ծրագրերին։ Արդեն աշխատանքներ են տարվում նմանատիպ լաբորատորիաների գործարկման ուղղությամբ, որոնք նպատակամետ են լուծելու կոնկրետ խնդիրներ՝ շահառու գերատեսչությունների պատվերով կամ համաձայնությամբ։ Ներկայացվել են հայտեր հետևյալ թեմաներով.

- Հիմնական դպրոցի սովորողների կարողունակությունների գնահատման և զարգացման հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները
- Պատմամշակութային գործընթացները Սևանի ավազանում մ.թ.ա. III-I հազարամյակներում
- Հայաստանում և Սփյուռքում պատմության ուսուցման հիմնախնդիրների հետազոտության գիտական կենտրոն։

ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.4. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը։

Հիմքեր՝

- Միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածությունը խրախուսող կանոնակարգերը (Հավելված 6.4.1)
- Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների կարգավորումը (Հավելված 6.4.2)
- Միջազգային (ԱՊՀ և օտարերկրյա) գրախոսվող ամսագրերում հրապարակումների ցանկը վերջին 3 տարվա համար (Հավելված 6.4.3)

Գիտահետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացների խթանումը, Եվրոպական գիտական, հետազոտական տարածքին Համալսարանի ինտեգրման ապահովումը ՄՈՒՀ-ի ռազմավարական առաջնահերթություններից է։ ՄՈՒՀ-ում հետազոտական

գործունեության միջազգայնացումը սահմանվել է որպես յուրաքանչյուր ֆակուլտետի, ամբիոնի գիտակրթական գործունեության գերակայություն:

ՄՈՒՀ-ը խթանում է գիտական համագործակցությունը գործընկեր արտասահմանյան մասնագիտական առաջատար համալսարանների հետ, աջակցում գիտամանկավարժական կազմի և ասպիրանտների ընդգրկմանը տարբեր միջազգային գիտական նախագծերում, ՄՈՒՀ-ի միջազգային բաժնի ֆակուլտետների և ամբիոնների հետ ապահովում տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն միջազգային հետազոտական ծրագրերի որոնման ու հայտերի մշակման համար:

ՄՈՒՀ-ի բյուջեում առանձին տողով ներկայացված են հրապարակումներին հատկացվող ֆինանսական միջոցները, ինչը նույնպես զգալի ազդեցություն է գործում միջազգային հրապարակումների քանակական ու որակական աճի վրա: Միջազգային հրապարակումների բարելավմանը զգալիորեն նպաստել է նաև ՀՀ ԿԳՄՍ ԳՊԿ-ի կողմից վերջին տարիներին ներդրված գիտական կադրերի ատեստավորման և գիտական գործունեության արդյունավետության բարձրացմանը միտված քաղաքականությունը: Արժևորվում է նաև ՄՈՒՀ-ում օտար լեզվով հանդեսների հրապարակումը ՄՈՒՀ-ի ֆինանսական օժանդակության միջոցով: Ընդ որում, հրատարակվող հոդվածները մանրամասն քննարկվում են և հավանության արժանանում համապատասխան ամբիոններում, իսկ երբ հոդվածը հանձնվում է պարբերականի խորհուրդ, ապա գրախոսման է ենթարկվում գործընկեր գիտական հաստատությունների մասնագետների կողմից, որը հոդվածի գիտականության մակարդակը ավելի բարձր աստիճանի է հասցնում: Բուհը մեծ ուշադրություն է դարձնում նաև երիտասարդ գիտնականների մասնագիտական աճին: ՄՈՒՀ-ի միջազգային հետազոտության ակնհայտ օբյեկտիվ վկայություն է համաշխարհային ամենաբարձր վարկանիշային համակարգերում հրապարակումների աճի դինամիկայի տվյալները, հղումների տվյալները ըստ Web of Science (Clarivate) շտեմարանի:





Հետազոտության միջազգայնացման և ուսումնական գործընթացի հետ հետազոտությունների փոխկապակցման օրինակ կարող է ծառայել «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի գործունեությունը: Սկսած 2021թ.ից ինստիտուտում

ավանդույթ է դարձել միջազգային գիտաժողովների կազմակերպումը, որին մասնակցել է 90-ից ավել երկրների շուրջ 500 ներկայացուցիչ: Գիտաժողովները կազմակերպվել են անգլերեն, իսպաներեն, ռուսերեն լեզուներով:

Գիտաժողովի հիմնական ուղղություններն էին շախմատի սոցիալ-հոգեբանական ասպեկտները, շախմատի ուսուցման և դասավանդման մեթոդաբանությունը, շախմատի և մանկավարժական վերապատրաստման խնդիրները, ներառական կրթությունը, գենդերային կրթության հիմնախնդիրները: Գիտաժողովի ընթացքում իրենց ելույթներով հանդես են եկել շախմատի համաշխարհային այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք են՝ ՖԻԴԵ նախագահ Արկադի Դվորկովիչը, Շախմատի աշխարհի 14-րդ չեմպիոն Վլադիմիր Կրամնիկը, 15-րդ չեմպիոն Վիշվանաթան Անանդը և այլք:

Երկօրյա գիտաժողովի ամբողջական տեսանյութը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.youtube.com/watch?v=uWw2z7Sg4B8:





ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.5. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Հիմքեր՝

- Հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի հետ փոխկապակցելուն ուղղված քաղաքականությունը, ընթացակարգերը և մեթոդները (Հավելված 6.5.1)
- Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության արդյունավետությունը արտահայտող այլ հիմքեր և վերլուծություններ[30]
- Գործընթացի բարելավմանն ուղղված միջոցառումներ (Հավելված 6.5.2)

[30] https://aspu.am/hy/page/gitakan_kentroni_pastatghter/

- Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցումը արտահայտող հիմքեր (գիտական աշխատանքներ ուսանողների մասնակցությամբ)[31]

Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Ուսումնառողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	66
Դասավանդողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	75
Գործատուների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	85

ՄՈՒՀ-ում ուշադրության կենտրոնում է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացների փոխկապակցման մեխանիզմների արդյունավետության բարձրացումը, որը բուհը որդեգրել է որպես որակի ներքին ապահովման քաղաքականության սկզբունք (տե՛ս Որակի ներքին ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը, https://aspu.am/website/images/website3/որակի%20բաժին/Փաստաթղթեր/Ուղենիշները%20հայեցակարգ.pdf): ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական համակազմը, համագործակցելով ՄՈՒՀ-ի ուսանողների հետ, որպես գիտատար գիտելիք, ապահովում է հետազոտության ինտեգրումը դասավանդման և ուսուցառման գործընթացում և խթանում հետազոտական ուսուցումը:

ՄՈՒՀ-ում ուսումնական և գիտահետազոտական աշխատանքները փոխկապակցելուն ուղղված ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ: Մասնավորապես, բոլոր մանկավարժական ՄԿԾ-ների վերանայման արդյունքում ավելացել է ՈԱՇ-ի 7-րդ աստիճանում հետազոտական բաղադրիչը, կրթական վերջնարդյունքներում հատկորոշվել են հետազոտական կարողություններին միտված վերջնարդյունքները: ՄԿԾ-ների մասնակի բարելավման արդյունքում ներդրվել է «Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն» դասընթացը մագիստրատուրի ուսումնառողների համար: Մագիստրոսական թեզերի հետազոտությունների արդյունքները որոշ մասնագիտությունների պարագայում զեկուցվել են *ուսանող-դասախոս* համատեղ գիտաժողովում, որոնց նյութերը հրապարակվել են գիտական խորհրդի երաշխավորությամբ:
https://aspu.am/hy/content/mankavarzhutyan_ardi_himnakhndirnery_usanogh-dasakhos_hamategh_gitazhoghovum/#sthash.fIhDWMPM.dpbs,

2023 թվականին Մանկավարժության համահամալսարանական ամբիոնի կողմից կազմակերպվել է «Ուսյալ ազգի վկայագրեր» խորագրով *ուսանող-դասախոս* նախագծային աշխատանքների համահամալսարանական մրցույթը, որին մասնակցել են բուհի 8 ֆակուլտետի 100 ուսանող և 27 դասախոս: Նշված միջոցառման նպատակը մանկավարժության պատմության ոլորտում գիտելիքների հարստացումից բացի, հասարակությունը վերափոխելու գործում կրթության դերի ընդգծումն է, ապագա ուսուցիչների մանկավարժական մտածելակերպի զարգացումն է, արդի կրթական տեխնոլոգիաների յուրացումը, *ուսանող-դասախոս* համագործակցության խրախուսումը՝ միասին նոր գիտելիք ստեղծելու գործում (տես https://aspu.am/hy/content/ampopvec_usyal_azgi_vkayagrery_mrcuyty/#sthash.h5QQEMZ5.dpuf)

[31] https://aspu.am/hy/content/mankavarzhutyan_ardi_himnakhndirnery_usanogh-dasakhos_hamategh_gitazhoghovum/#sthash.fIhDWMPM.6JOru0jT.dpbs

ՄՈՒՀ-ում սովորողներն իրականացնում են հետազոտական աշխատանքներ՝ կրթական ծրագրերում սահմանված պարտադիր կառուցամասերի պահանջներին և իրենց գիտահետազոտական նախընտրությունների համապատասխան:



Գծապատկերից երևում է, որ սովորողների 94 տոկոսը գտնում է, որ իրականացրել է հետազոտական աշխատանք: Իհարկե, կախված կուրսից, մասնագիտությունից և այլ գործոններից՝ հետազոտական աշխատանքի հաճախականությունը ուսանողների համախմբում տարբեր է:



Ուսանողների կարծիքով՝ հետազոտական աշխատանքի իրականացմանն ամենաշատ նպաստող գործոններն են ինտերնետի հասանելիությունը, գիտական ղեկավարումը, ուղեցույցների ու ձեռնարկների հասանելիությունը, իսկ ամենաքիչ ազդող գործոններն են լաբորատորիաների ու հետազոտական կենտրոնների սակավությունը, նյութական աջակցության սակավությունը: Նշված գործոնները հետագայում հիմք հանդիսացան նաև առավել խոր վերլուծությունների համար:



Վերը բերված գծապատկերում երևում է, որ ուսանողների 66 %- ը գոհ է հետազոտական աշխատանքից, դժգոհ է ուսանողների 9 %- ը:

Ասպիրանտական ծրագիրը գրեթե ամբողջությամբ ներառում է հետազոտական կրթամաս, հետազոտական գործունեությունը ներկայացված է առանձին կրթամասով մագիստրատուրայում: Հետազոտական աշխատանքը զգալի մաս է կազմում բակալավրի կրթական ծրագրով նախատեսված «Մասնագիտական պրակտիկա», «Ավարտական աշխատանք» կրթամասերում: Բակալավրի կրթական ծրագրերում ավարտական աշխատանքի կատարումը դարձել է պարտադիր:

ՄՈՒՀ-ի սովորողների հետազոտական աշխատանքի որակի գնահատման նպատակով կազմակերպվել են հարցումներ ուսանողների շրջանում:



Ուսումնական և հետազոտական գործունեության փոխկապակցմանն է ուղղված նաև գիտական գրադարանների գործունեությունը, որտեղ արձանագրված է զարգացման շարժընթացը: Ուսումնական և հետազոտական գործունեության փոխկապակցմանն է ուղղված 2018թ-ից ՄՈՒՀ-ում գործող և ըստ էության աշխարհում նմանօրինակ բովանդակությամբ միակ «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի գործունեությունը:

Հիմք ընդունելով կատարված ուսումնասիրության արդյունքները՝ առաջ են քաշվել առաջարկություններ, որոնք քննարկվել և հավանության են արժանացել ՄՈՒՀ-ի գիտական խորհրդում: Առաջարկների մի մասն արդեն իսկ կյանքի է կոչվել, իսկ մյուսները նախագծման և ներդրման փուլում են կամ տեղ են գտել ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրում:

- Տալ ավելի երկար ժամաքանակ հետազոտական աշխատանքների համար: Նշված ուղղությամբ աշխատանքները մասնակի իրականացված են, սակայն որոշ խնդիրներ ավելի համակարգային լուծման կարիք ունեն:
- Բարելավել Համալսարանի գրադարանային ռեսուրսները: Նշված ուղղությամբ աշխատանքներն ընթացքի մեջ են և պարբերական բնույթ են կրում:
- Սկսած բակալավրի առաջին կուրսից ուսանողներին ծանոթացնել հետազոտական աշխատանքներ կատարելու գործիքակազմին: Նշված ուղղությամբ աշխատանքներն ընթացքի մեջ են:
- Ապահովել լսարանները համակարգիչներով՝ SPSS ծրագրի հասանելիությամբ: Նշված ուղղությամբ աշխատանքներն արդեն իրականացվել են:
- Զարգացնել գիտահետազոտական լաբորատորիաներ: Նշված ուղղությամբ աշխատանքներն արդեն իրականացվել են, սակայն դրանք շարունակական բնույթ են կրում, քանզի կապված են նյութական մեծ ռեսուրսների հետ և պլանավորված են ՌԾ-ում:
- Մագիստրոսական թեզերի կատարման ղեկավար նշանակել հետազոտական փորձ ունեցող մասնագետների: Նշված ուղղությամբ աշխատանքները առավել համակարգային բնույթի են և ենթադրում են նաև մասնագետների հետազոտական կարողությունների զարգացում:
- Պարբերաբար իրազեկել հետազոտությունների կարևորության մասին: Նշված ուղղությամբ աշխատանքներն ընթացքի մեջ են:
- Հետազոտական աշխատանք գրելու համար ստեղծել և/կամ բարելավել համապատասխան ուղեցույցներ, չափանիշներ: Կատարված է, սակայն շարունակական բնույթ են կրում:

Հաշվի առնելով ՄՈՒՀ-ի առաքելությունը և դրանից բխող հետազոտական գործունեության ուղղվածությունը՝ ՄՈՒՀ-ում պարբերական հետազոտական գործունեությանը զուգահեռ, միջազգային համագործակցության արդյունքում ձեռք են բերվել նոր հնարավորություններ, որոնց շրջանակներում իրականացվում են գիտահետազոտական աշխատանքներ ՀՀ դպրոցներում: Մասնավորապես՝ Սինգապուրի մենեջմենթի համալսարանի պրոֆեսոր, «Լոջիք միլս» կազմակերպության համահիմնադիր Մարկ Նովացկու ղեկավարած կազմակերպությունում մշակվել և վալիդացվել է «ՄԻՐՄԻ» խաղային հոգեբանական թեստը, որը նախատեսված է 21-րդ դարի սովորողների կարողունակությունների՝ գլոբալ, համագործակցային և իրադրային ինտելեկտի գնահատման համակարգչային գործիքակազմի կիրառման համար: Մեթոդիկան թույլ է տալիս բացահայտել տարբեր տարիքի անձանց արդյունավետ որոշումներ կայացնելու, միջավայրին հարմարվելու կամ միջավայրի պայմանները հարմարեցնելու, խնդիրներ լուծելու կարողություններ, որոնք ներկայումս առանցքային են համարվում միջազգային առաջատար հանրակրթության գնահատող հետազոտություններում: Նրա մշակած գործիքակազմը՝ որպես ուսուցման արդյունքների գնահատման ունիվերսալ մեթոդ, ներկայումս կիրառվել է ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Հնդկաստանում, Բանգլադեշում, Պակիստանում, Սինգապուրում և այլ երկրներում:

ՄՈՒՀ-ի գործունեության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները՝ ըստ 6-րդ չափանիշի

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
ՄՈՒՀ-ում առկա են հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցմանն ուղղված քայլեր ու գործողություններ՝ սահմանված ՄՈՒՀ-ի ՌԾ-ով:	Ֆինանսական միջոցների սահմանափակությունը դանդաղեցնում է գիտական լաբորատորիաների արդիականացման գործընթացը:

ՄՈՒՀ-ում գործում են առաքելությամբ սահմանված գիտական ուղղվածությունների (մանկավարժություն, հոգեբանություն, դասավանդման մեթոդիկաներ, սոցիալական գիտություններ) գիտահետազոտական աշխատանքների նկատմամբ հստակ պահանջներ:	Երիտասարդ և միջին տարիքի գիտնականների ներգրավվածությունը գիտական ծրագրերին բավարար չէ:
ՄՈՒՀ-ում գործում են միջազգային բազաներում ինդեքսավորված գիտական պարբերականներում հրապարակումների խրախուսման մեխանիզմներ:	Բարելավման կարիք ունեն ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի որակական ու քանակական գնահատման մեխանիզմները:
ՄՈՒՀ-ում հրատարակվող գիտական պարբերականները տարեցտարի ինդեքսավորվում են միջազգային նոր գիտաչափական շտեմարաններում:	Գիտական արդյունքների ապրանքայնացման գործընթացը բավարար չէ:
ՄՈՒՀ-ում գործում է մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների էլեկտրոնային բազա, որը բացառում է թեմաների կրկնությունը և բարձրացնում է ակադեմիական ազնվության արդյունավետությունը:	Գիտնականների գիտական աշխատանքով զբաղվելու մոտիվացիան ցածր է, ինչը մեծ մասամբ պայմանավորված է գիտահետազոտական գործունեության համար հատկացվող ֆինանսական ռեսուրսների անբավարարությամբ:
	Գիտական գործունեության համակարգման և որակի կառավարման, ինչպես նաև խրախուսման ընթացակարգերը վերանայման կարիք ունեն:
	Սահմանափակ ռեսուրսները, երբեմն էլ բյուրոկրատական բարդ ընթացակարգերը կարող են դժվարացնել հետազոտական գործունեության կամ արդյունքի ինտեգրումը կրթական գործընթաց:
Հնարավորություններ	**Վտանգներ**
Ճանաչված միջազգային գիտական կառույցների հետ պայմանագրերի կնքումը նոր հնարավորություններ կարող է ստեղծել համատեղ գիտական թեմաների իրականացման համար:	Գիտության ֆինանսավորման նոր չափորոշիչների անիրատեսական գործարկման արդյունքում մի շարք գիտնականներ կարող են դուրս մնալ ոլորտից:
Գիտական կադրերի ատեստավորման և գիտական ծրագրերի ֆինանսավորման ավելացման նոր ընթացակարգերը կարող են նպաստել գիտնականների մոտիվացիայի և գիտական արդյունքների աճին:	Հասարակության մեջ գիտահետազոտական աշխատանքի գրավչության նվազումը բացասաբար կանդրադառնա ոլորտի մասնագետների, ասպիրանտների, հայցորդների մոտիվացիայի վրա:
Հասարակության մեջ սոցիալական գիտությունների ոլորտում որակյալ հետազոտությունների պահանջարկի աճը կարող է զգալիորեն դիվերսիֆիկացնել կրթական և հետազոտական ծառայությունների մատուցումը Համալսարանի կողմից:	Գիտահետազոտական գործունեության ֆինանսավորման աղբյուրների սակավ դիվեսիֆիկացիան կարող է վտանգել որակյալ հետազոտությունների իրականացումը:

Միջգերատեսչական և միջդիսցիպլինար գիտական ծրագրերի իրականացումը կարող է գործնականում զարգացնել գիտական մտքի ապրանքայնացումը:	ՄՈՒՀ-ի համար ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներում առանց հետազոտական տվյալների որոշումների կայացման ավանդույթների խորացումը կարող է վտանգել հետազոտությունների արժևորման և դրանց որակի հանդեպ պահանջկոտ վերաբերմունքի ձևավորումը:
	Հետազոտության ոլորտում մասնագետների կարողությունների զարգացման գործուն մեխանիզմների բացակայությունը կարող է վտանգել ՄՈՒՀ-ի մասնագիտական դաշտի մրցունակությունը:

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները

- Գիտահետազոտական գործունեության գրավչության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում տարբեր թիրախային խմբերի մակարդկներում՝ գիտական գործունեության մոտիվացիայի բարձրացման նպատակով:
- Ներդնել հետազոտական աշխատանքի գնահատման նոր չափանիշներ և ընթացակարգ, իրականացնել սահմանված կարգով մշտադիտարկումներ հետազոտական աշխատանքի որակի գնահատման ու բարելավման նպատակով
- Ներդնել գիտահետաոտական գործունեության խրախուսման ընթացակարգ
- Ներդնել ՄՈՒՀ-ի գիտական պարբերականների գործունեության գնահատման չափանիշներ, իրականացնել սահմանված կարգով մշտադիտարկումներ հետազոտական աշխատանքի որակի գնահատման ու բարելավման նպատակով
- Մշակել և ներդնել ՄՈՒՀ ՊԴԱ հետազոտական ներուժով դասախոսների օտար լեզուների իմացության շարունակական լավարկում և բարձրացում
- Մշակել ՊԴԱ անձնակազմի հետազոտական կարողությունների մասնագիտական զարգացման ծրագիր

ՉԱՓԱՆԻՇ 7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-Ն ՈՒՆԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ՝ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ:

2018-2023 թթ. ընթացքում ՄՈՒՀ-ը, հավատարիմ լինելով իր առաքելությանն ու ՌԾ-ին, իրականացրել և իրականացնում է քայլեր ուսումնական միջավայրի բարելավման, նյութատեխնիկական բազայի հագեցման համար: Կատարվել են ընթացիկ աշխատանքներ գործող ենթակառուցվածքների կատարելագործման, արդյունավետության բարձրացման ու նոր, հնարավորինս ժամանակակից պայմանների ստեղծման ուղղությամբ՝ Համալսարանին ապահովելով կայուն առաջընթաց:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.1. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

Հիմքեր՝

- Հաստատության մասնաշենքերը և դրանց օգտագործման նպատակները (Հավելված 7.1.1)
- ՄՈՒՀ ուսումնական և գիտական լաբորատորիաները (Հավելված 7.1.2)
- Գրադարանի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը (Հավելված 7.1.3)
- Տվյալներ մասնաշենքերի և հողամասերի մակերեսների վերաբերյալ (Հավելված 7.1.4)
- Գիտական լաբորատորիաները և հետազոտական կենտրոնները (Հավելված 7.1.5)
- ՄՈՒՀ լսարանների տեխնիկական հագեցվածությունը (Հավելված 7.1.6)
- SS ոլորտի վերազինման արդյունքները 2020-2023թթ. (Հավելված 7.1.7)
- ՀՀ Կառավարության N955-Ա որոշում [32]

Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Արդյո՞ք ուսումնառողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	74
Արդյո՞ք դասավանդողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	76

ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ (տե՛ս https://aspu.am/website/images/files/Kanonadrutyun_himnadram.pdf) «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի վերակազմավորման հետ կապված անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով ՄՈՒՀ-ին է հանձնվել 6 գործող ուսումնական մասնաշենք՝ շուրջ 44156.5 քառ.մ ընդհանուր տարածքով, նախկին Ա.Բակունցի անվան քոլեջի մասնաշենքը, Վ.Թոթովենցի անվան դպրոցի մասնաշենքը, որտեղ գործում են հիմնական դպրոցը և հենակետային ավագ դպրոց - վարժարանը, ինչպես նաև Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնքի հարևանությամբ գտնվող ուսումնական բազայի մասնաշենքը, (ավելին տե՛ս Տվյալներ մասնաշենքերի և հողամասերի մակերեսների վերաբերյալ (տե՛ս https://docs.google.com/spreadsheets/d/1EuMBVIl3jCOLzP7nUlC-iwMRj4sHJM04/edit#gid=1898812719):

2019 թ-ին ՀՀ կրթության , գիտության, մշակույթի և սպորտի նախարարի թիվ 04/12;2/12521-19 գրության հիման վրա, պայմանավորված Համաշխարհային բանկի կողմից իրականացվող վերանորոգման աշխատանքներով, Վ.Թոթովենցի անվան դպրոցն իր աշխատանքները

[32] https://www.e-gov.am/gov-decrees/calendar/2022/06/page/3/

շարունակել է *Սիմոն Վրացյան 75* հասցեում գտնվող «Երևանի N 12 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ում: ՄՈՒՀ-ի Վ.Թոթովենցի անվան դպրոցը կիսել է այդ տարածքը Երևանի թիվ 4 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի հետ: 30 հունիսի 2022 թվականի N955-Ա ՀՀ Կառավարության որոշման (տե՛ս https://www.e-gov.am/gov-decrees/calendar/2022/06/page/3/)հիման վրա այդ տարածքը հանձնվել է Համալսարանին՝ անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով: ՄՈՒՀ-ի հենակետային ավագ դպրոց - վարժարանը շարունակել է իր գործունեությունը որպես վարժարան *Դեղատան 17* հասցեում գտնվող դպրոցի տարածքում, որը հիմնովին վերանորոգվել է Համաշխարհային բանկի ծրագրի միջոցներով (EIP PW-04/2018) և հանձնվել է շահագործման 2021 թ. դեկտեմբերի 3-ին: Ծրագրի արժեքը կազմել է 440.367.610 ՀՀ դրամ: 2022 թ. նախկին Ա.Բակունցի անվան քոլեջի մասնաշենքը ՀՀ կառավարության որոշման համաձայն հանձնվել է ՀՀ պետական վերահսկողության ծառայությանը և այլևս ՄՈՒՀ-ի ենթակառուցվածքի մեջ ընդգրկված չէ:

Տվյալներ մասնաշենքերի և հողամասերի մակերեսների վերաբերյալ (տե՛ս https://docs.google.com/spreadsheets/d/1EuMBVIl3jCOLzP7nUlC-iwMRj4sHJM04/edit#gid=1898812719) տեղեկատվությունը ներառում է Համալսարանի ուսումնական և այլ (սպասարկող) տարածքների թվաքանակը և ընդհանուր մակերեսները 2018-2023 թվականներին: Ինչպես երևում է ներկայացված տվյալներից, Համալսարանի շենքային պայմանները ենթարկվել են որոշակի փոփոխությունների, իսկ բուն ուսումնական տարածքների կառուցվածքում էական տեղաշարժեր չեն եղել: Թվաքանակի որոշակի ավելացումն ըստ էության պայմանավորված է առավելապես վարչական առանձին սենյակների, լսարանների կամ արվեստանոցների տեղափոխություններով, չօգտագործվող տարածքների վերանորոգումներով և նպատակային շահագործման հանձնելով:

Համալսարանի լսարանային ֆոնդը, գործող և նոր լաբորատորիաները, հետազոտական կենտրոնները, արվեստանոցներն ու արհեստանոցները պարբերաբար վերազինվում և համալրվում են անհրաժեշտ գույքով և տեխնիկական միջոցներով: Չնայած Համալսարանի ուսումնական տարածքների սահմանափակ լինելու հանգամանքին, այդուհանդերձ, վերջին 4 տարիների ընթացքում հաջողվել է ձևավորել նոր (հիմնականում՝ փոքր չափսերով) լրացուցիչ լսարաններ, ստեղծվել են միանգամայն նոր լաբորատորիաներ և հետազոտական կենտրոններ, գործող լաբորատորիաները համալրվել են նոր գույքով և տեխնիկական սարքերով ու գործիքներով: Հնարավորություն է ստեղծվել համատեղել վարչական տարածքները՝ համատեղ կիրառելով վերջիններս ուսումնառության գործընթացում, օրինակ՝ Ռադիո Ֆամայի սենյակը:

Համալսարաններում առկա ուսումնական լաբորատորիաները շարունակել են իրենց գործունեությունը և հատկանշական փոփոխություններ չեն գրանցել (տե՛ս Ուսումնական լաբորատորիաների անվանական ցանկը- https://docs.google.com/spreadsheets/d/1LbKPPfinSfH_W48vVhVLu0E_LKblr2J-/edit#gid=817608904): Բացի ուսումնական լաբորատորիաներից, 2018-2023թթ. ակտիվ ծրագրային աշխատանք է իրականացվել՝ նոր լաբորատորիաների ստեղծման և ժամանակակից հագեցման ուղղությամբ:

2020 թ. մարտ ամսին՝ պայմանավորված ԿՈՎԻԴ-19 համավարակով, Համալսարանը ամբողջական անցում կատարեց ուսումնառության կազմակերպման առցանց ձևաչափի: Հաշվի առնելով արդեն իսկ առկա փորձը և ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպումը՝ Google Classroom էլեկտրոնային հարթակի միջոցով, ուսումնական գործընթացի սահուն անցումը առցանց համակարգի տեղի ունեցավ առանց զգալի ցնցումների: Այս ամենի նախապայմանը արդեն իսկ կայացած կրթական վիրտուալ միջավայրն էր, որին քաջածանոթ էին ուսումնառողներն ու դասավանդողները: Այս գործիքի արդյունավետ կիրառումը կարևորագույն նախապայման էր նաև լսարանային ֆոնդի համակարգչային տեխնիկայով, պրոյեկտորներով և մեծ հեռուստացույցներով շարունակական հագեցման համար: Արդյունքում, Համալսարանի բոլոր մասնաշենքերի և ենթակառուցվածքների 300 լսարաններ հնարավորինս վերանորոգված են, նրանց զգալի մասն ապահովված է անհրաժեշտ տեխնիկական միջոցներով (տե՛ս ըստ մասնաշենքերի՝ լսարանների տեխնիկական հագեցվածության պատկերը- https://docs.google.com/spreadsheets/d/1LbKPPfinSfH_W48vVhVLu0E_LKblr2J-/edit#gid=817608904):

2020-2023թթ. Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի կողմից շարունակվել են կատարվել Համալսարանի համակարգչային տեխնիկայի ծրագրային և տեխնիկական սպասարկման, ներքին լարային ու անլար ցանցի կառուցման և սպասարկման, համապատասխան ցանցային սարքավորումների կարգավորման և մշտադիտարկման անընդհատ շարունակական բնույթի աշխատանքներ, առկա սերվերային և հոսթինգային համակարգերի կառավարման ու վերահսկման աշխատանքներ: Ներկայումս Համալսարանն ունի շուրջ 750 ստացիոնար և դյուրակիր համակարգիչներ՝ իրենց հարակից սարքավորումներով: Համալսարանում առկա է շուրջ 15 կմ երկարությամբ լարային ցանց: Ստորաբաժանումներում առկա բոլոր ստացիոնար համակարգիչները միացված են ներքին լարային ցանցին և ունեն ելք դեպի համացանց: Յուրաքանչյուր տարվա կտրվածքով՝ անհրաժեշտությունից ելնելով, պարբերաբար կատարվում են անլար ցանցի արդիականացման և միաժամանակյա օգտագործողների հնարավոր թվի մեծացմանն ուղղված աշխատանքներ: Այս աշխատանքների արդյունքում, Համալսարանի բոլոր հիմնական ուսումնական մասնաշենքերը (1, 3, 5, 6) և Աղավնաձորի ուսումնամարզական բազան ամբողջությամբ հանդիսանում են որակյալ Wi-Fi գոտիներ: Յուրաքանչյուր մասնաշենքում միաժամանակյա միացումների առավելագույն հնարավոր թիվն այժմ 1022 է: 2023 թ-ից սկսած՝ Համալսարանի թիվ 6 մասնաշենքը փորձնական հիմունքներով միացվել է Eduroam անլար ցանցին: Հաջորդիվ նախատեսվում է ավելի ընդլայնել այդ ցանցի կիրառությունը՝ տարածելով բոլոր մասնաշենքերում և խնայելով զգալի ֆինանսական միջոցներ ինտերնետային որակյալ կապի համար:

Համալսարանում օգտագործվում են 3 ակտիվ սերվերներ, որոնցում զետեղված են ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգը (https://ams.aspu.am/), ՀԾ համակարգը և աշխատակիցների մուտքի-ելքի ֆիքսման համակարգը: Համալսարանը վարձակալում է հոսթինգային 4 մեծ փաթեթներ, որոնցում զետեղված են Համալսարանի պաշտոնական կայքը (https://aspu.am/), Ռադիո Ֆամայի կայքը (https://radiofama.am/), Համալսարանի պարբերականների կայքերը (https://wisdomperiodical.com https://miopap.aspu.am/ https://specedjournal.aspu.am/ http://ruslanginarmenia.aspu.am/ https://scientificnews.aspu.am/ https://armenianstudies.aspu.am https://mathinschool.aspu.am), ինչպես նաև տարբեր ստորաբաժանումների առանձին կայքեր:

Համալսարանում գործում են 5 էլեկտրոնային (համակարգչային) ընթերցասրահներ՝ հագեցած ժամանակակից համակարգչային տեխնիկայով և համացանցի գերարագ հասանելիությամբ: Համալսարանում առկա են արդիական համակարգչային տեխնիկայով համալրված և համացանցի հասանելիությամբ 12 ինֆորմատիկայի և այլ մասնագիտական համակարգչային լսարաններ:

Համալսարանի վարժարանի և հիմնական դպրոցի երկու համակարգչային լսարանները նույնպես հագեցած են ժամանակակից տեխնիկական միջոցներով և ինտերնետային կապով: Համապատասխան տեսաձայնային սարքավորումներով են կահավորված նաև համալսարանի 8 դահլիճներ և կոնֆերանս սրահներ:

SS ոլորտի վերագինման արդյունքները 2020-2023թթ.(տե՛ս https://drive.google.com/file/d/1YzW_z5EKg_d3w5jHoz7uY2QvxQG2S2Mx/view):

Ընդհանուր առմամբ՝ վերջին 6 տարիների ընթացքում Համալսարանը ձեռք է բերել Աղյուսակ 1 -ում արտահայտված թվաքանակով անհրաժեշտ գույք և տեխնիկա՝ մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր ապահովելու նպատակով:

Աղյուսակ 1. 2018-2023թթ. Համալսարանի կողմից ձեռք բերված գույքի, սարք- սարքավուրումների, համակարգչային տեխնիկայի և սպորտային պարագաների ցանկ ըստ քանակի

Անվանում	Քանակ
Արտադրողական գույք	**1786**
Համակարգչային տեխնիկա	**295**
Լաբորատոր սարք-սարքավորումներ	**121**

Սպորտային պարագաներ	**32**

Հարկ է նշել նաև, որ Համալսարանը սկսել է ակտիվ համագործակցել ազգային և միջազգային տարբեր կառույցների հետ, և արդյունքում 2023 թ-ին Համալսարանում բացվեց «Դասավանդի՛ր Հայաստան» անկյունը, որը լայն հնարավորություն է տալիս ուսանողներին ինտերակտիվ և բաց քննարկումներ իրականացնելու համար՝ փոխելով վերջիններիս պատկերացումները ուսուցչի մասնագիտության և իրենց առաքելության վերաբերյալ: Հաջորդիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Փրոջեքթ Հարմոնի հայկական մասնաճյուղի հետ, արդեն իսկ առկա պայմանագրի հիման վրա, նախատեսվում է ամբողջովին հագեցնել համալսարանի բանասիրական ֆակուլտետում առկա երկու լսարան՝ «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակներում:

ՄՈՒՀ-ի ուսումնագիտական ամենակարևոր ենթակառուցվածքներից շարունակում է մնալ Համալսարանի գիտական գրադարանը, որն ըստ էության կառուցվածքային փոփոխությունների չի ենթարկվել և ունի 4 մասնաշենքերում գործող 8 ընթերցասրահներ, որոնց զգալի մասը հագեցած է ժամանակակից համակարգչային տեխնիկայով: Գրադարանի գրապաշարը 2023 թ-ի օգոստոս ամսի դրությամբ կազմում է՝ 509.838 օրինակ: Ստորև աղյուսակում ներկայացված է 2018-2023 թթ. գրադարանային գործունեության թվային պատկերը.

Աղյուսակ 2.

Ցուցանիշներ	**2018**		**2020**	**2021**	**2022**	**2023**
Ընթերցողներ	23171	23171	18163	19996	20292	21313
Հաճախումներ	1245895	1245895	645868	376321	423051	850000
Գրքային ֆոնդ	513017	510299	510299	511702	512881	509838
Էլեկտրոնային գրքերի ֆոնդ	2300	3000	8000	17500	21500	
Համալրված գրականություն	3021	1568	760	1403	1235	1841
Համալսարանի ֆինանսական միջոցների հատկացում	2099060	2084350	1952812	1684884	876211	

Ներկայացված թվերը փաստում են, որ չնայած ուսանողների թվաքանակի նվազմանը, այնուամենայնիվ, գրանցվում է հետաքրքրության աճ դեպի ընթերցանությունը և գրադարանային ծառայություններից օգտվելը:

Համալսարանի թանգարանը հանդիսանում է ՄՈՒՀ-ի ուսումնագիտական կարևոր ենթակառուցվածքներից մեկը : Վիրտուալ տիրույթում աուդիո տարբերակով թանգարանի ցուցադրությունը հասանելի դարձնելու նպատակով Հայաստանում առաջին անգամ IZI travel միջազգային կազմակերպության աջակցությամբ թանգարանը ստեղծեց և գործարկեց աուդիոգիդ ծրագիրը: Այն այսօր հասանելի է 3 լեզուներով՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն (https://izi.travel/ru, https://cms.izi.travel/408/museums/12049): Վերջինս լայն կիրառություն ունի առ այսօր: Համընդհանուր ներառականությանը ընդառաջ ներկայումս մշակվում է թանգարանի սուրդոթարգմանության ծրագիր՝ Համալսարանի հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի հետ համատեղ, որը պլանավորված է ներդնել մինչև 2023 թ. ավարտը:

2018-2023թթ. ընթացքում Համալսարանում կատարվել են նաև անհրաժեշտ ներդրումներ տարբեր մասնագիտությունների ուսումնական գործընթացի ապահովման նպատակով, ինչպես նաև վարչական աշխատակազմի աշխատանքային պայմանները բարելավելու ուղղությամբ: Օրինակ՝ կուլտուրայի ֆակուլտետում առկա կիսանկուղային հարկը, որը կիսով չափ զբաղեցվում է լրագրության ամբիոնը՝ դասընթացները կազմակերպելու համար, ամբողջովին վերանորոգվել է,

հագեցվել ժամանակակից գույքով և կարի մեքենաներով ու հանձնվել *հագուստի մոդելավորում* բաժնին՝ որպես գործնական տարածք:

Ամբողջովին վերանորոգվել է վարժարանի սպորտային դահլիճը և համալրվել անհրաժեշտ սպորտային գույքով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.2. ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Հիմքեր՝

- 2020-2022թթ. եկամուտների և ծախսերի կատարողական և 2020-2023թթ.նախահաշիվ (Հավելված 7.2.1)
- Բյուջեի բաշխումը տոկոսներով (Հավելված 7.2.2)
- Բյուջեի բաշխումը՝ ըստ ՄՈՒՀ-ի առաքելության հիմնական ուղղությունների (դասավանդում և ուսումնառություն, հետազոտություն և զարգացում, ծառայություն հասարակությանը) (Հավելված 7.2.3)
- Հետազոտական աշխատանքների, դասավանդման և ուսումնառության, մասնագիտական զարգացման, գրադարանների թարմացման և հարստացման, սարքավորումների, գույքի ձեռքբերման համար նախատեսված հատկացումները (արտահայտված տոկոսներով) (Հավելված 7.2.4)
- Բյուջեի բաշխումը՝ ըստ ռազմավարական ուղղությունների (Հավելված 7.2.5)
- Ուսումնական գործունեությունից ստացվող մուտքերի բաշխումը՝ պետական ֆինանսավորում, ուսման վճարներ, վերապատրաստումներ և այլն (արտահայտված տոկոսներով) (Հավելված 7.2.6)

Համալսարանում ֆինանսական ռեսուրսների բաշխումն իրականացվում է տարեկան կտրվածքով՝ բյուջեի նախահաշվի կազմմամբ՝ հաշվի առնելով Համալսարանի ռազմավարության գերակա ուղղությունները: Սակայն Համալսարանի հիմնական բյուջեն կազմելուց զատ 2022թ. ծախսերի բաշխումն առանձին ներկայացվել է նաև ըստ ռազմավարական ծրագրի գերակա ուղղությունների՝ 5 տարվա կտրվածքով, հիմքում ունենալով ՌԾ-ն և գործողությունների կատարման պլանը և նախորդող տարվա բյուջեի փաստացի կատարողականը:

Համալսարանի բյուջեի նախահաշիվը հանդիսանում է ֆինանսական ռեսուրսների բաշխման և վերահսկողության կարևոր փաստաթուղթ, որը կազմվում է՝ հաշվի առնելով Համալսարանի ռազմավարության կարևորագույն ուղղությունները: Ծախսերի բաշխումը ներկայացված է նաև բյուջեի ռազմավարական ծրագրի 2022–2025թ.թ. նախագծում (տե՛ս հավելված 7.2.3):

Տոկոսներով ներկայացված դրամական միջոցների ներհոսքի պատկերից ակնհայտ է, որ վերջին տարիների նվազել են վճարովի ուսուցման ծառայությունից ստացվող եկամուտները (տե՛ս հավելված 2): Եթե տարիներ առաջ դրանք կազմում էին բյուջեի 80%–ը և ավելին, ապա վերջին 4 տարիներին այդ թիվը տատանվում է 64–65% շրջանում, որի պատճառն է ուսանողության թվի կտրուկ նվազումը՝ պայմանավորված տարբեր պատճառներով (գծապատկեր 1): Օրենքի պահանջով՝ ՄՈՒՀ–ի ֆինանսական միջոցներից ուսման վարձի զեղչերի տրամադրումը տարեկան կազմում է մինչև 185 միլիոն դրամ: Մասնավորապես, 2020–2022թթ. այդ գումարը կազմել է 516 միլիոն դրամ: Գաղտնիք չէ, որ այսօր հանրապետության բուհերում, այդ թվում՝ Մանկավարժական համալսարանում, ֆինանսական միջոցների գոյացման հիմնական աղբյուրը վճարովի ուսուցման ծառայությունն է:



Սակայն ստեղծված սոցիալ–տնտեսական իրավիճակով պայմանավորված՝ անհրաժեշտություն առաջացավ վերանայել վարձավճարների արժեքները, որը կատարվեց՝ հաշվի առնելով յուրաքանչյուր մասնագիտության պահանջարկը, կարևորությունը և մրցակից բուհերի վարած գնային քաղաքականությունը՝ հաշվի առնելով աշխատակիցներին:

Ուսումնական ծախսերը, ուսումնաարտադրական պրակտիկան, ընթացիկ նյութատեխնիկական բազայի համալրումը կարևոր են ուսումնական պրոցեսի վերջնարդյունքի համար: 2018–23թթ. էական միջոցներ են ծախսվել լսարանների վերազինման, ավելացման, սարքավորումների ձեռքբերման վրա: Չնայած դրան անհրաժեշտություն է առաջանում թարմացման, որոնք ևս անհրաժեշտ ծախսեր են: Այդուհանդերձ, անկախ բուհական համակարգում առկա ճգնաժամանային իրավիճակից՝ Համալսարանը փորձում է պահպանել դրամական մուտքերի և ելքերի բալանսը (տե՛ս գծապատկեր 2):

2020թ-ից հետո ՔՈՎԻԴ-19 համավարակի և հաջորդող իրադարձությունների հետ կապված չի գործել Համալսարանի *ամառային դպրոց* նախագիծը, որը շատ կարևոր և հեղինակություն վայելող նախաձեռնություն էր ինչպես հայկական, այնպես էլ գործընկեր համալսարանների միջազգային բուհական շուկայում: 2023 թ-ին նախաձեռնությունը վերականգնվում է՝ ներառելով ուսանողների ռուսաստանյան գործընկեր բուհերից և ՄՈՒՀ-ից:

Վերջին 4 տարիների ընթացքում լիովին վերանորոգվել է Համլսարանի հենակետային վարժարանը (ֆինանսավորել է Համաշխարհային բանկը), Համալսարանի միջոցների հաշվին տեղադրվել է արևային էներգիայի համակարգ, էլեկտրական ջեռուցման համակարգ, վերանորոգվել է վարժարանի մարզադահլիճը: Համալսարանի բոլոր մասնաշենքերի համար ձեռք են բերվել 51 հզոր օդորակիչներ, վերանորոգվել է 220 օդորակիչ:

Սակագների թանկացման հետ կապված ավելացել են կոմունալ ծառայությունների, հեռահաղորդակցության, մաքրության հետ կապված ծախսերը: Վնասներ են արձանագրվել նաև տարադրամի փոխարժեքի անկման պատճառով: Չնայած այս ամենին՝ Համալսարանը վարում է ռեսուրսախնայողական քաղաքականություն և ունի 400 միլիոնից ոչ պակաս մնացորդ, որի նվազումը կարող է ռիսկային լինել բուհի համար:



Գծապատկեր 2.

Հարկավոր է նշել նաև, որ ի համեմատություն 2016-2017թթ. ուսանողների թվաքանակի և հետևաբար ֆինանսական մուտքերի, կարելի է ասել, որ պակասել են ծառայությունների ձեռք բերման ծախսերը: Հիմնականում ծառայությունների ձեռքբերման անհրաժեշտությունը պայմանավորված է որոշ մասնաշենքերում կապիտալ վերանորոգման անհրաժեշտությամբ (աղյուսակ 3): Այս առումով իրավիճակը բավականին լուրջ է, քանի որ Համալսարանը զբաղեցնում է հին շենքեր, որոնք բոլոր մակարդակներում ունեն կապիտալ վերանորոգման կարիք. սկսած կոյուղիներից և վերջացրած ջեռուցման համակարգով ու լսարանային պայմաններով: Այսպես օրինակ՝ 2016 թ. Համալսարանի ընդհանուր բյուջեի նկատմամբ ապրանքների և ծառայությունների ձեռքբերման տոկոսը կազմել է 5.5%, 2017 թ-ին՝ 7.7% իսկ 2020-2023 թթ. ընկած ժամանակահատվածում այս թիվը չի գերազանցել 4.8%: Այստեղ կարևոր է նշել, որ այս տոկոսային ցուցիչի նվազումը, ցավոք, որևէ կապ չունի դրական դինամիկայի հետ, քանի որ այս տարիների ընթացքում, ըստ էության, պակասել են Համալսարանի ֆինանսական մուտքերը՝ հիմնականում պայմանավորված ուսանողների թվաքանակի նվազման հետ:

Բազմակի ընթացիկ վերանորոգումները չեն տալիս ցանկալի արդյունք, քանի որ որոշ հատվածներում ջրատար, կոյուղատար խողովակները և էլեկտրական լարերը գտնվում են վթարային վիճակում: Աշխատակիցների և ուսանողության նման մեծ քանակի պայմաններում հաճախ անհրաժեշտ է լինում կահույքի, աթոռների և այլ կենցաղային ապրանքների վերանորոգման անհրաժեշտություն, որի արդյունքում ավելանում են ծառայությունների ձեռքբերման ծախսերը: Որքան էլ վերանորոգվել են և թարմացվել որոշ համակարգեր՝ օրինակ 2014–ին կապիտալ վերանորոգվել են և վերազինվել երկու կաթսայատները, սա անվերջ պրոցես է և պահանջում է մեծ ներդրումներ: Բավարար շենքային պայմաններ ունենալը նաև անհրաժեշտ է Համալսարանի հեղինակության համար: Սրանք պարտադիր ներդրումներ են, քանի որ վերջին տարիներին տարբեր ծրագրերով և պայմանավորվածություններով՝ ՄՈՒՀ են այցելում տարբեր պատվիրակություններ և գործընկերներ այլ երկրներից, և այս տեսակետից Համալսարանի պատշաճ ներկայանալի լինելը չափազանց կարևոր է վերջինիս վարկանիշի առումով:

Վերանորոգման աշխատանքներ են իրականացվել նաև Աղավնաձորի ուսումնական բազայում, որը երկար տարիներ ծառայել է որպես ամառային և ամանորյա հանգստի, ուսումնամարզական միջոցառումների վայր աշխատակիցների և ուսանողների համար, այստեղ անցկացվել են տարբեր միջոցառումներ, այդ թվում նաև ամառային դպրոցը, միջազգային վերապատրաստումներ և այլն: Այս շենքը, գտնվելով բավականին խոնավ տեղանքում, նույնպես բազմաթիվ խնդիրներ ունի, որը ևս պահանջում է մեծ ներդրումներ: Սակայն, այս բոլոր հարցերին, հաշվի առնելով սահմանափակ ֆինանսական ռեսուրսները, լուծումները տրվում են ըստ առաջնահերթության և կարևորության:

Աղյուսակ 3. Ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ծախսերն ըստ տարիների

	Ընդամենը տարեկան ելքեր	Ապրանքների և ծառայությունների ձեռք բերման ծախսեր	Տոկոսային հարաբերակցություն
	հազ.դրամ	*հազ.դրամ*	
2016	3,962,045	218,047	5.5%
2017	3,683,740	285,976	7.7%
2020	2,983,661	131,513	4.4%
2021	3,061,944	115,483	3.8%
2022	3,144,921	153,730	4.8%
2023	1,774,233	86,159	4.8%

Որքան էլ փորձ է կատարվում վարել ռեսուրսախնայողական քաղաքականություն, այդուհանդերձ, անհրաժեշտ են և՛ գրասենյակային ապրանքներ, և՛ կենցաղային տեխնիկա, և՛ սարք -սարքավորումներ, որոնք ապահովում են ուսումնագիտական նորմ և նորմատիվային միջավայր:

Անդրադառնալով տրանսպորտային միջոցներին՝ հարկ է նշել, որ Համալսարանի հաշվին առկա է 2 ավտոբուս, 1 H1 մակնիշի 10 հոգու համար նախատեսված ավտոմեքենա, 1 «Գազել» մակնիշի բեռնատար մեքենա և 3 «Սեդան» դասի մարդատար ավտոմեքենա: Վերջիններիս առկայությունը հնարավոր է դարձնում ուսանողների դյուրին մասնացությունը և տեղափոխումը տարբեր կրթական գործընթացների և պրակտիկայի ընթացքում, ավելի ամրացնում *դպրոց-համալսարան* կապը, քանի որ ուսանողների կազմակերպած կրթամշակութային միջոցառումների շրջանակներում տարբեր մարզերից աշակերտները հնարավորություն են ունենում այցելել տարբեր տեսարժան վայրեր և մասնակից դառնալ կրթական ինտերակտիվ դասախոսությունների և այցելությունների:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.3. ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականություն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Հիմքեր՝

- Նախագիծ ՄՈՒՀ 2020-2025թթ. ռազմավարական բյուջեն (Հավելված 7.3.1)
- ՄՈՒՀ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը
- Հաշվապահության կանոնադրությունը
- Ֆինանսների ծրագրավորման և վիճակագրության վարչության կանոնադրությունը
- Աշխատանքների և ծառայությունների գնումների պլանը (Հավելված 7.3.2)

Համալսարանը, որպես հիմնադրամ, համաձայն իր կանոնադրության 17-րդ կետի 10-րդ ենթակետի, ինքն է տնօրինում իր ֆինանսական միջոցները, ինքնուրույն որոշում դրանց

օգտագործման ուղղությունները՝ ներառյալ իր աշխատողների վարձատրության և նյութական խրախուսման կարգը և չափերը: Համալսարանում ֆինանսական գործունեության համար շարունակում են հիմք ծառայել Համալսարանի կանոնադրությունը (տե՛ս https://aspu.am/website/images/files/Kanonadrutyun_himnadram.pdf), Ֆինանսների ծրագրավորման և վիճակագրության վարչության կանոնադրությունը (տե՛ս https://aspu.am/website/images/files/Finansatntesakan_kanonadrutyun.pdf), ՄՈՒՀ-ի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը (տե՛ս https://aspu.am/website/images/files/Hashvapahutyun.pdf), «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի աշխատողների պարգևատրման, նյութական խրախուսման, հավելավճարների և լրավճարների տրամադրման կանոնակարգ (տե՛ս https://aspu.am/website/images/files/lravcarner.pdf), ինչպես նաև ՀՀ օրենքը «Հաշվապահական հաշվառման մասին», Միջազգային հաշվապահական ստանդարտները, ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների համառոտ ուղեցույցը, «Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլան և դրա կիրառման հրահանգ» ուղեցույցը, ինչպես նաև ՀՀ օրենքը «Գնումների մասին»:

Յուրաքանչյուր տարվա կտրվածքով ՄՈՒՀ-ի ֆինանսների պլանավորման կարևորագույն մասն է կազմում ֆինանսական միջոցների բաշխումն ու վերաբաշխումը, որը Համալսարանի բյուջեի նախահաշվում արտացոլված է երկու կարևոր բաղադրիչներով.

- ՄՈՒՏՔ՝ ֆինանսական միջոցների ձևավորման աղբյուրներ,
- ԵԼՔ՝ ֆինանսական միջոցների բաշխման հիմնական ուղղություններ:

Համալսարանի ֆինանսատնտեսական գործունեության կայունությունն ապահովելու, ֆինանսական միջոցների ճիշտ և արդյունավետ պլանավորման նպատակով.

- Իրականացվում են ֆինանսական միջոցների՝ մուտքերի և ելքերի շարունակական պլանավորում և օպտիմալ կառավարում,
- Մշակվում է ուսման վարձերի ձևավորման քաղաքականություն՝ ապահովելով արտաբյուջետային կայուն հոսքեր
- ՀՀ գնումների մասին Օրենքի համապատասխան բյուջեի արդյունավետ և թափանցիկ բաշխում՝ հաշվի առնելով Համալսարանի զարգացման նպատակներն ու առաքելությունը:

Համալսարանի բյուջեն ձևավորվում է յուրաքանչյուր տարվա վերջին և նախատեսվում հաջորդող տարվա համար: Այն ներկայացվում է Համալսարանի հոգաբարձուների խորհրդի հաստատմանը: Հոգաբարձուների խորհուրդը լսում և գնահատում է տարեկան գործունեության վերաբերյալ ռեկտորի հաշվետվությունը, քննարկում և հաստատում է բյուջեն, իրականացնում ֆինանսական միջոցների կառավարման վերահսկողություն՝ իրեն տրված լիազորությունների շրջանակում: Հաստատումից հետո՝ ապահովելու համար բաց և թափանցիկ գործընթացը, արդեն իսկ հաստատված տարեկան բյուջեն տեղադրվում է Համալսարանի կայքում:

Բյուջեի նախահաշվի կազմման համար հիմք է հանդիսանում Համալսարանի ռազմավարական ծրագիրը, տվյալ տարվա բյուջեի եկամուտների և ծախսերի որոշ հոդվածների և ենթահոդվածների կատարողականները, որի արդյունքում հնարավոր է ավելի իրատեսորեն և արդյունավետ պլանավորել հաջորդ տարվա դրամական մուտքերն ու ելքերը: Դրանք հիմնականում վերաբերում են հարաբերական կայուն ծախսերին, պետական ֆինանսավորումից ստացված մուտքերին, աշխատավարձին:

Համալսարանի բյուջեի նախահաշվի կազմման գործընթացն մասնակցային է: Այն ընդգրկում է Համալսարանի բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին կամ նրանց կողմից այդ աշխատանքների համար նշանակված պատասխանատուներին:

Ընդհանուր ֆինանսների պլանավորման փուլի կազմակերպման և իրականացման պատասխանատուն է ֆինանսատնտեսական, գնումների համակարգման և մատակարարման կենտրոնը՝ ռեկտորի և աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորի ղեկավարությամբ:

Համալսարանում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացում ու շարունակականություն ապահովելու նպատակով ռեսուրսների բաշխման մեխանիզմներից է առանձին ստորաբաժանումների և ենթակառուցվածքների հայտերի հիման վրա ֆինանսատնտեսական, գնումների համակարգման և մատակարարման կենտրոնի կողմից կազմված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների պլանը (տե՛ս ՄՈՒՀ գնումների պլաններ 2020թ., 2021թ., 2022թ., 2023թ., տե՛ս https://aspu.am/hy/page/finansner/), որտեղ հաշվի են առնվում ֆակուլտետների և ամբիոնների կողմից կրթական ծրագրերի իրականացման և ուսումնական միջավայրի ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսները: Վերջիններս որպես կանոն ներկայացվում են ֆակուլտետների և ամբիոնների կողմից գրավոր յուրաքանչյուր տարվա վերջ՝ նախորդող տարվա համար: Միևնույն ժամանակ, կարևոր է նշել, որ Համալսարանի տարեկան բյուջեի նախահաշվի կազմման համար հիմք են հանդիսանում ֆինանսատնտեսական, գնումների համակարգման և մատակարարման կենտրոնի կանխատեսում-հաշվարկները՝ դրամական մուտքերի և ելքերի վերաբերյալ, նախորդ տարիներից պահեստում առկա ապրանքանյութական պաշարների մնացորդը, հաշվապահության կողմից հաշվարկվող եկամուտները, կատարվելիք հիմնական ծախսերը (աշխատավարձ, հարկեր, տուրքեր, կրթաթոշակ, կոմունալ վճարումներ, տարածքի մաքրման գումար և այլն):

Հաստիքների օպտիմալացման ծրագրերը՝ աշխատավարձի և որակի շարունակական բարձրացմանը համընթաց, հերթական և արտահերթ աուդիտորոկան ծառայությունները, մոնիտորինգը, պլանային և արտահերթ գույքագրումների, նյութատեխնիկական ռեսուրսների գնման, պլանավորման և օգտագործման արդյունավետության գնահատման, տեղական և միջազգային ռեսուրսախնայողական ծրագրերի մշակման արդյունքում բարձրացվել և կատարելագործվել է Համալսարանի ֆինանսական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը՝ ավելի մեծացնելով թափանցիկությունը:https://aspu.am/hy/page/finansner/

Համալսարանի ֆինանսական միջոցների մշտադիտարկումը, վերլուծությունը և գնահատումն իրականացնում են հաշվապահությունը և ֆինանսատնտեսական, գնումների համակարգման և մատակարարման կենտրոնը՝ յուրաքանչյուրն իր կանոնադրական խնդիրների շրջանակում, որի արդյունքները Համալսարանի համար ֆինանսական քաղաքականության, ռազմավարական և մարտավարական ուղղությունների որոշման, առաջնահերթությունների դասակարգման, նպատակների և խնդիրների ճշգրիտ ձևակերպման հիմքն են հանդիսանում:
Տարվա ընթացքում, ամսեկան կամ յուրաքանչյուր եռամսյանկը մեկ համադրվում են բյուջեի մուտքերի և ելքերի հոդվածների փաստացի ցուցանիշները, հստակեցվում է իրավիճակը, նշվում են շեղումները: Զգալի շեղումների պարագայում ուսումնասիրվում են գերածախսի կամ թերածախսի պատճառները, վերլուծվում են Համալսարանի դրամական հոսքերի վրա ազդող ներքին և արտաքին գործոնները, դրանք քննարկվում են տվյալ միջոցառումներն իրականացնող ստորաբաժանումների հետ և ներկայացվում ռեկտորին: Անհրաժեշտության դեպքում կարող է իրականացվել ֆինանսական ռեսուրսների վերաբաշխում, որը ըստ էության իրականացվել է միայն 2023 թ-ին (Վերանայված և վերահաստատված ՄՈՒՀ-ի 2023թ. բյուջե-տե՛ս https://aspu.am/hy/page/finansner/):

2022 թ-ին վերանայվել է ընդհանուր Համալսարանի կառուցվածքը, և այդ կառուցվածքից հանվել է Ներքին աուդիտի բաժինը, քանի որ վերջինս ըստ էության 2016թ-ից չի գործել, և հաշվի առնելով ՀՀ օրենքը «Հաշվապահական հաշվառման մասին» և ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին» առ այն, որ բուհը յուրաքանչյուր տարի պետք է ենթարկվի արտաքին աուդիտի, ուստի վերջինիս առկայությունը ՄՈՒՀ-ի կառուցվածքում կարևոր նշանակություն չունի և պահանջում է հավելյալ ֆինասական ռեսուրսներ:

Համալսարանի ֆինանսական միջոցների բաշխման նպատակայնության ապահովումը, բացի վերը նշված գործողություններից, իրականացվում է նաև արտաքին աուդիտի միջոցով՝ ըստ ՄՈՒՀ-ի կանոնադրության 129-րդ կետի, համաձայն որի՝ ՄՈՒՀ-ի ֆինանսական գործունեությունը վերստուգվում է անկախ աուդիտորի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ անձի կողմից՝ առնվազն տարեկան մեկ անգամ:

Համալսարանի կողմից պետական բյուջեից ստացված միջոցները բաշխվում են ըստ տրամադրման նպատակների՝ հիմք ընդունելով ՄՈՒՀ-ի, ՀՀ ԿԳՄՍՆ և ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի միջև կնքված պայմանագրերը:

Համալսարանի կողմից միջազգային դրամաշնորհային ծրագրերից ստացվող ռեսուրսների կառավարումն իրականացվում է համապատասխան պայմանագրերի և դրանցով սահմանված ընթացակարգերի հիման վրա:

Համալսարան այլ աղբյուրներից ֆինանսական ներհոսք ապահովելու համար իրականացվում են մի շարք միջոցառումներ, այն է՝

- մասնակցություն գիտական և այլ ծրագրերի,
- մասնակցություն տեղական և միջազգային մրցույթների,
- ուսուցիչների լրացուցիչ կրթության վճարովի դասընթացներ, վերապատրաստումներ,
- տեղական և միջազգային ծրագրերում աշխատակիցների ներգրավում, ինչի արդյունքում նրանք կունենան ավելի բարձր աշխատավարձ:

Այս ամենով պայմանավորված, Համալսարանի արտաբյուջետային հոսքերի աճը բյուջեի նկատմամբ կավելանա տարեկան 3-7%, ինչի արդյունքում հնարավոր կլինի ավելացնել պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատավարձը 5-10%-ով, տրամադրել ուսանողներին ֆինանսական աջակցություն՝ ուսման վարձավճարների զեղչի տեսքով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.4. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Հիմքեր՝

- Ուսումնական ռեսուրսների արդյունավետության և հասանելիության գնահատման ու վերանայման ընթացակարգ (Հավելված 7.4.1)
- Աշխատանքների և ծառայությունների գնումների պլանը /Տե՛ս, 2019թ., 2020թ., 2021թ., 2022թ., 2023թ./ (Հավելված 7.4.2)

Համալսարանի բոլոր տեսակի ռեսուրսների ընթացիկ և ժամանակային բաշխումը նախատեսվում և իրականացվում է տարեկան կտրվածքով: Համալսարանի բոլոր ստորաբաժանումների կարիքների բացահայտման և ամփոփման նպատակով յուրաքանչյուր տարվա դեկտեմբեր ամսին վերջիններս ներկայացնում են հայտեր՝ հաջորդ ֆինանսական տարվա համար անհրաժեշտ ապրանքանյութական արժեքների և սարք-սարքավորումների վերաբերյալ: Նմանատիպ հայտեր ներկայացվում են նաև յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին հաջորդ ուսումնական տարին պլանավորելու նպատակով: Ֆինանսատնտեսական, գնումների համակարգման և մատակարարման կենտրոնի կողմից ամփոփված տեղեկատվության հիման վրա կազմվում և Համալսարանի հոգաբարձուների խորհրդի հաստատման է ներկայացվում հաջորդ ֆինանսական տարվա գնումների պլանը:

Հաշվի առնելով առաջնահերթությունները և ֆինանսական կարողությունները, ինչպես նաև ընթացիկ աշխատանքները՝ կազմակերպվում է անհրաժեշտ ռեսուրսների և միջոցների ձեռքբերման գործընթացը: Ձեռքբերված ապրանքանյութական արժեքները (գրենական պիտույքներ և այլ անհրաժեշտ պարագաներ ու պիտույքներ) ներկայացվող պահանջագրերի հիման վրա հատկացվում են ստորաբաժանումներին՝ համապատասխան նորմատիվների սահմաններում, որոնք հաշվի են առնում ստորաբաժանման աշխատողների, ինչպես նաև ուսանողների թվաքանակը և ստորաբաժանման աշխատանքի բնույթն ու ծավալները:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական բեռնվածության բաշխումն իրականացվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջին: Ամեն ուսումնական տարվա վերջում ֆակուլտետները և համահամալսարանական ամբիոնները ուսումնական բաժին են ներկայացնում հաջորդ ուստարվա դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև հաշվարկվում առկա և պոտենցիալ ուսանողների թվաքանակը, կանխատեսում-հաշվարկներ են կատարվում առաջին կուրս ընդունվողների հավանական թվաքանակի վերաբերյալ՝ հիմքում

ունենալով տվյալ տարվա ավագ դպրոցի շրջանավարտների թիվը, նախորդ տարիներին ձևավորված համամասնությունները, ինչպես նաև դիմորդների թվաքանակը: Այս ամենը հիմք է հանդիսանում պրոֆեսորադասախոսական անձնակազմի դրույքների ձևավորման համար, իսկ աշխատավարձի չափը որոշվում է՝ համաձայն դրույքների, գիտական աստիճանի, կոչման և պաշտոնի: Վարչական, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի հաստիքացուցակը վերանայվում է ուստարվա սկզբներին՝ հաշվի առնելով ռազմավարական ծրագրի ուղղությունները, ուսանողության թիվը, ինչպես նաև կրթական և գիտահետազոտական ծրագրերը սպասարկող ենթակառուցվածքների քանակը, որը տարեվերջին ներկայացվում է հոգաբարձուների խորհրդի հաստատմանը: Հաստատված հաստիքակազմի առկայությունը հնարավորություն է ընձեռում Համալսարանին հնարավորինս իրատեսորեն, ոչ էական շեղումներով, պլանավորել աշխատավարձի ֆոնդը:

Լսարանային ֆոնդի բաշխումն ու պլանավորումը իրականացվում են ֆակուլտետներում ուսումնական բաժնի համակարգմամբ ուսումնական տարվա սկզբին՝ ելնելով կրթական ծրագրերի թվից, յուրաքանչյուր մասնագիտությամբ սովորող ուսանողների թվից և ուսումնառության ձևից: Միաժամանակ ռեսուրսների պլանավորման համար հիմք են հանդիսանում կրթական ծրագրերի կարիքները, ինչպես նաև ռազմավարական պլանավորմամբ նախատեսված գործողությունների համար անհրաժեշտ միջոցները:

Դասավանդողների և ուսումնառողների կարիքների բավարարման և ուսումնական միջավայրի արդյունավետության բարձրացման նպատակով Համալսարանում մշտապես իրականացվում են ընթացիկ վերանորոգման և միջավայրային պայմանների պահպահման և բարելավման աշխատանքներ, ձեռք են բերվում նոր սարքավորումներ, ավելացվում է ինտերակտիվ լսարանների թիվը, համալրվում է գրադարանային ֆոնդը:

Համալսարանում կրթական միջավայրի շարունակական բարելավումն առաջնահերթություն է, վերջինս ապահովելու գործընթացը իրավական հենքի վրա դնելու նպատակով հաստատել է ուսումնական ռեսուրսների արդյունավետության և հասանելիության գնահատման ու վերանայման ընթացակարգ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.5. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Հիմքեր՝

- ՄՈՒՀ բարտուղարության կանոնադրությունը
- ՄՈՒՀ փաստաթղթաշրջանառության կարգը (Հավելված 7.5.1)
- ՄՈՒՀ փաստաթղթաշրջանառության սխեմատիկ պատկերը (Հավելված 7.5.2)
- ՄՈՒՀ գիտական գրադարանի ցուցանիշների դինամիկան (Հավելված 7.5.3)

Համալսարանում 2014 թ-ից ներդրվել է փաստաթղթաշրջանառության միասնական և արդյունավետ գործուն համակարգ: Համալսարանում շրջանառվող բոլոր փաստաթղթերը ըստ տարբեր հատկանիշների խմբավորվում են ստորև աղյուսակում ներկայացված խմբերի մեջ.

Աղյուսակ 3. Համալսարանի փաստաթղթային հասցեավորումը

Ըստ հասցեատերերի և փաստաթղթաշրջանառության ուղղվածության	Ըստ փաստաթղթի իրավական բնույթի	Ըստ փաստաթղթի ոլորտային և բովանդակային բնույթի
Արտաքին	Պայմանագրեր (ուսանողների հետ կնքվող, աշխատանքային, քաղիրավական և այլն)	Ֆինանսական (հաշվապահական) փաստաթղթեր,

Ներքին	Անհատական իրավական ակտեր (կանոնադրություններ, կանոնակարգեր, կարգեր, ռեկտորի հրամաններ և այլն)	Ուսումնական փաստաթղթեր
		Աշխատանքային փաստաթղթեր
		Վարչական փաստաթղթեր

Համալսարանի արտաքին և ներքին փաստաթղթաշրջանառության համակարգման, կազմակերպման ու ապահովման պատասխանատուն հանդիսանում է Համալսարանի քարտուղարությունը, որի գործառույթները սահմանված են քարտուղարության կանոնադրությամբ (տե՛ս ՄՈՒՀ փաստաթղթաշրջանառության սխեմատիկ պատկերը-տե՛ս https://aspu.am/website/images/files/pastatghtashrjanarutyan-karg.pdf):

Համալսարանի արտաքին և ներքին փաստաթղթաշրջանառության ապահովման ընթացակարգը՝ նախագծումը (ստացումը), առաջխաղացումը, ընդունումը (հաստատումը, պատրաստումը), ինչպես նաև այդ գործընթացներում պատասխանատու ստորաբաժանումների գործառույթների սահմանումը կանոնակարգվում են ՄՈՒՀ ռեկտորի 14.01.2015թ. թիվ 2-3 հրամանով հաստատված «Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի փաստաթղթաշրջանառության կարգ»-ով (տե՛ս https://aspu.am/website/images/files/pastatghtashrjanarutyan-karg.pdf): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արդեն իսկ բավականին սահուն կերպով է իրականացվում Համալսարանի փաստաթղթաշրջանառությունը, Համալսարանը առայժմ նպատակահարմար չի գտնում ստեղծված ֆինանսական ոչ այդքան բարվոք վիճակում ներդնել միասնական էլեկտրոնային փաստաթղթաշարժ ապահովող համակարգ (օրինակ՝ Mulberry): Փոխարենը հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են իրականացվել աշխատանքներ՝ փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության առանձին էլեկտրոնային համակարգերի զարգացման ու կիրառման արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Մասնավորապես.

1. 2014թ. Համալսարանի հաշվապահությունում ներդրվել էր ՀԾ-6 հաշվապահական ծրագրի միջին փաթեթը (թվով 7), ինչի շնորհիվ հաշվապահական հաշվառման վարման գործընթացների գերակշիռ մասը ավտոմատացվեց: 2015 թվականից ներդրվեց «ՀԾ-Ձեռնարկություն» հաշվապահական ծրագիրը , *ՀԾ-Կադրեր և աշխատավարձ* փաթեթները: Այս ծրագրի ներդրմամբ ապահովվեց ինչպես ֆինանսական, աշխատանքային, նյութատեխնիկական և այլ տեղեկատվության միասնական տեղեկատվական շտեմարանի ստեղծումը, այնպես էլ այդ համակարգում փաստաթղթաշրջանառության ավտոմատացումը (ֆինանսական հաշվետվությունների, տեղեկանքների պատրաստումը, աշխատավարձերի ու աշխատանքային գործունեության տարաբնույթ տեղեկատվության արդյունավետ հաշվառումն ու հսկողությունը, ապրանքանյութական արժեքների ու հիմնական միջոցների շարժի ապահովումն ու հաշվառումը և այլն): Արդեն 2023 թ. Համալսարանն ունի 12 լիցենզիա և 1 սպասարկում «ՀԾ-Ձեռնարկություն» հաշվապահական ծրագրի մեծ փաթեթով:

2. Շարունակվում է բարելավվել ուսումնական գործընթացի կառավարման ավտոմատացման և դրա հետ կապված միասնական տեղեկատվական շտեմարանների ստեղծմանն ուղղված էլեկտրոնային տեղեկատվական հարթակը (ՈՒԳԱԿՀ): Այժմ այդ համակարգը ներառում է 7 մոդուլ, որոնցից օգտվում են համալսարանի ֆակուլտետները, տարբեր վարչություններ և բաժիններ (տե՛ս Չափանիշ 2-ի Չափորոշիչ ա-ում և զ-ում): Այս համակարգի ներդրումը հնարավորություն ստեղծեց

ամբողջականացնելու և օգտագործողների համար հասանելի դարձնելու ինչպես ուսանողների, այնպես էլ պրոֆեսորադասախոսական կազմի վերաբերյալ առկա ամբողջ տեղեկատվությունը:
3. Համալսարանի գրադարանը, հանդիսանալով ուսումնագիտական գործընթացների կազմակերպման առանցքային ենթակառուցվածքներից մեկը, հաշվետու ժամանակում շարունակել է աշխատանքներ իրականացրել էլեկտրոնային գրականության շտեմարանի համալրման ուղղությամբ: Այսպես օրինակ՝, եթե 2017 թվականին Համալսարանի էլեկտրոնային գրքերի շտեմարանը ներառում էր 12 159 միավոր գիրք, ապա 2022 թ-ի տվյալներով՝ այստեղ առկա է արդեն 21500 միավոր գիրք:
Այսպիսով, 2020-2023թթ. ժամանակահատվածում Համալսարանում հետևողականորեն իրականացվել են զգալի աշխատանքներ ինչպես փաստաթղթաշրջանառության ամբողջական համակարգի կատարելագործման, այնպես էլ տարաբնույթ տեղեկատվական շտեմարանների (հատկապես էլեկտրոնային, թվային շտեմարանների) ստեղծման ու զարգացման ուղղությամբ: Ըստ էության, այս գործողություններՆ իրենց բնույթով շարունակական են և միշտ պահանջում բարելավում ու կատարելագործում: Ուստի այստեղ Համալսարանը կանգ առնելու միտում չունի, և իր կողմից իրականացված աշխատանքները լինելու են ընթացիկ և շարունակական:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.6. ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Հիմքեր՝

- ՄՈՒՀ-ի անվտանգության ծառայության կանոնադրությունը
- ՄՈՒՀ-ի առաջնային օգնության կենտրոնի կանոնադրությունը
- ՄՈՒՀ-ի ներքին կարգապահական կանոնները (Հավելված 7.6.1)
- Բժշկական ապահովագրության պայմանագիրը (Հավելված 7.6.2)
- Անվտանգության աշխատակազմ (Հավելված 7.6.3)
- Առաջնային օգնության կենտրոնի պաշտոնի անձնագրեր (Հավելված 7.6.4)

Համալսարանի մասնաշենքերում գույքի պահպանության, հասարակական կարգի և ՄՈՒՀ-ի ներքին կարգապահական կանոնների պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է ՄՈՒՀ-ի կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող ՄՈՒՀ-ի անվտանգության ծառայությունը: Ի համեմատություն նախորդ տարիների, հաշվետու ժամանակում ծառայության աշխատակիցների թիվը նվազել է, ինչը պայմանավորված է առաջնահերթության և խնայողական մոտեցումներով: Այսպես, օրինակ՝ եթե 2017 թ. ծառայությունն ուներ ավելի քան 40 աշխատակից, որոնք իրականացնում են ցերեկային և գիշերային հերթապահություն, ապա 2023թ-ի տվյալներով՝ այս ծառայության աշխատակիցների թիվը չի գերազանցում 30-ը Համալսարանի բոլոր մասնաշենքերում: Անվտանգության ծառայության բոլոր աշխատակիցները կրում են Համալսարանի կողմից տրամադրված միասնական արտահագուստ: Բոլոր մասնաշենքերի անցակետերում տեղադրված են աշխատակիցների մուտքը և ելքը հաշվառող սարքեր, որոնց միջոցով հսկվում են աշխատանքի հաճախումները: 2020 թ. ՔՈՎԻԴ-19 համավարակից հետո այս ծառայությունը դադարեցվեց՝ պայմանավորված հեռավար աշխատանքի անցման հետ, այնուհետև այն վերականգնվեց միայն 2023 թ. փետրվարից: Առանձին մասնաշենքերի ներքին և բակային տարածքներում տեղադրված են տեսահսկման և ահազանգման համակարգեր:

Համալսարանում իրականացվում են նաև հակահրդեհային անվտանգության ապահովման համալիր միջոցառումներ (տե՛ս ՄՈՒՀ-ի ուսումնական մասնաշենքերում հակահրդեհային միջոցառումների կատարման պլանը՝ Հավելված 7.26), բոլոր մասնաշենքերի հարկաբաժիններում տեղադրված են կրակմարիչներ, փակցված են «Տարհանման պլան-սխեմա» ցուցանակներ, սահմանված կարգի համաձայն՝ ՀՀ ԱԻՆ հետ համատեղ պարբերաբար իրականացվում են տարհանման ուսումնական վարժանքներ:

Պայմանավորված երկրում տիրող պատերազմական և ետպատերազմանական իրավիճակով՝ Համալսարանի բոլոր նկուղները նախապատրաստվել են արտակարգ իրավիճակների պայմաններում Համալսարանի աշխատակիցների և ուսանողների տարհանման համար,

մասնավորապես. որոշվել են Համալսարանի նկուղում առկա տարածքները, որոնք կարող են ծառայել որպես ժամանակավոր ապաստարաններ: Վերջիններս զինվել են համապատասխան ջրի և չոր սննդի պաշարներով, կիսանկուղային հարկերում՝ պատուհանների առջև տեղադրվել են ավազով լի պարկեր, Համալսարանի քաղաքացիական պաշտպանության պատասխանատուի կողմից իրականացվել են իրազեկման աշխատանքներ ՄՈՒՀ-ի աշխատակիցների և ուսանողների շրջանում:

Համալսարանը զգալի աշխատանքներ է իրականացնում նաև աշխատակիցների և ուսանողների առողջության պահպանման ուղղությամբ: Մասնավորապես.

Ա. Աշխատակիցների բժշկական ապահովագրություն

- 01.09.2018-31.08.2019 -ին կնքվել է նոր պայմանագիր «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ընկերության հետ Համալսարանի 1064 աշխատակիցների համար՝ 79.800.000 ՀՀ դրամ արժեղությամբ: Հաշվի առնելով նախորդ տարվա ապահովոգրության վերլուծությունը՝ այն է ազատված աշխատակիցների ապահովագրությունը պահպանելը, ինչը ֆինանսական վնաս է պատճառել Համալսարանին, 2018-2019 թվականներին արդեն իսկ ազատված աշխատակիցների բժշկական ապահովագրությունը դադարեցվել է, որը հանդիսացավ ֆինանսական տնտեսում Համալսարանի համար և զերծ պահեց Համալսարանի շահերից դուրս անիմաստ ծախսերից: Այսպիսով՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ընկերության տվյալների բազայում ապահովվեց ազատված-ընդունված աշխատակիցների շարժը, իր ողջ գործառույթներով:
- 2020թ-ի դեկտեմբերից 2021թ-ի նոյեմբերը Համալսարանի աշխատակիցների բժշկական ապահովագրության գործընթացը ապահովելու համար մեկ անգամ ևս ճշտվեցին բոլոր աշխատակիցների անձնական տվյալները, համաձայն ձևաչափի պատրաստվեց աշխատակիցների տվյալների բազա՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ընկերությանը տրամադրելու նպատակով: Այս ժամանակահատվածում ապահովագրվել է Համալսարանի 958 աշխատակից՝ անհատական պայմանագրային հիմունքներով՝ 2020 թվականի ՔՈՎԻԴ-19 համավարակով պայմանավորված: Պայմանագրերի ընդհանուր գումարը կազմեց 75.363.750 ՀՀ դրամ (փաստացի վճարվել է 104.420.000 ՀՀ դրամ՝ եկամտային հարկերը ներառյալ):
- 08.02.2022-04.02.2023-ին «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ընկերության և Համալսարանի 884 աշխատակիցների միջև կնքվել են անհատական պայմանագրեր: Պայմանագրերի գումարը կազմել է 74.256.000 ՀՀ դրամ (հարկերը ներառյալ վճարվել է՝ 103.233.520 ՀՀ դրամ):
- 06.02.2023-05.02.2024 թ-ի կտրվածքով (տե՛ս https://drive.google.com/file/d/1iJLFI3RM7kjRYNfyI_axQamG-5pY17L2/view) էականորեն փոխվել է ապահովագրության ձեռքբերման գործընթացը, և այն իրականացվել է ՀՀ գնումների գործընթացի համապատասխան: Արդյունքում շահող է ճանաչվել «Նաիրի Ինշուրանս» բժշկական ապահովագրական ընկերությունը: Վերջինիս հետ կնքվել է պայմանագիր Համալսարանի 955 հիմնական աշխատակիցների համար: Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է 73.535.000 ՀՀ դրամ: Այս կետում գնումների գործընթացն ազատում է հարկային պարտականություններից, և այսպիսով առաջին կիսամյակի համար վճարվել է 35.046.919 ՀՀ դրամ:

Բ. Հագեցած բուժկետների առկայություն բուհում

- ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի «Հատուկ պոլիկլինիկա» ՓԲԸ-ի լուծարման մասին որոշմամբ և Համալսարանի ռեկտորի 29.09.2017թ. թիվ 3545 հրամանի համաձայն՝ լուծարվել են Համալսարանում գործող բուժկետները: Սակայն, հստակ գիտակցելով և կարևորելով աշխատակիցների և ուսանողների առողջության պահպանման ենթակառուցվածքի անհրաժեշտությունը՝ ռեկտորի 14.12.2017թ. թիվ 4556-Լ հրամանի համաձայն՝ թիվ 1 և 3 մասնաշենքերում ստեղծվել են առաջին օգնության կենտրոններ՝ մեկական մասնագետներով: Առաջին օգնության երկու կենտրոններն էլ ապահովված են անհրաժեշտ դեղորայքով, սարքավորումներով և գործում են համաձայն կանոնադրության

և պաշտոնի անձնագրերի: Անհրաժեշտության դեպքում այս երկու սենյակներն էլ ծառայում են որպես հատուկ հատկացված միջավայր՝ կերակրող մայրերի համար:

Գ. Սպորտային ակտիվություն

2020 թ. ՔՈՎԻԴ-19 համավարակով պայմանավորված՝ զգալիորեն նվազել է Համալսարանի աշխատակազմի և ուսանողների ներգրավվածությունը մարզական սեկցիաներում: Այս ներգրավվածությունը ակտիվություն սկսեց ցուցաբերել միայն 2022 թ-ի վերջում: Ներկայումս Համալսարանում գործում է 7 մարզական սեկցիա՝ սեղանի թենիսի, բասկետբոլի, վոլեյբոլի, շախմատի, ֆուտբոլի, հրաձգության և ալպինիզմի: Տարբեր սպորտաձևերի (ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, թենիս) մասով կազմավորված Համալսարանի ուսանողների հավաքական թիմերը բազմիցս մասնակցել են ՀՀ-ում և կազմակերպված մարզական առաջնությունների:

Դ. Արշավներ, ուսումնաճանաչողական այցեր և ուսումնական վարժանքներ

Համալսարանի ուսանողական խորհուրդը շատ ակտիվ զբաղվում է ուսանողների շրջանում սպորտային զարգացման և սպորտի կարևորության մասին ջատագով աշխատանքներով: Որպես ապացույց ժամանակ առ ժամանկ կազմակերպվում են երկօրյա արշավներ, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին ոչ միայն ակտիվ ապրելակերպ վարել և լինել պատրաստված, այլև ծանոթանալ հայրենիքի տարբեր տեսարժան վայրերի : Ուսանողների ֆիզիկական պատրաստվածությունը և ինտելեկտուալ բարձր կարողությունները առաջնահերթություն են Համալսարանի համար, քանի որ գործ ունենք ապագա մանկավարժների՝ նոր սերունդներ դաստիարակողների հետ:

Համալսարանի առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության ամբիոնը մշտապես կազմակերպում և իրականացնում է ուսումնաճանաչողական այցեր և ուսումնական վարժանքներ՝ ուսանողներին ճգնաժամային ու արտակարգ իրավիճակներում գործնական գիտելիքներ հաղորդելու նպատակով:

Համալսարանը համընդհանուր ներառականությանն ընդառաջ շարունակում է որոշակի աշխատանքներ իրականացնել նաև հատուկ կարիքներ ունեցող ուսանողների և դասախոսների համար՝ ուսումնառության և դասավանդման անհրաժեշտ պայմանների ապահովման ուղղությամբ: Վերջինս, սակայն, շատ բարդ գործընթաց է՝ պայմանավորված առկա շենքային պայմաններով: Մասնավորապես, հնարավոր է դարձել իրականացնել հետևյալ միջավայրային հարմարեցումները.

- տեսողության խնդիրներ ունեցող ուսանողների և դասախոսների տեղաշարժման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով, հատուկ կրթության ֆակուլտետի դասախոսների և ուսանողների նախաձեռնությամբ, Համալսարանի երկու մասնաշենքերի աստիճանների կողային հատվածները ներկվել են դեղին գծերով՝ դեղին ժապավենով, ապահովելով հասանալի միջավայրը:
- տեսողության խնդիրներ ունեցող ուսանողներին անվճար տրամադրվում են էլեկտրոնային տեքստը աուդիոյի վերածվող ծրագրեր: ՄՈՒՀ-ի թանգարանի և ցուցանմուշների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև վերելակների տեղեկատվական ցուցանակները ներկայացված են նաև բրայլյան գրի միջոցով:
- Համալսարանի թանգարանի աուդիոգիդը հարմարեցված է լսողության խնդիրներ ունեցող այցելուների կարիքներին և ներկայումս ավելի կատարելագործվում է:
- Համալսարանը հոգում է տեսողության խնդիրներ ունեցող դասախոսների անձնական ուղեկցողի ծախսերը;
- հենաշարժողական խնդիրներ ունեցող ուսանողների համար 3-րդ և 5-րդ մասնաշենքերում ստեղծված են թեքահարթակներ՝ մասնաշենքեր մուտքը ապահովելու և ուսումնական գործընթացը հնարավորինս մատչելի կազմակերպելու համար: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Համալսարանի 1-ին և 6- րդ մասնաշենքերի մուտքերը մատչելի դարձնելը համաձայն միջազգային չափորոշիչների գրեթե անհնարին է և հնարավորության դեպքում էլ անարդյունավետ, քանի որ ամբողջ շենքն ունի աստիճանավանդակ, իսկ վերելակները, ինչպես նաև դրանց համար նախատեսված լիսեռը փոփոխման ենթակա չեն: Այս իսկ

մոտեցման համաձայն՝ անարդյունավետ է դառնում նաև հարմարեցված սանհանգույցներ ստեղծելու հարցը, քանի որ նախևառաջ անվասայլակով տեղաշարժվող ուսանողը կամ դասախոսը պետք է անարգել միջավայր ունենա ամբողջ ՄՈՒՀ-ի տարածքում: Այդուհանդերձ, հատուկ կարիքներով ուսանողների համար հնարավորինս մատչելի միջավայր ունենալը Համալսարանի համար շատ կարևոր է, ուստի այսպիսի ուսանողներ ունենալու պարագայում Համալսարանը փորձում է լուծումներ տալ տեղային և անհատական մոտեցմամբ՝ ի դեմս հատուկ և ներառական ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական և ուսանողական անձնակազմի:

Հաշվետու տարիների ընթացքում իրականացված հարցումների արդյունքները վկայում են, որ Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմը և ուսանողները հիմնականում գոհ են բուհում գործող անվտանգության և առաջին բժշկական օգնության ծառայությունների աշխատանքից, անվտանգության և առողջության պահպանմանն ուղղված միջոցառումներից և ընդհանուր քաղաքականությունից:

Փաստ է, որ Համալսարանը վերջին տարիների ընթացքում մեծ ներդրումներ է ունեցել առողջության և անվտանգության պահպանման ոլորտներում: Նշված ոլորտներին ուղղված ֆինանսական հատկացումները ներկայացված են առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ֆինանսական միջոցներում (տե՛ս https://docs.google.com/spreadsheets/d/14ibHXEDlTTUTYsSON5a-hoGjvDb22-C6/edit#gid=84611692):

ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.7. ՄՈՒՀ- ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Հիմքեր՝

- Հետադարձ կապը հաստատող հիմքեր (Հավելված 7.7.1)

Համալսարանի ռեսուրսներն ու ենթակառույցները, վերջիններիս պատշաճ առկայությունը և կիրառությունը որոշիչ դեր են խաղում ՄՈՒՀ-ի առաքելությունն իրականացնելու և նպատակներին հասնելու համար: Վերջինիս հետ է սերտ կապված կրթական գործընթացների հաջող և անխափան ընթացքը: Համալսարանի պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմին և ուսանողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմները հանդիսանում են կրթության որակի շարունակական բարելավմանը նպաստող կարևոր գործոն: Վերջիններից են ՄՈՒՀ-ում կրթական գործընթացի իրականացման արդյունավետության վերաբերյալ պարբերաբար իրականացվող հարցումները:

Հարցումները, որպես այդպիսին, միտված են օգնելու և օժանդակելու ուսումնական դասընթացների, դասավանդման, ուսումնառության և գնահատման կիրառվող մեթոդների, ամբողջական կրթական ծրագրերի և ուսումնական միջավայրի անընդհատ բարելավմանը և կատարելագործմանը:

Համալսարանի կազմում առկա գործող ենթակառուցվածքներն ունեն հստակ սահմանված գործառույթներ, ընթացակարգեր և կանոնակարգեր, որոնք բխում են ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրից: Ռեսուրսների ավելացման ուղղությամբ նախատեսվում է վարել այնպիսի քաղաքականություն, որպեսզի ընդլայնվեն արտաքին շահակիցների շրջանակները, գտնվեն ֆինանսական հոսքերի ավելացման նոր ուղիներ և ուսումնասիրվեն կրթական լրացուցիչ ծառայություններ մատուցելու հնարավորությունները: Հաշվետու ժամանակաշրջանում, օրինակ, ներդրվել է «30 կրեդիտ» ծրագիրը, որը հնարավորություն է տալիս տարբեր մասնագիտություններ ունեցող մասնագետներին ստանալ ուսուցչի որակավորում և հավելյալ ֆինանսական միջոցներ է բերում Համալսարանին:

ՄՈՒՀ-ի ենթակառուցվածքների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար նախատեսվում է ձեռք բերել ավելի շատ ժամանակակից տեխնիկական սարքավորումներ, ավելացնել ուսման վարձավճարները, պարբերաբար թարմացնել մասնագիտական

գրականությունը, ձեռք բերել հասանելիություն միջազգային բարձր ցիտվող էլեկտրոնային շտեմարաններում, վերազինել ուսումնական լաբորատորիաները, բարելավ ընդհանուր կրթական միջավայրը:

Հիմնական շեշտադրումն այստեղ հարկավոր է կատարել հարցումների արդյունքների հիման վրա համապատասխան բարելավող գործողությունների և միջոցառումների մշակման, իրականացման վրա: Անհրաժեշտ է բարելավման ուղղությամբ տարվող բոլոր քայլերը կապել հարցումների վերլուծությունների հետ և այնուհետև պլանավորել անելիքները: Այս հարցում խնդիր է այն, որ ֆակուլտետները, ամբիոնները ոչ միշտ են հարցումների արդյունքները քննարկում և կիրառում: Այսպիսով, սպասարկող ֆակուլտետների և ամբիոնների կողմից իրականացվող գնահատման արդյունքների հիման վրա բացահայտված թերացումների բարելավմանն ուղղված քայլերն իրականացվում են մասնակի:

Այդուհանդերձ, կազմակերպված ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ ուսանողներն ընդհանուր առմամբ բավարար են համարում ուսումնառության նպատակով Համալսարանի կողմից տրամադրվող ռեսուրսները:

ՄՈՒՀ-ի գործունեության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները՝ ըստ 7-րդ չափանիշի

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
ՄՈՒՀ-ում առկա է կրթական ծրագրերի և հետագա կարիերայի պլանավորման բարենպաստ միջավայր՝ ուսումնառողներին տրամադրելով ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ ռեսուրսներ:	ՄՈՒՀ-ի մի շարք մասնաշենքերում մատչելի միջավայրի բացակայությունը կամ ոչ լիարժեքությունը (թեքահարթակների, վերելակների բացակայություն և այլն), կարող են խոչընդոտել ԿԱՊԿՈՒ ուսանողների անարգել տեղաշարժը և մասնակցությունը կրթական, ժամանցային և այլ միջոցառումներին:
ՄՈՒՀ-ը շարունակաբար կատարելագործում և արդիականացնում է կրթական գործընթացի և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան:	ՄՈՒՀ-ի ոչ բավարար բյուջետային վիճակը կարող է պահանջել հավելյալ միջոցներ ռեսուրսների պահպանման և հետագա շահագործման գործընթացներում:
ՄՈՒՀ-ում գործում են ֆինանսական միջոցների և ռեսուրսների բաշխման հստակ մեխանիզմներ, որոնք երաշխավորում են կրթական և գիտահետազոտական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունը:	ՄՈՒՀ-ում առկա չէ հանրակացարանային համալիր:
ՄՈՒՀ-ի ռեսուրսային հենքը հնարավորություն է տալիս իրականացնելու կրթական և հետազոտական գործունեության միջնաժամկետ պլանավորում՝ նպաստելով վերջիններիս որակի և կայունության շարունակական բարելավմանը:	Գիտական ֆոնդերի թվայնացման և փաստաթղթերի շրջանառման ոչ բավարար ավտոմատացումը կարող է դժվարացնել վերջիններիս կառավարումը:
ՄՈՒՀ-ում առկա են տեղեկատվական և փաստաթղթային շրջանառման գործընթացների կառավարման կանոնակարգված ընթացակարգեր, ինչը նպաստում է տվյալների և փաստաթղթերի արդյունավետ կազմակերպմանը:	Ռեսուրսների կիրառելիության մատչելիության և արդյունավետության գնահատման ոչ բավարար համակարգերը կարող են դժվարացնել դրանց որակի ու արդյունավետության բարելավումը:

ՄՈՒՀ-ում առկա են տրամադրվող ռեսուրսների կիրառելիությունը, մատչելիությունը, արդյունավետությունը գնահատելու մեխանիզմներ, որոնք նպաստում են ծառայությունների որակի շարունակական բարելավմանը:	
Հնարավորություններ	**Վտանգներ**
Վճարովի այլ ծառայությունների ընդլայնումը կարող է լրացուցիչ ֆինանսական հնարավորություններ ստեղծել ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակների իրականացման գործընթացում:	Հանրապետությունում տնտեսական ճգնաժամերը և ֆորսմաժորային իրավիճակները կարող են իրական վտանգներ առաջ բերել կրթության և գիտության ոլորտում ներդրումների համար:
Վիրտուալ կրթական միջավայրերի ստեղծումը թույլ կտա Համալսարանին մատուցելու կրթական ծառայություններ ուսումնառողների առավել լայն շրջանակներին՝ տարածությունից և ժամանակից անկախ:	Շարունակական աճող կիբերանվտանգության սպառնալիքները կարող են վտանգել կրթական միջավայրում տվյալների գաղտնիությունն ու ամբողջականությունը:
Առկա է էներգետիկ համակարգի արդիականացման, էներգախնայող համակարգերի (օր. արևային էներգիան օգտագործող՝ այս պահի դրությամբ վերջինով հագեցած է միայն ՄՈՒՀ-ի հենակետային վարժարանը) ներդրման շնորհիվ էլեկտրաէներգիայի և գազի ծախսի տնտեսման հնարավորություն:	Տնտեսական անկումը, ինչպես նաև ժողովրդագրական պատկերի ոչ բարենպաստ փոփոխությունները կարող են սահմանափակել առկա ֆինանսական միջոցները և հանգեցնել դրանց սղությանը:
Արտաքին շահակիցների, ինչպես նաև շահագրգիռ ընկերությունների հետ փոխշահավետ համագործակցությունը կարող է ուսումնառողների և ՊԴԱ-ի համար լրացուցիչ այլ ռեսուրսների ու սարքավորումների հասանելիություն ապահովել:	
ՄՈՒՀ-ը կարող է մշակել և բարելավել ներքին շահակիցների առողջության ու անվտանգության ապահովման ծրագրեր, որոնք կլավարկեն ընդհանուր անվտանգ միջավայրը:	

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները

- Ընդլայնել և հնարավորինս դիվերսիֆիկացնել Համալսարանի ֆինանսական մուտքերը, ապահովելով եկամուտների նոր աղբյուրների ներգրավում՝ դրամաշնորհներ (միջազգային, գիտական և այլ), վճարովի ծառայությունների շրջանակի ընդլայնում, Համալսարանի հիմնած ՍՊԸ-ի ակտիվ գործունեություն, գիտահետազոտական աշխատանքների արդյունքների առևտրայնացում և այլն,
- Մշակել և ներդնել Համալսարանի գործունեության բոլոր ոլորտների վրա ազդող ներքին և արտաքին գործոնների ազդեցության մշտադիտարկման, վերլուծության ու գնահատման, և արդյունքում՝ ռեսուրսների տնտեսմանն ուղղված առաջարկությունների ներկայացման, քննարկման ու ընդունման գործուն մեխանիզմներ,
- Տարբեր միջոցառումների և քաղաքանությոան մշակման միջոցով գրավիչ դարձնել մանկավարժի մասնագիտությունը ակտիվ համագործակցելով ՀՀ ԿԳՄՍ նախարարության, տարբեր միջազգային և ազգային կառույցների հետ:
- Մշակել շարունակական աճող կիբերանվտանգության սպառնալիքների միջավայրում տվյալների գաղտնիությունն ու ամբողջականությունը ապահովելու և պահպանելու մեխանիզմներ

ՉԱՓԱՆԻՇ 8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-Ն ԻՐ ՏՐԱՄԱԴՐԱԾ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԵՏՈՒ Է ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

ՄՈՒՀ-հասարակություն կապն առավել հաստատուն և երկուստեք արդյունավետ լինելու նպատակով անհրաժեշտ է անընդհատ բարելավել ՄՈՒՀ-ի գործունեության վերաբերյալ հաշվետվողականությունն ու թափանցիկությունը, ընդլայնել հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապը: Անհրաժեշտ է ժամանակի պահանջներին համահունչ՝ արդիականացնել հանրության հետ աշխատանքի բովանդակային և ծրագրային մասը, հետադարձ կապն ապահովել կայքի, պաշտոնաթերթի, ռադիոյի, հեռուստատեսության միջոցներով, կազմակերպել պարբերական այցեր հանրակրթական և մասնագիտացված այլ հաստատություններ, զարգացնել մշտադիտարկման համակարգը, գիտակրթական ծառայությունների հանրային պահանջարկի ուսումնասիրման գործիքները, ապա հաշվի առնելով առկա պահանջարկը՝ ձևավորել մատուցվող կրթական ծառայությունների առաջարկ և մանկավարժական մասնագիտության նոր իմիջ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 8.1. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:
Հիմքեր՝

- ՄՈՒՀ-ի հաշվետվություններ (Հավելված 8.1.1)
- Համալսարանի խորհրդի որոշումներ [33]
- Գիտական խորհրդի որոշումներ[34]
- Գիտական խորհրդի հաստատված կարգեր[35]
- Տարեկան հաշվետվություն 2019 թ., 2020թ., 2021թ., 2022թ. (Հավելված 8.1.2)
- «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթ[36]
- «Հաջողության բանաձև»[37]
- Տարեկան ամփոփիչ ֆիլմ[38]

ՄՈՒՀ-ն իր գործունեության վերաբերյալ պարբերաբար տրամադրում է հաշվետվություն և ներքին, և արտաքին շահակիցներին, ինչպես նաև հասարակությանը՝ ամփոփելու հաշվետու ժամանակաշրջանում ստորաբաժանումների կատարած աշխատանքը՝ առաջնորդվելով Համալսարանի կանոնադրությամբ և ռազմավարական ծրագրով: ՄՈՒՀ-ի ստորաբաժանումները, իրենց կանոնադրությունների համաձայն, ընդունված ձևաչափով հաշվետվություն և վերլուծություն են ներկայացնում համակարգող պրոռեկտորներին՝ ներկայացնելով տարեկան կտրվածքով բուհի ռազմավարական ծրագրով սահմանված կետերի վերաբերյալ արված աշխատանքը: Ֆակուլտետները իրենց կազմում եղած ամբիոնների տարեկան գործունեության հաշվետվությունները նախ ներկայացնում են ֆակուլտետների խորհուրդների նիստերում, ապա համակարգող պրոռեկտորներին: Խորհուրդների կազմում ընդգրկված են նաև արտաքին շահակիցներ: Կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների հաշվետվությունները ներառվում են բուհի ռեկտորի տարեկան հաշվետվության մեջ (տե՛ս https://aspu.am/website/images/files/hashvetvutyun_2022.pdf), այն շարունակում է լինել ՄՈՒՀ-ի հիմնական հաշվետու փաստաթուղթը՝ արտացոլելով տարեկան կտրվածքով գործունեության բոլոր բնագավառներն ու հիմնախնդիրները:

[33] https://aspu.am/hy/page/khorhrdi_oroshumnery
[34] https://aspu.am/hy/page/gitakan_khorhrdi_oroshumnery/
[35] https://aspu.am/hy/page/gitakan_khorhrdi_hastatvats_kargery/
[36] https://aspu.am/hy/page/hpmh_pashtonatert/
[37] https://www.youtube.com/user/armenianspu?app=desktop
[38] https://www.youtube.com/playlist?app=desktop&list=PLbbEkgHyhRd4-CsAmzdnPaQAkUQ8X4i5x

ՄՈՒՀ-ի Կանոնադրության համաձայն (տե՛ս https://aspu.am/website/images/files/8ebe46f2.pdf)՝ ռեկտորի տարեկան հաշվետվությունը լսում և գնահատում է բուհի Խորհուրդը (տե՛ս https://aspu.am/hy/page/khorhurd/), պրոֆեսորադասախոսական կազմը՝ տարեվերջյան գիտական խորհրդի ընդլայնված նիստում: Ընդլայնված նիստերին կարող են և մասնակցում են բոլոր ցանկացողները: Տարեկան հաշվետվությունը ներկայացվում է նաև ամեն տարի ֆիլմի ձևաչափով (տե՛ս https://www.youtube.com/playlist?app=desktop&list=PLbbEkgHyhRd4-CsAmzdnPaQAkUQ8X4i):

Այն յուրատեսակ ձևաչափով ամփոփում է անցնող տարին՝ անդրադառնալով ՄՈՒՀ-ի բոլոր ստորաբաժանումների անցնող տարվա գործունեությանը, ամենատարբեր ոլորտների ձեռքբերումներին: Հաշվետվությունը տեղադրվում է նաև Համալսարանի պաշտոնական կայքում (տե՛ս https://aspu.am/hy), իսկ ֆիլմ-հաշվետվությունը՝ և կայքում, և բուհի յութուբյան ալիքում (տե՛ս https://www.youtube.com/user/armenianspu?app=desktop):

Հաշվետվությունների ներկայացման հարթակ են նաև Գիտական խորհրդի նիստերը(տե՛ս https://aspu.am/hy/page/gitakan_khorhrdi_norutyunner/1). տարվա ընթացքում հրավիրվող նիստերի ժամանակ ներկայացվում են ինչպես ընթացիկ աշխատանքների, այնպես էլ Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման վերաբերյալ հաշվետվություններ: Նիստերի ընթացքում վերլուծվում և գնահատվում են Համալսարանի ձեռքբերումները և բացթողումները, առաջարկվում խնդիրների լուծման ուղիներ, կատարվում առաջարկներ:

ՄՈՒՀ-ի տարեկան հաշվետվությանը ոլորտի գերատեսչությունները ծանոթանում են էլեկտրոնային տարբերակով՝ պաշտոնական կայքի միջոցով: Բուհի որդեգրած քաղաքականության համաձայն՝ Համալսարանի կառավարման խորհրդի և գիտական խորհրդի նիստերի օրակարգը (Հայտարարություններ բաժնում, տե՛ս https://aspu.am/hy/page/haytararutyunner/), ընդունված որոշումները, հաստատված կարգերը (տե՛ս https://aspu.am/hy/page/gitakan_khorhrdi_oroshumnery/) տեղադրվում են ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքում, հրապարակվում «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթում (տե՛ս https://aspu.am/hy/page/hpmh_pashtonatert/):

Հաշվետվությունների ընթացիկ ձևաչափը հնարավորություն է տալիս ոչ միայն ներկայացնել իրականացրած գործունեության վերաբերյալ փաստեր, վիճակագրություններ, այլև կատարել ինքնագնահատում, վերլուծել թերություններն ու թույլ կողմերը, վերհանել հետագա բարելավման ու զարգացման գործընթացները:

Իրականացնելով 2019 թվականի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման հասարակական պատասխանատվության չափանիշի վերաբերյալ փորձագետների խորհրդատվությունը (հաշվետվությունները հիմնականում կրում են փաստերի, որոշ վիճակագրությունների արձանագրման բնույթ, բացակայում են եզրահանգումները, հայտնաբերված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների առաջարկների, վերլուծական մոտեցումները, ինչը կարող է խոչընդոտել թույլ կողմերի վերհանման և հետագա բարելավման ու զարգացման գործընթացներին: Կարելի է եզրահանգել, որ ձևաչափի փոփոխությունը դեռևս չի հանգեցրել իրական վերլուծականության, ինչը խոչընդոտում է իրական պատկերի ճանաչումը և ապացուցահեն որոշումների կայացումը)՝ ՄՈՒՀ-ում մշակվել է հաշվետվությունների նոր ձևաչափ, որոնք թույլ են տալիս վերհանել ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները, կատարել ինքնագնահատում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 8.2. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

Հիմքեր՝

- Լրատվության և հանրության հետ կապերի կենտրոնի կանոնադրություն
- www.aspu.am պաշտոնական կայք
- «Հաջողության բանաձև» հաղորդում[39]

[39] https://www.youtube.com/user/armenianspu?app=desktop

- «Ռադիո Ֆամա»[40]
- «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթ[41]
- Կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի կանոնադրություն

ՄՈՒՀ-հասարակություն շարունակական և հետևողական հաղորդակցման ապահովումն իրականացնում է բուհի լրատվության և հանրության հետ կապերի կենտրոնը՝ կանոնադրությամբ (տե՛ս https://aspu.am/website/images/website3/Կանոնադրություններ/Lratvakan%20kentron_kanonadrutyun.pdf) սահմանված իր գործառույթների շրջանակում: Կենտրոնը ստեղծվել է Լրատվության և հանրության հետ կապերի վարչության հենքի վրա, որը տվյալ կարգավիճակում գործեց 12 տարի՝ իր գործունեության արդյունքում բուհական համակարգում ստեղծելով տարբերվող կոնտենտ: Վարչության գործունեությունը գնահատվել է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցների կողմից, մասնավորապես՝ ԱՊՀ տարածաշրջանի մանկավարժական բուհերի շրջանում aspu.am կայքի մոբայլ տարբերակի առաջին մրցանակը, վարչության ռեժիսորի պատրաստած հակակոռուպցիոն տեսահոլովակի՝ Հայաստանում առաջին, ԱՊՀ անդամ երկրների 1200 աշխատանքների մեջ 3-րդ մրցանակի արժանանալու փաստը, 2020 թվականի համավարակի օրերին «Հաջողության բանաձև»-ի՝ ոչ մի օր չընդհատված վիճակագրությունը, կայքի անխափան աշխատանքը 24/7 ռեժիմով. այս արդյունքները բավարար հիմք էին ՄՈՒՀ-ի Խորհրդի համար՝ վարչությունը կենտրոն վերակազմակերպելու համար: Կենտրոնն ունի մասնագիտական լուրջ ներուժ, որը հնարավորություն է տալիս ոչ միայն կազմակերպել և իրականացնել միայն ՄՈՒՀ-ի տեղեկատվական և քարոզչական քաղաքականությունը, իրազեկել բուհի գործունեության մասին, այլև ստեղծել էլեկտրոնային հաղորդակցության համակարգ, ապահովել կազմակերպությունների հետ համագործակցությունը, պատրաստել ԶԼՄ-ներում տեղ գտած հաղորդագրությունների, հրապարակումների տեսության, այլ տեղեկանքների, վերլուծական նյութեր և այլն, զբաղվել շատ տարբեր կոնտենտ արտադրող և հեռարձակող գործունեությամբ: Դրա համար առկա է նաև համապատասխան տեխնիկական համալրվածություն, ինչը հնարավորություն կտա առաջիկայում սկսել օնլայն պոդքաստների իրականացումն ու միաժամանակյա հեռարձակումը:

Կենտրոնն իրականցնում և կազմակերպում է բուհի տեղեկատվական և քարոզչական քաղաքականությունը, իրազեկում հանրությանը, ինչպես նաև http://www.aspu.am պաշտոնական կայքէջի, «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի,, առաջին համալսարանական ռադիո «Ֆամա»-ն իր կայքէջով՝ www.radiofama.am, և «Հաջողության բանաձև» հաղորդման միջոցով ապահովում ՄՈՒՀ-ի ընթացակարգերի և գործընթացների թափանցիկությունն ու հասանելիությունը հասարակությանը:

Գրաֆիկ 1.ՄՈՒՀ-ի կայքի այցելությունների համեմատական թվային պատկեր

[40] https://www.radiofama.am/

[41] https://aspu.am/hy/page/hpmh_pashtonatert/



http://www.aspu.am պաշտոնական եռալեզու կայքը շարունակում է լինել տեղեկատվության համախմբման հարթակ՝ բուհի հետ առնչություն ունեցող կառույցների, ներքին և արտաքին շահակիցների, հանրության համար: Կայքն ապահովում է Համալսարանի մասին ամբողջական, այդ թվում նաև՝ կառուցվածքային ստորաբաժանումների և պրոֆեսորադասախոսական կազմի վերաբերյալ տեղեկատվություն, ապահովում դիմորդների և սովորողների համար անհրաժեշտ տեղեկատվություն, իրականացնում բուհի գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածում սոցիալական հարթակների միջոցով և այլ կանոնադրությունից բխող այլ գործառույթներ: Տեխնիկական վերազինումների, աշխատանքային նոր հնարավորությունների և գործիքների ներմուծման շնորհիվ այն դարձել է ավելի արագագործ և ծավալուն: Հատկանշական է, որ կայքը կարողացավ դիմագրավել նաև 2020 թվականի՝ համավարակով պայմանավորված արտակարգ դրության մարտահրավերներին. այդ օրերին օպերատիվ կերպով լուսաբանվում էին առցանց հարթակներում կազմակերպվող միջոցառումները՝ ուսումնական գործընթաց, ՄՈՒՀ ուսանողների ու դասախոսների մասնակցությունը առցանց հարթակներում կազմակերպված միջազգային և հանրապետական տարբեր գիտաժողովներին, պրոֆեսորադասախոսական կազմի, սփյուռքահայ ուսուցիչների առցանց վերապատրաստումներ և բազմաբնույթ այլ միջոցառումներ, ապահովել նաև կրթական նյութերի հասանելիությունը և որ կարևորներից է՝ դիմորդների ընդունելության ողջ գործընթացը՝ առցանց հայտագրումից մինչև քննական գործընթաց և այլն: Պաշտոնական կայքի՝ որպես տեղեկատվությամն համախմբան միասնական հարթակի փաստ է 2020 թվականին կայքի այցելուների թիվը՝ 450.000 այցելություն (Գրաֆիկ 1): Նախորդ ինքնավերլուծության արդյունքների համեմատությամբ՝ 2020 թվականին ունենք կայքի այցելության ամենաբարձր ցուցանիշը, ինչը պայմանավորված էր համավարակի վերոնշյալ պատճառներով: Հարկ է նկատել նաև, որ նախորդ ինքնավերլուծության արդյունքների համեմատ ունենք նաև այցելությունների նվազում, ինչն էլ պայմանավորված է ինչպես ուսանողների և դիմորդների թվի նվազմամբ, այնպես էլ ներքին և արտաքին շահակիցների՝ առավել շատ սոցիարթակների կամ Լրատվության և հանրության հետ կապերի կենտրոնի՝ հանրության հետ հետադարձ կապի այլ մեխանիզմների կիրառմամբ: Այնուամենայնիվ, համեմատական անցկացնելով 2017 թ-ի և 2020 թ-ի իրավիճակների միջև ակնհայտ է, որ կայքի այցելությունների թիվը աճել է 12%-ով, այն ժամանակ երբ 2017 թ-ի հունվարի դրությամբ բուհում եղել է 9563 ուսանող, իսկ 2020 թ-ի հունվարին՝ 7051:

«Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթը մինչև 2023 թվականը ներառյալ հրապարակվել է հայերեն լեզվով 1800 տպաքանակով, ամիսը երկու անգամ, երկու մամուլ ծավալով և տարածում գտել ինչպես ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների, այնպես էլ հանրապետության ղեկավար մարմինների, դեսպանատների, հիմնադրամների, գրադարանների, բուհերի, մայրաքաղաքի և մարզերի դպրոցների, տարբեր կառույցների շրջանում: 2020 թվականին համավարակով պայմանավորված, իսկ 2023 թվականի տարեսկզբից՝ պաշտոնաթերթը հրապարակվում է միայն էլեկտրոնային եղանակով՝ բուհի պաշտոնական կայքում (տե՛ս https://aspu.am/hy/): Այս որոշման նպատակն էր, նախ խնայել բուհի ֆինանսական միջոցները, ապա՝ փորձել ավելի լայն ծավալով ազգային և միջազգային մակարդալով տարածել բուհի համար շատ կարևոր նշանակում ունեցող պաշտոնաթերթը:

ՄՈՒՀ-ի հանդեպ հետաքրքրվողների և հաշվետվողականության առավել լայն շրջանակներ ներգրավելու տեսանկյունից կարևոր գործառույթ ունի ռադիո «Ֆամա»-ն (Տե՛ս https://www.radiofama.am/): Եթե 2015-2018 ժամանակահատվածի համար առաջին հնգյակում էին Հայաստանը, Ռուսաստանը, ԱՄՆ-ն, Գերմանիան և նաև Հնդկաստանը, ապա վերլուծվող ժամանակահատվածի համար ունենք տարբեր երկրներից լսումների հետևյալ պատկերը՝ ԱՄՆ-ն (59 957), ՌԴ (51 369), Բրազիլիա (43 844), Հայաստան (40 927) և Ֆրանսիա (16 738): «Ֆամա»-ն լսում են աշխարհի 208 երկրից: 2021-2022-ի տվյալներով՝ «Ֆամա» -ն լսել են 5 108 497 բոպե՝ 85 141 ժամ, միացումների քանակը՝ 227 274, որից 114 264-ը ունիկալ ունկնդիրներ են, միջինում լսում են 25.6 բոպե (տվյալները՝ 01.12.2022 թ. դրությամբ): Տարբեր երկրներիc հետաքրքրվողների շրջանակի ընդլայնումը պայմանավորված է նաև ՄՈՒՀ-ի միջազգայնացման գործընթացներով: Տարբեր համագործակցությունների շրջանակներում համալսարան են այցելում օտարերկրյա գործընկերներ, որոնք հյուրընկալում են նաև «Ֆամա» -յում, ծանոթանում և անմիջական մասնակիցը լինում համալսարանական ռադիոյի աշխատանքներին՝ ամենատարբեր հաղորդումների շրջանակներում պատմելով մեր երկրից, բուհից ունեցած տպավորություններից, ՄՈՒՀ-ի հետ համագործակցության հեռանկարներից և այլն:

«Ֆամա» -ն շարունակում է նաև հաղորդումների ցանկի ընդլայնումն ու թարմացումը՝ ՄՈՒՀ-ի ուսանողների և ՄՈՒՀ ավագ դպրոցի աշակերտների հեղինակմամբ («Աշխարհագրական թոհուբոհ», «Եթե մայրիկ ես», «Կինեգործ» (տե՛ս https://www.radiofama.am/?page_id=5379): Ի դեպ, «Եթե մայրիկ ես» հաղորդումն ընդգրկվել է սոցիալական Impact Hub ծառայության ֆելոուների ցանկի մեջ, ինչը ենթադրում է, որ հաղորդումը պատրաստող թիմը մեկ տարի շարունակ մասնակցելու է մարկետինգի, բիզնես մոդելի թեմաների վերաբերյալ դասընթացների՝ նախագիծը բիզնես դաշտում առավել մրցակցային դարձնելու նպատակով:

Ռադիո Ֆամայի գործունեության վերաբերյալ հետաքրքրության դրսևորում է ՄՈՒՀ-ի և Հայկական բարեգործական ընդհանուր միության միջև 2023 թվականի փետրվարի 16-ին կնքված փոխըմբռնման հուշագիրը: Հուշագրի համաձայն՝ ՄՈՒՀ-ն պատրաստակամ է կազմակերպել ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից ֆինանսավորվող «Կանանց տնտեսական հզորացում Հարավային Կովկասում, փուլ II 00129877-00123408» ծրագրի շահառուների վերապատրաստումը բուհում: Ի կատարումն հուշագրի՝ 2023 թվականի փետրվարից «Ֆամա»-յով հեռարձակվել «Կինեգործ» կանանց մոտիվացնող հաղորդաշարը գործարար և հաջողակ կանանց հաջողության պատմությունների մասին՝ այդպիսով ընդարձակելով լսումների աշխարհագրությունն ու ռադիոլսողների ավանդական շրջանակը: Ծրագրի ավարտից հետո հեղինակը՝ Նազելի Խաչատրյանը, շարունակում է հաղորդումը հասարակական հիմունքներով:

Համալսարանը շարունակում է լինել բուհերի շարքում միակը, որ ունի հեռուստաարտադրություն, որը պարբերաբար պատրաստող տեսանյութերով, ֆիլմերով ապահովում է հաշվետվողականության կարևոր գործառույթը: Ավելի քան 7 տարի, Կենտրոնը շաբաթական մեկ հաղորդում է պատրաստում՝ «Հաջողության բանաձև», 25-30 բոպե տևողությամբ՝ ՄՈՒՀ-ի մասնագիտությունների, իրականացրած գործունեության, միջազգային ծրագրերի վերաբերյալ: Այն եթեր է հեռարձակվում շաբաթական երկու անգամ՝ ԱՏՎ և երկու անգամ՝ Ֆրի Նյուզ հանրային մուլտիպլեքսում ներառված հեռուստաընկերություններով՝ ապահովելով բարձր դիտողականություն, ինչի մասին վկայում է ամսական մոնիտորինգը, որն անում են

հեռուստաընկերությունները: Հաղորդումը նաև տեղադրվում է Յութուբյան պաշտոնական էջում, որը բուհական համակարգում առաջինն է՝ 6500 բաժանորդով, և իրեն հաջորդող բուհից առաջ է առնվազն 3 000-ով: Ի դեպ, «Հաջողության բանաձև» հաղորդաշարի ստեղծագործական թիմն առաջինն էր ընդհանրապես հեռուստաեթերում, որ համավարակի օրերին նախաձեռնեց և հեռավար մեթոդով պատրաստեց հաղորդում ՝ ապացուցելով, որ անհնարին գրեթե ոչինչ չկա: Դրան անդրադարձավ նաև մամուլը (տե՛ս https://www.aravot.am/2020/03/23/1101642/?fbclid=IwAR1X00DLH9MmXeSTWLKMQAHovuHbkA7G0f9X-JPSd2p8SbhpqhfR4U0cEuM):

Ներկայացնելով հեռուստաարատադրանքը՝ բուհը յուրատեսակ հաշվետվություն է ներկայացնում հասարակությանը ինչպես մեր երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Հաղորդումը տեղադրվում է ոչ միայն համալսարանի յութուբյան պաշտոնական էջում(տե՛ս https://www.youtube.com/user/armenianspu?app=desktop), այլև dasaran.am(տե՛ս https://www.dasaran.am/) կայքում արդեն 7 տարի: dasaran.am-ը լայն հարթակ է, որին միացած է 45 000 աշակերտ:

Հասարակությանը գիտելիքի փոխանցման ձևերից մեկն էլ «Հաջողության բանաձև» հաղորդումն է, որը նպաստում է հանրակրթական դպրոցի աշակերտների և դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը, արտաքին շահակիցների շրջանում ՄՈՒՀ-ի վերաբերյալ իմացության բարձրացմանը:

Ըստ 2019 թվականի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման հասարակական պատասխանատվության չափանիշի վերաբերյալ փորձագետների խորհրդատվության (ՄՈՒՀ-ում հասարակությանը գիտելիքի փոխանցման հաստատված քաղաքականություն չկա և գործընթացի բազմապիսի տարրերն իրականացվում են ոչ ֆորմալ ձևով) հարկ ենք համարում նշել, որ այդ ոչ ֆորմալ ձևերից մեկն էլ հաղորդումն է, ինչը նպաստում է հանրակրթական դպրոցի աշակերտների և դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը:Ի դեպ, դիմորդների մասնագիտական կողմնորոշման նպատակով ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մասնագիտական կողմնորոշման բաժինը 7 տարի առաջ տեսաերիզներով, իսկ այսօր հղումներով տարածում է ՄՈՒՀ-ի ուժերով և ռեսուրսներով պատրաստվող «Հաջողության բանաձև» հաղորդաշարը՝ բարձր գնահատելով դրա տեղեկատվական, գիտահանրամատչելի և մասնագիտական կողմնորոշում ունեցող բնույթը: Հաղորդումը նաև հեռարձակվում է 7 մարզային հեռուստաընկերություններով: Այն իր գործունեության 7 տարիների ընթացքում ամրապնդել է կապը հիմնական և ավագ դպրոցների հետ: Եթե հաղորդաշարի առաջին տարիներին ստեղծագործական խումբը հիմնականում հիմնվում էր ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի պատրաստվածության և նրանց միջոցով մասնագիտությունների ներկայացման վրա, ապա վերջին շրջանում հաճախակի է անդրադառնում թիվ 57 հիմնական դպրոցին և ավագ դպրոց-վարժարանին՝ դրանց մանկավարժական կազմի միջոցով ուսուցչական մասնագիտությունները քարոզելու նպատակով: Այս իմաստով նույնիսկ ընդլայնվել է հաղորդման հեռուստալսարանը, քանի որ հաղորդման ընթացքում նկարահանվում է նաև դպրոցն ու դասարանը, իսկ դասարանի աշակերտներն ու ընտանիքները համալրում են ինչպես հեռուստալսարանը, այնպես էլ յութուբյան պաշտոնական էջի բաժանորդների շարքերը: Հաղորդումը փոխել է իր աշխատանքային ոճը, քանի հեռուստադիտողն արդեն իսկ ճանաչում է «Հաջողության բանաձև»-ը, որի միջոցով լուծվում է կարևոր խնդիր՝ ներկայացվում են անհատներ, որոնք իրենց ոլորտի պրոֆեսիոնալներն են, սակայն չունեն բավարար ճանաչում տարբեր պատճառներով՝ այդ թվում նաև հողորդակցական հմտություններին: Այս ճանապարհով փորձ է արվում հաղթահարել վերոնշյալ դժվարությունները:

Հասարակությանը ՄՈՒՀ-ի գործընթացների թափանցիկությունն ու հասանելիությունը ապահովվում է նաև բուհի 10 ֆակուլտետների խորհուրդների կազմերի միջոցով. բացի ներքին շահակիցներից, դրանցում ներգրավված են նաև յուրաքանչյուրի մասնագիտական ոլորտից արտաքին շահակիցներ: Վերջիններս խորհրդի կազմում և նիստերի միջոցով անմիջական մասնակցություն են ունենում ֆակուլտետի խորհրդի աշխատանքներին՝ ապահովելով բուհի գործընթացների թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

Հասարակությանը ՄՈՒՀ-ի ընթացակարգերի, գործընթացների թափանցիկության և հասանելիության ուղղություններից մեկն էլ բուհի Կրթության որակի ապահովման և կառավարման բաժինն է(տե՛ս https://aspu.am/hy/page/krtutyan_oraki_apahovman_ev_karavarman_bazhin):

Ստորաբաժանումը, համաձայն կանոնադրության, կրթության որակի համար ապահովում է հաշվետվողականությունը ներքին (ուսանողներ, դասախոսական և վարչական կազմ) և արտաքին (դիմորդներ, շրջանավարտներ, գործատուներ, պետություն և հասարակություն) շահակիցների միջև: Բաժինն ունի նաև տեղեկատվական հարթակ, որում ներկայացվում է ՄՈՒՀ-ի որակի ապահովման ոլորտում իրականացվող գործունեությունը՝ լինելով կառավարման համակարգի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրող միասնական հարթակ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 8.3. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Հիմքեր՝

- ՀՊՄՀ-ի ուսանողների շրջանում անցկացված հարցումներ /Հավելված 8.3.1/
- Թանգարանի կանոնադրություն

ՄՈՒՀ-ի Լրատվության և հանրության հետ կապերի կենտրոնը շարունակում է ակտիվ լինել Facebook սոցիալական ցանցում (տե՛ս https://www.facebook.com/ASPUhome/). 2019 թվականի՝ 10.500 հավանում և նույնքան հետևորդ ունենալու համեմատությամբ՝ 2023 թվականի օգոստոսի տվյալներով 25.000 հավանում և 27.000 հետևորդ: Թվային ցուցանիշի այս աճը էլ ավելի է կարևորվում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս տարիների ընթացքում նկատվում է ուսանողների թվաքանակի զգալի պակաս:

Գրաֆիկ 2

ՄՈՒՀ ֆեյսբուկյան կայքի հետևորդների թվային պատկեր

Ներկայացված գրաֆիկները ուղիղ վերլուծությունն են այն հանգամանքի, որ տարեցտարի ավելացող հետևորդների շրջանում և ներքին, և արտաքին շահակիցներն են: Նրանք նախընտրում են ՄՈՒՀ-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունն ստանալ սոցիալական հարթակում, որը կարևոր դեր և նշանակություն ունեցավ հատկապես համավարակի ընթացքում (2020 թ.)՝ դառնալով դիմորդների և ուսանողների համար առավել մատչելի և օպերատիվ գործիք. 95 տոկոսով ավելացավ ֆեյսբուքյան պաշտոնական էջի այցելությունների թիվը, օրինակ՝ 7 օրում ֆեյսբուքյան հրապարակումները դիտվել է 45.641 անգամ: Հատկապես ընդունելության կազմակերպման օրերին տեղադրվել են ոչ միայն կայքի նյութերը, մասնագիտությունները ներկայացնող «Հաջողության բանաձև»-ի հաղորդումները, այլև տարբեր ֆակուլտետների, ուսանողական խմբերի, Հենակետային վարժարանի աշակերտական խորհրդի կողմից արված հրապարակումները: **2020 թվականի** մայիսի 18-ից՝ օրական 7 անգամ, 2 ժամը մեկ հրապարակվել են բուհի 41 մասնագիտությունները ներկայացնող լուսանկարներ՝ ընդունելության վերաբերյալ կից տեղեկատվությամբ: Էջը մշտապես ենթարկել ենք վերլուծության. էջի հետևորդների զգալի մասը 18-24 և 25-34 տարեկաններն են: Օպերատիվ պատասխան է տրվել նաև այդ օրերին մեսսինջեր հավելվածով ստացված նամակներին՝ օրական 50-60:

Տեղական և միջազգային կառույցների, գործընկերների, պետական կառույցների, դիմորդների, ուսանողների, դասախոսների, գործընկերների և պարզապես՝

հասարակության հետ կապն իրականացվում է նաև aspu.am@aspu.am, press@aspu.am, interdep@aspu.am էլեկտրոնային հասցեների միջոցով: Այն համակարգում են համապատասխանաբար՝ Լրատվության և հանրության հետ կապերի կենտրոնը և Միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման բաժինը: Եթե հարցումների, նամակների պատասխանները դուրս են Կենտրոնի իրավասություններից, նամակը վերահասցեագրվում է է համապատասխան ստորաբաժանմանը:

Իր գործունեությունը հանրության համար թափանցիկ և հասանելի դարձնելու համար ՄՈՒՀ-ը կիրառում է բազմապիսի հարթակներ՝ կայքէջեր, սոցիալական հարթակներ, հետադարձ կապի իրականացման բազմաթիվ մեխանիզմներ: Այդ շրջանակներում շարունակական աշխատանք է տարվում արտաքին շահակիցների, նաև գործատուների և շրջանավարտների հետ կապը ընդլայնելու, զարգացնելու և ամրապնդելու ուղղությամբ: Մասնավորապես, ՄՈՒՀ-ի Համալսարան-գործատու կենտրոնը ֆակուլտետների հետ համագործակցության արդյունքում անընդհատ բարելավում է այդ ուղղությամբ աշխատանքները՝գործատուների, ուսանողների և շրջանավարտների վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի ստեղծում, արդյունքների վերլուծություն և կառավարում, ուսումնասիրվում են շրջանավարտների պատրաստվածության վերաբերյալ գործատուի առաջարկները, խորհրդատվության տրամադրում, կարողությունների զարգացման աջակցություն, ստորաբաժանման կանոնադրությունից բխող այլ աշխատանքներ:

Կայքում գործող Կապ բաժինը շարունակում է լինել բուհ-հանրություն, այդ թվում նաև գործատուների և շրջանավարտների համար ամենաարդյունավետ գործիքը. լրացնելով պարտադիր դաշտերը՝ ՄՈՒՀ-ին են ուղղում իրենց հետաքրքրող ցանկացած հարց: Բացի այդ ՄՈՒՀ-ի Լրատվության և հանրության հետ կապերի կենտրոնը հետադարձ կապ է ապահովում ոչ միայն պաշտոնական կայքի և ֆեյսբուքյան պաշտոնական էջի, այլ իր կազմում եղած պաշտոնաթերթի, հաղորդման, յութուբի, ռադիո Ֆամայի սոցիալական էջերի միջոցով: Վերոնշյալ միջոցներով շրջանավարտներից, ուսանողներից, դիմորդներից օրական ստանում է ամենատարբեր բովանդակությամբ 20-30 նամակ. դրանք նաև ամենատարբեր բնույթի հարցումներ են, համագործակցության առաջարկներ, գիտաժողովների կամ այլ ձեռնարկների հրավերներ և այլն: Իրավասության սահմաններում դրանց օպերատիվ կերպով տրվում են պատասխաններ, անհրաժեշտության դեպքում նամակն ուղարկվում է համապատասխան բաժին: ՄՈՒՀ-ի Լրատվության և հանրության հետ կապերի կենտրոնը հետևում է նաև ամենօրյա տպագիր և առցանց մամուլին:

Իրականացնելով 2019 թվականի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման հասարակական պատասխանատվության չափանիշի վերաբերյալ փորձագետների խորհրդատվությունը (ՄՈՒՀ-ը հանրային պահանջարկի, ինչպես նաև հասարակական մարտահրավերների ուսումնասիրություն դեռևս չի իրականացնում) Լրատվության և հանրության հետ կապերի կենտրոնն իր ներքի շահակիցների շրջանում անցկացրել է սոցիոլոգիական հարցում՝ պարզելու ՄՈՒՀ-ն ընտրելու պատճառները, հետադարձ կապի առավել արդյունավետ միջոցը և այլն: Հարցմանը մասնակցել է բուհի 123 բակալավր տարբեր ֆակուլտետներից, նրանց 51.7 % -ը մասնագիտությունն ընտրել է իր ցանկությամբ, 26,7 % -ը՝ սոցիալական ցանցերի գրառումներով, 20 %-ը՝ ծնողների, 4.3 %-՝ այլ պատճառներով: Հարցվածների 35%-ը ՄՈՒՀ-ն ընտրել է մասնագիտությամբ պայմանավորված, 27,1 %-ը ծնողների կամ հարազատների խորհրդով, 10 %-ը՝ ուսման վարձը մատչելի է, 27,9 %՝ այլ պատճառներ: Հարցվածներից 37%-ը Մանկավարժականի մասին տեղեկացել է սոցիալական հարթակներից, 21,7 %-ը՝ դպրոցում հյուրընկալված դասախոսներից, 25.6 %-ը՝ «Հաջողության բանաձև» հաղորդումից, 15,7 %-ը՝ մասնակցել է ՄՈՒՀ-ում կազմակերպված օլիմպիադաներին և մրցույթներին: Պաշտոնական կայքից և ֆեյսբուկ սոցիալական հարթակից օգտվում են հետևյալ թվաքանակով՝ միշտ՝ 58,4 %, հաճախ՝ 22,3 %, երբեմն՝ 17,3% ,ոչ՝ 2%, «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթ ընթերցում են՝ 33 %՝ միշտ, 41.7 %՝ հաճախ, 15 %՝ երբեմն, 10,3 %՝ չի կարդում: Հարցվածների 48,3 %-ը՝ սովորում է 3-րդ կուրսում, 23, %-ը՝ 4-րդ, 13,3 %-ը՝ 2-րդ, իսկ 15%-ը՝ 1-ին կուրսում, հարցվածների 89 %-ը՝ իգական, 11%-ը՝ արական սեռի ներկայացուցիչներ են:


Մանկավարժականի մասին տեղեկացել է
37%
21.7%
25.6%
15.7%
սոցիալական հարթակներից
դպրոցում հյուրընկալված դասախոսներից
«Հաջողության բանալին» հաղորդումից
մասնակցել է ՄՈՒՀ-ում կազմակերպված օլիմպիադաներին և մրցույթներին


«Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթ ընթերցում են
33%
41.7%
15%
10.3%
միշտ
հաճախ
երբեմն
ոչ

Հարցմանը մասնակցել է 123 բակալավր տարբեր ֆակուլտետներից
89%
11%
ԻԳԱԿԱՆ
ԱՐԱԿԱՆ


Պաշտոնական կայքից և ֆեյսբուկ սոցիալական հարթակից օգտվում են
58.4%
22.3%
17.3%
2%
միշտ
հաճախ
երբեմն
ոչ


Մասնագիտությունն ընտրել է
51.7%
26.7%
20%
4.3%
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԿՈՒԹՅԱՄԲ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐԻ ԳՐԱԳԻՏՄԱՄԲՈՎ
ԾՆՈՂՆԵՐԻ
ԱՅԼ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ


Հարցվածները սովորում են
43.8%
23%
13.3%
15%
3-րդ կուրսում
4-րդ կուրսում
2-րդ կուրսում
1-րդ կուրսում


ՀՊՄՀ-ն ընտրել է
35%
27.1%
10%
27.9%
մասնագիտությամբ պայմանավորված
ծնողների կամ հարազատների խորհրդով
ուսման վարձը մատչելի է
այլ պատճառներ

Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներից է նաև ՄՈՒՀ-ի թանգարանը (տե՛ս https://aspu.am/hy/page/tangaran/), որը շարունակում է լինել ակտիվ գործող լրացուցիչ կրթական տարածք, իր գործունեությամբ աջակցել հասարակության կրթական, գիտական և մշակութային առաջընթացին: Թանգարանը շարունակում է համագործակցել ոլորտի տեղի և արտասահմանյան գործընկերների հետ՝ իրականացնելով նոր ծարգրեր, կազմակերպելով ցուցադրություններ, տարբեր տարիքայի խմբերի համար բազմաբնույթ միջոցառումներ՝ առցանց և վիրտուալ ցուցադրություններ, հուշ-ցերեկույթներ, բուհ-դպրոց կապի ամրապնդմանն ուղղված դասընթացներ, բաց դռների օրեր բուհի հյուրերի և մասնագիտական կողմնորոշման նպատակով ՄՈՒՀ այցելած դպրոցականների համար (տե՛ս https://aspu.am/hy/page/tangaranayin_norutyunner/1): Արդեն մեկ տասնամյակ է, ինչ բուհի թանգարանը միանում է «Թանգարանային գիշեր» միջոցառումներին՝ հյուրընկալելով մեծ թվով այցելուներ: Թանգարանն այսօր էլ հարմարեցված է տեսողական և լսողական խանգարումներ ունեցող այցելուների համար: Առաջիկայում կիրականացվի «Թանգարանի հարմարեցումը չլսող և թույլ լսող այցելուների համար» ծրագիրը (տե՛ս https://aspu.am/hy/content/hpmh_patmutyan_tangaranum_kirakanacvi_tangarani_harmarecumy_chlsogh_ev_tuyl_lsogh_ayceluneri_hamar_tsragiry/#sthash.ezsBJ7Zv.wysivkD3.dpbs)՝ «INKuLtur–հանուն մշակութային կյանքում ներառման և մասնակցության» ծրագրի՝ «Եկեք միասին պայքարենք մշակութային և սոցիալական բազմազանության համար» խորագրի ներքո:

Ի դեպ, ՄՈՒՀ-ի թանգարանը միակն է բուհական թանգարաններից, որ մասնակցում է «Թանգարանային գիշեր» միջոցառմանը: Թանգարանի աշխատակիցները վարում են մատյաններ, որտեղ այցելուները իրենց տպավորությունների մասին գրառումներ են կատարում: Առանձին մատյան վարում են նաև տեսողության խնդիրներ ունեցող այցելուների համար, որոնց հնարավորություն է տրվում գրառումները կատարել բրայլյան գրի միջոցով:

Միջազգային համագործակցության արդյունքում այսօր էլ թանգարանի էքսկուրսիան հասանելի է երեք լեզվով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն, ինչպես նաև առուդիո տարբերակով աշխարհի ցանկացած վայրում՝ IZI travel տեխնոլոգիայի միջոցով: Թանգարանում տեղադրված հպազգայուն էկրանը հնարավորություն է տալիս միանալու համացանցին և մուտք գործելու բուհի կայք ու տեղում ծանոթանալու բուհում տեղի ունեցող բոլոր իրադարձություններին:

Հանրության մտավոր, կրթական, գիտական և մշակութային առաջընթացին է ուղղված նաև վերջերս բուհի Կուլտուրայի ֆակուլտետում բացված Հայ պարարվեստի պատմության թանգարանը (տես https://aspu.am/hy/content/bacarik_/#sthash.hKgJuJOr.e2dPOXn1.dpbs): Նորաբաց թանգարանում ցուցադրության են ներկայացված տարազներ, ուսումնասիրություններ, ձեռագրեր, հայ պարարվեստի պատմության վերաբերյալ եզակի գրականություն, ինչպես նաև թանգարանային բացառիկ նմուշների կրկնօրինակներ, հսկայածավալ պատմագիտական, հնագիտական, տարազագիտական և պարագիտական աշխատանքներ: Թանգարանը միակն է Հայաստանում, որ մանրամասն անդրադառնում է հայկական պարարվեստի զարգացման ուղուն՝ սկսած շատ վաղ ժամանակներից: Կարևորելով հայկական պարարվեստի և մշակույթի դերը սերունդների զարգացման գործում ՄՈՒՀ-ն համարելով վերջինս առաջնահերթություն՝ համապատասխան ֆինանսական միջոցներ է տրամադրել՝ իր հարկի տակ ունենալու համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 8.4. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Հիմքեր՝

- Արցախյան երրորդ պատերազմում մասնակից ուսանողների և շրջանավարտների հիշատակի հավերժացման միջոցառումների մասին Գիտական խորհրդի 2021 թվականի մարտի 30-ի որոշում
- ՄՈՒՀ-ի և Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանների միջև հուշագիր ՀՊՄՀ-ի և Հայաստանի պատմության թանգարանի միջև հուշագիր /Հավելված 8.4.1/

Համալսարանում շարունակում են, որպես գիտելիքների և արժեքների փոխանցման կարևոր մեխանիզմ գործել մեծաթիվ ուսանողների կողմից իրականացվող կամավորական

աշխատանքները: Ուսանողների նախաձեռնություններին և կամավորական աշխատանքին բուհը կարևորագույն նշանակություն է տալիս և համապատասխան որոշումներով խթանում և խրախուսում վերջիններս (ըստ գիտական խորհրդի 2017 և 2018թթ. որոշումների): Հաշվետու ժամանակահատվածում բուհի մեծ թվով ուսանողներ մասնակցել են դպրոցներում միջոցառումների և խմբակների կազմակերպմանը, աշխատել են որպես ջոկատավարներ ամառային ճամբարներում, իսկ Օտար լեզուների ֆակուլտետի դասախոսները և ուսանողներն իրականացրել են նաև թարգմանչական աշխատանքներ՝ հանդիպումների և բուհի կողմից կազմակերպված բազմաթիվ միջազգային միջոցառումների ժամանակ:
Հաշվետու ժամանակահատվածքում բուհը կատարել է հետևյալ աշխատանքները.

- 2019թ.-ին ՄՈՒՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դասախոսները համագործակցելով Մինեսոտայի համալսարանի Հաշմանդամություն ունեցող անձանց ռեսուրս կենտրոնի հետ՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի Հայաստանյան գրասենյակի միջնորդությամբ ստեղծել և մշակել է ՀՀ-ում առաջին Դասագիրքը ներառական կրթության վերաբերյալ՝ «Ներառական Կրթության Ռազմավարություն»: 2019թ.-ին ստեղծվել է էլեյտրանային դասագիրքը, իսկ արդեն 2020թ.-ին 2-րդ հրատարակությունը լույս է տեսել նաև թղթային տարբերակով՝ 1500 օրինակով և բաժանվել ՀՀ մայրաքաղաքային և մարզային բազմաթիվ դպրոցներում:
- 2020 թ-ի պատերազմական իրադրություններում հայրենիքի պաշտպանության գործին են միացել Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի էրգոթերապիայի բաժնի դասախոսներն ու ուսանողները, ովքեր ամիսներ շարունակ աշխատել են վիրավոր զինծառայողների հետ Երևանի Ֆիզիկական Բժշկության Գիտահետազոտական Ինստիտուտում: Այս ամենի մասին մանրամասն լուսաբանվել է Հաջողության բանաձև հաղորդաշարում:
- 2020 թվականի 44-օրյա պատերազմի օրերին Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի հոգեբանության մասնագիտական ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմը, շրջանավարտներն ու ուսանողները աշխատել են ՀՀ տարբեր հիվանդանոցներում՝ վերակենդանացման բաժիններից մինչև վերականգնողական հաստատություններ, ինչպես վիրավոր զիվորների, այնպես էլ նրանց ընտանիքների անդամների հետ: Վերջիններս իրականացրել են կամավորական աշխատանք ամենատարբեր ուղղություններով. դասախոսներն հոգեբանական աջակցություն են տրամադրել ինչպես Արցախում, այնպես էլ այնտեղից տեղափոխված ընտանիքներին: Այդ օրերին կազմակերպվել են նաև հոգեբանական աջակցմանն ուղղված առցանց սեմինարներ: ԼՂՀ-ում էին նաև ֆակուլտետի՝ հատկապես ռազմական հոգեբանության բաժնի տարբեր տարիների շրջանավարտները:
- Մինչ օրս ՄՈՒՀ-ի մասնագիտական ամենատարբեր ձևաչափերով ծավալում է պրակտիկ հսկայածավալ աշխատանք: Դա կարծես արժեքային համակարգ է ձևավորում՝ միաժամանակ իրագործելով ՄՈՒՀ-ի առաքելությունը՝ կրթության, ուսուցման, հայրենավիրումի, ազգային ինքնության պահմպանման տեսանկյունից:

Հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման արդյունավետ մեխանիզմներից մեկն էլ երկարամյա համագործակցությունն է ՀՀ ՊՆ-ի հետ, ինչի արդյունքում բազմիցս բուհում կազմակերպվել են մասնագիտական դասընթացներ հրամանատարական և կուրսանտների կազմի համար (տե՛ս https://aspu.am/hy/content/nerkayacvec_serzhantakan_instituti_zargacman_himnakhndiry/#sthash.BulpYmt9.2xupc6gN.dpbs), իսկ ՄՈՒՀ-ի և Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանների միջև կնքվեց ուսումնադաստիարակչական և գիտակրթական բնագավառներում համագործակցության հուշագիր: Հուշագրի նպատակն է ամրապնդել ուսանողների (կուրսանտների) ուսումնական և ուսումնաարտադրական պրակտիկաների կազմակերպումը, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, կազմակերպվե մասնագիտական ուսումնական պարապմունքներ՝

գործնական և լաբորատոր, դասախոսություններ, կպատրաստվեն գիտամանկավարժական կադրեր:

Հաշվետու ժամանակահատվածում Հուշագիր է ստորագրվել նաև «Դասավանդի՛ր Հայաստան» ՀԿ-ի հետ, որը կարևորագույն ծրագրեր է իրականացնում Հայաստանում՝ ապահովելով մարզային և սահմանամերձ գյուղերը ուսուցիչներով: Համագործակցության արդյունքում բուհում բաղցել է «Դասավանդի՛ր Հայաստան» ՀԿ-ի անկյունը, որտեղ համալսարանի ուսանողները հնարավորություններ ունենում ֆորմալ և ոչ ֆորմալ հանդիպումներ իրականացնել, քննարկել և նախապատրաստել ծրագրեր հասարակության լայն շերտերի հետ աշխատելու համար:

Հուշագիր (տե՛ս https://drive.google.com/file/d/1ainM6x8gctMPjg7_frTtVTGLkiDQop7l/view)է ստորագրվել նաև ՄՈՒՀ-ի և Հայաստանի պատմության թանգարանի միջև, ինչի շրջանակներում ավարտական և մագիստրոսական աշխատանքների իրականացման նպատակով բուհի ուսանողները կստանան թանգարանային խորհրդատվություն, կկազմակերպվեն պրակտիկաների, գործնական պարապմունքների, մասնագիտական սեմինարների, թեզերի հանդիսավոր պաշտպանություններ թանգարանում և համալսարանում: Երկու հաստատությունների համար կիրականացվեն մասնագիտական կամավորական կամ հատուկ ծրագրավորված աշխատանքներ, ինչպես նաև գիտական հրատարակությունների և տեղեկատվության փոխանակում, կկազմակերպվեն համալսարանի դասախոսների և թանգարանների աշխատակիցների փոխադարձ հանդիպումներ, դասախոսություններ, վարպետության դասեր, գիտագործնական աշխատանքներ:

Բացի մասնագիտական աջակցությունից, ՄՈՒՀ Գիտական խորհրդի որոշմամբ՝ Արցախյան երրորդ պատերազմում զոհված համալսարանականների հիշատակին բուհի թիվ 3 մասնաշենքի բակում տեղադրվեց հուշարձան, հրատարակվեց Արցախյան երեք պատերազմների մասնակից 310 համալսարանականներին նվիրված կենսագրական հանրագիտարան, զոհված աբովյանականների անունով անվանակոչվեցին լսարաններ, ինչպես նաև կազմակերպվեցին այցելությունները պատերազմում զոհված, մասնակից շրջանավարտների ընտանիքներին՝ հաշվառելու նրանց կարիքները, ընդառաջելու համալսարանում սովորող նրանց հարազատներին, մասնավորապես՝ 2021-2022 ուս.տարում թույլ տալ անվճար ուսանել Արցախյան երրորդ պատերազմում զոհված համալսարանականների երեխաներին, կնոջը, քրոջը, եղբորը:

Ներկայացնել քաղաքացի դաստիարակելու գործում հաստատության ունեցած դերն ու կատարած ներդրումները: Նշել հիմնական ձեռքբերումներն ու խոչընդոտները:

ՄՈՒՀ-ի Գեղարվեստական կրթության և Կուլտուրայի ֆակուլտետները շարունակում են անփոխարինելի դեր ունենալ քաղաքացի կրթելու կարևորագույն գործում: 2019-2022 թվականներին նույնպես ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմն ու ուսանողները կամ համույթները ամենատարբեր ձևաչափերով մեծ ներդրում են ունեցել հանրության՝ արվեստի և մշակույթի վերաբերյալ գիտելիքներ տարածելու ուղղությամբ: Ի դեպ, նկարիչ-ստեղծագործողները ստեղծագործում էին նաև համավարակի ընթացքում, “Մնա տանը՝ ստեղծագործիր” կարգախոսով: https://www.facebook.com/watch/?v=2561756430810676

2022 թվականին, ողջ տարվա ընթացքում, միջոցառումների թիվն էապես աճել է՝ պայմանավորված բուհի 100-ամյա հոբելյանով:: Ամենատարբեր ձևաչափերով հոբելյանական միջոցառումներ են կազմակերպել բոլոր ֆակուլտետները՝ յուրաքաչյուրն իր մասնագիտական գործունեության շրջանակներում՝ գիտաժողովներից մինչև վերապատրաստումներ և մշակութային ձեռնարկներ: ՄՈՒՀ հենակետային վարժարանի աշակերտների, բուհի ուսանողների, տարբեր տարիների շրջանավարտների ցուցադրություններ բուհում, դրանից դուրս՝ Հայաստանի նկարիչների միությունում, Արցախում, Հայաստանի տարբեր մարզերի ցուցասրահներում, ՄԱԿ-ի հայաստանյան ներկայացուցչության գրասենյակում: :

Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետին կից գործում է «Իմ արվեստ ստուդիա»-ն: Ֆակուլտետի առաջատար մասնագետները դասավանդում են գունանկար, գծանկար, քանդակ, խեցեգործություն, տիկնիկագործություն, բատիկ, արվեստի պատմություն:

Կազմակերպվել են նաև Կուլտուրայի ֆակուլտետի երաժիշտ-դասախոսների ստեղծագործական երեկոներ տարբեր հաստատություններում, ուսանողներով համալրված համույթների համերգներ ՀՀ տարբեր մարզերում, մշակութային և տարբեր ոլորտների հաստատություններում, լուսանկարչական ցուցադրություններ, Ռեժիսուրայի բաժնի թատերական ներկայացումներ մի շարք թատրոններում:
Քաղաքացի դաստիարակելու գործում մեծ դեր ունի նաև ՄՈՒՀ Մանկավարժության ամբիոնը՝ իր կազմակերպած մրցույթներով և օլիմպիադաներով. «Ուսյալ ազգի վկայագրերը» խորագրով ուսանող-դասախոս նախագծային աշխատանքների համահամալսարանական մրցույթը, որն ամփոփվեց Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում, «Մանկավարժություն» առարկայից ամենամյա համահամալսարանական օլիմպիադան, «Երեխան մարդ է և ընկեր» քարոզների մրցույթը, «ԴԻ-ՎԻ-ՎԻ Ինթերնեյշնալ»-ի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ «Մեդիագրագիտություն» թեմայի շրջանակներում իրականացնում վերապատրաստման դասընթաց և բազմաբնույթ այլ միջոցառումներ:

Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնի նախաձեռնությամբ պարբերաբար կազմակերպվում են բնական աղետների դիմակայման, քաղպաշտպանության հիմնախնդիրներին նվիրված ուսումնական վարժանքներ, իսկ համավարակի ողջ ընթացքում (առցանց) և դրանից հետո՝ COVID-19 համավարակի տարածման կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Կազմակերպվել են նաև մարզական ներբուհական և միջբուհական խաղեր, ամենատարբեր թեմաների վերաբերյալ բանավեճեր՝ ներառական կրթության հիմնախնդիրներից մինչև տեղեկատվական տեխնոլոգիաների կարևորություն:

ՄՈՒՀ-ի գործունեության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները՝ ըստ 8-րդ չափանիշի

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
ՄՈՒՀ-ում գործում է շահակիցներին հաշվետվողականության գործուն համակարգ:	Հասարակության հետ հաղորդակցության անարդյունավետությունը կամ ոչ պրոֆեսիոնալիզմը կարող է թուլացնել *ՄՈՒՀ-հասարակություն* կապը:
ՀՊՄՀ-ում առկա է տեղեկատվությունը շահակիցներին հասանելի դարձնող բազմաբնույթ գործիքակազմ, ինչը նպաստում է թափանցիկությանն ու տեղեկատվության մատչելիությանը:	Հասարակության պահանջներին ՄՈՒՀ-ի ոչ միշտ արձագանքը կարող է թուլացնել դրանց արդյունավետությունը որոշումների կայացման գործընթացում:
ՄՈՒՀ-ում գործում են հետադարձ կապի ապահովման արդյունավետ մեխանիզմներ (ՖԲ կայք, սոցիալական ցանցեր, թեժ գիծ), ինչը թույլ է տալիս արագ արձագանքել խնդիրներին:	ՄՈՒՀ-ի ոչ բավարար չափով ներգրավվածությունը հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման գործում կարող է հանգեցնել վերջինիս կրթական դերի և սոցիալական պատասխանատվության թերագնահատմանը:
ՄՈՒՀ-ը ակտիվ ներգրավված է հասարակության կրթական կարիքներին ուղղված նախաձեռնություններին՝ ապահովելով անվճար հասանելիություն ՄՈՒՀ-ի թանգարաններին:	ՄՈՒՀ-ի արձագանքների և հետադարձ կապի ոչ բավարար հանրայնացումը կարող է թուլացնել հանրային վստահությունը:
Հնարավորություններ	**Վտանգներ**
ՄՈՒՀ-ը հնարավորություն ունի ներդնել նոր մեդիանախագծեր, որոնք նոր որակ կհաղորդեն *ՄՈՒՀ-հասարակություն* հետադարձ կապին, հետաքրքրություն	Հասարակության անտարբերությունը կրթական համակարգում տեղի ունեցող գործընթացների նկատմամբ կարող է էականորեն վնասել *ՄՈՒՀ-հասարակություն* հարաբերությունները:

կառաջացնեն օտարերկրյա դիմորդների շրջանում :	
ՄՈՒՀ-ը կարող է ներդնել հաշվետվողականության և թափանցիկության տարատեսակ գործիքներ և համակարգեր՝ հաճախակիացնելով գործունեության վերաբերյալ մշտադիտարկումները և աուդիտը:	ԶԼՄ-ներում և սոցիալական ցանցերում ՄՈՒՀ-ի գործունեության վերաբերյալ բացասական հրապարակումները կարող են սպառնալիք հանդիսանալ Համալսարանի հեղինակությանը և վտանգել *համայնք-ՄՈՒՀ* հարաբերությունները:
ՄՈՒՀ-ը կարող է զարգացնել հետադարձ կապի հավաքագրման և տվյալների վերլուծման մեխանիզմները՝ մշակելով նոր գործիքներ՝ կայք, չատբոթ-եր և այլն:	Հասարակության հետ տարվող աշխատանքների արդյունավետությունը չափող մեխանիզմների/գործիքների անկատարությունը կարող է վտանգել *ՄՈՒՀ-հասարակություն* կապերը:

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները

- Հասարակության հետ տարվող աշխատանքների արդյունավետությունը չափող մեխանիզմների/գործիքների մշակում և ներդրում
- ՄՈՒՀ-ի գործունեության վերաբերյալ հետաքրքրվողների լայն շրջանակների քանակի ավելացմանն (այդ թվում արտերկրից) ուղղված ծրագրի, գործողությունների մշակում և կիրառում
- Հասարակությանը գիտելիքների փոխանցման և հետադարձ կապի ապահովման մեխանիզմների զարգացման ծրագրի մշակում և կիրառում
- *ՄՈՒՀ-հասարակություն* հետադարձ կապի ապահովման, ինչպես նաև օտարերկրյա դիմորդների շրջանում հետաքրքրությունների առաջացման համար նոր մեդիանախագծերի մշակում
- ԶԼՄ-ներում և սոցիալական ցանցերում ՄՈՒՀ-ի գործունեության վերաբերյալ հրապարակումների վերահսկման մեխանիզմների և դրանց կիրառման ուղղությամբ աշխատանքների կազմակերպում

ՉԱՓԱՆԻՇ 9: ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՄՈՒՀ-Ը ԽՐԱԽՈՒՍՈՒՄ Է ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ և ԶԱՐԳԱՑՈՒՄԸ՝ ՆՊԱՍՏԵԼՈՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆԸ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՄՈՒՀ) միջազգային համագործակցության բաժինը համակարգում և իրականացնում է համալսարանի միջազգային համագործակցությունը ՄՈՒՀ-ի միջազգայնացման ռազմավարությանը համապատասխան: Բաժինը համակարգում է Համալսարանի ռազմավարական խնդիրների իրագործումը, նախաձեռնում համագործակցություններ օտարերկրյա բուհերի հետ՝ նպաստելով համալսարանի ներգրավածծությանը համաշխարհային կրթական գործընթացներում, մշակում համագործակցային ծրագրեր համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների հետ և հետևում դրանց իրականացմանը: Տես՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման ռազմավարական ծրագիր(տե՛ս https://aspu.am/website/images/files/Razmavarakan%20cragir_2020-2025.pdf) ռազմավարական ուղղություն՝ 9:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 9.1. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Հիմքեր՝

- Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոսների և վարչական աշխատակիցների շարժունության իրականացման կարգ (Հավելված 9.1.1)
- Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում սովորող ուսանողների և համալսարան ժամանող օտարերկրյա սովորողների ակադեմիական շարժունության իրականացման կարգ (Հավելված 9.1.2)
- Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոսների և վարչական աշխատակիցների միջազգային դրամաշնորհային ծրագրերին մասնակցության կարգ (Հավելված 9.1.3)

Փաստաթղթերի միջոցով կանոնակարգվում է շարժունության և այլ դրամաշնորհային ծրագրերի մասին տեղեկատվության տարածման խողովակները, դիմելու կարգը, ընտրության չափանիշները, ծրագրում ընդգրկված ստորաբաժանումների աշխատանքի նկարագրությունը և պարտականությունները, միջազգային ծրագրերին մասնակից աշխատակիցների իրավունքներն ու պարտականությունները մինչև ծրագրին մասնակցելը և մասնակցությունից հետո: Փաստաթղթերը ներառում են նաև աշխատանքները կանոնակարգող մի շարք ձևանմուշներ ներառյալ՝ առարկաների համադրության թերթիկ /արտագնա սովորողների համար նախատեսված/, դիումի և զեկուցագրի նմուշ, transcript of records /օտարերկրյա սովորողների համար/, certificate of attendance /օտարերկրյա սովորողների համար/, զեկույցի նմուշ /Օտարերկրյա բուհ-եր այցելած դասախոսների/վարչական աշխատակիցների համար/:

Փաստաթղթերը մեծապես նպաստել են ՄՈՒՀ-ում միջազգայնացման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը և կանոնակարգմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 9.2. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

Հիմքեր՝

- Միջազգային համագործակցության բաժնի կանոնադրություն

- Միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոնի կանոնադրություն

ՄՈՒՀ-ի միջազգային համագործակցության բաժինը, որը 2023թ-ից վերանվանվել է *միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոն*-ի, համակարգում է ՄՈՒՀ-ի միջազգայնացման ուղղությամբ ռազմավարական խնդիրների լուծմանն ուղղված բոլոր գործողություններն ու ընթացակարգերը: Վերանվանումը հիմնավորված է այն հանգամանքով, որ բաժինը իրականացնում և համակարգում էր ոչ միայն միջազգային, այլ նաև ազգային ծրագրեր: ՄՈՒՀ-ի աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորը համակարգում և միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոնի աշխատանքները: **Մինչև 2022թ. բաժինն ունեցել է 5 հաստիք՝ 1 բաժնի պետ, 1 բաժնի պետի տեղակալ, 1 գլխավոր մասնագետ և 2 մասնագետ: 2023թ. ից սկսած հաստիքացուցակը փոխվել է՝ 1 կենտրոնի ղեկավար, 1 կենտրոնի ղեկավարի տեղակալ, 2 գլխավոր մասնագետ և 2 մասնագետ**:

Միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոնի յուրաքանչյուր հաստիքային աշխատող կատարում է իր գործառույթները՝ համաձայն պաշտոնի անձնագրով սահմանված պատասխանատվությունների: Կենտրոնի աշխատակիցները վճռորոշ դեր են խաղում միջազգայնացման ջանքերը դյուրացնելու և կառավարելու գործում: Կենտրոնի անձնակազմը տիրապետում է միջազգային մակարդակում համագործակցություն իրագործելու անհրաժեշտ գիտելիքի և հաղորդակցման կարևոր հմտություններին, ինչպես նաև անգլերեն և ռուսերեն լեզուներին, որը հնարավորություն է տալիս ապահովել ՄՈՒՀ-ի հաղորդակցությունը օտարերկրյա գործընկերների հետ, արդյունավետ կազմակերպել համալսարանի միջազգայնացմանն ուղղված ծրագրերը, ինչպես նաև ընդլայնել համալսարանի համագործակցության սահմաններն ու աշխարհագրությունը: Աշխատակիցների անմիջական գործառույթների մեջ է մտնում ինչպես միջազգային համագործակցության գործողությունների տեխնիկապես կազմակերպումը և ընթացակարգերի պահպանումը, այնպես էլ բարձրագույն կրթության ասպարեզում վերջին առաջխաղացումների և ձեռքբերումների վերաբերյալ տեղեկատվության ձեռք բերումը, միջազգայնացման քաղաքականության և կանոնակարգերի և ուղեցույցների իմացությունը, որոնք կարգավորում են բարձրագույն կրթությունը ազգային և միջազգային մակարդակներում: Տիրապետում են գործընկերային հարաբերություններ հաստատելու նպատակով բանակցելու հմտություններին, որի արդյունքում բուհում ավելանում են համագործակցության պայմանգերը, ուսանողների և անձնակազմի փոխանակման ծրագրերը, համատեղ հետազոտական նախագծերը և այլն: Կենտրոնի աշխատակազմը տիրապետում է նաև ֆինանսական կառավարմանը, որն իրենից ենթադրում է արտաքին ֆինանսավորման դիմելը, դրամաշնորհներ գրելը և կառավարել կրթաթոշակային ծրագրերը: Միջազգայնացման ոլորտի գիտելիքներն ու հմտությունները բարելավելու նպատակով կենտրոնի աշխատակազմը և բուհի այլ ստորաբաժանումների աշխատակիցներ ազգային և միջազգային մակարդակներում մասնակցում են մասնագիտական զարգացման ծրագրերի, սեմինարների և կոնֆերանսների:

Միջազգայնացման գործընթացներում և բարձրագույն կրթության բարեփոխումների իրագործման ոլորտում կենտրոնի աշխատակիցների մասնագիտական գիտելիքները նպաստում են համալսարանի միջազգայնացման գործընթացների ուղղորդմանը: Կենտրոնի հիմնական առաքելությունն է խթանել համալսարանի միջազգային համագործակցությունը և գործունեությունը, համակարգել և խթանել ՄՈՒՀ-ի մասնակցությունը միջազգային ծրագրերին և համագործակցությունը համապատասխան բնագավառում ճանաչված և առաջադեմ հաստատությունների հետ: Վերջինիս հիմնական գործառույթն ուղղված է՝ բարձրացնելու ՄՈՒՀ- ի առաքելությամբ սահմանված տրամադրվող կրթության, ուսումնական ծրագրերի և մանկավարժական կադրերի պատրաստման որակը և համապատասխանելիությունը միջազգային չափանիշներին, ինչպես նաև ՄՈՒՀ-ի մրցունակության ապահովմանը միջազգային մակարդակում: Բացի այդ ՄՈՒՀ-ն իրականացնում է ապակենտրոնացված միջազգայնացման քաղաքականություն՝ բոլոր ֆակուլտետները ներգարավված են միջազգայնացման գործընթացների իրականացմանը: Հանդես են գալիս նաև առաջարկներով:

Միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոնի հիմնական գործառույթներն ապահովում են Համալսարանի միջազգայնացման գործընթացների իրականացումը երեք մակարդակներում՝ ինստիտուցիոնալ, ենթակառուցվածքային և ուսանողական: Դրանք են՝

- Միջազգային գործընկերության կառավարում՝ գործընկեր կառույցների հետ ամբողջ աշխարհում հարաբերությունների հաստատում և պահպանում, պոտենցիալ գործընկեր համալսարանների բացահայտում, համաձայնագրերի բանակցություններ և համագործակցության խթանում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ուսանողների փոխանակումը, համատեղ հետազոտական նախագծերը և պրոֆեսորադասախոսների անձնակազմի շարժունակության ծրագրերը;
- Կարողությունների զարգացման և այլ միջազգային դրամաշնորհային ծրագրերի մշակում և իրականացում;
- Ուսանողների փոխանակման ծրագրերի խթանում և իրականացում՝ ուսանողների փոխանակման ծրագրերի համակարգում, ներառյալ դիմումների գործընթացների կառավարումը, արտագնա և ներգնա փոխանակման ուսանողներին տեղեկատվություն և աջակցություն տրամադրելը, փոխանակման պայմանագրերի կատարումն ապահովելը, մուտքի արտոնագրի, ապահովագրության, կացության ձեռքբերումը;
- Աջակցություն օտարերկրյա ուսանողներին՝ ընդունելության, վիզաների և կացության կանոնակարգերի մասին տեղեկությունների տրամադրում, կողմնորոշման ծրագրերի կազմակերպում, բնակարանային և մշակութային հարմարվողականության վերաբերյալ ուղեցույցներ առաջարկելը և նրանց ուսման ընթացքում ծագած ցանկացած մտահոգությունների կամ խնդիրների լուծում;
- ՄՈՒՀ-ի օտարերկրյա հյուրերի և պատվիրակությունների հրավերների անհրաժեշտ փաստաթղթերի և վիզաների ձևակերպում, վերջիններիս ընդունելության կազմակերպում;
- Աջակցություն արտերկրում ապրող ՄՈՒՀ շրջանավարտներին՝ անհրաժեշտ թղթաբանության տրամադրման հարցերում;
- Արտերկրի հաստատություններից ստացված պաշտոնական հարցման հիման վրա ՄՈՒՀ-ում սովորող քաղաքացիների ու շրջանավարտների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում;
- ՀՀ և արտասահմանյան այլ բուհերի համապատասխան ստորաբաժանումների հետ համագործակցություն և փորձի փոխանակում;
- Միջազգային գիտակրթական հաստատությունների և գիտահետազոտական կենտրոնների հետ պաշտոնական փաստաթղթերի փոխանակում ու նամակագրության վարում;
- Ամառային դպրոցի կազմակերպում և իրականցում՝ ծրագրի մշակում, մասնակիցների ընտրություն և համագործակցության հաստատում արտասահմանյան տարբեր բուհերի հետ;
- Աջակցություն միջազգային սեմինարների, գիտաժողովների, գիտաաշխատանքային հանդիպումների և գիտակրթական ցուցահանդեսների իրականացման, գրականության փոխանակման և այլ հարցերում;
- Շարունակական համագործակցություն ՄՈՒՀ-ի ֆակուլտետների և ամբիոնների հետ, կլոր սեղանների, քննարկումների, թեմատիկ հանդիպումների կազմակերպում, ուսանողների, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի հետ,
- ՄՈՒՀ-ի տարբեր ֆակուլտետների կրթական ծրագրերի մասնագրերի և առարկայական նկարագրերի անգլերեն և ռուսերեն տարբերակների մշակման տեխնիկական աջակցության տրամադրում;
- Տվյալների կառավարում և հաշվետվություն՝ ճշգրիտ գրառումների և տվյալների բազաների պահպանում՝ կապված միջազգային գործընկերությունների, ուսանողների շարժունակության և միջազգային գործունեության հետ:

ՄՈՒՀ-ի միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոնն իր գործառույթների իրագործման և ընդլայնման նպատակով պարբերաբար իրականացնում է նաև

ուսումնասիրություն արտաքին աղբյուրների ֆինանսավորմամբ միջազգային ծրագրերի հնարավորությունների վերաբերյալ, տրամադրում համապատասխան տեղեկատվությունը ՄՈՒՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումներին, ուսանողներին՝ կենտրոնի ֆեյսբուքյան էջի միջոցով (տե՛ս https://www.facebook.com/ARMSPUINTERDEP), կազմակերպում իրազեկման բարձրացման սեմինարներ: Համալսարանի ստորաբաժանումների կողմից համապատասխան հետաքրքրվածության ցուցաբերման պարագայում կենտրոնը աջակցում է դրամաշնորհային հայտի նախապատրաստմանը, տրամադրում է անհրաժեշտ օրինակելի ձևերը, երաշխավորական նամակներ, կատարում համապատասխան ծրագրերի գրանցում, իսկ շահած ծրագրերի պարագայում իրականացնում վերջիններիս իրականացման վերահսկումը:

Անհրաժեշտ խորհրդատվություն և աջակցություն ստանալու համար կենտրոնի աշխատակիցները հասանելի են ուսանողներին, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմին աշխատանքային ժամերին ինչպես առերես, այնպես էլ հեռահար տարբերակներով:

2019թ.ից սկսած կենտրոնը կազմակերպում է Էրազմուս+ և միջազգայնացման իրազեկման շաբաթ, որին հնարավորություն են ունենում մասնակցելու և տեղեկատվություն ստանալու բուհի բոլոր ֆակուլտետների առաջին և երկրորդ կուրսի ուսանողները, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական կազմը: Շաբաթվա ընթացքում բուհի Էրազմուս+ փոխանակման ծրագրերին մասնակցած ուսանողները, դասախոսները ներկայացնում են ծրագրերին մասնակցության իրենց փորձը և պատասխանում են հարցերին: Հանդիպումների ընթացքում կենտրոնը ներկայացնում է նաև միջազգային ծրագրերին դիմելու ընթացակարգը: Հանդիպումների միջոցով կենտրոնը նաև ստուգում է, գնահատում է իր կողմից կատարած գործունեությունը, իրականացվում է կարիքների գնահատում, իրազեկվածության բարձրացում, խնդիրների վերհանում և վերլուծություն: Վերհանված խնդիրները քննարկվում են ղեկավարության հետ՝ համալսարանի հետագա բարելավման ծրագրերում ընդգրկելու նպատակով:

ՄՈՒՀ-ի միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոնի գործունեության ընթացքում առկա են նաև որոշակի մարտահրավերներ և խնդիրներ, որոնք խոչընդոտ են հանդիսանում ստորաբաժանման բնականոն և արդյունավետ գործունեության համար: Այդ խնդիրներից են.

Ներքին մարտահրավերներ	**Արտաքին մարտահրավերներ**
Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծրագրերի մշակման հմտությունների պակաս, մոտիվացիայի և փափուկ հմտությունների պակաս	Համավարակը, տարածաշրջանային իրավիճակ, պատերազմ
Սոցիալ մշակութային մարտահրավերներ	Վիզայի ընթացակարգեր, սոցիալ մշակութային մարտահրավերներ

Կենտրոնի ներքին մարտահրավերները ենթակա են լուծման և հաղթահարման, և այդ ուղղությամբ իրականացվում են աշխատանքներ: Այսպիսով, արդյունավետ արտաքին հարաբերությունների ռազմավարությունը և ապակենտրոնացված միջազգայնացման քաղաքականության որդեգրումը խորհրդանշում են Համալսարանի վճռական հանձնառությունը՝ խթանելու միջազգային համագործակցությունն ու համագործակցությունը: Այս բազմակողմանի մոտեցումը ոչ միայն հաստատության գլոբալ տեսլականի վկայությունն է, այլ նաև ծառայում է որպես դինամիկ և փոխկապակցված ակադեմիական միջավայրի ստեղծում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 9.3. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Հիմքեր՝

- https://aspu.am/hy/page/sharzhunutyan_tsragrer/

- https://aspu.am/hy/page/mijazgayin_hamagortsakcutyun/
- https://aspu.am/hy/page/hamagortsakcutyan_paymanagrer/
- https://aspu.am/website/images/files/hashvetvutyun_2022.pdf /էջ 1096/
- https://aspu.am/website/images/files/2021%20%20%20%20%20%2017.01.2022.pdf /էջ 571/
- https://aspu.am/website/images/files/HPMH%202020_%20terekan%20hashvetvutyun.pdf /էջ 537/
- https://aspu.am/website/images/files/HPMH%202019_tarekan%20hashvetvutyun.pdf /էջ 356/

ՄՈՒՀ-ը հանդիսանում է Համալսարանների Եվրասիական Ասոցիացիայի, Եվրոպայի մանկավարժական համալսարանների ռեկտորների Ասոցիացիայի և Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության լիիրավ անդամ: Այդ անդամակցությունը հնարավորություն է ընձեռում Համալսարանին՝ մշտապես տեղեկացված լինելու հնարավոր միջազգային ծրագրերից, ցուցաբերելու ակտիվ մասնակցություն միջազգային կոնֆերանսներին և հետազոտական ծրագրերին, ինչպես նաև իրականացնելու ուսանողների փոխանակում:

ՄՈՒՀ-ի տեղական և միջազգային համագործակցությունների արդյունավետությունը գնահատելու համար հարկ է վեր հանել համեմատական որակական և քանակական առաջընթացը՝ համաձայն առաջընթացի կողմնորոշիչ ցուցանիշների:

2019թ. սկսած ՄՈՒՀ-ն ընդլայնել է համագործակցության եզրերը հետևյալ բուհերի հետ՝ Ռուսաստան /Հարավային Դաշնային համալսարան, Ուշինսկու անվան Յարոսլավի պետական մանկավարժական համալսարան, Ուրալի պետական մանկավարժական համալսարան, Նիժնի Նովգորոդի Կ. Մինինի անվան պետական մանկավարժական համալսարան, Պերմի պետական ազգային հետազոտական համալսարան, Ստավրոպոլի պետական մանկավարժական ինստիտուտ, Նիժնի Նովգորոդի Լոբաչևսկու անվան ազգային հետազոտական համալսարան, Ուրալի դաշնային համալսարան, Հյուսիս Կովկասյան համալսարան/, Շվեյցարիա /Ցյուրիխի արվեստների համալսարան, Ցյուրիխի մանկավարժական համալսարան/, Շվեդիա /Շվեդիայի թագավորական համալսարան/, Պորտուգալիա /Ավեյրոյի համալսարան/, Ամերիկայի Միացյալ Նահանգներ /Կալիֆոռնիայի Լոս Անջելեսի համալսարան, Պերկինսի կույրերի դպրոց/, Սլովակիա /Ռուժեմբերոկի կաթոլիկ համալսարան/, Լեհաստան /Յան-Դուգլովիչի համալսարան, Վարշավայի համալսարան, Վրոցլավի համալսարան/, Իսպանիա /Սեվիլիայի համալսարան, Վալենսիայի համալսարան/, Հունաստան /Կրետեի համալսարան, Պանթեոնի համալսարան, Աթենքի Ազգային և Կապոդիստրական համալսարան/, Նիդերլանդներ /Մաաստրիխտի համալսարան/, Ճապոնիա /Սագայի համալսարան/, Վրաստան /Իվանե Ջավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարանի Մեդիա և հեռուստատեսային արվեստի քոլեջ/:

Հարկ է նշել, որ Համալսարանի ղեկավարությունը, հետամուտ լինելով իր որդեգրած միջազգայնացման քաղաքականությանը, ներդրել է բոլոր ջանքերը վերոնշյալ համագործակցային պայմանագրերի դրույթները իրականացնելու նպատակով: ՄՈՒՀ-ի գրեթե բոլոր համագործակցային պայմանագրերը կիրառելի են տարբեր միջոցառումներում. մասնակցություն կոնֆերանսներին, համատեղ հրատարակություններ, հետազոտություններ և այլն: Կարևորելով ՄՈՒՀ-ի միջազգային համագործակցության զարգացումն ու ընդլայնումը, ինչպես նաև համալսարանի ռազմավարական խնդիրների իրագործումը, միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոնը իրականացրել է մի շարք միջոցառումներ: Մասնավորապես. կենտրոնը պլանավորել և կազմակերպել է մի շարք պատվիրակությունների այցեր՝ միտված համագործակցային ուղղությունների զարգացմանը, ինչպես նաև կարևորելով համալսարանի ներկայացչությունը այլ երկրներում տարբեր գիտաժողովների և միջոցառումների ընթացքում՝ ՄՈՒՀ-ի կենտրենը կազմակերպել է մի շարք այցելություններ: Ինչպես նաև, հատուկ տեղ հատկացնելով օտարերկրյա մասնագետների կողմից դասախոսությունների կարևորությանը ՄՈՒՀ-ում, կազմակերպվել են մի շարք դասախոսություններ և վերապատրաստումներ: Կարևորելով ՄՈՒՀ-ի միջազգային համագործակցության զարգացումն ու ընդլայնումը, ինչպես նաև համալսարանի ռազմավարական խնդիրների իրագործումը՝ համավարակի ժամանակահատվածում ապահովվել է համալսարանի ուսանողների և

գիտամանկավարժական կազմի մասնակցությունը միջազգային առցանց ձևաչափով իրականացվող մի շարք դասընթացներին, սեմինարներին և գիտաժողովներին:

Համագործակցության շրջանակներում Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանի առաջատար մասնագետները «Ռուսաց լեզվի և գրականության դպրոցական դասավանդման նոր մոտեցումներ» դասընթացի շրջանակներում որակավորման բարձրացման քառօրյա դասընթացներ են անցկացրել թվով 130 մանկավարժների և ՄՈՒՀ-ի Պատմության և հասարակագիտության, Օտար լեզուների ֆակուլտետների դասախոսների համար: Նույն համագործակցության շրջանակներում ՄՈՒՀ 3 ուսանող մասնակցել են Ստավրոպոլում կայացած Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանի (ՌԴ) կազմակերպած «Ազգային տնտեսական համակարգերի զարգացման միտումները գլոբալ վերափոխումների դարաշրջանում» խորագրով «Աշնանային դպրոց-2022» ծրագիրին: Նույն համագործակցության շրջանակներում Ռոսստրուդնիչեստվոյի աջակցությամբ ՄՈՒՀ-ում իրականացվել է միջազգային ձմեռային դպրոց «Ծրագրային գործունեության դպրոց» խորագրով, որին մասնակցել են Հայաստանի, Բելառուսի, Ղրղզստանի և Տաջիկստանի ուսանողները՝ թվով 50 հոգի:

ՄՈՒՀ-ի 2 ուսանող առցանց ձևաչափով մասնակցել են Արմավիրի պետական մանկավարժական համալսարանում կայացած ՞Федерального акселератора педагогических проектов՞ վերապատրաստմանը: 2023թ. ՄՈՒՀ-ի պատվիրակությունը ռեկտոր Սրբուհի Գևորգյանի ուղեկցությամբ հյուրընկալվել է Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանում:

Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության անդամակցության շրջանակներում 2019թ. միջազգային համագործակցության բաժնի մեկ աշխատակից մասնակցել է Բուխարեստում կայացած համակարգող համալսարանների հանդիպմանը: 2019թ. ՄՈՒՀ 1 ուսանող մասնակցել է Ֆրանկոֆոն ուսանողների փառատոնին: 2021թ. Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության «Երևանի ֆրանկոֆոնիայի թվայնացված կենտրոն ներկայացուցչությունը» ՄՈՒՀ-ի հետ համատեղ իրականացրել է «Իմ թեզը 180 վայրկյանում» մրցույթ: Մրցույթը Հայաստանում անցկացվել է առաջին անգամ: 2023թ. սեպտեմբերի 4-9-ը ևս մեկ ուսանող Չեռնոգորիայում մասնակցել է Ֆրանկոֆոն ուսանողների փառատոնին:

Իտալիայի Մաչերատայի համալսարանի հետ համագործակցության արդյունքում ՄՈՒՀ 2 դասախոս հնարավորություն են ստացել 2 ամիս դասավանդել Մաչերատայի համալսարանի ուսանողներին: ԱՄՆ դեսպանատան հետ համագործակցության շրջանակներում Ֆուլբրայթ դրամաշնորհային ծրագրով ՄՈՒՀ-ն հյուրընկալել է ԱՄՆ համալսարանների 2 դասախոսների ՄՈՒՀ-ում մեկ տարի դասավանդելու նպատակով: Նիդերլանդների Մաստրիխտի համալսարանի Հոգեբանության ֆակուլտետի ուսանողները և ՄՈՒՀ կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողները միասին իրականացրել են նախագծային աշխատանք, որի արդյունքները ամփոփվել են՝ կազմակերպելով միջոցառում Մաստրիխտի համալսարանի դասախոսների և ուսանողների մասնակցությամբ:

Ցյուրիխի արվեստների համալսարանի և ԱՐՏԱՍ հիմնադրամի համագործակցությամբ մեկնարկել է 2 ծրագիր ՄՈՒՀ գեղարվեստական կրթության ֆակուլտետում: Ծրագրերից մեկին մասնակցում են ուսանողներ և դասախոսներ Ցյուրիխի արվեստների, Լուցերնի կիրառական գիտությունների և արվեստի, Շվեցարիայի կիրառական գիտությունների և արվեստի հյուսիս-արևմտյան համալսարաններից և ՄՈՒՀ-ից: Ծրագրին մասնակցում են նաև դասախոսներ Վրաստանից և Աբխազիայից, որոնք հայ դասախոսների հետ համատեղ իրականացնում են փոխայցելություններ: Մասնավորապես, առաջին ծրագրի շրջանանակներում 2019թ. Հայաստան երկշաբաթյա այցով ժամանել են Ցյուրիխի համալսարանի թվով 8 ուսանող և 2 դասախոս, ծրագրի շրջանակներում նախատեսված պատասխան այցով Ցյուրիխի արվեստների համալսարանում իրենց աշխատանքներն են շարունակել ՄՈՒՀ-ից թվով 8 ուսանող՝ 2 դասախոսի ուղեկցությամբ: 2021թ. գեղարվեստական կրթության ֆակուլտետի թվով 9 ուսանող պրակտիկա են անցել Ցյուրիխի արվեստների համալսարանում: Նույն համագործակցության շրջանակներում Գեղարվեստական կրթության ֆակուլտետում իրենց երկշաբաթյա պրակտիկան են անցկացրել Շվեյցարիայի՝ Լյուցերնի, Բազելի և Ցյուրիխի արվեստի համալսարանների 7 ուսանող: Ծրագրին մասնակիցել են

նաև նույն համալսարանների 3 դասախոսներ, ինչպես նաև Արտաս հիմնադրամի ներկայացուցիչները: Ծրագրի մասնակիցներին են միացել նաև Վրաստանի Իլյայի անվան պետական և Աբխազիայի պետական մանկավարժական համալսարանների 4 դասախոս: Երկրորդ ծրագրի շրջանակներում Աղավնաձորի ուսումնական բազայում 2022թ.ին և 2023թ. ին իրականացվել է <<Հայկական դպրոցներում <<Տեխնոլոգիա>> և <<Կերպարվեստ>> առարկաների ուսուցիչների կարողությունների ամրապնդման>> վերապատրման ծրագիրը՝ երկու փուլերով:

Համագործակցության է հաստատվել Չինաստանի ժողովրդական հանրապետության երկու բուհերի հետ: Չինաստանի Հարավ-արևելյան համալսարանի հետ մեկնարկել է ՄՈՒՀ-ում չիներեն, որպես երկրորդ օտար լեզու ներդնելու ծրագիրը 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակում: Արդյունքում Օտար լեզվի ֆակուլտետում Չինարենը որպես երկրորդ լեզու դասավանդելու նպատակով ՄՈՒՀ են եկել Չինաստանից երկու մագիստրոս ուսանող: ՀՀ-ում Չինաստանի դեսպանության հովանավորությամբ ՄՈՒՀ-ում հիմնադրվել է Չինական մշակույթի կենտրոն:

ՄՈՒՀ-ն ընդգրկվել է https://www.topuniversities.com/universities/khachatur-abovyan-armenian-state-pedagogical-university համալսարանների վարկանշային աղուսյակում: ՄՈՒՀ-ն ներկայացրել է հայտ QS Ranking վարկանշային էջում ընդգրկելու համար:

2022թ. հունիս ամսից ՄՈՒՀ-ն մեկնարակել է համագործակցություն ամերիկյան SRAS կազմեկերպության հետ: Համագործակցության շրջանակներում 2023թ. մայիսի 29-ից օգոստոսի 4-ը շուրջ 22 ամերիկացի ուսանողներ ՄՈՒՀ օտար լեզուների ֆակուլտետում մասնակցել են ռուսաց լեզվի դասընթացների:

Բացի այդ համագործակցային պայմանագրերից ՄՈՒՀ-ն ներգրավված է 3 Էրազմուս+ (ԲՈՒՍԹ, ՄՈԴԵՍՏ, ԱՐՄԴՈԿՏ), 1 Էրազմուս+ Ժան Մոնե գործողությունների, 2 Ավստրիայի զարգացման գործակալության կողմից հովանավորվող, Շվեցարիայի կառավարության կողմից ֆինանսավորվող «Better Teaching for Better Learning» ծրագրերում, որոնցից՝ ԷՐԱԶՄՈՒՍ+ ԲՈՒՍԹ, ծրագրում հանդիսանում է համակարգող:

ԷՐԱԶՄՈՒՍ+ԲՈՒՍԹ ծրագիրը Հայաստանյան համալսարանների միջազգայնացման ռազմավարության և մարքետինգի խթանմանն ուղղված եռամյա ազգային ծրագիր է: Ծրագրի նպատակն է նպաստել և խրախուսել ՀՀ Բարձրագույն կրթության հետագա միջազգայնացումը՝ մշակելով ազգային և ինստիտուցիոնալ քաղաքականության համապատասխան շրջանակ և գործիքակազմ: Ծրագրի ՀՀ գործընկերներն են՝ Հայաստանի Ամերիկյան Համալսարան, Շիրակի պետական համալսարան, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, Կրթության և գիտության նախարարություն և Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն: Ծրագրի ԵՄ գործընկերներն են՝ Կատալոնիայի պոլիտեխնիկական համալսարան /Իսպանիա/, Տալինի տեխնիկական համալսարան /Էստոնիա/, Շվեդիայի տեխնիկական թագավորական համալսարան, Լիսաբոնի համալսարան /Պորտուգալիա/ և Վերգիլիոսի և Ռովիրայի համալսարան /Իսպանիա/:

Ծրագրի մեկնարկը տրվել է 2017 թվականին, ավարտը՝ 2020թ.: Ծրագրի շրջանակներում մշակվել են ՀՀ բարձրագույն կրթության միջազգայնացման ռազմավարություն (տե՛ս https://drive.google.com/file/d/1HU0HNLd0qzLosjXk5jOwpd8M8wwl586f/view), Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության միջազգայնացման ռազմավարության գործողությունների պլան(տե՛ս https://drive.google.com/file/d/1i4vOKQav0TKwv4a3occ6BRIvlW3foelg/view), ուսանողների շարժունության կարգերը (տե՛ս https://drive.google.com/file/d/1STIKd-jI_l_FUsWn8R29u23_DonWYxGu/view), համալսարանների մարքեթինգային պլան (տե՛ս https://drive.google.com/file/d/1Eqz8bLQJ-PNkENh0dPjphXdL2dG89fCd/view), Կրթական ծրագրերի ազգային մոդելի մշակման և օտարերկրյա որակավորումների ճանաչման և կրեդիտների փոխանցման մեթոդական ուղեցույց (տե՛ս https://drive.google.com/file/d/1uO5LsdXBH7chaEiRbg9GzprZHEDfpZZK/view), միջազգայնացման ցուցիչներ, ստեղծվել է Why study in Armenia /հոլովակը/, և վերաթողարկվել է ազգային հարթակ նախկինում գործող www.studyinarmenia.am կայքը: Այն տրամադրում է համապարփակ և արդի

տեղեկատվություն Հայաստանում բուհերի, կրթական ծրագրերի, ընդունելության ընթացակարգերի, կրթաթոշակների և ուսանողական կյանքի մասին: Կայքը բարձրացնում է ՀՀ բարձրագույն կրթության տեսանելիությունը համաշխարհային մասշտաբով և հեշտացնում է միջազգային ուսանողների հավաքագրումը:

Ուսանողների շարժունության հստակ կանոնակարգերի սահմանումը նպաստում է ուսանողների թափանցիկ ընտրությանը և սահուն փոխանակմանը միջազգային գործընկեր համալսարանների հետ: Այս կարգերը ապահովում են կրեդիտների պատշաճ փոխանցում, ակադեմիական որակ և օժանդակ ծառայություններ ինչպես ներգնա, այնպես էլ արտագնա ուսանողների համար:

Ընդհանուր առմամբ, մշակված փաստաթղթերը նպաստում են ՀՀ բարձրագույն կրթության միջազգայնացման առաջխաղացմանը՝ տրամադրելով ռազմավարական ուղղորդում, նպաստելով ուսանողների շարժունակությանը, ապահովելով որակի ապահովում և բարձրացնելով միջազգային կրթական լանդշաֆտի տեսանելիությունը:

Էրազմուս+ ARMDOCT-ը /**Դոկտորական կրթության բարեփոխումը հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան**/ եռամյա ծրագիր է, որի նպատակն է բարեփոխել դոկտորական կրթությունը Հայաստանում Զալցբուրգի սկզբունքներին համահունչ՝ ազգային քաղաքականության և իրավական կարգավորող փաստաթղթերի, ինստիտուցիոնալ ընթացակարգերի վերանայման, գիտության և հետազոտության ինտեգրման համար անհրաժեշտ համակարգի ապահովման միջոցով: Այն ուղղված է խթանելու բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների, արդյունաբերական ոլորտի սերտ համագործակցությունը՝ ուղղված դոկտորական կրթության միջազգայնացմանը, Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին (EHEA) և Եվրոպական բարձրագույն հետազոտական տարածքին (ERA) ինտեգրմանը:

Ծրագիրը մեկնարկել է 2020 թվականին: Ծրագրի շրջանակներում ՄՈՒՀ-ն մասնակցել է երրորդ աստիճանի ընդունելության, ուսուցման և հետազոտության, աստիճանաշնորհման, կրեդիտային համակարգի ինչպես նաև բարեվարքության կանոնակարգերի մշակմանը և վերամշակմանը: ՄՈՒՀ-ում ծրագրի շրջանակներում 2022 թվականին մեկնարկել է Հատուկ և ներառական կրթության միջառարկայական դոկոտորական դպրոցի ստեղծման աշխատանքները: Աշխատանքների ընթացքում վերամշակվել է կրթական ծրագիրը, մշակվել են դոկտորական դպրոցի գործարկման համար անհրաժեշտ փաստաթղթեր:

2019 թվականից ՄՈՒՀ-ը մասնակցում է Էրազմուս+ MODEST /ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ և ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ/ ծրագրին գործընկեր համալսարանների հետ Հայաստանից, Ռուսաստանից, Բելառուսից, Լեհաստանից, Անգլիայից, Ֆինլանդիայինց և Լատվիայից: Ծրագրի նպատակն է Եվրոպական Բարձրագույն Կրթական տարածքի (EHEA) և Եվրոպական Հետազոտական տարածքի (ERA) շրջանակներում գործընկեր երկրների բարձրագույն ուսումնական հաստատությունների համագործակցային կարողությունների ընդլայնումը հետբուհական կրթության ոլորտում: Ծրագրի շրջանակներում ՄՈՒՀ աշխատանքային խմբի մասնակցությամբ մշակվել են հետազոտողների համար նախատեսված 14 դասընթացներ ,իրականացվել է հետազոտողների վերապատրաստում և կարողությունների զարգացում, կազմակերպվել է եռօրյա աշնանային դպրոց նախատեսված ՄՈՒՀ հետազոտողների համար (տե՛ս https://drive.google.com/drive/folders/1iPP1J9iRNX1UlQCZjVBd_QPYa1anxARp): Better Teaching for Better Future նախագիծը նախաձեռնվել է Ցյուրիխի մանկավարժական համալսարանի կողմից՝ որպես գաղափարների և մասնագիտական քննարկումների փոխանակման հարթակ, լավագույն փորձի և առաջադեմ գործիքների հավաքածու (մեթոդական աջակցություն), տվյալների հավաքագրման վայր, և հիմնական իրադարձությունների լրահոս:https://sites.google.com/aspu.am/btbf/home

Բուհը ֆինանսավորման է ներկայացրել հետևյալ ծրագրերը՝

- Erasmus + (Capacity Building in the field of Higher Education: Strand 3 - Structural reform projects) “INTRODUCING INSTITUTIONAL RESEARCH FOR UNIVERSITY GOOD GOVERNANCE AND MANAGEMENT IN LINE WITH EUROPEAN BEST PRACTICES” (IRGOV)
- ERASMUS-EDU-2022-CBHE-STRAND-2 Development of Soft Skills at Higher Education Institutions of Armenia and Georgia in Compliance with the 21st Century Labour Market Requirements (DESIRE)
- ERASMUS-EDU-2022-CBHE-VET ESSW (Entrepreneurial Skills for Social Workers)
- ERASMUS-EDU-2020- CBHE ENSURING A SMOOTH TRANSITION OF STUDENTS WITH SPECIAL NEEDS AND/OR DISABILITIES TO NEXT EDUCATION LEVEL /ACCESS/
- ERASMUS-EDU-2023-CBHE-STRAND-2 Peace Begins with Education - South Caucasus HEI for Development and Enhancement of Peace Education.
- ERASMUS-EDU-2023-CBHE-STRAND-2 Promoting Values Education in South Caucasus Higher Education Institutions
- ERASMUS-EDU-2023-CBHE - Establishment of National framework of Key Performance Indicators for good governance and quality towards inclusive, digital and green oriented higher education in Armenia. /KPI4HE/
- ERASMUS-EDU-2023-CBHE Transforming Teacher Education for Green and Digital Transition in Armenia and Moldova /T4GREEN/
- ERASMUS-EDU-2022-CBHE-STRAND-2 Development of Soft Skills at Higher Education Institutions of Armenia and Georgia in Compliance with the 21st Century Labour Market Requirements (DESIRE)
- Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների մրցակցային հիմնադրամ ՆՄՀ «Բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա» ոլորտի գերազանցության կենտրոնի հիմնում, ապագա և ներկա ուսուցիչների կարողությունների զարգացում»; (“Establishing a center of excellence in science, technology, engineering and mathematics, developing the capacity of future and in-service teachers”).
- 217755-ASPU-G01: “Capacity Strengthening in M&E/Data Use Grant to M&E Training Providers”

217755-ASPU-G01: “Capacity Strengthening in M&E/Data Use Grant to M&E Training Providers” ծրագրի շրջանակներում մշակվել է **«**Սոցիալական և կրթական ոլորտի մշտադիտարկում և գնահատում**»** առարկան, որը կդասավանդվի **«**Սոցիոլոգիա**»** և **«**Սոցիալական աշխատանք**»** մասնագիտությունների առկա և հեռակա ուսուցման համակարգերի համապատասխանաբար 4-րդ և 5-րդ կուրսերի 2-րդ կիսամյակում, *ընտրովի դասընթաց 2-ի* շրջանակում:

2023թ. ֆինանսավորվել է 4 ծրագիր՝ «KPI4HE», «DESIRE», «T4GREEN», Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների մրցակցային հիմնադրամ ՆՄՀ «Բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա» ոլորտի գերազանցության կենտրոնի հիմնում, ապագա և ներկա ուսուցիչների կարողությունների զարգացում»: «T4GREEN»-ի դեպքում Մանկավարժականը նաև ծրագրի համակարգողն է:

Ծրագրի գործընկերն են ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, Երևանի պետական, Շիրակի պետական համալսարանները, Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնը, Կրթական քաղաքականության և կառավարման հայկական հասարակական կազմակերպությունը, Մոլդովայի կրթության և գիտության նախարարությունը, Քիշնյովի Իոն Կրեանգայի պետական մանկավարժական, Մոլդովայի Ալեկու Ռուսո Բալթիի պետական, Իսպանիայի Վալլադոլիդի, Պորտուգալիայի Բեյրայի ինտերիերի և Չեխիայի Մասարիկի համալսարանները:

«T4GREEN» ծրագիրը միտված է Հայաստանում և Մոլդովայում ուսուցիչների կրթության բարեփոխմանը, ինչը ենթադրում է հանրակրթության ոլորտում անցում կատարել ավանդականից ապագային միտված ուսումնական ծրագրերին՝ աջակցելով դասավանդման մեթոդներին, ազգային նպատակների իրագործմանը, «կանաչ» և թվային ուսուցմանը:

ՄՈՒՀ-ի ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարժունության թվի աճը և հնարավոր օտարերկրյա համալսարանների ներգրավվածությունը հանդիսանում է

համալսարանի գերակա խնդիրներից մեկը: Այդ իսկ կապակցությամբ համալսարանի ղեկավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում ուսանողների շարժունությանը՝ հնարավորինս ակադեմիական շահեկան պայմաններ ստեղծելով նրանց համար: Պահպանելով նախորդ տարիներին սկսված համագործակցությունը և այդ ուղղությամբ նոր ֆինանսավորման ձեռքբերումները՝ ՄՈՒՀ-ի միջազգային համագործակցության բաժինը ընդլայնել է համագործակցային շրջանակը:

2019թ.-ին ամառային դպրոց միջազգային ծրագրի բովանդակությունը վերամշակվել է ամբողջությամբ, ծրագիրը բազմազանեցվել է և տրվել է առավել կրթական և մշակութային ուղղվածություն: Ընդլայնվել է ծրագրի աշխարհագրությունը՝ Չեխիայի Պորդուբիցեի համալսարան, Լեհաստանի Վարմիա և Մազուրիայի համալսարան:

Արդյունքում ՄՈՒՀ-ի թվով 56 ուսանող մեկնել են ամառային դպրոց ծրագրին մասնակցելու համար, իսկ ևս 17-ը մասնակցել են ՄՈՒՀ-ի Աղավնաձորի բազայում կազմակերպվող ամառային դպրոց ծրագրին: Օտարերկյա համալսարաններից ՄՈՒՀ-ի ամառային դպրոցին մասնակցել է ընդհանուր առմամբ թվով 40 ուսանող:

Պայմանավորված ամբողջ աշխարհում Քովիդ-19 համավարկի սահմանափակումներով՝ ամառային դպրոց ծրագիրը դադարեցվել է: Սակայն բանակցությունների արդյունքում 2023թ. վերսկսվել է ծրագիրը: Արդյունքում 2023թ. օգոստոսի 27-ից սեպտեմբերի 3-ը ՄՈՒՀ-ն հյուրընկալել է 13 մասնակից Մսկվայի պետական հոգեբանամանկավարժական և Ստավրոպոլի հյուսիսկովկասյան դաշնային համալսարաններից: Եվս 20 ՄՈՒՀ ուսանող սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին կմեկնեն համապատասխան համալսարաններ:

Էրազմուս Պլյուս և այլ ուսանողների և դասախոսների փոխանակման ծրագրերով և համագործակցության շրջանակներում իրականացվել են մի շարք շարժունության ծրագրեր: Այդպիսի ծրագրերի շրջանակներում վերջին չորս տարիների (2019-2023թթ.) ընթացքում շարժունության մեջ է ներգրավվել 242 ուսանող և 204 պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմ (տե՛ս պատկեր 1 և 2):





Այսպիսով, 4 տարիների ընթացքում ՄՈՒՀ-ի տարբեր ֆակուլտետների 228 ուսանողներ և պրոֆեսորադասախոսական ու վարչական անձնակազմի ներկայացուցիչներ հնարավորություն են ունեցել իրենց ուսումնական, տեսագործնական, հետազոտական, գիտագործնական աշխատանքները իրականացնել տարբեր երկրներում, ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հիմունքներով, ինչպես նաև 218 ուսանող և պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի ներկայացուցիչներ հյուրընկալվել են ՄՈՒՀ-ում (տե՛ս պատկեր 1 և 2):

Չնայած Համավարակին և պատերազմին՝ ՄՈՒՀ-ն հասել է վերոնշյալ նվաճումներին, բազմազանեցրել է համագործակցության աշխարհագրությունը և միջազգային ծրագրերի քանակը: Վերոնշյալ միջազգային ծրագրերը, շարժունությունը և ՄՈՒՀ-ի ակտիվ ներգրավվածությունը

նմանատիպ նախաձեռնություններին փաստում է, որ վերջին չորս տարիների ընթացքում համալսարանը բազմազանեցրել և զարգացրել է իր միջազգային համագործակցության շրջանակը, խրախուսել համալսարանի աշխատակազմի ներգրավվածությունը նմանատիպ ծրագրերին, իրականացրել տեղեկատվության տարածում, ստանձնել ԷՐԱՍՄՈՒՍ+ կարողությունների զարգացման 1 ծրագրի համակարգողի պարտականություն և իրականացրել 2 ծրագրեր: Համագործակցության որոշ պայմանագրեր կնքվել են բուհի պրոֆեսորադասախոսական կազմի միջնորդությամբ, մի մասը՝ միջազգային համագործակցության աշխատակիցների ջանքերով: Որոշ դեպքերում բուհն է ստացել համագործակցության առաջարկ արտասահմանյան բուհերից, ինչն է փաստում է իրականացրած ծրագրերի արդյունավետությունը և բուհի տեսանելիության բարձրացումը միջազգային ասպարեզում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 9.4. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Հիմքեր՝

- ՊԴԱ կազմի վերապատրաստման դասընթացներ /Հավելված 9.4.1/

Սկսած 2021 թվականից ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի համար մեկնարկել է օտար լեզվի դասընթացներ, որի նպատակն է բարձրացնել վերջիններից անգլերեն լեզվի իմացությունը և խթանել վերջիններից մասնակցությունը միջազգային կրթական և հետազոտական ծրագրերին: Այսպիսով 2021-2022 ուս. տարում թվով 35 աշխատակից մասնակցել են անգլերեն լեզվի Ա2 և Բ1 մակարդակների լեզվի դասընթացների, որը կազմակերպել է օտար լեզուների ֆակուլտետը:

ՄՈՒՀ-ի գործունեության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները՝ ըստ 9-րդ չափանիշի

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
ՄՈՒՀ-ը արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների, ներառյալ դպրոցների և համալսարանների հետ, ինչը նպաստում է կրթական և գիտական գործընթացի միջազգայնացմանը և գիտելիքների, փորձի փոխանակման զարգացմանը:	ՄՈՒՀ-ում առկա է ներքին շահակիցների՝ դրամաշնորհային ծրագրերի մշակման և ֆոնդի հայթայթման կարողությունների պակաս:
ՄՈՒՀ-ը ՊԴԱ և ուսումնաօժանդակ կազմի համար տրամադրում է լեզվական արդյունավետ ծրագրեր՝ օտար լեզվի մակարդակը բարձրացնելու համար:	ՄՈՒՀ-ում առկա է օտարալեզու կրթական ծրագրերի ոչ բավարար քանակ:
ՄՈՒՀ-ը խրախուսում է բազմալեզու հաղորդակցությանը արտաքին շահակիցների հետ, ինչը հեշտացնում է համագործակցությունը և նպաստում միջազգայնացմանը:	Անբավարար ֆինանսական միջոցները սահմանափակում են ՄՈՒՀ-ի՝ նոր արտաքին գործընկերներ ներգրավելու կարողությունը:
	Ներքին շահակիցների լեզվական գիտելիքների գնահատման հստակ կառուցակարգերի բացակայությունը դժվարացնում է վերջիններիս միաջազգայնացման ծրագրերում ներգրավվածության աճը:
Հնարավորություններ	Վտանգներ

Ներքին շահակիցների կարողությունների շարունակական բարելավումը նոր հնարավորություններ կարող է բացել միջազգայնացման գործընթացում:	Քաղաքական հակամարտությունները և միջազգային լարվածությունը կարող են բացասաբար անդրադառնալ միջազգային կառույցների հետ համագործակցության վրա:
ՄՈՒՀ-ը կարող է մշակել և ներդնել օտարալեզու կրթական նոր ծրագրեր՝ համագործակցելով գործընկեր կառույցների հետ՝ ներգրավելով վերջիններիս ռեսուրսները՝ նոր տեխնոլոգիաների կիրառմամբ:	Տնտեսական ճգնաժամերը կարող են նվազեցնել ՄՈՒՀ-եր հասանելի ֆինանսներն ու ռեսուրսները՝ դժվարացնելով արտաքին նոր հարաբերությունների հաստատումն ու դրանց պահպանումը:
Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրումը, ինչպես նաև ԷՐԱԶՄՈՒՍ+ շրջանակի գործիքների ակտիվ կիրառումը հնարավորություն կտան ՄՈՒՀ-ին մշակելու միջազգայնացման նոր ծրագրեր և դրանց արդյունքը ներդնելու կրթական ու գիտահետազոտական աշխատանքներում:	Շարժունության ծրագրերի իրականացման դժվարությունը կարող է վտանգել կապը օտարերկրյա բուհերում մանկավարժական կրթության այլ կառուցվածքի հետ:

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները

- Դրամաշնոհային ծրագրերի ներկայացման և ծրագրերի մշակման վերապատրաստումների իրականացման պլանավորում և կազմակերպում: Հիրավիրել փորձագետներին ուղղորդում տրամադրելու համար և ստեղծել աջակցության ցանց դրամաշնորհային ծրագրերի մշակման համար
- Օտարալեզու կրթական ծրագրերի քանակի ընդլայնում և տարածում:
- Ֆինանսական միջոցների որոնման ուղիների մշակում՝ ՄՈՒՀ-ի նոր արտաքին գործընկերներ ներգրավելու կարողություններն ակտիվացնելու համար
- Ներքին շահակիցների լեզվական գիտելիքների գնահատման հստակ կառուցակարգերի մշակում և կիրառում՝ միաջազգայնացման ծրագրերում ներգրավվածության աճը բարձրացնելու համար
- Շարժունության ծրագրերի իրականացման դժվարությունների հաղթահարման ուղիների մշակում

ՉԱՓԱՆԻՇ 10. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-Ն ՈՒՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ, ՈՐԸ ՆՊԱՍՏՈՒՄ Է ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆԸ ԵՎ ՈՐԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ:

ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրերը հանդիսանում են ՄՈՒՀ-ում որակի քաղաքականության շարունակական ապահովման հենասյունը: Ռազմավարական 2020-2025թթ. ներկա ծրագրում ուղղություն 10-ում ներկայացված են այն դրույթները, որոնք կրթության որակի բարձրացմանը նպատակաուղղված գործողություններն են:

ՄՈՒՀ-ը առանձնակի շեշտադրում է որակի ապահովման ամբողջական շրջափուլի կիրառումը բոլոր գործընթացնում, որի հիման վրա առանձնացնում է վերանայել որակի ապահովման քաղաքականությունը, հայեցակարգը՝ կատարելագործելով որակի ապահովման ներբուհական և ստորաբաժանումների շարունակական բարելավման գործուն համակարգերը՝ ապահովելով ՊԻԳԲ շրջափուլի գործարկումը և իրականացումը, ինչպես նաև մշակել ՄՈՒՀ-ի որակի ապահովման ներքին համակարգում որակի ապահովման պատասխանատուների աշխատանքային նկարագրերը և հստակեցնել գործառույթները:

Որակի մշակույթի շարունակական գործընթացը կնպաստի և կնախապատրաստի բուհի մասնագիտական կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման, հավատարմագրման գործընթացների ներդրմանը, կապահովի նաև ուսուցման որակի գնահատման և կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացների թափանցիկությունը, արդյունքների հրապարակայնությունը:

Չափորոշիչ 10.1. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Հիմքեր՝

- Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի որակի ապահովման քաղաքականությունը և հայեցակարգային ուղենիշերը (Հավելված 10.1.1)
- Եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ (ԵՉՈՒ) (Հավելված 10.1.2)
- Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների սահմանում ու որոշում, կրթական ելքային արդյունքների սահմանումը (Հավելված 10.1.3)
- Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մասնագիտական կողմնորոշման աշխատանքի համակարգման ուղեցույց (Հավելված 10.1.4)
- Բենչմարք (հենանշման) մեթոդական ուղեցույցը (Հավելված 10.1.5)
- ՄՈՒՀ-ի ուսանողի ուղեցույցը (Հավելված 10.1.6)
- ՄՈՒՀ-ի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (Հավելված 10.1.7)
- ՄՈՒՀ-ի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (Հավելված 10.1.8)

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի որակի ապահովման քաղաքականությունը և հայեցակարգային ուղենիշերը (տե՛ս https://aspu.am/website/images/website3/որակի%20բաժին/Փաստաթղթեր/Ուղենիշները%20հայեցակարգ.pdf), որը համահունչ է Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների (ԵՉՈՒ, տե՛ս https://enqa.eu/wp-content/uploads/2015/11/ESG_2015.pdf) պահանջներին, ընդունվել է դեռևս 2022թ., որը նախատեսված էր ՌԾ ուղղություն 10-ի խնդիր 1-ի 1-ին կետով: Նախորդ փաստաթուղթը ընդունվել էր 2012 թվականին, սակայն դրանից հետո ՄՈՒՀ-ում իրականացվել են բազմաթիվ փոփոխություններ, որոնք առաջ էին բերել նոր հայեցակարգի ամբողջական մշակում: Հայեցակարգում սահմանված են ՄՈՒՀ-ի որակի ապահովման (ՈԱ) համակարգի կազմակերպական կառուցվածքը, գործող մեխանիզմները և ընթացակարգերը, ներգրավված հիմնական կառույցները և դերակատարները: ՈԱ գործընթացներում ներգրավված են համալսարանի բոլոր հիմնական կառույցները և միավորները, ներքին ու արտաքին շահակիցները:

Համաձայն տվյալ փաստաթղթի՝ այսօր ՄՈՒՀ-ում գործում են ՈԱ մի շարք ներքին մեխանիզմներ և դրանց համապատասխան ընթացակարգեր, որոնք նպատակաուղղված են կրթական ծրագրերի, դասախոսական կազմի և ուսումնառության ռեսուրսների որակի ապահովմանը և շարունակական բարելավմանը: Այդ մեխանիզմների արդյունավետ գործադրման համար առկա են համապատասխան կառույցներ, որոնք գործակցում են ինչպես միմյանց, այնպես էլ ուսումնական ստորաբաժանումների (ֆակուլտետներ, ամբիոններ, կենտրոններ, ինստիտուտներ) հետ: ՈԱ գործընթացներն առավել հասցեական և արդյունահեն իրականացնելու համար ՄՈՒՀ-ի ռեկտորի համապատասխան հրամանով ֆակուլտետային և ամբիոնային ՈԱ պատասխանատուներին հատկացվեցին լրացուցիչ վճարովի ժամեր:

ՄՈՒՀ զարգացման ռազմավարական ծրագրում /2020-2025թթ./ և նրա գործողությունների պլանում որակի ապահովման խնդիրների իրագործման համար սահմանվել են նպատակներ, որոնք նախատեսում են ՈԱ մեխանիզմների և ընթացակարգերի ընդլայնում, ուսանողների գնահատման համակարգի արժանահավատության բարձրացում, ՈԱ գործընթացների թափանցիկության և հրապարակայնության ապահովում, ներքին և արտաքին շահակիցների մասնակցության գործիքակազմի ապահովում և հետադարձ կապ մեխանիզմների սահմանում: ՄՈՒՀ-ը նպատակային աշխատանք է տանում ՈԱ համակարգը ԵՀՈՒ պահանջներին համահունչ դարձնելու համար:

Նախորդ հավատարմագրումից ի վեր ՄՈՒՀ-ում զգալի աշխատանքներ են իրականացվել որակի ապահովման ներքին մեխանիզմների ներդրման և կրթության որակի բարելավման ուղղությամբ, մասնավորապես, մշակվել կամ վերամշակվել ու արդիականցվել են բուհի գործունեության ոլորտները գնահատող բազմաթիվ փաստաթղթեր՝ դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների սահմանում ու որոշում , կրթական ելքային արդյունքների սահմանում , Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մասնագիտական կողմնորոշման աշխատանքի համակարգման ուղեցույց, Բենչմարք (հենանշման) մեթոդական ուղեցույց, ուսանողի ուղեցույց , ՄՈՒՀ-ի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը, ՄՈՒՀ մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը, մեթոդական ուղեցույցները և ձեռնարկները, որոնք իրենց հիմքում կառուցված են ՄՈՒՀ-ում որակի ապահովմանն ուղղված քաղաքականության դրույթներով և որոնք հաջողությամբ համակարգում են կրթական բոլոր ընթացիկ գործընթացները (տե՛ս հիմքերի հղումները) :

Ներկայումս ՄՈՒՀ-ում գործում են որակի ապահովման մի շարք մեխանիզմներ, որոնք նպատակաուղղված են__մասնագիտական կրթական ծրագրերի, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և կրթական ռեսուրսների որակի շարունակական բարելավմանը, ինչպիսիք են.

- ՄՈՒՀ-ի կողմից իրականացվող թվով չորրորդ ինքնավերլուծությունը:
- ֆակուլտետների ամբիոնների, վարչական ստորաբաժանումների տարեկան ինքնագնահատում-հաշվետվությունները (տե՛ս https://aspu.am/hy/page/hashvetvutyunner/), որոնք հնարավորություն են տալիս վերլուծելու և գնահատելու տվյալ կառույցների արձանագրված առաջընթացը և հաջողությունները, բացահայտելու թերացումները և բացթողումները, մշակելու դրանք բարելավելու գործընթացները:
- ՈԱ մեխանիզմ են հանդիսանում նաև սոցիոլոգիական հարցումներն ու ֆոկուս խմբերի անցկացումը, որոնց օգնությամբ գնահատվում են մասնագիտական կրթական ծրագրերի, դասընթացների և պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակները, վեր է հանվում կրթական միջավայրից բավարարվածության մակարդակը, աշխատաշուկայում շրջանավարտների մրցունակությունը, մասնագիտական կրթական ծրագրերի առարկայացանկի բացերն ու դասավանդման թերացումները: Արդյունքներն օգտագործվում են համապատասխան թերացումների, մասնագիտության կրթական ծրագրերի և այլ գործընթացների բարելավման նպատակով: Հարկ է նշել, որ հարցումները (տե՛ս https://drive.google.com/drive/folders/1hAFFUzxTLGuYQHqrbjkeS1k8EzI74FTg) արդեն պարբերական և համակարգված բնույթ են կրում:
- ՈԱ կարևորագույն մեխանիզմ են նաև ՄՈՒՀ-ում մշակված մեթոդական ուղեցույցները և ձեռնարկները (տե՛ս https://aspu.am/hy/page/ughecuycner2/), որոնք ոչ միայն օգնում են

մեթոդապես ճիշտ կառուցելու գործառույթները, այլ նաև տալիս են մեխանիզմներ և օրինակներ բուհի գործունեության լուսաբանվող ոլորտը ճիշտ կառուցելու, գնահատելու համար:

- ՈԱ հաջորդ մեխանիզմ է հանդիսանում ՊԴԱ վարկանիշավորման գործընթացը, որը միտված է ՄՈՒՀ-ում դասախոսների աշխատանքի արդյունավետության գնահատման համալիր չափանիշների ձևավորմանը, մասնագիտական և մանկավարժական որակների շարունակական բարձրացմանը, ուսումնակազմակերպչական գործունեության ակտիվության և նախաձեռնողականության բարձրացման խթանմանը, գիտահետազոտական և գիտակազմակերպչական գործունեության արդյունավետության բարձրացմանը: Սակայն վարկանիշավորման համակարգի կիրառումը ժամանակավորապես կասեցվել էր ՔՈՎԻԴ-19 և մեր երկրում պատերազմական դրությունների պատճառով: Հաջորդ տարի նախատեսվում է բարենորոգել վարկանիշավորման համակարգը:
- ՈԱ հաջորդ մեխանիզմն է ամբիոնների կողմից կազմակերպվող դասալսումների /փոխադարձ և ամբիոնի վարիչի կողմից իրականացվող/ գործընթացը: Դասալսումների արդյունքում կազմվում է համապատասխան ձևաչափով արձանագրություն, որը պարունակում է առանձին-առանձին տեղեկություններ և գնահատումներ ուսումնառության, դասավանդման, գնահատման բաղադրիչների վերաբերյալ: Ստացված արդյունքները քննարկվում են ամբիոնների նիստերում և իրականացվում են համապատասխան բարեփոխումները /տե՛ս ամբիոնների նիստերի արձանագրություններ/ :

ՄՈՒՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումների միջոցով գնահատվում է նրանց բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդներից, ուսումնառության ռեսուրսներից, օժանդակ ուսանողական ծառայություններից, ուսումնական գործընթացի կազմակերպումից և ընդհանուր կրթական միջավայրից: Արդյունքներն օգտագործվում են նշված ոլորտների շարունակական բարելավման նպատակով: Վերոնշյալ հարցման արդյունքներով պարզվել է, որ ՄՈՒՀ-ի աշխատողների 50,8 %-ը այն գնահատել է մասամբ արդյունավետ, 15,4%-ը՝ լիովին արդյունավետ, իսկ հարցվածների միայն 16,9%-ն է շրջանավարտների հարցումը գնահատել որպես ոչ արդյունավետ: Այստեղ հիմնական պատճառներ են նշվում հարցման արդյունքների օգտագործման վերաբերյալ իրենց անտեղյակությունը կամ դրանց բացակայությունը, նշվում է նաև, որ այն պետք է իրականացնել ավարտելուց 2-3 տարի հետո միայն, ոչ թե ավարտման տարում: Հարցվածների մի ստվար զանգված էլ տեղյակ չէ գործընթացից (16,9%), քանի որ ի պաշտոնե չի առնչվում դրան:

ՄՈՒՀ-ում 2022 թվականից գործում է Կրթական ծրագրերի մշակման և արտոնման նորացված կարգը (տե՛ս https://aspu.am/website/images/files/%20%20%20%20%20-.pdf), որն ապահովում են կրթական ծրագրերի որակը դրանց մշակման փուլում: Այստեղ գնահատվում են նոր ստեղծվող ծրագրի հիմնավորումը, ծրագրի համապատասխանությունը որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին, ինչպես նաև ծրագրի մշակման որակը՝ սահմանված պահանջներին և ներկայացման ձևաչափին համապատասխան: Այս ընթացակարգերով այսօր ՄՈՒՀ-ում հաստատվել է բակալավրի 6 նոր կրթական ծրագիր (տե՛ս https://drive.google.com/drive/folders/1x6ruxhtOchAmgvpPTq2trPdGFMEodu6l) , իսկ մնացած կրթական ծրագրերը ևս նախատեսվում է վերանայել սույն կարգի պահանջների հաշվառմամբ:

Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման նպատակն է գնահատել ծրագրերի մատուցման որակը և համապատասխանությունը սահմանված կրթական վերջնարդյունքներին, ինչպես նաև ստուգել ծրագրի շարունակական հիմնավորվածությունն ու արդիականությունը: Այս գործընթացի հիմնական արդյունքը ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի կազմումն ու իրականացումն է: 2023-2023 ուստարվանիս սկսած նախատեսվում է իրչականացել ՄՈՒՀ բակալավրիատի և մագիստրատուրայում գործող կրթական ծրագրերի համընդհանուր մշտադիտարկում և առանձին զեկույցների կազմում:

Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման նպատակն է գնահատել ծրագրերի որակը և համապատասխանությունը սահմանված կրթական վերջնարդյունքներին, ինչպես նաև ստուգել ծրագրի շարունակական հիմնավորվածությունն ու արդիականությունը: Այս գործընթացի հիմնական արդյունքը ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի կազմումն ու

իրականացումն է: ՄՈՒՀ-ում կրթական ծրագրերի մոնիթորինգն առաջին անգամ իրականացվել է 2016 թ.: Նախատեսվում է, որ 2023-2024 ուսումնական տարում, ըստ ռազմավարական ծրագրի դրույթների, իրականացվելու է կրթական ծրագրերի մշտադիտարկում: Վերջնարդյունքում նախատեսվում է կազմել այդ ծրագրերի բարելավման միջոցառումների պլանները, որոնք իրագործվելու են մինչև հաջորդ մշտադիտարկման մեկնարկը՝ երկու տարվա ընթացքում:

Համալսարանի բոլոր գործառույթներն անաչառ ու անկողմնակալ ուսումնասիրվում են որակի ապահովման կառույցի կողմից՝ գործընթացում ներգրավելով համապատասխան փորձառություն ունեցող շահակիցների: Նշված գնահատումները ներկայացվում են տարբեր զեկույցներում, ինչպես նաև սույն ինքնավերլուծության մեջ: Այնուհանդերձ, արդյունքների վերլուծման և հետագա բարելավման գործողությունների իրականացման ուղղությամբ դեռ անելիքներ շատ կան: Այսպիսով, որակի ներքին ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերն արտացոլող փաստաթղթերի և որակի բարելավման ուղղությամբ կատարված քայլերի ու գործողությունների համադրությունը վկայում է որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի բավարար արդյունավետության մասին:

Չափորոշիչ 10.2. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Հիմքեր

- Անձնակազմի պաշտոնի անձնագրեր (Հավելված 10.2.1)
- Կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի կանոնադրություն
- 2021-25թթ. ռազմավարական ծրագրի բյուջե (Հավելված 10.2.2)

ՄՈՒՀ-ը որակի ներքին ապահովման և որակի կառավարման գործընթացները կայուն հիմքերի վրա դնելու նպատակով տրամադրում է մարդկային, նյութական և որոշակի ֆինանսական ռեսուրսներ: Համաձայն 2015թ. ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման զեկույցի՝ ՄՈՒՀ-ն ուներ կրթության բարեփոխումների և որակի վարչության աշխատակազմի թերհամալրում (2 աշխատակից բարեփոխումների բաժնում և 1 աշխատակից ՈԱ բաժնում), ինչպես նաև աշխատակիցների հավաքագրման գործընթացում մասնագիտական որակներին, կարողություններին ու հմտություններին ներկայացվող հստակ պահանջների բացակայություն: Սակայն ահավոր դժվար է որակավորված, գիտակ մասնագետների ներգրավումը աշխատանքներում, ինչը, կարծում ենք, ամենամեծ հիմնախնդիրն է, որն այսօր ծառացել է բաժնի առջև:

ՄՈՒՀ-ը, գնահատելով ներքին ֆոկուս խմբի և արտաքին այլ բուհերի փորձի ուսումնասիրությունները, պարբերաբար իրականացնում է ՄՈՒՀ-ի ՈԱ ենթակառուցվածքի բարելավումներ՝ տրամադրելով երեք հաստիք և համագործակցելով ՄՈՒՀ-ի սոցիոլոգիայի ամբիոնի աշխատակիցների հետ: ՄՈՒՀ-ը հատկացված յուրաքանչյուր հաստիքի համար սահմանում է աշխատակիցների հավաքագրման մասնագիտական որակների, կարողությունների ու հմտությունների հստակ պահանջներ. օրինակ՝ հարցումների, ֆոկուս խմբերի անցկացման, իրավիճակի գնահատման, մշտադիտարկման համար հատկացվեց մեկ հաստիք՝ սոցիոլոգի որակավորմամբ մասնագետի համար, ՈԱ մասնագետի հաստիքի համար համալրման նշաձող սահմանվեց կրթության կառավարման մագիստրոսական որակավորում ունեցող անձով բաժնի համալրումը: ՈԱ բաժնի աշխատակիցների մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներն ամրագրված են_____պաշտոնի անձնագրում (տե՛ս https://drive.google.com/drive/folders/1z0ephEXCR7dhf9uXqVY3T1fkwau1OqQ1), հաստիքային մասնագետների պարտականությունների և գործառույթների բաշխումը սահմանված է բաժնի կանոնադրությամբ (տե՛ս https://drive.google.com/file/d/1S6r0haG8WbycmtwvlUk7GmTFiCmWe5r_/view):

Նախորդ հավատարմագրումից հետո վարչության և բաժնի կողմից մշակվել և վերամշակվել/արդիականացվել են Համալսարանի գործունեության տարբեր ոլորտների գործունեության որակը գնահատող կանոնակարգեր և մեխանիզմներ, իրականացվել են վերապատրաստումներ (տե՛ս ttps://drive.google.com/file/d/13DOX_PnZZqQN6JFwk_Lswq_QRumxVKC

479/view) և հանդիպումներ ներքին և արտաքին շահակիցների շրջանում: Պարբերաբար իրականացվել են աշխատակիցների և ֆակուլտետային պատասխանատուների հատուկ սեմինարներ՝ ՄՈՒՀ-ում կատարողականի բարձրացման, դրա գնահատման, ինչպես նաև կարիքների վերհանման նպատակով: Նշենք նաև, որ նմանատիպ վերապատրաստումներ կազմակերպվել են նաև ՈԱԱԿ-ի կողմից (տե՛ս https://drive.google.com/file/d/1UEiODq35VxhofNiRMjUH8nWMePfPbP6V/view?usp=drive_link):

Հավելենք որ բաժինը, համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ, մասնագիտական կրթական ծրագրերի, դասավանդման, ուսումնառության, հետազոտականության, ուսանողական գիտության, միջազգայնացման և շարժունության ապահովման համար պարբերաբար մշակում է քաղաքականություն և դրան առնչվող ընթացակարգեր: Բաժինը հետևողականորեն նպաստում է Համալսարանի որակի ապահովմանը և մշակույթի ձևավորմանը՝ զարգացնելով և իրագործելով որակի շարունակական ամրապնդման ռազմավարությունը, վերահսկելով և մշտադիտարկելով ՄՈՒՀ-ի բոլոր ստորաբաժանումների գործունեության որակի գնահատումը:

Օրինակ, «Դասախոսն ուսանողի աչքերով» ուսանողական հարցումները, ինչպես նաև ուսումնառությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումները 2021 թ-ից իրականացվում են կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության մեկ և ՈԱ բաժնի 2 աշխատողների, ինչպես նաև ֆակուլտետային և ամբիոնային ՈԱ պատասխանատուների համատեղ ուժերով, ավելի քան 15 անձ: Այս գործընթացների բարեփոխման արդյունքում՝ նախատեսվում է 2024 թվականից SS կենտրոնի հետ համատեղ հարցումները կազմակերպել առցանց ավտոմատացված եղանակով, ինչը կնպաստի հատկացվող մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների էական կրճատմանը:

ՄՈՒՀ-ի ՈԱ բաժնին հատկացված է աշխատասենյակ՝ հագեցած նյութատեխնիկական ռեսուրսներով և գույքով: Նյութական և ֆինանսական ռեսուրսների պլանավորումը կարգավորվում է ՄՈՒՀ-ի ֆինանսական տարեկան գործունեության պլանավորման քաղաքականությամբ, համաձայն որի՝ հաշվարկվել է ՄՈՒՀ-ի ՌԾ-ին համապատասխան բյուջե (տե՛ս https://docs.google.com/spreadsheets/d/1re0bMMJLUFGikp-pgWhL2ExI6ZApqKF_/edit?pli=1#gid=1526011360):

Չափորոշիչ 10.3. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

Հիմքեր՝

- Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի որակի ապահովման քաղաքականությունը և հայեցակարգային ուղենիշները (Հավելված 10.3.1)
- ՄՈՒՀ որակի պատասխանատուներ (Հավելված 10.3.2)
- ՄՈՒՀ-ում արտաքին և ներքին շահակիցների ներգրավում և կարիքների գնահատում» կանոնակարգը (Հավելված 10.3.3)

ՄՈՒՀ-ի Որակի ապահովման բաժինը ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում ապահովում է դեռևս 2011թ-ից: Սակայն 2019-2021թթ., հաշվի առնելով համաճարակային իրավիճակը և ՀՀ-ում պատերազմական դրությունները, ինչպես նաև մեր Համալսարանում ղեկավար կազմի ամբողջական փոփոխությունները, ավելի սահմանափակ հնարավորություններով և թերի կանոնակարգվածությամբ է իրականացվել, սակայն 2022թ-ից կարծես բոլոր գործընթացները մտնում են հունի մեջ: ՄՈՒՀ-ի ՈԱ գործընթացներում ուսանողների և այլ ներքին ու արտաքին շահակիցների ներգրավվածությունն ամրագրված է մի շարք պաշտոնական փաստաթղթերում, որոնք հիշատակվել են նախորդիվ:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի որակի ապահովման քաղաքականությունը և հայեցակարգային ուղենիշները (տե՛ս https://aspu.am/website/images/website3/որակի%20բաժին/Փաստաթղթեր/Ուղենիշները%20հայեցակարգ.pdf) նախատեսում է ներքին ու արտաքին շահակիցների լայն ներգրավվածություն որակի

ներքին ապահովման գործընթացներում: Չնայած ՈԱ գործընթացները կանոնակարգվում են կենտրոնացված եղանակով, այնուամենայնիվ, ստորաբաժանումներում իրականացվում են ապակենտրոնացված ձևով՝ ֆակուլտետներում, ամբիոններում և այլ ստորաբաժանումներում: Վերջիններս էլ այդ գործընթացներում ներգրավում են դասախոսներին, ուսանողներին, շրջանավարտներին, գործատուներին և մասնագիտական հանրության ներկայացուցիչներին ու փորձագետներին: Ավելին, բոլոր ֆակուլտետներում և ամբիոններում գործում են ՈԱ պատասխանատուներ, որոնց բեռնվածությունը ռեկտորի համապատասխան հրամանով (տե՛ս https://drive.google.com/file/d/12ZUgDWkLlBPwm7U9lVJb366rO5MAG6ZC/view) ներառվեց հիմնական աշխատանքային բեռնվածքի մեջ: ՄՈՒՀ-ում արտաքին և ներքին շահակիցներին առավել ակտիվ և կանոնակարգված ներգրավելու համար արդեն մեկ տարի է մշակվել և գործում է «ՄՈՒՀ-ում արտաքին և ներքին շահակիցների ներգրավում և կարիքների գնահատում» կանոնակարգը (տե՛ս https://aspu.am/website/images/website3/որակի%20բաժին/Փաստաթղթեր/Արտաքին%20շահակիցների….pdf):

ՈՒսումնառության որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցմանը, որն անցկացվում է յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո, մասնակցում է ՄՈՒՀ-ի բակալավրիատի և մագիստրատուրայի ավելի քան 2500 ուսանող՝ տարբեր ֆոկուս խմբերով, ինչը կազմում է մոտ ընդհանուրի կեսից ավելին: ՄՈՒՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումներում նույնպես մասնակցում է ավելի քան 1500 շրջանավարտ: Այս ամենը վկայում է, որ այսպես, թե այնպես ՈԱ գործընթացներին մասնակցությունը ներքին շահակիցների կողմից բավականին մեծ է: Ավելին, համապատասխան բաժնի աշխատանքներում ներգրավված են նաև կամավոր ուսանողներ (տե՛ս https://docs.google.com/document/d/1dQJ11ypgR6cJfZnos0DpYqLoDxu2KemS3yzo0VLNXCY/edit?pli=1):

ՄՈՒՀ-ի որակի ապահովման բաժնի կողմից վերջին չորս տարիների ընթացքում իրականացվել է.

- դասախոսի և դասընթացի գնահատում (տե՛ս https://drive.google.com/drive/folders/1hAFFUzxTLGuYQHqrbjkeS1k8EzI74FTg),
- կրթական ռեսուրսների և միջավայրի գնահատում (տե՛ս https://drive.google.com/drive/folders/1NNW6vG4KKtK5jM_0pwMBkH5c3IGnx_9M),
- շրջանավարտների հարցում (տե՛ս https://drive.google.com/file/d/15Gs2xenyy03QNQ4L3KE1EhuUaxB0zteS/view?pli=1),
- ներքին կառույցների գործունեության գնահատում,
- ինքնավերլուծության ընդհանուր հարցում (գործընթացների գնահատում),
- պարբերաբար կազմակերպվող ֆոկուս խմբեր, օրինակ՝ գնահատման համակարգի, այլ գործընթացների վերաբերյալ և այլն,
- ՄՈՒՀ-ի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին գործոնների գնահատում ըստ անհրաժեշտության (տե՛ս https://drive.google.com/file/d/1_ZDFHAF7Gfv_W55temvowBcpOg9iMXW6/view):

Բաժնի հիմնական մարտահրավերներից է գործատուների կարծիքի ուսումնասիրությունը, որը առաջնային խնդիրներից է համարվում: Մինչ վերջերս թերի է ուսումնասիրվել նաև վարչական և ուսումնաօժանդակ կազմի բավարարվածությունն աշխատանքից, աշխատանքային միջավայրից և այլն: Փաստացի, ներքին շահակիցները մասնակցել են ՈԱ բաժնի կողմից կազմակերպվող բոլոր հարցումներին և միջոցառումներին, իսկ ՄԿԾ-ների արդյունավետությունը գնահատվել է թե՛ ուսանողների, թե՛ շրջանավարտների և գործատուների շրջանում կատարվող հարցումների հիման վրա: Հարցումներից բացի ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը հաստատվում է ներքին շահակիցների հանձնախմբերի առկայությամբ՝ ի դեմս ուսանողների ու դասախոսների (ուսանողական որակի հանձնախումբ, ֆակուլտետային և ամբիոնային պատասխանատուներ), ինչպես նաև արտաքին շահակիցների՝ ի դեմս շրջանավարտների և գործատուների խմբերի, որոնք ներգրավված են որակի ապահովման գործընթացներում: Արտաքին շահակիցների ներգրավումը որակի ապահովման գործընթացներում իրականացվել է հետևյալ կերպ.

1. ՈԱՇ-ՄԿԾ համապատասխանության ապահովման միջոցառումներ,
2. մասնագիտական պրակտիկաների պաշտպանություն,
3. գործատուների ներգրավում մագիստրոսական ատենախոսական աշխատանքների ղեկավարման գործընթացում, ամփոփիչ ատեստավորման գործընթացում գործատուների (կազմի հրաման տե՛ս https://drive.google.com/file/d/117ZYKHESBCo_NCVDYwwkYd3VU6at-8iF/view) ներգրավում:

Գործատուների ներկայացուցիչները շրջանավարտների եզրափակիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահ կամ անդամներ են, մանկավարժական պրակտիկաների արդյունքների պաշտպանության հանձնաժողովների անդամ, ինչպես նաև նրանց գնահատականը ընդհանուր առաջադիմության գնահատականի մաս է կազմում: Գործատուները հանդես են գալիս որպես մագիստրոսական և ավարտական թեզերի ղեկավար կամ խորհրդատու: Ուսանողների, դասախոսների ներգրավվածության մեկ այլ տեսակ է ինքնավերլուծության գործընթացին նրանց պարտադիր մասնակցությունը (տե՛ս https://docs.google.com/document/d/17EyfLCBLcHYDTEy0zcW32iIXSqDqK3LS/edit):

Նշված կիրառված մեխանիզմների արդյունավետությունը հավաստվում է որպես պրակտիկայի ամփոփում, ավարտական հանձնաժողովի աշխատանքի ամփոփում, առկա հաշվետվությունները, արտաքին շահակիցների՝ ՄՈՒՀ-ի ռեկտորի հետ ավանդական տարեկան հանդիպում- քննարկումները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 10.4. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Հիմքեր՝

- Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի որակի ապահովման քաղաքականությունը և հայեցակարգային ուղենիշերը (Հավելված 10.4.1)

ՄՈՒՀ ՈԱ ներքին համակարգը ձևավորվել է դեռևս 2011թ. և դրանից ի վեր պարբերաբար վերանայվել և կատարելագործվել է՝ ելնելով կոնկրետ մեխանիզմի կամ գործընթացի իրականացման արդյունավետությունից, արտաքին և ներքին միջավայրային փոփոխություններից, ինչպես նաև այս առաջավոր փորձի ուսումնասիրման արդյունքներից:

Այսպես, ՄՈՒՀ Որակի ներքին ապահովման քաղաքականությունը ընդունվել էր դեռևս 2012 թ.: Քանի որ այն չէր բավարարում ԵՉՈՒ հիմնական պահանջները, ուստի մշակվեց և գործողության մեջ է դրվել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի որակի ապահովման քաղաքականությունը և հայեցակարգային ուղենիշերը (տե՛ս https://aspu.am/website/images/website3/որակի%20բաժին/Փաստաթղթեր/Ուղենիշները%20հայեցակարգ.pdf) նոր փաստաթուղթը, որն ընդունվել է 2022թ.:

Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման պարբերականությունը և արդյունավետությունն ապահովվել են նախորդ ինքնավերլուծությունների փորձագիտական զեկույցի հիման վրա ստեղծված բարելավման գործողությունների պլաններում: Սահմանվել են հստակ ժամանակացույց և պարբերականություն՝ հստակ քայլերի և գործողությունների համար, որոնք միտված են որակի ներքին ապահովման համակարգի պարբերական բարելավմանը: Մասնավորապես, որպես բարելավման կարևորագույն ուղղություններ, կարելի է նշել հետևյալները.

- որակի ապահովման ստեղծված կառուցվածքի ռեսուրսային ապահովվածության արդյունավետության գնահատում և բարձրացում,
- որակի ապահովման գործընթացներում ներքին ու արտաքին շահակիցների ներգրավվածության արդյունավետության բարձրացում և գնահատում:

Նշված ուղղություններով բարելավման մասին տեղեկատվությունը ներկայացված է սույն ինքնավերլուծության տարբեր չափանիշներում և արտացոլում է որակի ներքին ապահովման համակարգի վերանայման պարբերականությունն ու արդյունավետությունը:

ՄՈՒՀ-ում Որակի ներքին ապահովման համակարգի մշտադիտարկման և գնահատման իրականացումն ընդգրկվածության տեսանկյունից գրեթե ամբողջական է, սակայն ոչ միշտ: Սրանով

հանդերձ տարբեր ոլորտներում որակի ներքին ապահովման գործընթացները գտնվում են ՊԻԳԲ շրջափուլի տարբեր մակարդակներում:

Մասնավորապես, բարելավման մի շարք քայլերի արդյունքում.

- վերափոխվեց ուսումնական կիսամյակների տևողությունը հեռակա ուսուցման համակարգում՝ ապահովելով ուսումնական կիսամյակների շարունակականությունը և հստակ սահմանազատումը (տե՛ս https://drive.google.com/file/d/1dvsYx6aNcriN29E1QjDeHeyFk0jHGxb1/view),
- վերանայվեց և հաստատվեց շարունակական մանկավարժական պրակտիկաների անցկացման նորմատիվային հենքը՝ պրակտիկայի վերանայված պորտֆոլիոն, 2022թ. (տե՛ս https://aspu.am/website/images/files/Mankavarjahetazotakan%20praktikayi%20tghtapanak.pdf, https://aspu.am/website/images/files/9a6ac1bd.pdf) ,
- լավարկված փուլում է ամփոփիչ ատեստավորման կազմակերպման ամբողջական կանոնակարգը թե բալավարիատում, թե մագիստրատուրայում,
- շեշտակի աճ է նկատվում *ՊԴԱ հետազոտական գործունեություն, միջազգային ցիտվող ամսագրերում տպագրություն, դասախոս-ուսանող* գիտական արտադրանքի ցուցիչներում (տե՛ս չափանիշում 6. Չափորոշիչ 6.5 և 6.4),
- Էրազմուս+ ARMDOCT միջազգային ծրագրի շրջանակներում (տե՛ս https://aspu.am/website/images/files/Doctorakan%20Dproc.pdf)
- ,բարելավվել է ՄՈՒՀ-ի դոկտորական կրթության կազմակերպման գործընթացը, մասնավորապես՝ առաջին անգամ ՀՀ-ում մշակվել և 2023/2024 ուստարվանից ներդրվել է հատուկ մանկավարժության և հոգեբանության ոլորտում միջոլորտային դոկտորական կրթական նոր ծրագիր՝ նոր ուսումնական պլանով, առարկայացանկով, իրականացման և գնահատման կանոնակարգերով:
- վերամշակման գործընթացում է նաև ՊԴԱ-ի վարկանիշային գնահատման համակարգը, և դրա արդյունքներով պայմանավորված՝ մշակվելու է դասախոսի առաջընթացի գնահատման անհատական պլան:

ՄՈՒՀ-ը կանոնավոր կերպով մասնակցում է նաև ՀՀ ՈԱԱԿ-ի կողմից պարբերաբար կազմակերպվող հանդիպումներին և սեմինարներին, հետևում ENQA-ի հրապարակումներին, որակի ամենամյա ֆորումների արդյունքներին:

2019թ-ից առ այսօր պլանավորվել, իրականացվել, գնահատվել են. ա) ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի ընթացքի իրականացման միջանկյալ հաշվետվությունները, բ) ՄՈՒՀ-ի կողմից մշակված իրավական և նորմատիվային փաստաթղթերը, գ) ՄՈՒՀ-ի արտաքին ու ներքին շահակիցների ներգրավվածության ցուցիչները, դ) ՄՈՒՀ-ի միջազգայնացման, ուսանողների, դասախոսների շարժունության ապահովման միջոցները, ե) ՄՈՒՀ-ի բարեվարքության կանոնները, ակադեմիական ազնվության ապահովման կանոնակարգերը, զ) ուսանողների կարիքների վերհանման, լրացուցիչ և խորհրդատվական աշխատանքների կազմակերպման մեխանիզմները և այլն:

Պլանավորվել և իրականացվել են. ա) բակալավրի և մագիստրոսի մասնագիտական կրթական ծրագրերի (առկա և հեռակա) կառուցվածքը և բովանդակությունը սահմանող նորմատիվային փաստաթղթերի վերանայումը, բ) շահակիցների ներգրավվածության ընդլայնումը և բարելավումը կրթական ծրագրերի մշակման, իրականացման և մշտադիտարկման աշխատանքներում, գ) դասավանդման, ուսումնառության և արդյունքների գնահատման միասնական չափանիշների գործարկման ապահովումը կրթական ծրագրերում, դ) կրթական ծրագրերի SWOT վերլուծության, բենչմարքինգի, ՈԱՇ-ի և ՈՈՇ-ի հետ համադրելիության աշխատանքների համակարգումը, ե)ՄԿԾ-ի առցանց հարթակի ստեղծում:

Պլանավորվել է. ա) նախապատրաստական, շարունակական և լրացուցիչ կրթության կազմակերպման, դրանց որակի ապահովման քաղաքականության ու ընթացակարգերի մշակումը, բ) մասնագիտական զարգացման դպրոցների հետ համատեղ միասնական էլեկտրոնային հարթակի

հիմնումը, գ)ուսանողների կրթական առաջխաղացման մշտադիտարկման համակարգի ներդրումը առցանց կրթական հարթակի հիման վրա, դ) որակի կառավարման ենթահամակարգերի

քարտեզագրումը, ե) Համալսարանի գործունեության հիմնական ոլորտների, կրթական ստորաբաժանումների և միավորների ինքնագնահատման չափանիշների մշակումը՝ հիմք ընդունելով միջազգային հավատարմագրող կազմակերպությունների և ՈԱԱԿ-ի որդեգրած հավատարմագրման չափորոշիչները և չափանիշները և այլն:

Ներկայացնենք այն կազմակերպությունների ցանկը, որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 10.5. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Հիմքեր

- 2020-2025 թթ. զարգացման ռազմավարական ծրագիր
- ՀՊՄՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույց
- Բարելավման գործողությունների պլան

ՄՈՒՀ-ը հիմք է ընդունել կրթության որակի նկատմամբ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից սահմանված ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների/չափորոշիչների պահանջները, հաշվի առել այն իր ՈԱ քաղաքականության, 2020-2025թթ. ռազմավարական պլանում և կարճաժամկետ ու երկարաժամկետ ծրագրերում:

2023թ. հավատարմագրման աշխատանքների իրականացման համար ստեղծվել են ինքնագնահատման գործընթացի իրականացման հանձնաժողով, աշխատանքային 10 խումբ՝ ՄՈՒՀ-ի գործունեության տարբեր ոլորտներում ինստիտուցիոնալ ինքնագնահատում իրականացնելու համար: Այդ խմբերում ներգրավվում են ներկայացուցիչներ ինչպես վարչական, այնպես էլ դասախոսական/ակադեմիական և ուսանողական կազմերից: Ինքնագնահատման մշակված զեկույցի նախագիծը տրամադրվում է ներքին շահակիցներին և քննարկվում Համալսարանի գիտական խորհրդում: Զեկույցի վերաբերյալ ստացված առաջարկություններն ու դիտողությունները ներառելուց հետո այն տրամադրվում է արտաքին գնահատումն իրականացնող կառույցին (ՈԱԱԿ), ինչպես նաև հասանելի դառնում լայն հանրությանը: 2022-23 ուստարում առաջին անգամ, որպես արտաքին խորհրդատու ներգրավվել է Շերի Քլիին (Ph.D.- Գրանդ Վելի պետական համալսարան, Կրթության և համայնքային նորարարության քոլեջ, Միջազգային տնօրեն-COST-ով), ով Հայաստան էր ժամանել Երևանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան «Full Bright» ծրագրով: Ծրագրի շրջանակներում Մանկավարժական համալսարանում իրականացրել է վերապատրաստման դասընթացներ, թրեյնինգներ դասախոսական անձնակազմի և ուսանողների հետ :

ՄՈՒՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի (ՌԾ) նպատակների և խնդիրների կազմը համահունչ է «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներին», ինչը բավարար հիմք է տրամադրում ՄՈՒՀ-ի գործունեության ամբողջական գնահատման և բարելավող համալիր միջոցառումների մշակման համար: ՄՈՒՀ-ի 2020-2021 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի (տե՛ս https://aspu.am/website/images/files/Razmavarakan%20cragir_2020-2025.pdf) 10-րդ ուղղության 3-րդ խնդրում արտացոլված են այն հիմնական գործողությունները, որոնց համաձայն այժմ իրականացվում է Համալսարանի գործունեությունը մակրո մակարդակում:

Համալսարանի գործունեության տարբեր ոլորտների արդյունավետության գնահատման համար հիմքեր տրամադրելու նպատակով ՄՈՒՀ-ը հնգամյա պարբերականությամբ իրականացնում է նաև ինստիտուցիոնալ ինքնավերլուծություն՝ համապատասխան վերլուծական զեկույցի հրապարակմամբ, որը հիմք է հանդիսանում ինչպես որակի արտաքին գնահատման/ապահովման գործընթացների, այնպես էլ որակի բարելավմանն ուղղված ներբուհական միջոցառումների իրականացման համար: Ինքնավերլուծությունը կատարվում է ՀՀ կառավարության կողմից 2011թ. հաստատված ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներին համապատասխան:

Ավելին. նախորդ հավատարմագրման (տե՛ս https://register.anqa.am/Accreditations/Details?Id=4469a45e-ec86-4680-ed4b-08d9240fcfba) արդյունքում

համալսարանը ստացել է խորհրդատվություններ (տե՛ս https://anqaaccreg.blob.core.windows.net/accreg-production/հպմի-փորձագիտական-զեկույց-2019-compressed%20(1)_cc07e350-acd5-4869-941a-92e0922066e3.pdf), և որակի ապահովման պատասխանատուները, ուսումնասիրելով այն, իրականացրել են առկա կարիքների հետազոտություն, այնուհետև մշակվել է բարելավմանը միտված գործողությունների ծրագիր (տե՛ս https://aspu.am/website/images/files/c5f6668a.pdf), որոնք ընկած են նոր ՌԾ-ի մշակման հիմքում: Վերջինս ներառում է վերջին տարիների ընթացքում կատարվելիք պլանավորված գործողությունները: Արդյունքում իրականացվել են բացահայտված թերացումների բարելավմանն ուղղված քայլեր. կանոնակարգվել է տվյալների կառավարման գործընթացը, հստակեցվել ՄՈՒՀ-ի տարբեր ստորաբաժանումների միջև տեղեկատվության տարածման և վերջինիս կառավարման մեխանիզմները: Վերջինս իրականացվում է Համալսարանի ՏՏ կենտրոնի կողմից մշակված համակարգի (ՈՒԳԱԿՀ https://ams.aspu.am/), ինչպես նաև Google-ի ծառայությունների միջոցով: Դա է վկայում, օրինակ, Համալսարանում ներդրված թափանցիկ հավատարմագրման գործընթացը, ինչը հնարավորություն է ստեղծում առցանց խմբագրելու համապատասխան չափանիշները, հեշտացնում է հավատարմագրման գործընթացի իրականացումը, տվյալների հավաքագրման գործընթացը, նպաստում Համալսարանում կրթության որակի մշակույթի զարգացմանը: Տեղում իրականացվում է նաև առցանց խորհրդատվություն՝ և՛ տեխնիկական, և՛ բովանդակային առումներով: Այսպիսով, համակարգված իրականացվում են տվյալների հավաքագրման, տարածման և կառավարման գործընթացները: Ցուցաբերվում է ինստիտուցիոնալ համընդհանուր մոտեցում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 10.6. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Հիմքեր՝

- 2020-2025 թթ. զարգացման ռազմավարական ծրագիր
- ՄՈՒՀ-ի հաշվետվություններ (Հավելված 10.6.1)
- Դիմորդի և առաջին կուրսեցու ուղեցույցները (Հավելված 10.6.2)

ՄՈՒՀ-ի որակի ներքին ապահովման համակարգի հիմնական նպատակներից են բուհի գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, դրա մասին պարբերական տեղեկատվության ներկայացումը՝ օգտագործելով ներքին և արտաքին հնարավոր բոլոր միջոցները, հանդիպումներն արտաքին ու ներքին շահակիցների հետ, հարցումներն ու քննարկումները գործընկեր և /կամ շահակից կրթական հաստատություններում, հարցազրույցներն ու հոդվածները ՀՀ ԶԼՄ-ներում, ՄՈՒՀ-ի կայքէջում և այլն:

Արտաքին և ներքին շահակիցների համար ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունն ապահովելու և հասարակայնության հետ կապերը խթանելու նպատակով 2020-2025 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 8-րդ ուղղությամբ (տե՛ս https://aspu.am/website/images/files/Razmavarakan%20cragir_2020-2025.pdf) սահմանվել է առաջանցիկ մեկ նպատակ՝ «Բարելավել ՄՈՒՀ-ի հաշվետվողականության և թափանցիկության աստիճանը՝ իրականացնելով տեղեկատվական և քարոզչական քաղաքականություն հասարակությանը մատուցվող կրթական ծառայությունների վերաբերյալ՝ ձևավորելով մանկավարժական մասնագիտության նոր իմիջ»*:* Այս նպատակի իրագործման համար սահմանվել են հետևյալ գործողությունները.

- մշակել ՄՈՒՀ-ի՝ հասարակայնության հետ կապերի վարչության նոր քաղաքականությունը և ուղեկցող փաստաթղթերը,
- համալրել և թարմացնել տարբեր ստորաբաժանումների գործունեության մասին տեղեկատվությունը ՄՈՒՀ-ի կայքում, հրապարակել բոլոր հայտարարությունները, նորությունները, հաշվետվությունները և այլ տեղեկատվություն՝ բարձրացնելով գործունեության թափանցիկությունը,

- ներդնել հետադարձ կապի արդյունավետության գնահատման և վերլուծության հստակ մեխանիզմ,
- կազմակերպել հանրային կարծիքի ուսումնասիրություններ՝ Համալսարանի գործունեությունը հասարակության արդի պահանջներին համահունչ դարձնելու նպատակով,
- մշակել և ներդնել Համալսարանի դիմորդների և գիտական հետազոտությունների, ծրագրերի ներգրավման մարքետինգային պլան՝ ձևավորելով մանկավարժական մասնագիտությունների նոր իմիջ:

ՄՈՒՀ-ում առկա են գործունեության թափանցիկությունն ապահովող առանձին մեխանիզմներ: Լրատվության և հանրության հետ կապերի վարչությունը ստեղծվել է 2011 թվականի փետրվարի 15-ին, 2023 թվականից վերանվանվել *լրատվության և հանրության հետ կապերի կենտրոն*: Կենտրոնի գործունեության հիմնական նպատակն է Համալսարանի տեղեկատվական և քարոզչական քաղաքականության կազմակերպումն ու իրականացումը, բուհի ստորաբաժանումների, այլ պաշտոնատար անձանց գործունեության վերաբերյալ հասարակայնության իրազեկումը՝ Համալսարանի թերթի, կայքի, ռադիոյի, հեռուստահաղորդումների, առհասարակ ռադիոհեռուստատեսային հեռարձակումների միջոցով, էլեկտրոնային հաղորդակցության համակարգի ստեղծումը, հասարակական միավորումների և այլ կազմակերպությունների հետ համագործակցության ապահովումը, համատեղ աշխատանքային միջոցառումների պլանավորումը, իրականացումը, տեղեկատվության փոխանակումը, զանգվածային լրատվամիջոցներում տեղ գտած հաղորդագրությունների, հրապարակումների տեսության և այլ տեղեկանքների վերլուծական նյութերի պատրաստումը, անցկացվող միջոցառումների կազմակերպչական աշխատանքներին մասնակցությունը և այլն: Բացի այդ, ներքին և արտաքին շահակիցները Համալսարանի գործունեության վերաբերյալ իրենց կարծիքն են արտահայտում ՄՈՒՀ-ի ֆեյսբուքյան (տե՛ս https://www.facebook.com/ASPUhome) էջում ուղիղ հարցումներով:

ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկության ապահովման գործընթացում կարևոր է շահակիցների տեղեկացվածությունն ապահովող համապատասխան մեխանիզմների առկայությունը: Այդ նպատակով ՄՈՒՀ-ում գործադրված են ներքին տեղեկատվության մի շարք համակարգեր և մեխանիզմներ, որոնցից են.

- ՄՈՒՀ-ի գործունեության արդյունքների վերաբերյալ ամենամյա հաշվետվությունները (տե՛ս https://aspu.am/hy/page/hashvetvutyunner/), որում ամփոփված են հաշվետու ուստարում Համալսարանի ուսումնական, գիտահետազոտական ու վարչական կառույցների գործունեության հիմնական արդյունքները:
- ՄՈՒՀ-ի ռեկտորի ամենամյա զեկույցը (տե՛ս https://aspu.am/hy/page/khorhrdi_oroshumnery/) Համալսարանի հոգաբարձուների խորհրդի նիստում, որտեղ ներկայացվում են Համալսարանի գործունեության արդյունքները բոլոր հիմնական ոլորտներում, ներառյալ հաշվետու տարում բյուջեի կատարողականը, ինչպես նաև հաստատվում է հաջորդ տարվա բյուջեի նախագիծը: Նշվածին հավելենք տարվա ձեռքբերումները ներկայացնող ֆիլմը (տե՛ս https://www.youtube.com/watch?app=desktop&v=5_FaZHNP0oo):
- ուսանողների առաջադիմության և շարժի, ինչպես նաև ուսումնական այլ գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունն ապահովող www.ams.aspu.am ներհամալսարանական տեղեկատվական համակարգը, որը մատչելի է դարձնում ուսումնական գործընթացին առնչվող տվյալների մեծածավալ բազան: Այն ապահովում է ուսանողական համակազմի վերաբերյալ քանակական ու որակական տվյալների և ուսանողների առաջադիմության ցուցանիշների կանոնավոր հավաքագրումը, վերլուծությունն ու հրապարակումը ներքին շահակիցների համար: 2022 թվականից առաջին անգամ համակարգը հասանելի է նաև ուսանողներին, ովքեր սեփական մուտքանուններով և գաղտնաբառերով հասանելիություն ունեն առաջադիմության մասին տեղեկատվությանը:
- կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցները և տարատեսակ տեղեկագրքերը, որոնք պարբերաբար թարմացվում և տեղադրվում են կայքում, էլեկտրոնային

տարբերակներով հասանելի դարձվում ուսանողներին և ներքին ու արտաքին այլ շահակիցներին: Այն ամբողջական տեղեկատվություն է տրամադրում ուսուցման կազմակերպման, իրականացվող կրթական ծրագրերի ու առանձին դասընթացների վերաբերյալ: Այդ նպատակին են ծառայում նաև ֆակուլտետների կայքում տեղադրված փաստաթղթային հենքերն ու կրթական ծրագրերի մասնագրերը:

- ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույցները (տե՛ս https://drive.google.com/file/d/1u6xaw7ZNYhLzKXbbWSJvbNwuG_Qpo6xs/view?pli=1):
- Դիմորդի և առաջին կուրսեցու ուղեցույցները (տե՛ս https://aspu.am/hy/page/bakalavriat_yndunelutyun/):

ՄՈՒՀ-ում ներքին շահակիցների համար գործում են Google համակարգի ամբողջական հավելվածները @aspu.am դոմեյնով, որն ապահովում է տեղեկատվության փոխանակման հոսքերը, հաշվետվողականության գործընթացները: Միաժամանակ, հարկ է նշել նաև, որ ՄՈՒՀ-ում փորձ արվեց ներդնել Mulberry վարչական տեղեկատվական համակարգը, սակայն ֆինանսական և այլ ռեսուրսների ոչ բավարար լինելու պատճառով գործընթացն առկախվեց:

Հարկ է նշել, որ գործունեության թափանցիկության դրսևորումներ են տարբեր հանդիպումները, սեմինարները ներքին ու արտաքին շահակիցների հետ, հրապարակային քննարկումները և այլն: Կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ ՈԱ գործընթացներին առնչվող փաստաթղթերը կայքէջում հրապարակելուց զատ ուղարկվում են ստորաբաժանումներին՝ նախքան հաստատվելը քննարկելու համար:

Ստորաբաժանումներում գործում են ՄՈՒՀ-ի որակի ներքին ապահովման ինստիտուցիոնալ կառույցներ, ֆակուլտետների, ամբիոնների, ուսանողական կազմակերպությունների որակի ապահովման հանձնախմբեր, որոնք կոչված են Համալսարանում որակի ապահովման գործընթացներն արդյունավետ իրականացնելու: Որակի ապահովման բարելավման գործընթացն իրականացվում է հարցումների անցկացմամբ, ուսանողությանը, կամավորական խմբերին Համալսարանի գործընթացի մեջ ներգրավմամբ: Որակի ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում և բարելավվում է՝ նպաստելով ՄՈՒՀ-ի գործունեության և որակի ապահովման համակարգի կատարելագործմանը:

ՄՈՒՀ գործունեության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները՝ ըստ 10-րդ չափանիշի

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
ՄՈՒՀ-ում գործում են որակի ապահովման գնահատման ներքին համակարգեր,ինչը նպաստում է գործընթացների շարունակական բարելավմանը:	ՄՈՒՀ-ում դեռևս ամբողջապես չեն գործում ուսումնառության ռեսուրսների և ուսանողների օժանդակ ծառայությունների արդյունավետության գնահատման և դրանց ՈԱ ներքին մեխանիզմներն ու գործիքները
Գործում են կրթական ծրագրերի արտոնման, մշակման, փորձաքննության, հաստատման, ընթացիկ մշտադիտարկման և պարբերական վերանայման չափանիշներ և ընթացակարգեր, որոնք ուսումնական ստորաբաժանումներին անմիջական մասնակից են դարձնում ՈԱ գործընթացներին և ապահովում ծրագրերի որակը:	ՄՈՒՀ-ում դեռևս ամբողջապես ձևավորված չէ որակի ներքին մշակույթը, ինչը պայմանավորված է դասախոսական կազմի և ուսանողների որոշ ներկայացուցիչների ցածր մոտիվացիայով, ՈԱ գործընթացներում քիչ ներգրավվածությամբ:

ՄՈՒՀ-ում առկա են գործունեությունը թափանցիկ և հաշվետու դարձնելու համար հաշվետվողականության ապահովման մեխանիզմներ, տեղեկատվական համակարգեր, ուսումնառության կազմակերպման ուղեցույցներ և տեղեկագրքեր:	Դեռևս ցածր է գործատուների և արտաքին շահակիցների ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում:
ՄՈՒՀ-ի ենթակառույցներում գործում է որակի ապահովման պատասխանատուների ինստիտուտը:	Ֆակուլտետների և ամբիոնների կողմից իրականացվող ՈԱ գնահատման արդյունքների հիման վրա բացահայտված թերացումների բարելավմանն ուղղված քայլերը երբեմն իրականացվում են ոչ համակարգված կամ դանդաղ:
ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվության հավաքագրման և վերլուծման ներքին համակարգ (www.ams.aspu.am և այլն):	ՄՈՒՀ-ում ոչ բավարար մակարդակի վրա է Որակի ապահովման պատասխանատուների կազմի մասնագիտական փորձը:
ՄՈՒՀ-ը համագործակցում է ազգային, տարածաշրջանային և միջազգային կառույցների հետ՝ ներդնելով ՈԱ լավագույն փորձը	
Հնարավորությունները	**Վտանգները**
Բարձրագույն կրթության նոր օրենքի ընդունումը հնարավորության կտա կրթական ծրագրերի որակի բարելավմանը՝ պայմանավորված ծրագրերի բովանդակային արտոնագրման և պարտադիր ծրագրային հավատարմագրման պահանջով:	Հասարակության և պետության կողմից դասախոսի դերի ոչ բավարար արժևորումը վտանգում է բարձրորակ կադրերի ներգրավումը ՈԱ գործընթացներում
Միջազգային համագործակցության հնարավորությունների ընդլայնումը կարող է նպաստել կրթական ծրագրերի առավել արդյունավետ հենանշման իրականացմանը, դասախոսների վերապատրաստումների	ՈԱ գործընթացների վերաբերյալ արտաքին շահակիցների ցածր տեղեկացվածության պատճառ կարող է լինել հետաքրքրության և շահագրգռվածության պակասը:

բարելավմանը և ՈԱ այլ գործընթացների արդյունավետության բարձրացմանը:	
SS գործիքների ներդրումը կարող է բարելավել ՈԱ գործընթացները՝ ներառյալ տվյալների հավաքագրումը և վերլուծությունները, մշտադիտարկումն ու հետադարձ կապը	Որակի ապահովման ազգային չափանիշների պարբերաբար բարելավումների բացակայությունը կարող է բացասաբար անդրադառնալ համակարգի շարունակական կատարելագործմանը:
ՈԱ միջազգայնացման միտումները նոր հնարավորություններ կարող են ստեղծել ՈԱ պատասխանատուների մասնագիտական զարգացման համար:	Որակի ապահովման արտաքին գործընթացներում կրթության ոլորտի մասնագետ-փորձագետների սակավությունը լրջորեն կարող է խոչընդոտել Համալսարանի որակի արտաքին գնահատման գործընթացներին:

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները

- Ուսումնառության ռեսուրսների և ուսանողների օժանդակ ծառայությունների արդյունավետության գնահատման և դրանց ՈԱ ներքին մեխանիզմների ու գործիքների մշակում և կիրառում
- Ներքին որակի մշակույթի ձևավորմանն ուղղված մեխանիզմների, ընթացակարգերի, միջոցառումների մշակում և տարածում
- ՈԱ գործընթացներում գործատուների և արտաքին շահակիցների ներգրավվածությունն ապահովող մեխանիզմների վերանայում և լավարկում
- Որակի ապահովման պատասխանատուների կազմի մասնագիտական փորձի ձեռքբերման և լավարկման ուղղությամբ աշխատանքների կազմակերպում (սեմինարների, քննարկումների հաճախակիություն)
- Ներգրավված կամավորների, ուսանողների համար սահմանել արտոնությունների կամ խրախուսման մեխանիզմներ՝ անհատական նախաձեռնողականությունը խթանելու նպատակով:
- Բոլոր կառույցներում և գործընթացներում ամրապնդել և զարգացնել ՊԻԳԲ շրջափուլով աշխատելու պրակտիկան:
- Մշակել և գործադրել դասախոսական կազմի գործունեության գնահատման բազմագործոն և նորացված կանոնակարգ:
- Բարձրացնել դասախոսների և ուսանողների իրազեկվածության մակարդակը ՄՈՒՀ-ում ընթացող որակի ապահովման գործընթացների վերաբերյալ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ

Հավելվածի N	Անվանում
1.1.1 1.2.1	ՀՀ բարձրագույն կրթության վրա ազդող մակրո և միկրո գործոնների վերլուծություն
1.1.2. 10.1.5	Բենչմարքի (հենանշման) մեթոդական ուղեցույց
1.2.2	Արտաքին և ներքին շահակիցների կարիքների գնահատում
2.1.1	ՄՈՒՀ –ի կազմակերպական կառուցվածքի սխեմատիկ պատկեր
2.1.2	ՄՈՒՀ-ի ֆակուլտետի դեկանի ընտրության կարգ
2.1.3	ՄՈՒՀ-ի ամբիոնի վարիչի ընտրության կարգ
2.1.4	ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգ
2.5.1	ՄՈՒՀ –ի որակի կառավարման համակարգի (ՈԿՀ) ուղեցույց
2.5.2	Փաստաթղթաշրջանառության կարգ
3.1.1	Մասնագիտության կրթական ծրագրի մասնագրերի նմուշօրինակ
3.1.2	Նոր ՄԿԾ-ների մշակման և արտոնման կարգ
3.1.3	Մասնագիտության կրթական ծրագրի համար առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման քաղաքականությունը, ընթացակարգերը
3.2.1	Ուսումնառության արդյունքները և նրանց համապատասխան դասավանդման , ուսումնառության մոտեցումները և մեթոդները, ՄԿԾ-ով նախատեսված դասընթացների և ուսումնառության ակնկալվող արդյունքների (ՈՒԱ) համապատասխանությունը (հավատարմագրման համար ընտրված 3 ՄԿԾ-ների համար)
3.2.2	Դասավանդման, ուսումնառության մոտեցումների և մեթոդների պարբերաբար արդիականացման քաղաքականությունը և ընթացակարգերը
3.2.3	Կրթական ելքային արդյունքների սահմանում
3.2.4.	Կրթական ելքային արդյունքների, դասավանդման և ուսումնառության մեթոդների և գնահատման միջև կապը. գնահատման մեթոդների օրինակներ, գնահատման չափանիշներ, դասավանդման ինտերակտիվ մեթոդների օրինակներ
3.2.5	ՄՈՒՀ-ում մասնագիտական կողմնորոշման աշխատանքի համակարգման ուղեցույց

3.3.1	Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների սահմանումը և որոշումը
3.3.3	Ակադեմիական ազնվության քաղաքականությունը, ընթացակարգերը, ինչպես նաև հիմքեր ապահովող փաստաթղթերը
3.3.4	ՄՈՒՀ-ի բակալավրի ավարտական աշխատանքների կազմակերպման, իրականացման և գնահատման կանոնակարգ
3.3.5	ՈՒսումնառողների գնահատման քաղաքականության վերանայման հիքերը և արդյունավետությունն ապահովող մեխանիզմները
3.3.6	ՄՈՒՀ-ի բակալավրի կրթական ծրագրով կուրսային աշխատանքի կազմակերպման, կատարման և գնահատման կանոնակարգ
3.3.7	Հավատարմագրման համար ընտրված 3 ՄԿԾ-ների մասնագրերի նկարագրերի հավելվածներ
3.4.1	ՈՒսանողների և դասավանդող անձնակազմի շարժունության հնարավորությունները պարզաբանող հիմքեր
3.4.2	ՈՒսումնական հաստատությունների ցանկը (նշելով երկիրը և ուսանողների թվաքանակն ըստ տարիների), որոնց հետ հաստատությունն ունի ուսանողների փոխանակումն ու շարժունությունն ապահովող գործող համաձայնագրեր
3.5.1	Շահակիցների կարիքները հաշվի առնող ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման հաստատված քաղաքականությունը
3.5.2	ՄՈՒՀ-ի ուսանողների կրթական կարիքների վերհանման և գնահատման աշխատակարգ
3.5.3	Մասնագիտությունների կրթական ծրագրերի պարբերաբար գնահատման քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները
4.1.1 4.2.2 4.4.1 4.7.2 10.1.6	Ուսանողի ուղեցույց
4.2.2	Յուրաքանչյուր մասնագիտության կրթական ծրագրում ընդգրկված ուսանողների թիվը
4.1.3 10.6.1	Դիմորդի ուղեցույց
4.1.4	ՄՈՒՀ-ի ուսանողների տարեկան շարժը 2020-2022 թթ.

4.1.5	Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մագիստրատուրայի (առկա և հեռակա ուսուցման ձևերով) ընդունելության և ուսումնառության կազմակերպման կարգ
4.1.6	ՄՈՒՀ-ի նախապատրաստական դասընթացների կազմակերպում
4.2.1	ՄՈՒՀ-ում արտաքին ու ներքին շահակիցների ներգրավման և կարիքների գնահատման կարգ
4.3.1	ՄՈՒՀ-ի մասնագիտության կրթական ծրագրերը (հենքային ուսումնական պլաններ)
4.3.2	Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի առկա բակալավրիատի 2022-2023 ուստարվա դասացուցակ
4.7.1	ՄՈՒՀ-ի ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համակարգ
4.7.3	Վերջին 3 տարիների ընթացքում ուսանողների բողոքների և այդ խնդիրների լուծման վիճակագրական տվյալները և համապատասխան հիմքերը
4.8.1	ՄՈՒՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատմանն ուղղված հարցման արդյունքները
4.8.2	Արտաքին շահակիցների (գործատուների) կարծիքի ուսումնասիրություն
4.8.3	2019-2022 թթ. ՄՈՒՀ –ի շրջանավարտների աշխատանքային զբաղվածության վերլուծություն
5.1.1 5.2.1	ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգ
5.1.2	Հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմն ըստ ամբիոնների և որակավորումների (ներառված են գիտական աստիճանները, կոչումները, աշխատանքային ստաժը բուհում, վարվող հիմնական դասընթացները)
5.1.3	ՊԴ և ուսումնաօժանդակ կազմ
5.1.4	ՄՈՒՀ-ի ստորաբաժանումների տեսակները, աշխատատեղերի տարակարգերը և դրանց զբաղեցման կանոնակարգ
5.1.5	ՈՒսումնաօժանդակ անձնակազմի պաշտոնի անձնագրեր
5.1.6	ՄՈՒՀ-ի ամբիոնի վարիչի ընտրության կարգ
5.2.2	Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական աշխատողների ատեստավորման ներքին կանոնակարգ

5.3.1	Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման քաղաքականությունը և ընթացակարգերը
5.3.2	Դասալսումների անցկացման ձևաչափ
5.4.1	Պահանջվող որակավորումներին համապատասխան դասավանդողների կոմպետենցիաների շրջանակի ընդլայնումն ապահովող մեթոդները և հիմքերը
5.4.2	Դասավանդողների կատարելագործման միջոցառումների պլանները՝ ըստ մեթոդական, մասնագիտական բարեփոխումների ուղղվածությունների
5.5.1	Հիմնական և համատեղությամբ աշխատող պրոֆեսորադասախոսական անձնակազմի ցանկը
5.5.2	Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգ
5.5.3	Տեղեկություն դասախոսական կազմի մասին
5.5.4	ՀՀ ասպիրանտուրայի ընդունելության կարգ
5.6.1	Դասախոսական կազմի դինամիկա
5.6.2	Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը
5.6.3	«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի աշխատողների պարգևատրման նյութական խրախուսման, հավելավճարների և լրավճարների տրամադրման կանոնակարգ
5.6.4	Սկսնակ դասավանդողների խրախուսման և մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը
5.6.5	Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական աշխատողների ատեստավորման ներքին կանոնակարգ
5.7.1	Վարչական աշխատակազմի ցանկը՝ ըստ հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների
5.7.2	ՈՒսումնաօժանդակ աշխատակազմի գործառույթները
6.1.1	Հաստատության ռազմավարության և հետազոտությունների ուղղությունների միջև կապն արտացոլող փաստաթուղթը

6.3.1	Որակյալ հետազոտությունների իրականացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու մեխանիզմները
6.3.2	Հետազոտության և զարգացման համար հատկացված բյուջեն՝ արտահայտված տոկոսներով (վերջին 3 տարվա համար)
6.3.3	Բյուջեի բաշխման քաղաքականությունը և ընթացակարգերը
6.3.4	Երիտասարդ աշխատակազմի հետազոտական գործունեությունը խրախուսելու քաղաքականությունն ու ընթացակարգերը
6.3.5	Ակադեմիական ազնվությունը (օբյեկտիվություն) երաշխավորող և գրագողությունը կանխարգելող միջոցների քաղաքականությունն ու ընթացակարգերը
6.4.1	Միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածությունը խրախուսող կանոնակարգերը
6.4.2	Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների կարգավորումը
6.4.3	Միջազգային (ԱՊՀ և օտարերկրյա) գրախոսվող ամսագրերում հրապարակումների ցանկը վերջին 3 տարվա համար
6.5.1	Հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի հետ փոխկապակցելուն ուղղված քաղաքականությունը, ընթացակարգերը և մեթոդները
6.5.2	Գործընթացի բարելավմանն ուղղված միջոցառումները
7.1.1	Հաստատության մասնաշենքերը և դրանց օգտագործման նպատակները
7.1.2	ՄՈՒՀ-ի ուսումնական և գիտական լաբորատորիաները
7.1.3	Գրադարանի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը
7.1.4	Տվյալներ մասնաշենքերի և հողամասերի մակերեսների վերաբերյալ
7.1.5	Գիտական լաբորատորիաները և հետազոտական կենտրոնները
7.1.6	ՄՈՒՀ-ի լսարանների տեխնիկական հագեցվածությունը
7.1.7	ՏՏ ոլորտի վերազինման արդյունքները 2020-2023թթ.
7.2.1	2020-2022թթ. եկամուտների և ծախսերի կատարողական և 2020-2023թթ.նախահաշիվ

7.2.2	Բյուջեի բաշխումը տոկոսներով
7.2.3	Բյուջեի բաշխումը՝ ըստ ՄՈՒՀ-ի առաքելության հիմնական ուղղությունների (դասավանդում և ուսումնառություն, հետազոտություն և զարգացում, ծառայություն հասարակությանը)
7.2.4	Հետազոտական աշխատանքների, դասավանդման և ուսումնառության, մասնագիտական զարգացման, գրադարանների թարմացման և հարստացման, սարքավորումների, գույքի ձեռքբերման համար նախատեսված հատկացումները (արտահայտված տոկոսներով)
7.2.5 10.2.2	Բյուջեի բաշխումը՝ ըստ ռազմավարական ուղղությունների
7.2.6	ՈՒսումնական գործունեությունից ստացվող մուտքերի բաշխումը՝ պետական ֆինանսավորում, ուսման վճարներ, վերապատրաստումներ և այլն (արտահայտված տոկոսներով)
7.3.1	Նախագիծ. ՄՈՒՀ-ի 2020-2025թթ. ռազմավարական բյուջեն
7.3.2	Աշխատանքների և ծառայությունների գնումների պլանը
7.4.1	ՈՒսումնական ռեսուրսների արդյունավետության և հասանելիության գնահատման ու վերանայման ընթացակարգ
7.4.2	Աշխատանքների և ծառայությունների գնումների պլան (տե՛ս, 2019թ., 2020թ., 2021թ., 2022թ., 2023թ.)
7.5.1	ՄՈՒՀ-ի փաստաթղթաշրջանառության կարգը
7.5.2	ՄՈՒՀ-ի փաստաթղթաշրջանառության սխեմատիկ պատկերը
7.5.3	ՄՈՒՀ-ի գիտական գրադարանի ցուցանիշների դինամիկան
7.6.1	ՄՈՒՀ-ի ներքին կարգապահական կանոնները
7.6.2	Բժշկական ապահովագրության պայմանագիրը
7.6.3	Անվտանգության աշխատակազմ
7.6.4	Առաջնային օգնության կենտրոնի պաշտոնի անձնագրեր
7.7.1	Հետադարձ կապը հաստատող հիմքեր
8.1.1 10.6.1	ՄՈՒՀ-ի հաշվետվություններ
8.1.2	Տարեկան հաշվետվություն (2019 թ., 2020թ., 2021թ., 2022թ.)

8.3.1	ՀՊՄՀ-ի ուսանողների շրջանում անցկացված հարցումներ
9.1.1	Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոսների և վարչական աշխատակիցների շարժունության իրականացման կարգ
9.1.2	Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում սովորող ուսանողների և համալսարան ժամանող օտարերկրյա սովորողների ակադեմիական շարժունության իրականացման կարգ
9.1.3	Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոսների և վարչական աշխատակիցների միջազգային դրամաշնորհային ծրագրերին մասնակցության կարգ
9.4.1	ՊԴԱ կազմի վերապատրաստման դասընթացներ
10.1.1	Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի որակի ապահովման քաղաքականությունը և հայեցակարգային ուղենիշերը
10.1.2	Եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ (ԵՉՈՒ)
10.1.3	Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների սահմանում ու որոշում. կրթական ելքային արդյունքների սահմանումը
10.1.4	Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մասնագիտական կողմնորոշման աշխատանքի համակարգման ուղեցույց
10.1.7	ՄՈՒՀ-ի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը
10.1.8	ՄՈՒՀ–ի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը
10.2.1	Անձնակազմի պաշտոնի անձնագրեր
10.3.1 10.4.1	Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի որակի ապահովման քաղաքականությունը և հայեցակարգային ուղենիշերը
10.3.2	ՄՈՒՀ –ի որակի պատասխանատուներ
10.3.3	«ՄՈՒՀ-ի արտաքին և ներքին շահակիցների ներգրավում և կարիքների գնահատում» կանոնակարգը